489
С192Б№336

ՀԱՍԱՐԱԿԱՆ ՈՒՍՄՆԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ԵՐԿՐՆԵՐԻ, ՄԻԱՑԵՔ.

ՊՐՈՖ. Ռ. ՎԻՊՊԵՐ

ՀԱՄԱՌՈՏ ԴԱՍԱԳԻՐՔ
ՄԻՋԻՆ ԴԱՐԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ

8 ՔԱՐՏԵԶՆԵՐՈՎ

Թարգմանված է ռուսական հինգերորդ հրատարակությունից

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ—№ 475

ԵՐԵՎԱՆ—1924

9(ՀՏ)„04
Վ-65

ՀԵՏՀՈՏԱՆԻ ՕՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ԵՐԿՐՆԵՐԻ, ՄԻԱՑԵՔ։

9(ռ) »04
Վ-65

11 JUL 2005

Պրոֆ. Ի. ՎԻՊՊԵՐ

ՀԱՄԱՌՈՏ ԴԱՍԱԳԻՐՔ
ՄԻՋԻՆ ԴԱՐԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ

8 ՔԱՐՏԵԶՆԵՐՈՎ

Российская Академия Наук

Թարգմանված է ռուսական հիմնական դասագրքից

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ—№ 175
ԵՐԵՎԱՆ—1924

12 FEB 2013
489
11 JUL 2005

ՊԵՏ. ԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ГСС. Библиотека
ՀՍՍՌ-Арм.ССР
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆ
им. А. Мясникяна
59405-66

Տիրած 3.000

Պետհրատի առաջին տպարան Վաղարշապատում

I. ՄԻՋԻՆ ԴԱՐԵՐԻ ՍԿԻԶԲԸ

1. ԳԵՐՄԱՆԱՑԻՔ ՅԵՎ ՀՌՈՄԵԱԿԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅՈՒՆԸ
100–600 թ. Ք. ի.

Միջին դարերի պատմությունը, *Հին կամ անտիկ կուլտուրա անվանում ենք բաբելացիների, եգիպտացիների, փյունիկեցիների, հույների և հռոմեացիների կենցաղը, հավատալիքները և գիտությունները։ 400—600 թվականներին Ք. հ. այդ կուլտուրան քայքայվեց և մեծ մասը կործանվեց։ Այդ նույն ժամանակում անհայտությունից և վայրենությունից դուրս եկան մի քանի, հյուսիսային և արևելյան Եվրոպայի ցեղերը, որոնց ժառանգները—ռուսները, ֆրանսիացիները, անգլիացիները, գերմանացիները—այժմ աշխարհի ամենազարգացած և ուժեղ ազգերն են։*

Նրանց պատմությունը բաժանվում է երկու մեծ շրջանի։ Վերջին չորս դարերը, Ամերիկայի հայտնագործությունից սկսած (շուրջ 1500 թ.) կոչվում են նոր ժամանակի պատմություն։ Միայն այդ կարճ ժամանակամիջոցում միջին Եվրոպայի ժողովուրդները անտիկ կուլտուրայից առաջ անցան ու հին հույներին և հռոմեացիներին գերազանցեցին գիտության, դյուտերի և կյանքի հարմարությունների մեջ։ Նախորդ տասը դարերը (500-ից մինչև 1500 թ.), որոնք բաժանում են անտիկ կուլտուրայի անկումը նորի ծագումից, ընդունված է տալ միջին դարեր։ Սակայն եվրոպական ժողովուրդներից շատերի համար այդ միջին դարերը վոչ այլ ինչ են, բայց եթե նրանց հին շրջանը, որովհետև Միջերկրականի ժողովուրդների հին պատմության մեջ նրանք մասնակցություն չեն ունեցել։

Միջին Եվրոպան և նրա ժողովուրդները։ *Նոր ժամանակի ժողովուրդներով բնակված երկրները բնական մեծ առավելություններ ունեն։ Ընդարձակ հարթավայրերը հարմար են երկրագործության, այգեգործության և խոշոր անասուններ բազմացնելու համար։ Լեռնաշղթաներում կան հանքային հարստություններ, մանավանդ երկաթ, քարածուխ և աղ։ Լայն գետերը իրենց ակունքներով իրար մոտենալով հարաբերությունները դյուրացնում են։ Արևմտյան ամբողջ երկիր, խորշերով կտրտված ծայրերկիրը բաց և ովկիանոսի առաջ, և հանապարհորդը անարգել կարող է դուրս գալ այլ աշխարհամասեր, հեռավոր հանապարհորդության։*

Բայց այդ բոլոր առավելությունները առաջ չեկան միայն այն ժամանակ, երբ բնակչությունը բազմացավ և համառ աշխատանքով նախկին վայրենությունից դուրս եկավ։ Երկար ժամանակ միջին Եվրոպայի մեծ մասը անտառուտ եր։ Կլիման ավելի խոնավ եր և պատճառ եր լինում

մեծ լճերի և ճահիճների պահպանման։ Այն գետերը, որոնք մեր ժամանակում խաղաղ հուներով են հոսում, յերկու հազար տարի առաջ աղմկարար հոսանքներ էին. կուսական անտառը ճեղքելով բաժանվում էին անկանոն ճյուղերի, որոնք ունէին սահանքներ ու ջրվեժներ։ Այդ խիտ բնության մեջ, որ ցուրտ ձմեռներ ու աշնանային առատ անձրևներ ուներ, նոսր բնակչություն էր ապրում։ Աշխատանքին անսովոր, նա իր կերակուրը ճեռք էր բերում վորսորդությամբ, վայրի պտուղներ հավաքելով, պահում էր ամենակեր խոզերի յերամակներ։ Ընդարձակ տարածության վրա ցրված ցեղերը պետություն չէին կազմում, չունէին քաղաքներ, առևտուր, չկային հարստությունների մեծ պաշարներ։

Միջին և հյուսիսային Յեվրոպան գրավել էին ժողովուրդների միքանի խմբեր։ Հեռավոր արևմուտքում (այժմյան Ֆրանսիան և Բրիտանական կղզիները) բնակվում էին կելտերը։ Սկսած Հռենոսից դեպի արևելք, այժմյան Գերմանիայի և Ավստրիայի շրջանում, այլ և Սկանդինավյան թերակղզում ապրում էին գերմանացիները։ Մոտավորապես Վիսլա գետից մյուս կողմը սկսվում էին լիտվացիների և սլավոնների բնակությունները։ Յեվրոպայի հյուսիս-արևելքը՝ Սկանդինավիայից մինչև Ուրալյան լեռները գրավել էին Ֆինն ցեղերը։

Մյուսներից ավելի մոտ էին հին աշխարհի կրթված յերկրներին հաբալային կելտերը կամ գալլերը։ Վաղուց Գալլիայի մեջով անցնում էր առևտրական ճանապարհ, որը Միջերկրական ծովը միացնում էր Հյուսիսայինին։ Ք. ծ. մոտ 50 տարի առաջ գալլերին նվաճեց Կեսարը, որոնք և մասն Հռոմեական կայսրության մեջ և ռոմանացան, այսինքն ընդունեցին հռոմեացոց լեզուն, դպրոցները, քաղաքների կազմությունը։

Գերմանացիները յեվ կայսրության ռազմական սահմանը։ Գալլիան նվաճելիս հռոմեացիները հանդիպեցին գերմանացոց։ Կեսարը պետք է կռվի մաներ ավերների մեծ խմբերի հետ, որոնք Արիովիստի առաջնորդությամբ յեկել էին Հռենոսի մյուս կողմից և իրենց էին ստրատակեցրել Գալլիայի մեծ մասը։ Կեսարի նկարագրության համաձայն, գերմանացիները վատ յերկրագործներ էին և ապրում էին առավելապես անասնապահությամբ. նրանց կերակուրն էր՝ միս, կաթ, պանիր։ Նրանք նատակեցության վարժված չէին։ Նրանց համար վոչինչ չարժեր, վոր ցեղի կեսը յելներ իր տներից, գնար կռվի, թալաներ հարևաններին։ Վորպեսզի նոր հարձակումներից իրեն ապահովե, կեսարը գնաց Հռենոսի մյուս կողմը՝ ավերների յերկիրը։ Նրա հաջորդ Ագռիպպան էս Հռենոսի մյուս կողմն ուղարկեց հռոմեական լեգիոններ։ Հռոմեացոց արշավանքների մեծ մասը դեպի անտառապատ յերկրի խորքերը անհաջող էին։ 9 թվին Ք. ն. յերեք լեգիոնի հրամանատար Վարոսի հետ Տիբերիուսի անտառում շրջապատեցին գերմանացիները և կոտորեցին Արմինիոսի գլխավորությամբ։

Հռոմեացիները վորոշեցին փոխել գերմանացիներից պաշտպանվելու յեղանակը։ Նրանք կայսրության ամբողջ հյուսիսային յերկար սահմանը Հռենոսի և Դանուբի յերկարությամբ ցանկապատեցին։ Մեծ գետանցքների, գետերի խառնուրդների մոտ շինեցին ամրություններ։ Ուր վոչ գետ կար, վոչ լեռնաշղթա, արհեստական պաշտպանություն էին ստեղծում հողաթումբ ու փոս անցկացնելով. հողաթմբի վորոշ հեռավորություններից վրա

դռնվում էին պահականոցները և փակամրությունները։ Իրենց հողաթմբով հռոմեացիները գրավեցին գերմանացիների յերկրի հարավ-արևմտյան անկյունը, միջին Հռենոսի և վերին Դանուբի միջև։ Սահմանի վրա ամրություններում և բանակներում տեղավորել էին 15 լեգիոն, այսինքն կայսրության ամբողջ ռազմական ուժի կեսից ավելին։ Հռոմեական գինվորների բնակատեղիները մեծացան նոր առևտրական և արհեստավորների բնակություններով և դարձան մեծ քաղաքներ։ Այդպես առաջ յեկան Քյոլնը (Colonia), Սարսաբուրգը, Վիեննան (Vindobona), Բուդապեշտը։

Հռոմեական հաղթությունը վերջ դրեց գերմանացիների ավերիչ արշավանքներին։ Կայսրության մոտ ցեղերը ավելի ևս խաղաղ անդրհռենոսյան յերկրում և ստիպված յեղան հողագործության անցնել։ Այդ գերմանացիներին նկարագրել է 100 թ. Ք. ն. Տրայանոս կայսրի ժամանակակից Տակիտոսը։ Հողագործությունը նրանցում դեռևս համարվում էր վատ տեսակի զբաղմունք։ Ուժեղ-ռազմիկը խաղաղ ժամանակ կամ վորս էր անում կամ արջի մորթու վրա որերով պառկում էր ծուլորեն և դաշտ էր ուղարկում կանանց և ծերունիներին. նա հողը տալիս էր ստրուկներին և ճորտերին (լիտերին), վորոնք իրենց համար խրճիթներ էին շինում. տերը բավականանում էր նրանով, վոր բանվորներից առնում էր բերքի մի մասը, առնասունների ծնունդները, բուրդը և քաթանը։

Տակիտոսը գովում է գերմանացիների հիանալի հասակը և առողջ պահպանությունը. հռոմեացիները, համեմատությամբ այդ վայրենիների, նրան թվում են այլասերվածներ։ Կայսրության փրկությունը նրանում է, վոր գերմանացիները բաժան-բաժան են։ Նրանք չունեն իշխանություններ, վճիռը լուծելու և անպատվության համար պատիժ վորոշելու. միայն քրմերը կարող են չարագործին պատժել ատամոց անեծքը թափելով նրա վրա։

Քրմերը գուշակություններ էլ են անում. յերբ ցեղը վորոշում է արշավել, նրանք արգելված պուրակից հանում էին սրբազան ճիերը, վորոնք լծված էին ստեվածային կառքին և նրանց խրխնջալուց ու թափահարումից վորոշում էին՝ հաջողություն կունենան թե վոչ։ Ամբողջ ցեղին վերաբերող ընդհանուր գործերը վճռվում էին ռազմիկների ժողովում։ Նախ կազմվում և առաջնորդների խորհուրդ է քննում է, թե ինչը պետք է հայտնել ռազմիկների ամբողջ խմբին։ Ընդհանուր ժողովում բոլորը կարող են խոսել ազատ. առաջնորդները առավելություններ չունեին. ժողովի նախագահն էր ցեղի դլխավոր քուրմը։ Համաձայնությունը կամ անհամաձայնությունը ժողովածները արտահայտում էին զենքերի թրխկթրխկոցով։

Առաջնորդներին ընտրում էր բոլոր ազատների ժողովը. բայց նրանք կարող էին իրենց համար խմբեր (դրուժինա) կազմել հատկապես անձնվեր մարդկանցից։ Խմբի մեջ մանողը յերդվում է հավատարմությամբ ծառայել տիրոջը։ Պատերազմի ժամանակ խումբը ձիերի վրա նստած շրջապատում է առաջնորդին իբրև թիկնապահ. խաղաղ ժամանակ նա նրա պատվավոր շքախումբն է։ Պատերազմի ժամանակ ինչ վոր խմբի անդամները ձեռք բերելին, տրվում էր առաջնորդին. իր հերթին վերջինս պարտավոր էր կերակրել նրանց և զենք մատակարարել։ Նշանավոր առաջնորդի խմբի մեջ հաճախ մանում էին ոտար ցեղերի յերիտասարդները, գրավվելով նրա անունից։ Յեթե առաջնորդը մեծ ջախումբ ուներ, նրանից վախենում էին,

նրան նվեր էին ուղարկում ձիեր, ձիու սարքեր, զենքեր, վղին կախելու զարդեր, դրամ։

Գերմանացիների հարձակումը կայսրության վրա։ Տակիտոսի նկարագրելով արեվմտյան գերմանացիներից շատ բանում տարբերվում էին արեվելյացիները, վորոնք Թափառում էին Բալտիկ և Սև ծովի միջև յեղած ընդարձակ հարթավայրերում։ Այն ցեղերը, վորոնք սկսել էին յերկրագործությամբ պարապել, կարել էին նրանց արշավանքների ճանապարհը դեպի արևմուտք։ Յերբ Թափառականները աննդի պակասությունից վատ վիճակի մեջ էին ընկնում, կամ յերբ նրանց նեղում էին հարևանները, հեռանում էին իրենց տեղերից և սկսում էին գաղթել։ Այդ ժամանակ միքանի ցեղեր միանում էին և կազմում սպառազինված մեծ խումբ. ռազմիկները սովորաբար հին ընտանիքներից մեկին հայտարարում էին կոնունգ (կորոլ, թագավոր), վորը հայտնի յեր իր քաջագործություններով։ Յեթե ընտրությունը հաջող եր լինում, կոնունգը իր իշխանությունը մինչև մահը պահում եր և նույնիսկ կարող եր հանձնել իր վորդուն. այսպիսով Թափառական գերմանացիների մեջ ուժեղացավ միապետական իշխանություն։

Արևելյան գերմանացիները մեծ մասամբ ձգտում էին Դանուբի ընդարձակ հարթավայրերը և հյուսիս-արևելքից խուժում էին կայսրության սահմանները։ Առաջին անգամ այդ յեղավ 100 թվին մոտ Ք. հ.։ Մարկոմանների մեծ հորդանները ամրացած զինը ճեղքեցին և անցան, Դանուբի ուղղությամբ գտնվող հռոմեական սիրապետություններից շատ գերիներ տարան, նույնիսկ Ալպերի մյուս կողմն էլ ճեղքելով անցան, մտան հյուսիսային Իտալիա։ Մարկոս Ավրելիոս կայսրը իր քառամյա կառավարության ընթացքում գրեթե անդադար հյուսիսային սահմանի վրա բարբարոսների դեմ կռվելով և մեռավ Վիեննայում։

III-րդ դարի կեսին գերմանացիների ճնշումը ավելի ուժեղացավ։ Գոթերի ցեղի մեծ զորամասեր անցան Դանուբը, կողոպտեցին ամբողջ Հունաստանը մինչև Աթենք. Բյուզանդիայում գրավեցին առևտրական նավերը և անցան Փոքր Ասիա. ուրիշները իրենց նավակներով հասան մինչև Նեղոսի գետաբերանը։ Միաժամանակ ալեմաննների արևմտյան-գերմանական ցեղը հռոմեական տոգաթումբը ճեղքեց Հելվետոյի մոտ. սկսվեցին շոալանդական լեռնականների արշավանքները Բրիտանիայի հյուսիսից և պարսից մեծ պետության հետ դժվար պատերազմը։ Հռոմեական զորքը բավական չեր այդ բոլոր թշնամիներին և ավերիչներին դիմադրելու համար։ Յուրաքանչյուր շրջան, գրեթե յուրաքանչյուր քաղաք պետք և ինքն իր պատասխանատվությամբ իրեն պաշտպաններ։ Ոչ վոք Հռոմից ոգնություն չեր սպասում՝ կայսրին չեկին լսում։ Շրջանների վոխարքաները իրենց հայտարարեցին անկախ թագավորներ։

Կայսրության վերականգնումը։ Կայսրությունը 270 թվին Ք. հ. մոտ եր կործանման. նրա գործերը ուղղեցին այն կայսրները, վորոնք դուրս եկան Դանուբի բանակի սպաներից, բոլորն էլ հարևան Իլլիրիայից։ Կլավդիոս կայսրը, վոր կոչվում եր գոթերի կայսր, մեծ ճակատամարտում հաղթեց գոթերին և քշեց Դանուբից են կողմը։ Մի ուրիշ Իլլիրիացի՝ Դիոկլետիանոսը (284—305) կայսրության ամբողջ կազմը փոխեց։ Նա զինվորական ուժը նախկինի համեմատությամբ գրեթե չորս անգամ մեծացրեց, այնպես վոր

մոտ մի միլիոն զինվոր կար։ Վորպեսզի ընդարձակ սահմանի պահպան տեղերում լիազոր հրամանատարներ գտնվեն, կայսերական իշխանությունը ուրիշների հետ կիսեց։ Դիոկլետիանոսը նշանակեց յերեք կառավարչակիցներ, և 4 կայսրները, Թողնելով մայրաքաղաքը, սահմանների մոտ տեղավորվեցին, վոր հսկեն ռազմական գործողություններին՝ յերկու արևմտյան կայսրները—Միլանում (Ալպերի մոտ) և Տրիերում (Հռենոսի մոտ), յերկու արևելյանը՝ Նիկոմեդիայում (Փոքր Ասիայում) և նորքին Դանուբի վրա, այժմյան Բելգրադի մոտ։

Դիոկլետիանոսի հաստատած կառավարության յեղանակը շարունակեցին IV-րդ դարու կայսրները, ծագումով բոլորն էլ Իլլիրիացի. սրանց թվում էին այն յերկուսը, վորոնք քրիստոնեական յեկեղեցուն հաղթանակ տվին՝ Կոստանդին (311—337) և Թեոդոս (379—395)։ Կայսրության յուրաքանչյուր շրջանում նշանակվել էին յերկու վոխարքա՝ զինվորական և քաղաքացիական։ Առաջինի պարտքն եր շրջանի համար վորոշված թվով զինվորներ հավաքել և զինել. յերկրորդի պարտքն եր—շրջանի գյուղերի և քաղաքների մեջ բաժանել զրամական հարկը և այն նյութերը ներկայացնելը, վորոնք պետք էին կայսրության ահագին բանակի պահպանության և տեղափոխության համար։ Ստացվող հարկերի և տպրանքների (հաց, զենքեր, զգեստներ) ստացումը և հաշիվը շատ պաշտոնյաներ եր պահանջում. կայսրերները միշտ պատրաստում էին նաև զրասենյակի ծառայողների առանձին կազմ, վոր ծառայողների գործառնությունների անակնկալ ստուգություններ կատարեին։

Կայսերական գլխավոր պալատների և շրջանների կառավարության բազմաթիվ աստիճանավորների պահպանությունը ահագին զրամ եր պահանջում, և հարկերը մեծացան անլուր չափերով։ Պահանջված գումարի հանձնումը ապահովելու համար մացրին համայնքի պատասխանատվությունը (круговая порука), սեփականատերերից վորևե մեկի անուղղայության դեպքում բոլոր հարևանները նրա պարտքը պիտի իրար վրա բաժանեին և գանձարանին վճարեին։ Սեփականատերերը իրենց հերթին հարկերի ծանրությունը ձգում էին կոլոնների (գյուղացիների) վրա, վորոնք աշխատում էին իրենց հողի վրա և իրենց վճարում «բարքա» (տուրք)։ Կառավարությունը սեփականատերերից պահանջում եր վորոշ թվով զինվորացուներ նույն գյուղացիներից։ Սեփականատերերին գյուղացիների աշխատանքը, իսկ իրենց համար վճարումները և զինվորացուները ապահովելու նպատակով կոստանդին կայսրը հրովարտակով կոլոնների հողի հետ կապեց, այսինքն արդելեց նրանց այլ կոչման անցնել և խիստ պատիժներ նշանակեց նրանց համար, վորոնք կփորձեն իրենց գյուղից հեռանալ և կամ կալվածատիրոջ համար չաշխատել։

100 տարով կայսրությունը ապահովվեց բարբարոսների հարձակումներից։ Սակայն այդ պաշտպանության համար բնակչությունը շատ մեծ զոհերություններ արավ, և նրա ուժերը սպառվելու մոտ էին։ Կայսրության բնակիչներից, մինուլն և, չեր կարելի հարկավոր թվով զինվոր հավաքել. ստիպված էին վարձել գերմանական ցեղերի, վոր պաշտպանվին այլ բարբարոսներից։ IV-րդ դարի բանակը կազմված եր մեծ մասամբ ոտար մարդկանցից։ Շատ տեղերում գյուղացիները ծանր բարեկանքից ու

աշխատանքներից նեղված՝ հեռանում էին անտառները և ավազակամբեր կազմում։ Հարուստ մարդիկ հաճախ չցանկանալով իրենց ստացվածքը պահել Թողնել, կտակներ էին կազմում հոգուտ յեկեղեցու. նրանց ունեցվածքը անցնում էր յեպիսկոպոսների կառավարությանը, իսկ իրենք հոգևորական դառնալով պահում էին իրենց յեկամուտների մի մասը մինչև իրենց մահը։ Շատերն աշխատում էին կայսրության զժվարին ծառայությունից և ամեն տեսակ աշխատանքից բոլորովին հեռանալ, վորովհետև, միևնույն ես, արդյունքի մեծ մասը խլում էր գանձարանը, և դառնում էին վանական։ Վորքան ավելի յեր լարում կայսրությունը իր ուժերը, այնքան ավելի աղքատանում էր մարդկանց և միջոցների կողմից։ Մինչ այդ բարբարոսների աշխարհում մեծ առաջխաղացում էր պատրաստվում։

Մեծ գաղթի սկիզբը։ Արևելյան գերմանական ցեղերից ամենամեծը՝ գոթերը IV-րդ դարում գրավել էին սև-ծովյան տափաստանները։ Գոթերը քրիստոնեությունը ընդունել էին արիոսական քարոզիչներից, վորոնք կայսրությունից անցել էին նրանց մոտ. գոթերի Ուլֆիլա յեպիսկոպոսը ս. գրքը թարգմանեց գերմաներեն. (Արիոսի աղանդը, վոր քարոզում էր, թե Քրիստոս հավասար չի հայր-աստծուն, դատապարտվեց Նիկիայի ժողովում 325 թ.)։

Շուտով գոթերի վրա հարձակվեցին հոները, ասիական ծագում ունեցող, վայրենի թափառական մի ժողովուրդ։ Գոթերը բաժանվեցին. ոստգոթերը (արևելյանները) ստիպված էին հեռանել հոներին և սրանց ծառայել. վեստգոթերը (արևմտյանները) հեռացան հոներից և մոտեցան Դանուբին, պահանջելով, վոր իրենց հող հատկացնեն կայսրության սահմաններում։ Կայսրը համաձայնեց գոթերին տեղավորել այժմյան Բոլգարիայում պայմանով, վոր զենքերը հանձնեն, վորի փոխարեն հռոմեացիները սկզբնական ընթացում նրանց հաց պիտի տային։ Սակայն հռոմեական ատիճանավորները կաշառվեցին, գոթերին թողին զենքերը, սակայն հաց հասցնելում խաբեցին։ Գոթերը սովից ստիպված սկսեցին վաճառել կանանց և յերեխաներին սարկության, վերջապես սկսեցին շրջակայքը կողոպտել կատաղորեն, վոչինչ չթողնելով, «բացի յերկինքն ու յերկիրը»։ Սրանց դեմ դուրս յեկող Վալենտիանոս կայսրը Ադրիանուպոլսի մոտ չարդվեց և կոծանվեց։ Գոթերը մոտեցան Կ.-Պոլսին (378 թ.)։


Արևմուտքի Գրացիանոս կայսրը Թեոդոս զորավարին ուղարկեց, նշանակելով նրան միաժամանակ արևելքի կայսր։ Թեոդոսը զսպեց գոթերին, բայց ամենազգալիորեն կտուժ գինից. նրանք ընդունվեցին իբր Ֆեդերատներ (դաշնակիցներ) և իբր պարգև ստացան Բալկանյան թերակղզում հող, ճորտ գյուղացիների հետ։ Թեոդոսը հետո գործավ ամբողջ կայսրության կառավարիչ. մահվանից առաջ (395 թ.) նա արևմուտքը և արևելքը յերկու վորդիների մեջ բաժանեց։

Արևելյան կայսրը շատ ել ցանկանում ազատվել վեստգոթերի մոտիկ հարևանությունից։ Յերբ սրանք վռնդի վրա բարձրացրին և թագավոր հայտարարեցին յերիտասարդ Ալարիխին, հռոմեական ծառայության տալին, Կ.-Պոլսից նրանց ցույց արվեց ճանապարհը դեպի Իտալիա։ Արևմտյան կայսրի գլխավոր հրամանատարն ել հռոմեական ծառայության մեջ յեղող գերմանացի Ստիլիխոնը։ Վորպեսզի ուժ ունենա Ալարիխին յեռ տալու, Ստիլիխոնը պետք է լեգիոններին յեռ կանչեր Բրիտանիայից և Թողներ այն բախտի բերմունքին։ Յերբ կայսրի հրամանով Ստիլիխոնին դավանուրյամբ սպանեցին, Ալարիխը մոտեցավ Հռոմին, մեծ փրկանք պահանջեց և ապա «հավիտենական քաղաքը» հանձնեց Թալանի (410 թ.)։ Ալարիխի հանկարծակի մահից հետո գոթերը նոր ընտրած թագավորի գլխավորությամբ Իտալիայից հեռացան դեպի հարավ-արևմտյան Գալլիա. հետագայում նրանք գրավեցին Պիրենյան լեռների մյուս կողմն ևս՝ Սպանիան։ Արևմտյան կայսրը նրանց ճանաչեց դաշնակից, զիջեց գավառում հողեր, իսկ նրանք պարտավորվեցին կռվել ուրիշ պերմանացիների դեմ, վորոնք արդեն այդ ժամանակում անցել էին Գալլիա և Սպանիա։

Արևելյան գերմանական ցեղերից ամենից հետու անցան վանդալները, Ելբայի ափերից շարժվեցին դեպի Դանուբ, ապա Հունաստով անցնելով Գալլիա և Սպանիա և, վերջապես, ծովը անցնելով՝ Աֆրիկա։ Վերջապես տեղավորվեցին Կարթագենի մոտ։ Աֆրիկան յերկար ժամանակ Իտալիայի շտեմարանն էր։ Այժմ վանդալները զրկեցին ծովով հացահատիկ տանելը. նրանց հրամանատար Գեյզերիխը մեծ տորմիղ կազմեց, գրավեց Սիցիլիան և հաճախ խիստ կողոպուտի յեր յենթարկում Իտալիայի ափերը։

430 թվին արևմտյան կայսրի իշխանության տակ մնում էին միայն Իտալիան և Գալլիայի մի մասը։ Սրանց պահպանող զինվորական ուժերը գրեթե բացառապես գերմանացիներից էր կազմված։ Կայսրության այդ քայքայումը շատ արագ կատարվեց։ Գավառների բնակչությունը գերմանացիներին վոչ մի դիմադրություն չէր ցույց տալիս։ Քաղաքացիները և յերկրագործները հոժարությամբ ընդունում էին գերմանացի կոնտուգներին, վորովհետև ամեն տեղ, ուր սրանք հաստատվում էին, անհետանում էին հռոմեական ատիճանավորները և դադարում էին կայսրության վճարվող ծանր հարկերը և պարտավորությունները։

Արեվմտյան կայսրության վերջը։ V-րդ դարի կեսին թափառական ատրսափելի հոները, վորոնք ամբողջ արևելյան-գերմանական ցեղերի շարժման զարկը տվին, յերևացին Միջին Ցեվրոպայում։ Նրանց կողոպտած հարստություններն և գլխավոր բանակը գտնվում էր այժմյան Հունգարիայում, Միջին Դանուբի հարթավայրում։ Այստեղից հոների հրամանատար Ատտիլան, վոր կոչվել է «աստվածային խարազան», մեծ հորդայով շարժվեց դեպի արևմուտք, Դանուբի ընթացքով դեպի վեր գնաց, անցավ Հռենոսը և խուժեց Գալլիա։ Նրան հանդիպեց Աեցիոսը, հռոմեական ծառայության մեջ գտնվող մի բարբարոս, մեծ ուժերով՝ կազմված վեստգոթերից և Ֆրանկներից (վորոնք ապրում էին ներքին Հռենոսի մոտ)։ Ատտիլայի կողմը գրավում էին հոների հպատակեցրած ոստգոթերը։ Այսպիսով գերմանացիները կռվում էին ընդդեմ և հոգուտ Հռոմի և վճռեցին նրա բախտը (451 թ.)։ Ատտիլան չկտրվեց և անցավ Դանուբի մյուս կողմը։ Սակայն Վալենտիանոս III անպատկառ կայսրը, Թեոդոսի տոհմից վերջինը, հրամայեց սպանել Աեցիոսին։ Այդպես դիմադրության չհանդիպելով՝ Ատտիլան շարժվեց դեպի Իտալիա։ Հռոմը հոների կողոպուտից ազատելու համար Ատտիլայի մոտ ուղարկեցին հռոմեական պապին (յեպիսկոպոս)՝ Լևոն I-ին, մեծ բնծաներով։ Ատտիլան հեռացավ Իտալիայից, բայց յերեք տարի հետո Գեյզերիխը հարձակվեց Հռոմի վրա ծովի կողմից և հավիտենական քաղաքն այրեց։


ՀՈՒՆԱԿԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅՈՒՆԸ
ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ԳԱՂԹՈՒՄՆԵՐ

ված տառերով, և նա տախտակի վրա սև վրձինով այդ տեղերը սևացնում էր։ Կառավարության բոլոր պաշտոնները հռոմեացիներն էին զբաղվել. բայց սրանք չէին կարող գործի մեջ ծառայել։ Ընդհակառակը, միայն ստոգութիւնը զինվորական ծառայություն կարող էին անել և չէին կարող վարչական պաշտոն ունենալ։ Տարբերության մի կարևոր կետ ևս կար գերմանացիների և հռոմեացիների միջև. առաջիններն արիոսական էին և ունէին իրենց հոգևորականությունը, երկրորդները՝ կաթոլիկ էին և հպատակվում էին հռոմեական եպիսկոպոսին։

Ինչպես ոստոգոթների, նույնպես և վեստգոթերի և վանդալների թագավորությունն էր կազմված։ Այլ կարգեր էին հաստատվել Ֆրանկների թագավորության մեջ։ Քլոդվիգ թագավորը հաղթելով հռոմեական փոխարքային, քրիստոնեությունն ընդունեց, բայց ոչ արիոսական ձևով, ինչպես մինչև ինքն եղած մյուս գերմանացիները, այլ կաթոլիկական։ Հենվելով հոգևորականության համակրանքի վրա, Քլոդվիգը հարավ–արևմտյան Գալլիայից դուրս քշեց արիոսական վեստգոթերին. նրա զորղները իրենց յոթթաղկեցին հարավ–արևելյան Գալլիան, ուր տեղ էր բռնել բուրգունդների ցեղը։ Ֆրանկները այլ կերպ ցրվեցին յերկրում, քան գոթերը և վանդալները։ Նրանց մի մասը մնաց հին հայրենիքում Հենոսի և սրա վտակների ափերին. սալյան ֆրանկները, որ Քլոդվիգի հետ շարժվել էին Գալլիա, խիտ խմբերով զբաղեցին հյուսիսային Գալլիան Հենոսի ձախ վտակներից սկսած մինչև Սենա և Լուար։ Գերմանո–հռոմեական բոլոր թագավորություններից մնաց միայն ֆրանկներինը։ Ոստոգոթերինը և վանդալներինը նվաճեց VI-րդ դարում արևելյան կայսրը, իսկ վեստգոթերինը VIII-րդ դարի սկզբում նվաճեցին մուսուլմանները։

Կայսրության յերկրորդ վերականգնումը Հուստինիանոսի ժամանակ։ Սկզբում Հուստինիանոսի (527–565) գրությունը Կ.–Պոլսում անհաստատ էր, ուր կայսրը կախում ուներ կրկեսի մեծ կուսակցություններից՝ կանաչներից ու կապույտներից։ Կանաչները մոնոֆիզիտներ—մարքնակներ էին (այսինքն ժխտում էին Քրիստոսի մարդկային բնությունը), իսկ կապույտները՝ ուղղափառ էին։ Վերոհիշեալ Հուստինիանոսը ձնշում էր կանաչներին և կապույտների կողմն էր, կանաչները խռովություն բարձրացրին և «նիկա» (հաղթիր) կոչով այլ կայսր հայտարարեցին։ Հուստինիանոսը ուզում էր նավերով փախչել, բայց Նրան ազատից պարսից դեմ կատարած արշավանքից նոր վերադարձած Բելիսարիոսը։ Սա խռովարարներին իրենց կայսրի հետ կրկեսի մեջ լցրեց, և նրա զինվորները սպանեցին 30,000-ից ավելի մարդ։

Խռովությանը վերջ տալով՝ Հուստինիանոսը արտաքին ձեռնարկություններն զիմեց։ Սկզբում Բելիսարիոսին ուղարկեց Աֆրիկան նվաճելու։ Վանդալները զիմադրություն ցույց չտվին. նրանք քիչ էին, անտեսր կլիմայից և ճոխ կյանքից թուլացել էին և վերջը կոտակվել էին մի ամրացած բանակում։ Հետո Բելիսարիոսը Սիցիլիայով անցավ Իտալիա։ Զնայելով իրենց քաջության՝ ոստոգոթերը մեկքան անգամ պարտվեցին։ Ֆրանկների ոգնությամբ, վորոնք յերկու անգամ Ալպերի մյուս կողմից յեկան, Հուստինիանոսի զորքերը գրեթե վոչնչացրին ոստոգոթերի ամբողջ ցեղը (555 թ.), կայսրը կարող եր իրեն Մեծերկրացիների տեր համարել։

Հուստինիանոսը բարձր զաղափար ուներ իշխանության մասին։ Նա

ուզում եր նախկին հռոմեական փառքի վերածնող հռչակվել։ Նրա հրամանով Բաղաքացիական օրենսգրքի ժողովածու կազմվեց հռոմեական ժողովրդի որենքներից, հռոմեական կայսրների հրամաններից և հռոմեական ականավոր իրավաբանների գիտական մեկնություններից։ «Զենքը և օրենքները կազմում են պետության մեծ ուժը. հռոմեական ցեղը թե մեկում և թե մյուսում միացած բոլոր ժողովուրդներին գերազանցից և բոլոր ցեղերից էլ վեր բարձրացավ. այսպես եր անցյալում, ասածու վողորմությամբ այդպես կլինի հավիտյանս»։ Սակայն կայսրությանը վերադարձված Հռոմը նախկին նշանակությունը կորցրել եր. մի միլիոն բնակչությունից նրա մեջ միացել եր մի քանի տասնյակ հազար։ Հուստինիանոսը իսալական փոխարքային (եկզարխ) հաստատեց վոչ Հռոմում, այլ Աղրիատիկ ծովի ափի Հավենննայում։ Նրա վերականգնած կայսրությունը միայն բարբարոսների ուժով եր պահվում։ Հուստինիանոսի զորքում առաջին մասում կովում եր հոների հեծելազորը. նա արևմուտք եր ուղարկում վայրենի լեռնաբնակներին Բալկաններից և Փոքր Ասիայից, սև-ծովյան տափաստաններից էլ թափառականներին։

Լանգոբարդները Իտալիայում։ Արևելյան կայսրը յերկար չտիրապետեց Իտալիան։ Ոստոգոթերի թագավորության վոչնչացումից 13 տարի հետո հյուսիսային Իտալիա ժամավ լանգոբարդների արևելյան-գերմանական ցեղը, վորը մինչ այդ ապրում եր միջին Դանուբի ափերին (568 թ.)։ Լանգոբարդները գոթերից ավելի վայրենի եյին. նրանց դեմքերը դաջված եյին կանաչ ներկով (татуировка), ընչանակված եյին յերկար մազերով, վորոնք իջնում եյին այտերի վրայով և հյուսվում մորուքի հետ. նրանց առաջնորդ Ալբոյինը խմում եր սպանված հակառակորդի գանգից. նրանք անխնա կոտորում եյին տեզացիներին և այրում գյուղերը։

Լանգոբարդները արևելյան-հռոմեական փոխարքայից խլեցին հյուսիսային Իտալիան և Թերակղզու մեջին մասը, կայսրի տիրապետության տակ Ճացին Աղրիատիկի ափի շերտը Հավենննայի հետ, Հռոմը և մյուս ափին Ամալֆին։

Լանգոբարդները նվաճումների ժամանակ ցեղերի բաժանված զինվորական ուժ եյին կազմում. տիրող ընտանիքները ունէին խոզերի մեծ յերամակներ և ապրում եյին իրենց ճորտերի՝ ալդիոցների յերկրագործական աշխատանքների հաշվին։ Իտալիա մտնելով՝ լանգոբարդները սկզբում տեղական բնակչությունը նույնպիսի հպատակության մեջ դրին։

Հասարակության բարեբեր ուեվմուտքում։ Արդեն III-րդ դարում սկսած, յերբ սկսվեց բարբարոսների ներխուժումը կայսրության մեջ, արևմտյան քաղաքները անկման դիմեցին. հետզհետե կորչում եր արվեստագործների և արհեստների վարպետների հմուտ աշխատանքը. յերկրագործների փախուստի պատճառով շատ տեղեր անմարդաբնակ եյին դարձել։ IV-րդ դարում կայսրությունը վերականգնողները՝ Դիոկղետիանոսը, նրան հաջորդած Կոնստանտինը և բարեկեցությունը. ընդհակառակը՝ իրենց ծանր հարկերով, գործի համար պաշար պահանջելով, ոտարերկրյա գործերին տեղ տալով, նրանք մեծացրին աղքատությունը և ուժասպառությունը։ Դերմանացիների գաղթը դրությունը ավելի ևս վատացրեց։ Մշակված պաշտերի և խաղողի այգիների յերկրում բարբարոսները շարունակում եյին իրենց նախկին անտառապատ հայրենիքի վորսորդական կյանքը, կոսկատում

եյին արտերը և պարտեզները։ Կերուխումի մեջ ապահ, նրանք շուտով ջնջեցին պաշարները և սկսեցին հարևաններին թալանել։ Իրենց վեճերն ու վիրավորանքները դատարանով չէյին վճռում, այլ վրեժով և սեփական պատժով. ճանապարհների վրա ամեն տեղ կարելի էր հանդիպել վինովորների թագաններին, վորոնք իրենց թշնամիներին եյին սպասում։ Ամենաբարձրյալ աստծուն և Քրիստոսին այդ սարսափելի մարդիկ պատկերացնում եյին իբր յերկնային ահեղ իշխանավորներ, հեթանոսական կատաղի քամու և կռվի Վոդան (կամ Ոդին) աստծու նմանությամբ։

Բարքերի կոպտությունը, վոր բարբարոսները իրենց հետ բերին, անդրադարձավ նաև ռոմանական ժողովրդի վրա։ Լուսավորությունը ցած աստիճանի հասավ. հռոմեական հին դպրոցները փակվեցին։ VI-րդ դարի յերկրորդ կեսի գրող Տուր քաղաքի Գրիգոր յեպիսկոպոսը գանգատվում է, վոր վոչ վոք չկարողացավ իրեն մաքուր լատիներեն լեզուն սովորեցնել։ Ինքը բարի, արդարամիտ և առկուն մարդ, Գրիգոր Տուրացին պատմում է իրեն շրջապատող սարսափների, խստությունների և բռնությունների մասին, իբր մի սովորական բանի մասին. նրան թվում է, վոր աշխարհի վրա ամեն ինչ ծերանում է, և աշխարհի վերջը մոտ է։ Թե վորքան քիչ եյին գնահատում հների գրականությունը, յերևում է Գրիգորի «Հրաշքների գիրք» աշխատության պատմությունից. նրա խոսքի համաձայն սուրբ Հերոնիմոսը յերկնային դատարանում խիստ պատժվեց նրա համար, վոր շատ հաճախ եր կարդում «Կիկերոնի խաբեբայությունները և Վիրգիլիոսի սուտ պատմությունները»։ Հույների գիտական այն բոլոր տեղեկությունները, վոր մնել եյին հռոմեական դպրոցները, մոռացվել եյին։ Յերկիրը պատկերացնում եյին իբր հարթ շրջան կամ մի սար, վոր լողում է ջրի մեջ. նրա վրա, իբր մի հիմքի, ամուր հաստատված է միքանի հարկանի յերկնակամարը. արևը ամեն որ անհետանում է լեռան մյուս կողմը։

Արշավանքների և ավերածությունների տարիներում վանական հին դաստիարակությունը ավելի շատ մարդիկ, քան առաջ. վոմանք իրենց կյանքն ու գույքը պաշտպանելու, մյուսները՝ վորովհետև հուսահատվում եյին, վոր կարող կլինեն ընդհանուր կողոպուտի, խստությունների և անբարոյականության մեջ իրենց հոգին ազատել, վերջապես վոմանք վինտում եյին ապաստարան, վոր գիտությամբ և արվեստով պարապեն։ Բարբարոսների մեջ ևս պատահում եյին ուժեղ կամքի և արդար հոգու տեր մարդիկ, վորոնք ընտրում եյին զրկանքի և ծանր արհեստյան կյանքը. նրանք հաճախ իրենց նվիրում եյին իրենց ամենավայրենի ցեղակիցների մեջ քարոզելուն։ Վանականները սովորաբար միանում եյին, կազմում մաերիմ համակեցություն։ Վանքը իր բարձր և ամուր պարիսպների յետևը թագցնում եր անապատականներին, վորոնք հրաժարվում եյին ընտանիքից և անձնական գույքից. նրանց համար ամեն ինչ հասարակաց եր։ Հաճախ նշանավոր անապատականի շուրջը հավաքվում եր յեղբայրություն. անապատականը կազմում եր կենցաղի հրահանգը, վորը հետո մյուս վանքերն ընդունում եյին։ Մեծ հռչակ ստացավ ս. Բենեդիկտոսի (ծննդյամբ Նուրսիից) կանոնադրությունը, վորը մի-ջին Իտալիայի լեռներում հիմնել եր Ապոլլոնի քանդված տաճարի տեղում Մոնտեկասսինո վանքը։

660 թվից, յերբ Յեվրոպան աղքատացավ և մտավորապես ընկավ, արդյունաբերության գործում, գիտության և դպրության մեջ առաջնությունը անցնում է Առաջավոր Ասիայի և հյուսիսային Աֆրիկայի ժողովուրդներին։ Իրենց հերթին այդ ժողովուրդները միացան, կազմեցին արաբների պետություն, մի թափառական ցեղ, վորն ընդունեց նոր հավատ՝ իսլամը։

II. ԱՐԱԲՆԵՐԸ ՅԵՎ ԲՅՈՒԶԱՆԴԻԱ 600—1100 թ.

2. ԱՐԱԲՆԵՐ

Հին աշխարհի թափառականները յեվ իրենց ավանդությունը։ Հին աշխարհի ամբողջ լայնությամբ Մեծ ովկիանոսից մինչև Ատլանտյանը տարածված եր ավազոտ և քարքարոտ անապատների մի յերկար շերտ. այդ շերտի մի ծայրում Գոբին եր, մյուսում՝ Սահարան, նրանց մեջ միջին Ասիայի անապատները՝ Իրան և Արաբիա. կտրված միայն ծովային նեղ խորշերով, գետերի հովիտներում (Յեփրատ և Նեղոս) և oազիսներով։ Անապատների մեջ և նրանց յերկարությամբ ընկած են, իբր յեղրազարդ, խոտառատ տափաստանները։ Մեծ շերտի կեսից՝ կասպից ծովի մոտից բաժանվում է ավազոտ և խոտառատ հարթությունների մի ճյուղ, վորը անցնում է արևելյան Յեվրոպայով և ընդգրկում է ռուսական մեծ գետերի շրջանը, Դանուբի ընթացքով հասնում Ալպերին։

Ընդարձակ տարածությունների վրա, անապատների ափերին, տափաստանների մեջ կարող են առանց աշխատանք գործ դնելու ապրել թափառական, անասնապահ ցեղեր։ Նրանց ամբողջ հարստությունը հոտերն են. բայց նրանց անասունը այլ է, քան յերկրագործական յերկրինը. վոչ խոշոր յեղջյուրավոր, վոր պահանջում է առատ կեր, այլ փոքր, քիչ պահանջկոտ վոչխարներ և այծեր. բացի այդ՝ ուղտը, վոր հողագործական յերկրներին մի-անգամայն ոտար է։ Թափառականները չեն կարող առանց բուսական կերակրի ապրել և պետք է հողագործների հետ հարաբերության մեջ մտնեն։ Նրանց մեջ առաջ և գալիս առևտուր, սակայն թափառականները հաճախ նըստակյաց հարևաններին կողոպտում են։ Հողագործների հետ ընդհարվելիս թափառականները մեծ առավելություն ունեն. քիչ զբաղված լինելով, դյուրաշարժ հեծելազոր կազմելով, նրանք զինք լավ բանեցնել գիտեն և կարող են արագ, մեծ խմբերով հավաքվել։

Մեծ ուժ կազմելով՝ թափառականները ոգտակար են համարում նվաճել պաշար հավաքող և աշխատասեր հարևաններին և տիրել, վոր հարկ վճարեն զանազան առարկաներով։ Նվաճողները յերբեմն ծնում են իրենց թափառելու հին տեղերում և ուղարկում են նվաճվածների մոտ իրենց վոխարքաներին և հարկահավաքներին։ Յերբեմն նրանք ծնում են նվաճվածների մեջ, գինվորական հատուկ բանակատեղիներում՝ «ոգալներում», ուր պահպանում են թալանած հարստությունը. նրանց շրջապատում և աշխատավոր ճորտ բնակչությունը։

Մեր ժամանակում անապատի բնակչությունը քիչ է, համեմատած Յեվրոպայի և Ջինաստանի շրջապատի հողագործ և արդյունաբերող յերկրների բնակչության հետ։ Առաջին հազարամյակում Ք. ն. հին աշխարհում դրությունը այլ եր։ Տափաստանների շերտի յերկու ճյուղերով շարժվում

905.66

հին թափառական մեծ խմբեր։ Ընդհակառակը՝ յերկրագործ և նստակյաց բնակչությունը այնքան մեծ և ուժեղ չեր։

Տափաստանցիները անդադար խուժում էին նրանց մեջ և հպատակեցնում իրենց մեծ շրջաններ, վոր պատկանում էին նրանց։ Մեծ տափաստանի շերտի յեվրոպական ճյուղում հոներից հետո (IV—V դ.) յերևացին ավարները (VI—VIII դ.), բոլգարները (VII դ.) և մադյարները (IX դ.)։ Նրանք կանգ առան յեվրոպական տափաստանների արևմտյան ծայրերում, միջին և ներքին Դանուբի մոտ, այսուհետև՝ ամրացած բանակատեղիներից, նրանք հաճախ հեռավոր արշավանքներ էին կատարում դեպի Բալկանյան թերակղզին, Գերմանիա, Ֆրանսիա և Իտալիա։ Նրանց յետևում— արևելքում՝ Սև ծովի և մերձ-կասպյան տափաստաններում կային խազարները՝ պեչենեգները և պոլովցիները (IX—XII դ.)։

VII-րդ դարում այն յերկրները, վորոնք ընկած էին տափաստանների ասիական-աֆրիկական մեծ շերտի ուղղությամբ, միացան թափառական մի մեծ ժողովրդի՝ արաբների իշխանության տակ, վորը արաբերենով և լեզվով մոտ էր հրեաներին։ Այդ միացմանը դուզընթաց յեղավ նոր հավատի՝ իսլամի տարածումը։

Արաբիան, վոր մեծությամբ Յեվրոպայի գրեթե մի յերրորդին հավասար է, կազմված է արաբական մեծ թերակղզուց և հյուսիսից նրան կից գտնվող ասորական անապատից։

Թերակղզու հարավային անկյունը՝ Յեմենը հարուստ է արևադարձի բուսականությամբ. նրա բնակչությունը պարապում էր հողագործությամբ և պարտիզպանությամբ։

Մյուս մասը՝ խոշոր Նեջդը՝ աչքի յե ընկնում սակավ վոռոգամով։

Բնակչությունը ապրում է ջրհորների մոտ կամ թափառում իր հոտերով մի ջրամբարից դեպի մյուսը։ Ահագին տարածություններ կատարյալ անապատներ են, միայն գարնան անձրևներից հետո, կարճ ժամանակով կանաչ և բուսնում և անասունների համար բացվում են արոտատեղեր։

Այդ յերկրի բնակիչների՝ բեդվինների կենցաղը գլխովին միում է մեհենությունը։ Բեդվինները բաժանվում էին ցեղերի, ցեղերը տոհմերի, տոհմերը գերդաստանների և ընտանիքների։ Այդ բաժանումը, վոր կապ չուներ հողի հետ, բոլորովին համապատասխան էր նրանց շարժուն կյանքին։

Գերդաստանը չեր բաժանվում և ազգակիցների շատ բան ընդհանուր սեփականություն էր. հարուստը իրեն պարտավոր էր համարում աղքատացած ազգականների պարտքերը վճարել, վորբերին կերակրել։

Բանակը, վոր կազմված էր տոհմից կամ ցեղից, գլուխ կանգնած էր ընտրված ավագը՝ սայիդը։ Պատերազմի համար ընտրում էին ուրիշ առաջնորդ. վեճի դեպքում դիմում էին սայիդի դատաստանին, բայց նա ուժ չուներ վճիռը իրականացնելու։ Վիրավորվածը պետք է իր մերձոցներով բավարարություն ստանար, իր ազգի կամ տոհմի մարդկանց հավաքեր և վրեժ առներ իրեն վիրավորողից, պիտի աշխատեր սպանել նրան, անասուններն փախցնել, իսկ անզորության դեպքում նրան սպառնար անհձգով։

Ամեն ցեղ ուներ իր հովանավոր աստվածը. հավատում էին բարի և չար վոգիներին, վորոնք վխտում էին մարդու մոտերքը. պաշտում էին սուրբ քարեր, ծառեր և առվակներ, բայց գաղափար ունեյին նաև յերկնային աստվածների մասին. համաստեղությունների աստվածներից խընդրում էին անձրև և հավատում էին, վոր նրանք են յեղանակ տվողը։ Ուրբաթօրյուր ցեղ գլխավոր աստծուն անվանում էր Ալլահ. այդ ընդհանուր անունը ազնեց ցեղերի իրար մոտենալուն։

Հիջասի՝ արաբական ծովի յերկարությամբ ձգվող արևմտյան ափի մոտ գտնվող շերտի, բնակիչները իրենց ձեռքն էին առել հյուսիսի և հարավի արտադրությունների առևտուրը։

Արևելյան հռոմեական և պարսկական յերկրներից Արաբիա էին տանում հացահատիկ և արհեստավորների արտադրություններ, Յեմենից վոսկի, թանգագին քարեր, արևադարձի պտուղներ և անուշահոտ նյութեր։ Ամենից ավելի առաջ գնացին Մեկկայի վաճառականները, այն քաղաքի, վոր կազմվել էր քարավանների հանգստանալու գլխավոր տեղում։ Մեկկայի վաճառականները կազմել էին միություն առևտուրը պաշտպանելու՝ քորայշիները միացան սրբազան դրոշակի շուրջը. մի մեծ տան մեջ հավաքվում էր վաճառականների ավագների խորհուրդը։ Նրանց հսկողության տակ էր գտնվում Մեկկայի գլխավոր սրբավայրը՝ Քաաբան. այդ շենքը խորանարդի ձև ուներ, ծածկված էր մութ գույնի կտորներով, ընդարձակ բակի մեջ շրջապատված սյուներով. նրա պատի մեջ դրված է սև քարը, վորը ավանդության համաձայն աստված տվել էր Աբրահամին։

Քորայշիները գրավում էին բեդվիններին գալու Մեկկայի տոնավաճառներին և տոներին։ Տափաստանների արաբները բերում էին անասուն և փոխանակում զենքով ու կտորով, վորոնք պատրաստված էին Սիրիքում։ Ամեն տարի կատարում էին հանդեսով գարնան տոնը, վոր գրավում էր ազգաթավորներին. տարվա մեջ չորս ամիս դադարում էին ավազակային հարձակումները, և խաղաղություն էր հաստատվում։ Մեկկայի կառավարիչները արաբական բոլոր ցեղերին թույլ էին տալիս մասնակցելու Քաաբայի պաշտամունքին. յուրաքանչյուր ցեղ ընդհանուր սրբավայրում գտնում էր իր տեղական հովանավոր աստծու արձանը. միաժամանակ Քաաբան Ալլահ-Թաալին, բուրձրագույն աստծու, Աբրահամի և Իսմայիլի (տափաստանների արաբների նախահոր) աստծու, տաճարն էր։

Արաբական անապատը հյուսիսում սահմանակից էր արևելյան հռոմեական կայսրության և պարսիկների պետության։ Արաբների հարևանները նեղություններ էին կրում տափաստանների բեդվիններից, բայց միաժամանակ աշխատում էին օգտվել նրանց ռազմական ուժից։ Կայսրները վարձկան արաբ զինվորների բնակեցրին Սիրիքում, պարսիկների թագավորները՝ Յեփրատի ուղղությամբ. վաճանք ծառայում էին կայսրության պարսկիների դեմ, պարսիկներին՝ կայսրության դեմ։ Արաբ զորավարների մի մասը ընդունեց քրիստոնեություն։

Սահմեդ յեվ համայնք Սեղինայում։ Հրեաների, քրիստոնյաների և պարսիկների հետ ունեցած հանդիպումները արաբների մեջ պահանջ առաջ բերին ավելի բարձր հավատ վորոնելու։ Այդպիսի վորոնողներից էր նաև Մահմեդ Քորայշիները (570—632)։

Յերազկոտ, տեսիլքների տրամադրված Մահմեդը սկզբում բավականաչափ մի նվեր շրջանի բացատրեց իր մտքերը, վորոնք մեծ մասամբ քրիստոնեական, հրեական և պարսկական ուսմունքների կրկնություններ էին. այդ-

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ГСС Библиотека
ՀԱՍՌ-Ար ՍՍՐ

պիսին եր հավատ մի աստծու, վորի կողքին այլ աստվածներ չեն կարող լինել։ Մահմեդը խստորեն դուրս յեկավ կուռքերը պաշտելու դեմ և հավատում եր, վոր ինքը արաբ ժողովրդի մեծ մարգարեն է, վորը կոչված է վերականգնելու խավարած աստվածային հայտնությունը։ Նա խորապես հավատում եր, վոր շուտով աստվածային մեծ դատաստան կլինի, և մարդիկ իրենց գործերի համաձայն կվարձատրվեն։ Մահմեդը հանդիպեց քորայշիների մեծ մասի ծաղրին և հուզմունքին, նրանք յերկյուղ եյին կրում, թե կկորցնեն իրենց առևտրական աղբյուրները, վորը կապված եր Քաաբայի և սրա կուռքերի հետ։ Գիտակցելով, վոր իրենց դրությունը վտանգավոր է Մեկկայում, Մահմեդը և իր բարեկամները վորոշեցին փախչել հյուսիս, Յաթրիբ քաղաքը, վորը ներկայումս կոչվում է Մեկկայի։ Այդ «փախուստի» (հեջրա 622 թ. Ք. հ.) մուսուլմանները շատ կարևոր են համարում. նրանք իրենց ժամանակի հաշիվը սկսում են այդ տեղից, ինչպես մենք՝ Քրիստոսի ծննդից։

Յաթրիբի բնակիչները Մահմեդին մարգարե ճանաչեցին և նրա հետ պայման կապեցին։ Բոլոր հավատացյալները, Մահմեդի հետ փախչողները և նրան ընդունողները պետք է կազմեյին մի համայնք՝ մուսուլմանների (հավատարիմների), հակառակ ինացած չհավատացող արաբների։ Համայնքի անդամների մեջ պետք է արյան վրիժառություն չլիներ։ Պատերազմը և խաղաղությունը մուսուլմանների համար ընդհանուր գործ եր. յեթե մեկը աստծու համար մղված պատերազմում ընկնի, համայնքի ինացած անդամները, իրրև ազգակիցները, պիտի նրա արյան վրիժը լուծեն։ Մահմեդին ընդունող Յաթրիբը սկսեց կոչվել Մեդինա-ալ-Նաբի (մարգարեյի քաղաք)։ Մահմեդը Մեդինայում հիմնեց առաջին աղոթատունը՝ մզկիթը, հրեական սինագոգայի նմանությամբ։

Աւրաբների միացյալը. իսլամ յեվ խալիֆներ։ Մեդինայից Մահմեդը սկսեց իր կողմը գրավել տափաստանների ցեղերին, բայց հատկապես աշխատում եր յերկրի կենտրոնը՝ Մեկկան գրավել։ Սկզբում Մահմեդը անհաջողությունների յեր հանդիպում, բայց մուսուլմանները սկսեցին Մեկկա գնացող քարվանների ճնշել և սպառնում եյին միանգամայն վոչնչացնելու նրա վաճառականությունը։ Այդ ժամանակ քորայշիներից խոշոր անձնավորություններ սկսեցին Մահմեդի կողմն անցնել, և վերջապես Մեկկան մարգարեյից խաղաղություն խնդրեց։ Մեկկացիները նրան հավատարմության յերդում տվին, իսկ նա յել նրանց մուսուլմաններին հավասար ճանաչեց ամեն բանում։ Մեկկա մտնելով՝ Մահմեդը, սովորության համաձայն, յոթն անգամ պտտեց Քաաբայի շուրջը, կեռ գավազանով շոշափեց սև քարը և «ճշմարտությունը յեկավ, թող կորչի սուտը» խոսքերն ասելով, հրամայեց դուրս շպրտել մոտ 300 կուռքերը։ Բայց Մահմեդը մի կարևոր զիջում արավ։ Նա ճանաչեց հեթանոսական հին Քաաբայի սրբությունը և յուրաքանչյուր հավատացյալի վրա պարտք դրեց իր կյանքում գոնե մի անգամ ուխտ գնալ այդ սրբավայրը։

Նոր հավատը կոչվեց իսլամ (հնազանդություն աստծուն)։ Հավատի սկզբունքները արտահայտված են այն տողերում, վորոնք վերագրվում են Մահմեդին և իրր թե նրա աջակիցների հիշողության մեջ ինացին։ Կազմվեց դուռան գիրքը, վորի մեջ հավաքված և հին արաբական շատ իմաստություն։ Դուռանի խոսքով «աստված մի յե, ծնված չե և ինքն էլ չի ծնել, և վոչ վոք նրան հավասար չե»։ Նրա կամքը և ճշմարիտ ուսմունքը հետզհետե հայտնվեց Ադամի, Աբրահամի, Մովսեսի և Հիսուսի, իր մարգարեների, միջոցով. սրանցից վերջինը և ամենաբարձրը Մահմեդն է։ Մահմեդը մանրամասն նկարագրել է ահեղ դատաստանը և «մյուս աշխարհը»։ Մեղավորների դատաստանի մասին կհայտնե փչող փողը։ Նրանց անծայրը շարքերը գերեզմաններից դուրս կգան և կներկայանան Ամենաբարձրյալին։ Մի նեղ, մազի պես նուրբ և դանակի բերանի պես սուր կամուրջ դժոխքի անդունդի վրայով տանում է դրախտը. ազատվողը մի ակնթարթում մյուս կողմն է տարվում, դատապարտվածը անխուսափելիորեն ընկնում է անդունդը։ Դժոխքում սարսափելի տաք է և ցուրտ, կերակուրը թունավորված։ Դրախտը հովասուն պարտեզ է, շատրվաններով, ուր յերանելիները հանդըստանում են ճոխ կերակուրներ ուտելով, ինչպես չքնաղ ոգիները, վորը պատկերանում է հոգնած ճանապարհորդին անապատում։ Հավատի համար մղված պատերազմում սպանվածը իսկույն դրախտ է գնում։

Կրոնական այն սովորությունները, վոր հաստատել է Մահմեդը, համապատասխանում են թափառականների կյանքին։ Տափաստաններում ցրված ցեղերի և տոհմերի մեջ չեր կարող շատ թվով հոգևորական և յեկեղեցիներում եյ շքեղ պաշտամունք լինել։ Ամեն մեկը անապատում պետք է կարողանա աղոթք անել. աղոթքը պարզ է, այնպես, վոր անգրագետը կարող է հիշել. որական հինգ անգամ պետք է աղոթել, աղոթողները յերեսները դարձնում են դեպի Մեկկա։ Այնտեղ, ուր հավատացյալները մեծ քանակություն են կազմում, ուրբաթ որը մինարեթից (մեծ աշտարակ մզկիթի մոտ) հնչող ձայնը լսելով՝ բոլորը հավաքվում են, միասին աղոթում և լսում իմամի (գլխավորի) քարոզը։

Մեկկան գրավելուց հետո Մահմեդը աշխատում եր տիրել ամբողջ Արաբիան։ Նա զանազան ցեղերի պահանջ դրեց ընդունել իսլամը և հարկ տալ հավատի գործը, այսինքն աղքատներին խնամք տանելը և արբազան պատերազմի զինվորներին պահպանելը, պաշտպանելու համար։ Առանց այն եյ արաբները ձգտում եյին հայրենիքի սահմաններից դուրս գնալ. այժմ նրանց համար արշավանքները, գաղթելը և առևտրի նոր ճանապարհներ վրտնելը արդարացնելու նոր միջոց յերևաց. այդ արդարացումը այն եր, վոր արաբները աստծու ընտրյալ ժողովուրդն են և պետք է ամեն տեղ տարածեն նոր հավատը։ Յերբ Մահմեդը, հիջրայից տասը տարի հետո, մեռավ, մուսուլման համայնքը ընտրեց մարգարեյի աղգականին՝ խալիֆ։ Սկզբի չորս խալիֆները Մահմեդի մոտիկ ընկերներից ու աղգականներից եյին։ Խալիֆը ինում եր Մեդինայում, վորը եր ուղարկում և կառավարում եր նվաճուները։ Նա կառավարում եր ընտրյալ ժողովրդին և պետք է բացատրեր աստծու հայտնությունը. (հոգևոր և աշխարհիկ իշխանության այդպիսի միացումը մեկի ձեռքում մենք անում ենք թեոկրատիա, այսինքն աստծու կառավարություն)։

Աւրաբների նվաճումները։ Յերկրորդ խալիֆի՝ Ումարի ժամանակ արաբները իրանց ամենամեծ նվաճումները կատարեցին. խալիֆի ուղարկած առաջնորդները գրավեցին կայսրության հարուստ գավառները՝ Ասորիքը և Յեգիպտոսը և պարսիկների ամբողջ թագավորությունը (մոտ 640 թ.)։

Արաբներին շատ ուրախ այն հանդամանքը, որ կայսրությունը և Պարսկաստանը դրանից մի քիչ առաջ քայքայող պատերազմ էին մղել միմյանց դեմ, որի ընթացքում միմյանց ուժասպառ էին արել։ Կայսրը Ասորիքում գրեթե զորք չուներ։ Յերուսաղեմը հաղթողի առաջ բացեց դռները, և ինքը խալիֆը Մեդինայից յեկավ սրբազան քաղաքը, պատրիարքը հրավիրեց նրան մտնելու տաճար, բայց Ոմարը սանդուխների վրա կանգ առավ և այստեղ կատարեց իր աղոթքը։ Յեգիպտոսի բնակչության մեծ մասը՝ ամբողջ հասարակ ժողովուրդը, գյուղացիները, արհեստավորները հետևում էին մի սբենակների (մոնոֆիզիտների) պաշտոնին, հակառակ ասորեստանավորներին և զինվորներին, որոնք յեկել էին Կ.-Պոլսից։ Տիրող յեկեղեցու կողմից դատապարտված հերետիկոսները, ուղղափառներին տանելու պատճառով, իրենք հրավիրեցին արաբներին։ Պարսիկների դեմ պատերազմը ավելի դժվար եր, սակայն այստեղ էլ արաբները հաղթեցին, յերբ նրանց ձեռքն անցավ պարսիկների պետության հարստության գլխավոր աղբյուրը՝ Յեփրատի և Տիգրիսի ընթացքով ընկած խիտ բնակություն ունեցող յերկիրը, իր նշանավոր առատ հունձքերով։ Նվաճողներին մեծ ուժանդակություն էին ցույց տալիս արաբական զինվորական գաղթականները, որոնք պարսիկների ծառայության մեջ էին դանվում. նրանք միանում էին տափաստանների արաբներին և ընդունում նրանց նոր հավատը։

Պատերազմները արաբներին շատ պարզ և փակ տնային վիճակից հասցրին հարուստ կուլտուրայի։ Պարսիկների դեմ մղած պատերազմի սկզբում պայծառ կերպով յերևան յեկավ արաբների անկարողությունը ոգտվելու անհամար ավարներից, որովհետև շռայլության անվարժ էին։ Արքայական պալատի հարստությունների հետ գրավել էին այն նշանավոր գորգը, որ գործված եր գեղարվեստական մի նկարի որինակով վոսկուց և թանգագին քարերից։ Մեդինայում սկզբում չէին իմանում, թե ինչ անեն. Մահմեդի աջակիցներից մեկը՝ Ալին, առաջարկեց գորգը կտորների բաժանել, այնպես, որ յուրաքանչյուր կտորում լինի հավասար թվով մարգարիտ և քար, և ապա բաժանել հավատացյալների մեջ։ Աստապահանջ մուսուլմանների կարծիքով նվաճողները պետք և պարզ կենցաղը ունենային և չհետևային խափանական բանակի կյանքի հին սովորություններից։ Յերբ արաբական առաջնորդը՝ պարսիկներին հաղթողը, իր համար հարմարեցրեց նախկին թագավորների հոյակապ պալատը Կտեզիփոնում, Ոմար խալիֆը հրամայեց այրել շենքը։


Նվաճած յերկրներում արաբներին հող չէին բաժանում։ Հաղթվածները պետք և պահային հաղթողների համայնքին, բոլոր անհավատները գլխահարկ էին վճարում, իսկ հողը ունեցողները դրանից բացի, նաև հողային հարկ. նրանք պարտավոր էին նաև արաբ զորքի պաշարը տալ։ Իսկ մուսուլմանները այդ հարկերից ազատ էին և առաջվա նման վճարում էին միայն հավատի գործի համար Մահմեդի վորոշածը։ Խալիֆը նրանց բնակեցնում եր նվաճած յերկրների գինվորական գաղութներում և նրանց շարժում եր, յերբ պետք եր լինում արշավանքների համար։ Այդպիսի գաղութներ էին Կուֆան և Բասրան Յեփրատի վրա, Դամիրեն Յեգիպտոսում, Մերվը Միջին Ասիայում և Մոսուլը Ինդոսի վրա։ Գաղութներին հատկացված էին հողեր, բայց գաղութի բնակիչները չէին մշակում այդ, այլ ապրում

էին միայն նրանց յեկամուտներով։ Ամբոր բաժանելու համար Ոմարը կազմեց գերագույն հաշվի պալատ՝ դիվան։ Այստեղ կազմում էին ցուցակներ բոլոր մուսուլմանների, համաձայն ցեղի և ընտանիքների. յուրաքանչյուրի բաժինը վորոշված եր այն չափով, որ չափով նա հավատի համար ծառայություն և արել և սրբազան պատերազմին մասնակցել։ Այդ հաշվի հիման վրա վորոշված եր ամեն մի մուսուլմանի տարեկան ռոճիկը. ամենից շատ ստանում էին Մահմեդի մերձավոր ազգականները, հետո նրա աջակիցները։ Ամեն բանում պետք է խիստ տարբերություն լիներ հավատացյալների և սրանց այլադավան հպատակների մեջ, և վերջիններս տարբերվում էին մուսուլմաններից զգեստով, իրավունք չունեին զենք կրել և ձի նստել։

Ոմայաճներ յեվ հերձված։ Ոմարի մոցրած կարգը իր մահից հետո յերկար չձգաց։ Տափաստանի կյանքի սովորություններից հեռանալը անխուսափելի էր։ Զինվորական գաղթականները, վորոնց բնակեցրել էին նվաճած յերկրներում, սկսեցին մոռանալ տեղացիներին, ընդունել նրանց գաղափարները։ Վորքան առաջ էին գնում, այնքան ավելի քիչ եր կարոդանում Մեդինայում խալիֆը նոր, անպատին պետության կառավարությունը պահել։ Ուժն ու ազդեցությունը անցան նվաճած շրջանների փոխարքաներին։ Սրանց մեջ առաջին տեղը գրավեց Ասորիքի փոխարքա Մոավիան, վորը Մեկկայի ուժյան հարուստ վաճառականական տոհմից եր։ Մոավիան հրաժարվեց հպատակվել Ալի խալիֆին, վորը Մահմեդի յեղբոր վորդին եր և մարգարեյի միակ աղջկա ամուսինը։

Մինչև այժմ մի միություն կազմող հավատացող ժողովրդի մեջ հերձված առաջ յեկավ։ Արևմտյան արաբները և Մեկկայի վաճառականները ոմայանների կողմն էին. սրանք միաժամանակ ընդունում էին Մահմեդի դուռանի մեջ յեղած մի շարք հավելումները։ Հավելումներից կազմվեց մի առանձին գիրք՝ սուննա, այստեղից էլ այդ կուսակցության անունը— սյուննիներ։ Մյուս կողմն էին մեդինացիները և արևելյան արաբները, նախկին պարսկական շրջանները գաղթողները։ Նրանք որինական համարում էին միայն Մահմեդի ընտանիքից յեղած խալիֆին, աշխատում էին մաքրել կրոնը և հեռացնել այն ամենը, ինչ վոր Մահմեդից իրանից չէր ծագում. սրանց անունն է—շիաներ (հերձվածողներ)։ Կար յերրորդ կուսակցությունը՝ անհատների, վորոնք ընդհանրապես խալիֆի իշխանությունը ժխտում էին։

Ալիի մահից հետո, վորին սպանել եր անհաշտներից մեկը, խալիֆ դարձավ Մոավիան։ Նա Արաբիա չգնաց, այլ մնաց Դամասկոսում, ասորական քրիստոնյաների և արևմտյան արաբական գաղթողների մեջ։ Մոավիան և նրա հաջորդները նոր ուժով սկսեցին նվաճումները։ Նրանք շինել սովին նավատորմ և գրավեցին Կիպրոսը և Հռոդոսը։ Արաբները նույնպես Յեգիպտոսից դեպի արևմուտք դիմեցին, հյուսիս-աֆրիկյան ափի յերկարությամբ։ Մոտ 700 թվին կայսրությունից խլեցին նրանք Կարթագենը։ Աֆրիկայի բերբերները կամ մավրերը, վորոնք իրենց կենցաղով մոտ էին տափաստանների բնակիչներին, արաբներին դաշնակից դարձան և ընդունեցին իսլամը։ Արևմուտքի ամենամեծ քաղաքներից մեկը՝ Կարթագենը միանգամայն վոչնչացվեց. մինչև այժմ էլ նրա ավերակները ծածկում են՝ Տունեսից վոչ հեռու։ Հյուսիսային Աֆրիկայի արաբական վոխարքա Մուսան պատ-



Արաբական պատերազմները VIII դարում ընդդեմ Բյուզանդիայի

բաստել ավեց հատուկ նավատորմ, վորը Սիցիլիայի ափերին յերևաց, և Բալերյան կղզիները գրավեց։ Արաբները հասան հին աշխարհի ամենահեռավոր արևմտյան մասը Ատլանտյան ովկիանոսի մոտ։ Կարթագենի մոտ առաջ յեկավ արաբական Կայրուանյան գաղութը։

Այդ ժամանակ բազմաթիվ հրեա վաճառականները Սպանիայում, նեղվելով հռոմեական հոգևորականությունից, վեստգոթերի պետության մեջ, վորոնք արդեն ընդունել եյին կաթոլիկությունը, դիմեցին արաբ նվաճողների ոգնության։ Մուսային յենթարկվող Թարիկ առաջնորդը անցավ նեղուցը, վոր բաժանում եր Աֆրիկան Սպանիայից Ջեբր-ալ-Ծարի մոտ (այսինքն Թարիկի սար) և գոթերի զորքը չարդեց։ Նրա յետևից գնաց և Մուսան։ Շուտով գրեթե ամբողջ Սպանիան անցավ արաբների և մավրերի ձեռքը։ Միայն հյուսիսային լեռներում մնացին մի քիչ անկախ քրիստոնյաներ։ Արաբները և մավրերը անցան ել ավելի առաջ՝ Պիրենյան լեռներից մյուս կողմը՝ հարավային Գալլիա։ Մոտավորապես այդ ժամանակներում արաբական ուժերը գրավեցին Փոքր Ասիայի մեծ մասը և հարձակվեցին Կ.-Պոլսի վրա։ 720 թվին արաբների պետությունը հասավ ամենամեծ հզորության և ընդարձակման։ Այդ ժամանակ նրանց ձեռքին եր վաճառականության ճանապարհը Հին Աշխարհի գրեթե ամբողջ յերկարությամբ՝ Ատլանտյան ովկիանոսից մինչև Հիմալայան լեռները և Չինաստան։ Արևմտյան Յեվրոպայի ժողովուրդները գարձան արաբների գնորդները։ Արաբերենը գարձավ հարաբերությունների ընդհանուր ժողովրդական լեզու Ջիբրալտարից մինչև Հնդկաստան։

Դամասկոսի խալիֆները գարձան աշխարհիկ թագավորներ և ունեցան ահագին բանմություններ կազմված փառավոր արքունիք, արևելյան-հռոմեական և պարսկականի նմանությամբ։ Նրանք դադարեցին ժողովրդին քարոզներ ասելուց, իրենց շրջապատեցին թիկնապահներով, մզկիթում վանդակապատ յեռան եյին ծածկվում։ Խալիֆների մոտ կարևոր պաշտոնները ունեին ասորական քրիստոնյաները, որինակ՝ Յոհան Դամասկոսցի հռետորը և գրողը։ Արաբական հայրենիքի խստապահանջ մուսուլմանները դժգոհում եյին։ Մեդինայի արաբները հատկապես զինվում եյին արվեստով տարվելու, յերաժշտության և յերգի դեմ, վորոնց հովանավորում եյին ոմայաններըը։ Նրանք վորոշեցին Ոադ մզկիթում խալիֆներին հրաժարական տալ։ յուրաքանչյուր հավատացող իր զգեստի մի մասը ձգում եր մի կույտի մեջ՝ ծածկոցը, հողաթափը կամ վոտքնոցը, ասելով. «Այսպես մերժում եմ յես խալիֆին»։ Սրան Դամասկոսի խալիֆը պատասխանեց խիստ պատժով։ Նրա զորքը նվաճեց և կողոպտեց Մեդինան։ Այն տեղերը, վորոնք սրբազործվել եյին Մահմեդի այնտեղ լինելովը, արյունով ներկվեցին. մոտ 5000 քորայշիտ և Մահմեդի աշակիցներ կոտորվեցին։ Ավերված Արաբիան դրանից հետո պետության մեջ կորցրեց իր նշանակությունը։

Աբբասյաններ։ Ոմայաննների թշնամիները՝ շիաները, արևելյան ազգերի բնակիչները և պարսիկները, մի ուժեղ ապստամբություն ծագեցրին աբբասյանների սև դրոշի տակ, վորոնք իրենց ծագումը հաշվում եյին Մահմեդի մոտիկ ազգականներից։ Խալիֆի զորքերը չարչվեցին, ինքը սպանվեց և նրա բոլոր ազգականները դավաճանորեն մորթոտ

ցիները։ Մեր ազգային ինքնագիտակցության զարթոնքի
սկիզբը դրեցին Ներսես Շնորհալին, Գրիգոր Նարեկացին,
Մովսես Խորենացին, Ստեփանոս Օրբելյանը, Ղազար Փարպեցին,
Հովհաննես Մամիկոնյանը, Թովմա Արծրունին, Կիրակոս Գանձակեցին,
Վարդան Արևելցին, Սամվել Անեցին, Ստեփանոս Տարոնեցի Ասողիկը,
Մատթեոս Ուռհայեցին, Գրիգոր Տաթևացին, Հովհաննես Թլկուրանցին,
Թովմա Մետսոբեցին, Հովհաննես Կոլոտին, Ալեքսանդր Սյունեցին,
Հովհաննես Երզնկացին, Ստեփանոս Օրբելյանը, Հովհաննես Օձնեցին,
Ղևոնդ Ալիշանը, Գարեգին Սրվանձտյանցը, Գարեգին Հյուսիսեցին,
Գարեգին Զարեհյ

բական զորքի զինվորական գաղութների և խալիֆի պալատի պահպանության համար տագնապի միջոցներ էին ծախսվում. նվաճվածները շատ բան էին վճարում՝ հարկերով և կոռ ու բեգյառով, և հպատակ յերկրները ավելի ու ավելի էին քայքայվում, ինչպես և վերականգնված հռոմեական կայսրության մեջ եր։

Մինչ այդ ընկել եր արաբների ռազմական վոգին. զորք լրացնելու համար պետք եր դիմել նոր տափաստանցիների՝ թուրքերին, վորոնք թափառում էին Միջին Ասիայում։ Այդ թուրքերը շուտով արաբական պետության համար դարձան այն, ինչ-վոր էին գերմանացիները հռոմեականի համար։ Թուրքերից կազմվում էին վարձկան զորամասեր սահմանները պաշտպանելու. IX-րդ դարու կեսից խալիֆը շրջապատել եր իրեն թուրքերից կազմված թիկնապահներով։

Այնպես, ինչպես գերմանական զորամասերի հրամանատարները կայսրներին հեռացրին, թուրք հրամանատարները խալիֆի իշխանությունը վոխարինեցին։ Թուրքերի սուլթանը X-րդ դ. գրավից զորքի և հարկերի կառավարությունը և խալիֆին թողեց միայն բարձր հոգևոր անձի վիճակում։ Այդ ժամանակ գլխավոր խալիֆությունը կազմված եր միայն արաբական անապատներում գտնված հողերից. բացի Կորդովայի (Սպանիայում) աֆրիկական և յեգիպտական խալիֆություններից, կազմվեցին առանձին խալիֆություններ Թուրքեստանում և արևելյան պարսկական շրջաններում։

Թուրքերը կազմում են տափաստաններից շարժվող թափառականների յերկրորդ հոսանքը, 300—400 տարի առաջինից հետո, յերբ յերևացին արաբները։ Տափաստանցիների այդ հոսանքները կուլտուրայի անկման նպաստեցին. արաբները դեռ կարողացան պահպանել հույների, պարսիկների, հնդիկների ժառանգությունը։ Թուրքերն ավելի կոպիտ էին, և նրանց տեղավորվելուց հետո արևելքում կրթությունը շատ յետ գնաց։

Ամենից ավելի արաբական լեզուն և կուլտուրան պահպանվեց արևմուտքում։ Աֆրիկայի մուսուլմանները (սարակինոսներ, ինչպես անվանում էին նրանց յեվրոպացիները) շարունակում էին իրենց նվաճումները Միջերկրական ծովի ուղղությամբ դեպի հյուսիս. գրավեցին Սիցիլիան, հարավային Իտալիայի ափերը։ Սարակինոսները իրենց ձեռքում էին պահում հարավ-արևմտյան Յեվրոպայի հետ կատարվող վաճառականությունը. նրանցից անցնում էին քրիստոնյա Յեվրոպային դիտական տեղեկություններ, արվեստ, բանաստեղծություն։ Սպանական խալիֆության Կորդովա գլխավոր քաղաքը աչքի յեր ընկնում իր ընդարձակությամբ և մեծ բնակչությամբ. հեռավոր Սաքսոնիայի ուսումնական կին Ռոսվիտան՝ X-րդ դ. կրոնավորուհի-բանաստեղծուհի, նրան անվանում եր «աշխարհի լուսավոր գեղեցկություն, հրաշալի յերիտասարդ քաղաք, բոլոր հոխությունների վայելով լույս ավող»։ Խալիֆները Կորդովայում հիմնեցին մի քանի հազար հատորից բաղկացած գրադարան և բարձր դպրոց, ուր հաճախում էին հազարավոր ուսանողներ։ IX և X դարերում քրիստոնեական յերկրների յեվրոպացիները, վորոնք հետաքրքրվում էին գիտությունով, գնում էին Սպանիա սովորելու։ Տեղական սպանական քրիստոնյաները մոտեցան նվաճողներին. շատ գոթեր և հռոմեացիներ յուրացրին արաբական լեզուն, սկսեցին տարվել արաբական բանաստեղծությունով, պալատում և ծառայության մեջ տեղ էին գտնում։

3. ԲՅՈՒԶԱՆԴԻԱ

Կայսրությունը VII-րդ դարում։ Կայսրությունը յերկար չմնաց այն ձևով, ինչպես վերականգնեց Հուստինիանոսը։ Կայսրը գտնվում եր Կ.-Պոլսում կամ Նոր Հռոմում և նրա համար դժվար եր իրեն իշխանության տակ պահել հին Հռոմը և Իտալիան. այստեղ պապը ավելի ուժ ուներ, քան կայսրի փոխարքան, և Կ.-Պոլսից գրեթե անկախ եր։ Շատ թույլ եր կայսրի իշխանությունը նաև արևելքում, Ասորիքում և Յեգիպտոսում, ուր բնակչության մեծամասնությունը հերետիկոսներ էին։ VII դ. սկզբում Հերակլ կայսրը իրրև «Աստծու փոխարքա» պարսիկների դեմ մղած յերկարատև «սրբազան պատերազմով» վերադարձրեց նրանց խլած շրջանները՝ Ասորիքը և Յեգիպտոսը և վերականգնեց նրանց կործանած Յերուսաղեմի սրբություննները. սակայն չանցավ 10 տարի, վոր նույն հողերը գրավեց նոր, անսպասելիորեն առաջ յեկած արաբ մուսուլմանների պետությունը (մոտ 640 թ.)։ Մխրճնակների բնակչությունը, վոր լավ չեր յենթարկվում կայսրության, արագ անջատվեց նրանից և ճանաչեց նոր տերերի իշխանությունը, վորոնք թեթևացրին նրա հարկերը։ Մայրաքաղաքի համար ծանր եր հատկապես Յեգիպտոսի կորուստը, վոր մատակարարում եր նրան հացահատիկ։ Կես դար հետո (մոտ 700 թ.) արաբները նվաճեցին Կարթագենը։ Նրանք մի քանի անգամ ավերեցին Փոքր Ասիան և յերկար անգամ նավատորմիզով մոտեցան Կ.-Պոլսին։

700 թ. կայսրությունը չորս անգամ կրճատվեց տարածությամբ, վոր նա ուներ 560 թ. Հուստինիանոսի ժամանակ։ Կայսրությանը մնացին Բալկանյան թերակղզու հարավ-արևելյան մասը, Փոքր Ասիան, արևմուտքում Սիցիլիան և Իտալիայի մի քանի կտորներ։ Կայսրության սահմանները նահանջեցան, բայց դրա փոխարեն իր կազմությամբ ավելի ամբողջացավ։ Նրա մեջ մնացին գրեթե միայն հունական հին շրջանները։ Նա դարձավ Բյուզանդիա, հույն մայրաքաղաքի անունով։ Դատարաններում, գրասենյակներում, որենքների բացատրության մեջ, պալատում լատիներենը փոխարինեցին հունարենով։ Թագավորը փոխանակ կայսր և ոգոստոս անուններն սկսեց կոչվել բազիլեվս (սլավոնները ասում էին ցար. ցար բառը գեղար բառի կրճատումն է)։ Բայց կայսրությունը համարվում եր շարունակություն հռոմեական պետության և բնակչությունը կոչվում եր առաջվա նման ռոմացիներ (հռոմեացիներ)։

Կայսրը, հոգեվորականությունը յեվ ժողովուրդը։ Կայսրության կազմակերպության մեջ կային Դիոկղետիանոսի և Կոստանդինի կառավարության գծերը։ Կայսրը համարվում եր սրբազան անձն. ասում էին, թե նա «ցած և միայն աստծուց և աստծուն անմիջապես հաջորդում է նա». ընդունելություններին կայսրը յերևում եր քահանայական ծանր զգեստով, գլխարկով, վրան խաչ, հոգևոր յերգերով և բուրվառ ծխելով նրա առաջ։ Դահլիճում պահվում էին սրբություններ՝ Մովսեսի գավազանը, Քրիստոսի կենաց փայտը։ Կայսրին դիմելիս յերեսի վրա էին ընկնում, համբուրում էին նրա վոտքերը. կայսրի արձաններին աստվածային հարգանքներ էին տալիս։ Յերբ ըստ պատկանելության ստացվում եր կայսերական հրովարտակ, վոսկի կնքով կնքած, պաշտոնյան կամ զինվորական հրամանատարը, թու-

թը բանալուց առաջ, նախ գնում էր ճակատին, ապա աչքերին և շրթունքներին։ Ամենից ավելի ճոխությունն ցուցադրում էին ոտարերկրյա դեսպանների առաջ։ Հետո սրանք պատմում էին, թե ինչպես իրենց յերկար սպասեցնել էին տալիս վարագույրի առաջ, վորի յետևը թագնված էր կայսրը և իր շքախումբը. յերբ վարագույրը քաշում էին, յերևում էին գահի վոտքերը. սրա յերկու կողմը կանգնած էին յերկու վոսկե առյուծներ, վորոնք մռնչում էին և պոչերով խփում։ Աչքերը վեր բարձրացնելով՝ դեսպանը տեսնում էր կայսրին, բայց այն ժամանակ, յերբ ինքը կայսրին գլուխ էր տալիս, գահը բարձրանում էր մինչև առաստաղը, ոդմկալի յերաժշտության տակ, և կայսրը հանկարծ յերևում էր այլ զգեստով, այնպես վոր վոչ վոք չէր կարող նկատել, թե ինչպես կատարվեց այդ փոփոխությունը։ Կայսրը միայն լսում էր դեսպանին և արժանացնում նրան նրա ընծաները նայելուն։ Պատասխանը տալիս էր մեծ լոգոթետը, այսինքն արտաքին գործերի մինիստրը, վորը կանգնած էր լինում ներքևում։

Բյուզանդական կայսրի իշխանությունը չի կարելի ասել, թե անսահման էր։ Նա պարտավոր էր լսել սինոդների՝ եպիսկոպոսների մեծ ժողովներին, կարծիքները։ Սրբազանները ունեին մեծ կալվածքներ և հաճախ անգին անտեսություն. եպիսկոպոսը մասնակցում էր իր քաղաքի դատաստանում, ժողովրդից զանազան խնդիրներ էր ընդունում։

Նոր Հռոմում, բացի գրանից, միացել էր հին Հռոմից մի այլ գիծ. այդ մայրաքաղաքի պմբոխի ձայնն էր։ Կ.-Պոլսում ժողովուրդը զանձարանից հաց էր առնում։ Յերբեմն կայսրը պալատի պատշգամբից ժողովրդին ճառ էր ասում. նրա մինիստրները հետևում էին փողոցներում դանված ամբոխի աղաղակներին։ Ձիերի մեծ կրկեսում (իպպոդրոմ) ժողովուրդը բաժանվել էր չորս կուսակցության (ծխեր)՝ կանաչների, կապույտների, կարմիրների և սպիտակների։ Յուրաքանչյուր կուսակցություն ուներ իր ընտրովի գլխավորը. զանձարանը, վորը կազմվում էր վճարներից, հավաքվում էին ճաշերին և տոներին, ցուցադրում էին պինված խմբեր։ Կրկեսի կուսակցությունները մասնակցում էին յեկեղեցական վեճերին. վոմանք միանում էին ուղղափառներին, ուրիշները՝ հերետիկոսներին։ Կայսրը կախում ուներ այդ կուսակցություններից, ինչպես ցույց է տալիս Հուստինիանոսի ժամանակի մեծ խռովությունը։

Կայսրը պիտի հաշվի առներ նաև զորքի տրամադրությունը։ Բյուզանդիայում, ինչպես և հին կայսրության մեջ, զահաժառանգության վորոշ կարգ չկար։ Ուժեղ կայսրը կարող էր իր վորդու համար իշխանությունը ապահովել, և այս ձևով կազմվում էր իշխող տոհմ։ Բայց իշխանությունը հաճախ գրավում էր զինվորական հրամանատարը և յեթե նա ստանում էր զորքի կամ կրկեսի կուսակցությունների հավանությունը, կարող էր կայսերական ծիրանի հագնել։ Բյուզանդիայում դահը գրավում էին այն բարբարոսները, վորոնք կայսրության ծառայության մեջ աչքի էին ընկել։ Սլավոնները, խավրները (փոքր-ասիական մի ցեղ), հայերը, ապա նաև արնպիսի մարդիկ, վորոնք գյուղացու, ձիապանի, նավաշինական բանվորի, մսագործի վիճակից յելել, վեր էին բարձրացել։ Իշխանությունը գրավողը հակառակորդին կամ գահընկեց կայսրին հնազանդում էր ուժով կամ սուրգում էր կայսրին իրեն գործակից վերցնել։

Անկախ արևելյան կայսրության գոյության ամբողջ ընթացքում, Թեոդոսի մահից հետո 395 թ. մինչև տաճկների կ.-Պոլիսը առնելը՝ 1453 թվին, 109 կայսրից միայն 34-ը իրենց մահով մեռան։ Մյուսները հարկադրված էին հրաժարվել կամ սպանվեցին. 1058 տարում յեղել է 65 ապստամբություն և հեղաշրջում պալատում, փողոցում, կրկեսում կամ զորանոցներում, վորոնց հետևանքը լինում էր կայսրների գահընկեցությունը։

Վանականություն։ Արաբական պետության կազմվելուց հետո արևելյան սահմանում մշտական վտանգ կար։ Մուսուլմանների արշավանքները կանխելու համար Փոքր Ասիայի թերակղզու վրա թեք ուղղությամբ շինված էր պատհան աշտարակների մի շղթա բարձունքների վրա, վորը վերջանում էր մի մեծ փարոսով կ.-Պոլսի պալատի մոտ. աշտարակների վերևում վառվող կրակների միջոցով թշնամու սահմանի վրա նկատվող շարժման լուրը միքանի ժամում մայրաքաղաքին էր հասնում։

Զինվորական ծանր գրությունը անդրադարձավ բարքերի և կրթության վրա։ Յոթերորդ դարը (600—700 թ.) Բյուզանդիայում ևս, ինչպես և արևմուտքում, կրթության ամենախոր անկման շրջան էր։ Քրիստոնեական հավատալիքները խառնվել էին հեթանոսական սնահավատություններին, սովորություններին և տոների հետ, վորոնք դեռ ժողովրդի մեջ կենդանի էին։ Պատահում էին ժարդկային զոհաբերություններ։ Յերբ արարները պաշարեցին Պերգամը, քաղաքի պաշարվածները մի կախարդի խորհրդով բռնեցին մի կնոջ, իր նորածին զավակի հետ, կտոր-կտոր արին և լցրին յեռացող կաթսայի մեջ. զինվորները իրենց ձեռնոցները ձգեցին կաթսայի մեջ այն համոզմունքով, վոր իրենց գենքերը կկախարդվեն այդ սարսափելի ծեսի ուժով։ Յերկյուղի տակ մարդիկ փնտրում էին դերբնական ոգնություն և գոնեգան սնոտիապաշտությունների մեջ էին ընկնում։ Քրիստոսի և սրբերի նկարներին, պատկերներին և արձաններին յերկրպագում էին այնպես, ինչպես կուռքերին. արձանի ձեռքին գնում էին հաղորդությունը և ապա նրա ձեռքից վերցնում, ճաշակվում կամ ջերմանում էին պատկերի ներկը և հաղորդի հետ կուլ տալիս, իբրև կախարդական միջոց։

Զարմանալի թափով զարգացավ այդ ընդհանուր հուսահատության շրջանում վանականությունը։ Հարուստը առաջուց պատրաստում էր գերեզմանը և նրա մոտ շինել տալիս վանք, վոր ապահովե հավիտյանս իր հոգու փրկության համար կատարվելիք աղոթքները։ Աղքատ գյուղացիների միջանիսը միանում էին և կազմում վանական համայնք։ Այն տեղերում, վորտեղ առանձնապես սրբազան էին համարվում, վանքերը իրար կպչում էին և կազմում ընդարձակ մեծ բնակություններ։ Այդպես էին Փոքր Ասիայում Իլա և Ոլիմպոս սարի լանջերը, Աթոնը Թերակղզում։ Վանականները ժողովրդի մեջ մեծ ազդեցություն ունեին. շատերը հավատում էին, թե աղոթքը կազատե հարյուր հետևն մարդու, վորոնք հավիտենական կործանման էին դատապարտված։ Անվերջ մեծանում էին վանքերին արված նվերները, մեծանում էին նրանց ընդարձակ և հաճախ շքեղ շենքերը. շատերը հետևում էին զանազան հարկերից ազատված, նրանց հովանավորության տակ մտնում։ Վանքերը բնակչության մեծ մասին գինվորական ծառայություններից հեռացնում էին. մենաստաններին վերներ տա-

լով՝ հարուստները զանձարանից ծածկում էին իրենց դրամապուճները։ Այդ պատճառով VIII-րդ դարու կայսրները վանականության դեմ պայքար սկսեցին։ Այդ պայքարը միացավ պատկերների մասին տեղած վեճի հետ։

Պատկերամարտություն։ Փոքր Ասիայում պողիկյանների աղանդը կարծում էր, թե ճշմարիտ աստծուն յերկրպագելիս պետք է խուսա տալ պատկերների արտաքին յերկրպագութիւնից, վորոնք շինված են մարդկանց ձեռքերով։ Մուսուլմանները և հրեաները քրիստոնյաներին մեղադրում էին նրանում, վոր սրանք մոռանում են աստծուն և պաշտում են «պատկերը, տախտակները և քարերը»։ Նատ յեպիսկոպոսներ, մանավանդ Փոքր Ասիայում, ժողովներում դատապարտում էին արձաններին յերկրպագելը։ Սակայն վանականները պաշտպանում էին պատկերները պաշտելը։ Նրանք պատկերների առաջ աղոթքներ էին կարդում և սրա վրա յեր հիմնվում նրանց ազդեցությունը ժողովրդի վրա։ Բացի այդ, վանքերում և սրանց մոտ գտնված ավանդներում շատերը ապրում էին յեկեղեցական պատկերներ նկարելով։

Խազարների տան առաջին յերկու կայսրները՝ Լևոն III (717 թվից) և Կոստանդին V պաստկերամարտների (վորոնք դատապարտում էին պատկերները) և վանականության թշնամիների կողմը բռնեցին։ Լևոն III կ.-Պոլսին ազատեց արաբական զորքի և նավատորմի հարձակումից. նա շատ եր զբաղվում կայսրության ռազմական միջոցները ուժեղացնելով։ Պատկերների վեճի մեջ խառնվեց նա վոչ միայն նրա համար, վոր տեսնում եր վանականության ճնշած կայսրության համար. նա իրեն կոչված եր համարում վորոշելու հավատի հիմքերը իբր «գերագույն կայսր և քահանա»։ Կայսրը հրովարտակ հանեց պատկերները վերցնելու, յեկեղեցիներից հեռացնելու կամ ներկելու մասին։ Իմիջիայլոց հրամայված եր վոչնչացնել Քրիստոս Յերաշխավորի պատկերը, վորը կախված եր յերկաթվաճառողների թաղում, և վորին հատուկ պաշտամունք էին ցույց տալիս։ Բայց զրգռված ամբոխը սանդուղքից ցած ձգեց պաշտոնյային, վորին ուղարկել էին պատկերը վերցնելու, և սպանեց։ Կայսրը հրամայեց գլխատել անհնազանդներին։ Կ.-Պոլսի Գերման Պատրիարքը հրաժարվեց ընդունել կայսրի վորոշումը. սրան հետացրին և նշանակեցին ուրիշին. ժողովուրդը նոր պատրիարքի վրա փողոցներում քարեր եր շպրտում։ Ավելի խիստ եր գործում, քան Լևոն III-ը, սրա վորդի Կոստանդին V. նա փակում եր վանքերը և շինքերը դարձնում զորանոցներ, ղինանոցներ, ախոռներ։ Վանքական ընդարձակ հողերը կայսրը արքունիքի համար եր գրավում և բաժանում եր ղինվորականներին, իբր պարգևներ նրանց ծառայության։ Վանականներին ստիպում էին ամուսնանալ, աշխարհիկ դպեսո հագնել. անհնազանդներին անց էին կացնում կրկեսով ժողովրդի ծաղրին յենթարկելու, բանտ էին նետում, յերկրից աքսորում էին։ Կայսրի կողմն էին զորքը և բարձր հոգևորականության մեծ մասը վորը զժգոհ եր նրանից, վոր վանքերը յեպիսկոպոսներին չէին լսում,

Կոստանդինի մահից հետո Իրինա կայսրուհին, վորը իր դեռահաս վորդու փոխարեն եր կառավարում, Կ.-Պոլսում գումարեց յոթերորդ տիեզերական ժողով (787 թ.)։ Ժողովը վորոշեց պատկերների պաշտամունքը վերականգնել, սակայն թիկնապահ զորքը, վորը հավատարիմ եր Կոստանդինին-ժողովը ցրեց. զինվորները մտան յեկեղեցի, ուր նիստ կար, և ցրեցին հա

վաքված յեպիսկոպոսներին։ Յերկու անգամ էլ պատկերամարտությունը ուժեղացավ, բայց վերջը նորից ընդունեցին 787 թվի վորոշումը։ 843 թվին Կ.-Պոլսում մեծ հաշտություն կազմվեց. Ոլիմպոսից և Աֆոնից բազմաթիվ վանականներ յեկան. պատկերները վերականգնելու հիշատակի համար սահմանեցին ուղղափառության տոն։

Սակայն վոչ ամեն բանում հնին վերադարձան։ Յեկեղեցիներում մնացին պատկերները, բայց անհետացան Քրիստոսի, աստվածամոր և սըրբերի մեծ արձանները. տաճարի ներսի մասը կորցրեց իր պայծառ և խայտաբղետ տեսքը, դարձավ ավելի մռայլ և խիստ։ Վանականներն էլ կատաղյալ հաղթանակ չտարան։ Պատկերահարգ կայսրները, վորոնք հաջորդեցին պատկերամարտներին, վանքերից խլած գույքերը չվերադարձրին։ Նրանք յեկեղեցական հարցերը վորոշում էին ինքնիշխանությամբ, նշանակում և հեռացնում էին հոգևորականներին։ Սովորություն դարձավ պատրիարք նշանակել աշխարհականներից. պատրիարքը դարձավ մի տեսակ գլխավոր պաշտոնյա հոգևոր գործերի և պարտավոր եր ամեն բանում յենթարկվել կայսրին։

Սլավոնների տեղավորելը։ VII և VIII դարերում Բյուզանդիայի գլխավոր թշնամիներն էին արաբները։ 800 թվականին մոտ արևելյան արաբների նվաճումները կանգ առան։ Բյուզանդիայի համար IX և X դարերում ավելի մեծ վտանգ էին սպառնում այն ժողովուրդները, վորոնք ապրում էին նրանից հյուսիս։

Բալկանների մյուս կողմը դեպի հյուսիս, Դանուբի ուղղությամբ ընկած են ընդարձակ հարթություններ, վորոնք Սև ծովի և Կասպից ծովի տափաստաններին կից են։ Այդ բուերական (տաճկական և թաթարական) ծագումն ունեցող վայրենի հորդաների թափառելու տեղն եր, վորոնք Միջին Ասիայից էին գալիս։ Նրանք սլավոններից հարկ էին հավաքում և տափաստանին մոտ գտնված սլավոն ցեղերին հպատակեցնում էին։ Հարավային սլավոնների մեծ մասը, հեռանալով թափառականներից, շարժվեց դեպի Բալկանյան թերակղզին և գրավեց գոթերի տեղը. սլավոններն ավելի առաջ անցան՝ դեպի հարավ մինչև Պելոպոնես և խառնվեցին տեղական բնակիչների հետ։

900 թվականին մոտ Դանուբի միջին հոսանքով ընդարձակ ամայի տեղերում ավարների «ողակներով» տեղը հաստատվեցին հունգարները կամ մաջառները, Դնեպրի ներքին հոսանքով՝ պեչենեգները, ներքին Դոնի և Վոլգայի հոսանքով՝ խազարները։ Տափաստանների շուրջը բավական հեռու տեղը ցրվեցին զանազան կողմեր թափառականների բնակեցրած սլավոն ցեղերը կամ նրանց դուրս քշած սլավոն ցեղերը՝ արևելյան Ալպերում, Կարպատներում, Ելբայի, Ոդերի, Վիսլայի հոսանքով, Բալտիկ ծովի մոտ, Դնեպրի և արևմտյան Դվինայի հոսանքով։ Այդ տեղավորումից առաջ յեկան սլավոնների յերեք մեծ խմբեր. 1. Հարավային՝ Բալկանյան թերակղզում (խորվաթները, Աղրիատիկ ծովի ափին, սերբերը և մերձ-Դանուբյան սլավոնները, վորոնք ձուլվեցին բոլգար թաթառական ցեղի հետ). 2. արևմտյան՝ Ելբայի հոսանքով, Կարպատներում և Վիսլայի հոսանքով (չեխո-մորավներ, լեհեր) և 3. արևելյան (ռուսներ),

Բոլգարներ։ Մի տեղ թափառականները ավելի մոտիկ հարաբերու-

թյան մեջ մտան նստակյաց յերկրագործ բնակչության հետ, ընդունեցին նրանց լեզուն և սովորությունները։ Այդ պատճառով թուրքական բոլգար հորդայի հետ, վորոնք տեղ բռնեցին հարավային սլավոնների մեջ, Դանուբի վրա և իրենց անունն էլ տվին նրանց։ Բոլգարներն սկսեցին սպառնալ Բյուզանդիային, անցան Բալկանները և հաճախ մոտենում էին Կ.-Պոլսին։ 811 թվականին Նիկիփոր կայսրը մտավ բոլգարների յերկրի խորքը, բայց ընկավ ծուղակը. բյուզանդացիներին բոլորին էլ կոտորեցին, կայսրի գլուխը նիզակի վրա յերկար պտտեցնում էին, հետո նրա գանգից բոլգարների կրում խանը հրամայեց խնճույքների համար պատրաստել ըմպանակ։ Հույներն ստիպված էին մեծ գինջուխեր անել։ Բալկանների յերկու կողմի բոլոր հողերն անցան բոլգարներին, բացի այն անկյունից, ուր գտնվում էր Կ.-Պոլիսը և Եգեյան ծովի ուղղությամբ ընկած առափնյա շերտը. բոլգարների խանը կոչվում էր ցար։ Բյուզանդական կառավարության ուրիշ միջոցներ մտածեց վտանգավոր հարևանների դեմ. նրանց մոտ ուղարկվեցին քրիստոնյա քարոզիչներ։ 860 թվականի մոտ բոլգարների Բորիս թագավորը մկրտվեց։

Կիրիլ յեվ Մեթոդի։ IX դարի յերկրորդ կեսում Բյուզանդիային հաջողվեց ընդհանրապես հետու տարածել քրիստոնեության քարոզը։


Արևմտյան սլավոն մորավ ժողովուրդը ճանաչեց կարլոս մեծի հիմնած ֆրանկների կայսրության վերադասի իշխանությունը։ Նրանց մոտ յեկան գերմանացիներից ևս քրիստոնյա քարոզիչներ, վորոնք հպատակվում էին Հռոմի պապին։ Մորավիայի Ռոստիսլավ իշխանը ցանկանալով ազատվել գերմանացի յեպիսկոպոսներին հպատակվելուց, դիմեց Բյուզանդիային (863 թ.)։ Նա ասում էր, վոր թեև մորավները թողել են հեթանոսությունը և վորոնում են Քրիստոսի ուղիները, բայց կարդալ չգիտեն, և նրանց սովորեցնող չկա. ուստի նա խնդրում է ուղարկել մի մարդու, վորը գիտե ժողովրդի լեզուն և կարող է ժողովրդին ցույց տալ փրկության իսկական ճանապարհը։

Մորավներն մոտ ուղարկեցին յերկու յեղբայրների՝ Կոստանդինին և Մեթոդիին, ուսումնական հույների, վորոնք մեծացել էին Մակեդոնիայում՝ սլավոնների մեջ։ Նրանք յերկրում հաստատեցին կրթական պաշտամունք. Կոստանդինը ավետարանի գլխավոր մասերը թարգմանեց սլավոներեն և մտցրեց հատուկ այբուբեն։ Նիկողայոս I պապը անհանգստացավ, վոր մորավները կհպատակվեն Կ.-Պոլսի պատրիարքին։ Նա յեղբայրներին կանչեց Հռոմ, վոր համոզվի, թե ուղիղ են սովորեցնում։ Կոստանդինը շուտով մեռավ Հռոմում, մանվանից առաջ կրոնավոր դառնալով Կիրիլ անունով։ Մեթոդին վերադարձավ հյուսիս և դարձավ յեպիսկոպոս վոչ Մորավիայում, այլ Պաննոնիայի (Միջին Դանուբի ընթացքով) սլավոնների մեջ։ Նա առաջին անգամ մտքից պատարագը սլավոնական ժողովրդական լեզվով, մինչդեռ մինչև այդ Յեվրոպայի քրիստոնյաների մեջ աստվածպաշտությունը կատարվում էր միայն յերկու լեզվով՝ լատիներեն և հունարեն։

Մեթոդիի աշակերտներին հաջողվեց հաստատվել Մորավիայում։ Մորավիայի Սվյատոպոլկ իշխանը ցանկանում էր խաղաղություն գերմանական պետության և Հռոմի պապի հետ։ Նա պալատում թույլ տվեց լատիներեն պաշտամունք։ Սվյատոպոլկը մյուսներից այն սլավոններին, վոր ապրում

էին Ելբայի և վերին Կարպատների ուղղությամբ և կազմեց Մեծ-Մորավյան պետություն։ Նրա ուժից յերկյուղ կրելով՝ գերմանական թագավորները կանչեցին նրանց դեմ հուսգարական հորդան։ Հունգարների ճնշումը քայքայեց Մեծ-Մորավյան պետությունը (900 թվականին մոտ)։ Հունգարները տեղ բռնեցին արևմտյան և հարավային սլավոնների միջև և կրտրեցին առաջինների հարաբերությունը Բյուզանդիայի հետ։

Մինչ բյուզանդական և լատինական քարոզիչները սլավոն յերկրներում իրար թշնամաբար էին վերաբերվում, կռվեցին նաև նրանց իշխա-



Բյուզանդիան, նրա հարևանները յեվ հարաբերությունները IX—X դ. դ.

նավորները՝ Կ.-Պոլսի պատրիարքը և Հռոմի պապը։ Նիկողայոս I պապը չեր ուզում ճանաչել Փոտ պատրիարքին, Կիրիլլի ուսումնական ընկերոջը, վորովհետև կայսրը դրանից առաջ աթոռից հեռացրել եր մի այլ պատրիարքի, վորը վանականների կողմնակից եր։ Փոտը իր հերթին գահազուրկ հայտարարեց Նիկողայոսին և իր «շրջաբերական դրության մեջ, ուղղված բոլոր քրիստոնյա հոգևորականության» (867 թ.) աշխատում եր ապացուցել, վոր արևմուտքում ճշմարիտ ուսմունքից և հին ծեսերից հեռացել են։ Նոր կայսր Վասիլ I Մակեդոնացին, վոր ձգտում եր յեղել նախորդի մոտ և սպանել եր նրան, թանգ եր գնահատում Հռոմի պապի բարի համաձայնությունը, ուստի և շտապեց Փոտին աթոռից ձգել։

Հարավային սլավոնների՝ բոլգարների և սերբերի մեջ ևս ծագին բյուզանդական քարոզիչները։ Բոլգարներն սկսեցին փոխ առնել հույներից գրականությունը, թարգմանել աստվածաբանական գրքերը և բանաստեղծությունը։ Յերկրի մեջ մտավ պոլիկյան աղանդը բոգոմիլների անվան տակ։ Աղանդը տարածվեց գյուղացիների մեջ, վորոնք չհնթարկվում էին բոյար-

ներին, խոշոր հողատերերին։ Բոգոմիլներն ուսուցանում էին, թե տիրոջ համար աշխատելը մեղք է և վատ։ Կայսրներին գրավում եր Հռոմի ամրողջ աշխարհի վրա իշխելու միտքը։ Բոլգարների Սիմեոն թագավորը (մեռավ 927 թ.) ընդունեց «Հռոմեական թագավորի» տիտղոսը։ Սիմեոնը ցանկանում եր բռնել բյուզանդական կայսրի տեղը, գրավեց համարյա ամրողջ Թերակղզին, բայց ուժ չուներ վերցնելու ամրացրած, գրեթե ամեն կողմից ջրով շրջապատված մայրաքաղաքը։

Վարյագներ, բյուզանդական առեվտուրը։ Այն ժամանակ կայսրությունը մեծ կորուստ ունեցավ նաև ծովի կողմից։ Սարակինոսները գրավեցին Սիցիլիան և Կրետեն, որ Եգեյան ծովի բանալին եր։ Սև ծովում IX դարի կեսում սկավեցին վարյագների (նորմաննների) արշավանքները։ Վարյագ ավազակները և վաճառականները ուղևորվում էին Բալտիկ ծովից և շարժվում ռուսական մեծ գետերով Նեվայի բերանից մինչև Դնեպրի բերանը։ Նրանց առաջնորդները իրենց խմբերով (Ռյուրիկ, Սկոլդ և Դիր, Ոլեգ) կանգ էին առնում ճանապարհներին և հաստատվում Նովգորոդում, Սմոլենսկում, Կիևում։ Սլավոնները հպատակվեցին նրանց, իսկ նրանք ընդունեցին տեղական լեզուն և սովորությունները։ Բյուզանդացիները նրանց անվանում էին ռուս, ռուսներ։ Նրանք անցնում էին առաջ, Բալկանյան Թերակղզու և Փոքր Ասիայի ափերը և կողոպտում էին։

865 թվին Կիևի ռուսները հարձակվեցին Կ.-Պոլսի վրա ծովի կողմից, այրեցին քաղաքի մի մասը և ընակիչների վրա սարսափ տարածեցին։ 40 տարի հետո Կիևի Ոլեգ իշխանը նոր մեծ հարձակում կատարեց Բյուզանդիայի վրա, հարուստ ավար վերցրեց և հուշների հետ նպաստավոր առևտրական դաշն կապեց։ Ռուս վաճառականներն իրավունք ստացան առևտրական կ.-Պոլիս մտնել իրենց ապրանքները։ Նրանք տանում էին իրենց յերկրից մորթիներ, մեղր և մոմ և պատերազմական գերի սարուկներ։ Հունաստանից նրանք արտահանում էին մետաքսի գործվածքներ, գինի, հարավի պտուղներ և համեմունքներ։

Բյուզանդացիները պարտություններ էին կրում, ընդունում էին թշնամիների ծանր պայմանները, բայց միաժամանակ ճարպիկ կերպով իրենց վրա հարձակվողների մեջ գաշնակիցներ էին ձեռք բերում։ Շատ վարյագներ մտան բյուզանդական կայսրի թիկնապահության ծառայության մեջ։ Նիկիֆոր Փոկաս կայսրը (մոտ 960 թ.) 1500 գրվանքա վոսկով ձեռք բերեց Կիևի Սվյատոսլավ իշխանի և սրա կիսաթափառական խմբի աջնություն։ Սվյատոսլավը քարուքանդ արավ բոլգարական պետությունը, վորը վտանգ եր սպառնում Կ.-Պոլսին, բայց ինքը ճնշց Դանուբի ափին։ Այն ժամանակ բյուզանդացիները կաշառեցին պեչենեգներին, վոր նրանք հարձակվեն Կիևի վրա և Սվյատոսլավի ուշքը գրավեն։

Կ.-Պոլսում սկսեցին հավաքվել հյուսիսից և արևելքից ապրանքներ։ Մուսուլման յերկրներից բերում էին նուրբ գործվածքներ և անուշեղեն, հնդկներից գնում էին այդ վենետիկի և Ամալֆիի իտալացի վաճառականները. պապերը, իտալական և գերմանական յեպիսկոպոսները բերել էին Իտալիա Բյուզանդիայից թանգագին ղեմսաներ, տաճարի արդուզարդ, յեկեղեցիների համար բրոնզե դեղարվեստական գործեր։ Ամբողջ Յեվրոպայում տարածվեցին Կ.-Պոլսի վոսկե դրամները՝ բյուզանդիններ։

Բյուզանդիայի ուժեղացումը մոտ 1000 թվականին։ Առևտրով հարբուսանալով՝ Բյուզանդիան սկսեց վարձել ավելի շատ զինվորներ, նրանց հողատալ, նավատորմը մեծացնել, շինել խոշոր ամրություններ։

Մինչ այդ խալիֆությունը սկսեց թուլանալ և ընկնել, վորը արևելքում Բյուզանդիայի գլխավոր թշնամին եր։ Սկսած 960 թվից, կայսրությունը նորից մի քանի նվաճումներ և անում։ Նիկիֆոր Փոկասը սարակինոսներից խլեց Կրետեն, ժուսուլման նավատորմի գլխավոր կայանը, գրավեց Կիպրոսը և վերադարձրեց 300 տարի ղրանից առաջ կորցրած Անտիոքը։ Նրա հաջորդ Յոհաննես Ձմշկիկ կայսրը անցավ Յեփրատի մյուս կողմը։ Հյուսիսում Ձմշկիկը ջարդեց Բոլգարիայում հաստատված Սվյատոսլավին և ստիպեց նրան յետ գնալ Դնեպրի ափը, ուր պեչենեգներից սպանվեց։ Մի քանի տարի հետո, 988 թվին, Սվյատոսլավի վորդի, Կիևի իշխան Վլադիմիրը, ազգակցական կապ հաստատեց Վասիլ II կայսրի հետ և իր ժողովրդի հետ մկրտվեց բյուզանդական հոգևորականությունից։ Բյուզանդիայի համար այդ մեծ հաջողություն եր։ Կիևի իշխանը Բյուզանդիայի համար գրեթե կարևոր դաշնակից և հաճախ կայսրին ռազմական զորք եր ուղարկում։ Կիևի միտրոպոլիտը հաստատվում եր Կ.-Պոլսի պատրիարքից. Բյուզանդիայից ռուսների մոտ ուղարկեցին հոգևորականության մի մասը։ Վերջապես Վասիլ II (976—1025) բոլգարների դեմ մղած համառ կռիվներում անհավատալի խստություններ գործ դնելով (մի անգամ կուրացրին 15,000 գերիների, վորտեղից և նրա մականունը յեղավ Վասիլ-բոլգարասպան)՝ վոչնչացրեց բոլգարական անկախ թագավորությունը։ 1020 թվին մոտ բոլգարական պետությունը տարածվում եր հարավային Իտալիան վողողող ծովերից և Դանուբից մինչև կովկասյան լեռները, Տիգրիս և արաբական անապատը։ Կայսրությունը նորից կրկնապատկվեց տարածությամբ և կրկին տիրեց Միջերկրականի արևելյան մասին։ Բյուզանդիան այժմ հենարան ուներ հյուսիսում. Ղրիմի Խերսոնի (ռուսերեն Կորսուն) միջոցով հարաբերություն ունեցին ռուսական հարթության ժողովրդների հետ։

Բյուզանդիայի ուժեղանալը լինում է մակեդոնական տոհմի շրջանում։ Հիմնվելով 867 թ. Վասիլ I-ի ժամանակ, նա տևեց մյուսներից ավելի յերկար, գրեթե 200 տարի (մինչև 1056)։ Այս տոհմի կայսրները ցանկանալով գահի ժառանգներին հատուկ սրբությամբ շրջապատել, մտածեցին տալ «Ծիրանածին» տիտղոսը այն կայսերազուններին, վորոնք ծնվում էին հոր կայսրության ժամանակ պալատի հատուկ Ծիրանի դահլիճում։ Այնուամենայնիվ այդ տոհմի կայսրներին գահընկեց եղին անում կամ իշխանությունից հեռացնում։ Կոստանդին VII Ծիրանածին կայսրին, վոր շատ գիտուն մարդ եր, բայց կառավարելու քիչ ընդունակ, գործերից հեռացրեց նրա ամենազոր Ռոման Լեկապին մինիստրը, վորն ստիպեց կայսրին իրեն փեսա և կառավարչակից դարձնել։ Կոստանդին Ծիրանածնի վորդին, Ռոման III, Վասիլ II-ի քույրը, գահընկեց յեղավ և սպանվեց հաղթական Նիկիֆոր Փոկաս զորավարի ձեռքով, և կայսրի այրին իր ձեռքն առաջարկեց նրան, գահի իրավունքների հետ, սեփական վորդուն հեռացնելով։

Փոկասները՝ Փոքր Ասիայի մեծ կալվածատերերը, հետո մի անգամ էլ ապստամբեցին Վասիլ II կայսրի դեմ։ Նրանք պատկանում էին «իշխաններին» («властелей») թվին, այսինքն հարուստ մարդկանց, վորոնք ունեյին

բազմաչիվ ծառաները և զինվորական խմբերը։ Իշխանները ճնշում էին «ալքաատների» կամ «խեղճերի», այսինքն գյուղացիների։ Սովի տարիներում մանր տնտեսություն ունեցողներին տալիս էին իբր անվճար պարտք հացահատիկ, գրավական ստացած հողերը գրավում էին կամ չնչին գնով գնում էին բայքայված տնտեսությունները։ Ուր հնարավոր եր, գյուղացիներին ուժով հեռացնում էին, գյուղը մանելով իրենց վորսորդներով, բազեհակիրներով, ձիապաններով և ծառաներով, քանդում էին գյուղացիների տները և իրանց տնտեսությունները, ամրոցները ու ծառայանոցները հիմնում։ Իրենց հերթին կայսրներն աշխատում էին հենվել գյուղացիների վրա, ընդդեմ իշխանների։

Մակեդոնական հարստության ժամանակ բյուզանդական բանակը կազմվում եր զինվորական գաղութներից, վորոնք պետությունից հողամասեր էին ստանում. զինվորներն իրենք էին աշխատում, կերակրում իրենց ընտանիքները և պատերազմի համար սպառազինվում։ Վորովհետև իշխանները կայսերական զինվորական գաղութների հողերը գրավում էին և նրանց էլ զրկում իրենց ծառա և բանվոր, ուստի կայսրները դուրս էկան այդ գրավումների դեմ։ Շատ անգամ խիստ որենքներ հրատարակեցին իշխանների դեմ և գյուղացիների պաշտպանության համար, բայց դրանք անզոր էին մնում։ Հատկապես Վասիլ II կայսրը խիստ եր դեպի իշխանները։ Գյուղացիներին պաշտպանելու աչքի ընկնող որինակ ցույց տալու համար Վասիլը պատժեց մի մեծ պաշտոնյայի, վորը բարձրացել եր գյուղական կոչումից և գնել իր հայրենի գյուղը։ Կայսրը հրամայեց հիմնահատակ անել այդտեղ շինած պալատը և նախկին տիրոջը վերադարձնել գյուղական կոչումը։

Բյուզանդիայի անկումը XI դարում։ *Ջնայելով խիստ հրովարտակներին և դաժան միջոցներին, կայսրները չկարողացան իշխաններին կարգի բերել։ Վասիլ II-ի հաջորդները դադարեցին գյուղացիներին և մանր զինվորական գաղութները պաշտպանելուց. ընդհակառակը՝ սկսեցին պաշտոնյաներին և հրամանատարներին իբր պարգև տալ մեծ կալվածքներ ճորտերով։ Այս բանի հետևանքով կայսրները սկսեցին կախում ունենալ իշխանների բարի կամքից։ 1057 թվին Փոքր Ասիայի բյուզանդական զեներալները, բոլոր խաշոր իշխանները համաձայնեցին և իրենց միջից ընտրեցին Իսահակ Կոմնենոսին կայսր. (Կոմնենոսների տոհմը տևեց մինչև 1204 թ.)։*

Մինչ այդ վտանգը գալիս եր յերկու կողմից։ Նորմանները հյուսիսային Ֆրանսիայից տեղափոխվելով՝ հաստատվեցին Սիցիլիայում և սարակինոսներին այնտեղից դուրս արին։ Հետո դիմեցին դեպի հարավային Իտալիայի բյուզանդական տիրապետությունները և հույներին ամեն տեղից դուրս արին։ Միևնույն դարում Իտալիայի ծովափնյա վերջին քաղաքը կորցնելով (1071)՝ Բյուզանդիան ծանր դժբախտություն կրեց արևելքում։

Տաճիկ-սելջուկները, խալիֆների ծառայության մեջ առաջ գնալով, Թուրքեստանից անցան Առաջավոր Ասիա և կազմեցին անկախ թագավորություն։ Նրանք ավերեցին Բյուզանդիայի գաշնակից Հայաստանը, գրավեցին Աստրիքը և գրեթե ամբողջ Փոքր Ասիան, բացի հյուսիսային և արևմտյան ափերից։ Ալփ Առլան («քաջ առյուծ») սուլթանը Հայաստանի Մանազկերտի մոտ յեղած յերկու որ տևող կռվում ջարդեց և գերի վերցրեց իր դեմ դուրս

յեկած բյուզանդական Ռոմանոս IV կայսրին։ Թուրքերը հեշտությամբ հաստատվեցին Փոքր Ասիայում։ Տեղական գյուղացիները՝ մասամբ մուսուլմաններ, մասամբ հերետիկոսներ, հեշտությամբ ճանաչեցին թուրքերին, վորովհետև նոր տերերը իրենց վրա դրին միայն գլխահարկ, բայց ճորտական աշխատանքից ազատեցին։ Թուրքերի ավերած ընդարձակ հողերը հողագործության համար անպետքացան. այդ տեղերում հաստատվեց թափառականների անասնապահությունը։ Կայսրության փառավոր լինելու գաղափարը ազդեց թուրքերի վրա ևս. սուլթանը ընդունեց ռոմացոց կայսրի տիտղոսը, իսկ իրենց պետությունը Նիկիա մայրաքաղաքով թուրքերը անվաննեցին Ռում, այսինքն հռոմեական։

Բյուզանդիայի համար գործը գնալով վատանում եր։ Ճաճիկները մտնում էին մայրաքաղաքին, իսկ նորմանների առաջնորդ Ռոբերտ Գյուիսկարը անցավ Ադրիատիկ ծովը և սկսեց նվաճել Բալկանյան թերակղզու արևմտյան մասերը։ Բյուզանդիային միացին միայն Եգեյան ծովի յերկու՝ Սև ծովը տանող նեղուցների յերկարությամբ յեղած ափերը։ Բայց այդ յերկերն էլ կարելի չեր պահել վարձու զինվորների, ոգնությամբ, վորոնց վերցրել էին այդ նույն նվաճողների՝ տաճիկների և նորմանների միջից։

Բյուզանդական կրթությունը։ *Պատկերամարտության ժամանակ կրթությունը շատ ցած եր. բյուզանդացիները կարծես մոռացել էին իրենց կապը հունական կուլտուրայի հետ։ Բյուզանդիայի ուժեղանալու դարը միաժամանակ բյուզանդական դիտության վերածնության դար եր։ Փոտը, Կիբիլեը և Մեթոդին՝ IX դարու յերկրորդ կեսին, շատ ուսումնական մարդիկ էին, պիտակ հին հունական գրականության։ Այդ շրջանում սկսեցին վորոնել, վերականգնել և արտագրել հին ձեռագրները, վորոնք հույն պատմագրների, աշխարհագրների, բանաստեղծների գրվածքներն էին։ X-րդ դարում Կոստանդին VIII Ծիրանածինը, ինքը աշխատասեր գրող, ղեկավարում եր գիտնականների աշխատանքը, վորոնք հավաքում էին և բացատրում, ձեռնարկներում, խրեստոմատիաներում և բառարաններում, հին հույների գիտական գիտելիքները։ Մեծ ժողովածուներից մեկի առաջաբանում, վորոնք կազմվում էին Կոստանդինի ցուցմունքով, ասված է, վոր «պատմության նյութը այնքան մեծացել է, վոր հաղթահարել և ընդգրկել չի կարելի», ուստի աշխատանքի նպատակն է հին և նոր գրողներից ամենակարևոր հատվածները միացնել։*

Անցյալի մասին յեղած պատմությունները և տեղեկությունները այդտեղ դասավորված էին մեզ համար անսովոր բաժանմունքներով, վորոնք այսպիսի վերնագրեր ունեն՝ դեսպանությունների մասին, դավադրությունների մասին, մարդկանց արժանիքների և պակասությունների մասին, ռազմական գործի մասին և այլն։ Իրեն՝ Կոստանդինն է պատկանում Կ.-Պոլսի պալատական անվերջ և հանդիսավոր արարողությունների ժանրամանր նկարագրությունը։ Պետության կառավարության և Բյուզանդիայի հարևան յերկրների և ժողովրդների մասին յեղած աշխատանքի մեջ Ծիրանածինը, Կիևի Իգոր և Ոլգա իշխանների ժամանակակից, ռուսների մասին ամենահին տեղեկություններն է հայտնում։

XII-րդ դարում, Կոստանդին IX Մոնոմախ կայսրի ժամանակ (մոր կողմից Կիևի վլադիմիր Մոնոմախ իշխանի պատը) մայրաքաղաքում հիմ-

նըվեց բարձր դպրոց. սրա մի բաժանմունքում ուսումնասիրում էին հին հռոմեական-հունական և հին քրիստոնեական գրականությունը, մյուսում —իրավունքը։ Նոր դպրոցի գլուխ (ռեկտոր) նշանակվով՝ կայսրը հրովարտակում գրում էր. «Որենքները չպետք է լինեն մութ, ինչպես պատգամախոսի խոսքերը. ինչպես պահապանը հսկում է կայսրին, այդպես էլ գիտությունը պետք է շրջապատե և պահպանե որենքներին»։

Իր ծաղկման շրջանում Բյուզանդիան արևելյան յեվրոպական ժողովուրդներին տվեց քրիստոնեություն, արևմտյանների համար պահել էր գիտություն և գրականություն. հին կուլտուրայի մնացորդներում հատկապես կարևոր էր հռոմեական իրավունքի ժողովածուն։

Յեկեղեցիների բաժանումը։ *Տիրապետելով հների գիտության, բյուզանդացիները բարձրից էին նայում արևմտյան Յեվրոպայի վրա, որը թաղված էր բարբարոսության մեջ։ Այդ հայացքները Յերևում էին հռոմեական պապի՝ արևմտյան յեկեղեցու գլխի (լատինականի՝ համաձայն ժամերգության լեզվի) և Կ.-Պոլսի պատրիարքի մեջ յեղող յեկեղեցական վեճերում։ Պապերը հենվում էին նախկին տիեզերական ժողովների վրա, որոնք նրանց իրավունք էին տալիս առաջինը լինելու յեպիսկոպոսների մեջ։ Պատկերամարտության ժամանակ նրանք բյուզանդական կայսրից անկախացան և Ֆրանկների թագավորների ոգնությամբ նույնիսկ տեր դարձան Միջին Իտալիայի լավագույն հողերին (ս. Պետրոսի կալվածքներին)։ Նրանք իրենց իրավունքն էին համարում խառնվելու Կ.-Պոլսի յեկեղեցու գործերին։ Նիկողայոսից և Փոտից հետո վեճերը միքանի անգամ վերանորոգվեցին, մինչև վոր XI-րդ դարու կեսին կատարյալ բաժանում յեղավ Հռոմի և Կ.-Պոլսի մեջ, Բյուզանդիայի՝ Իտալիայում ունեցած վերջին յերկրները կորցնելուց քիչ առաջ։ Այս բաժանման առիթը հետևյալ վեճն եր։*

Կ.-Պոլսում կային լատինական շատ յեկեղեցիներ, ուր հաճախում էին իտալացի վաճառականները և դանդաղ յերկրների ուխտավորներ, վորոնք գնում էին Յերուսաղեմ։ Միքայել Կերուլլարի պատրիարքը, անհամբերատար և զորեղ մի մարդ, փակեց լատինական յեկեղեցիները և բարձրաձայն կըկնեց Հռոմի դեմ յեղած ամբողջ մեղադրանքը։ (Հույները հռոմեացիներին մեղադրում էին, վոր պատարագին գործադրում էին խմորով հաց, ընդունում էին հոգևորականության չամուսնանալը և հավատամքում հաց, ընդունում էին հոգևորականության չամուսնանալը և հավատամքում ավելացնում էին filioque, այսինքն ս. հոգին բղխում է նաև վորդուց)։ Լևոն IX պապը, չնայելով վոր Կոստանդին IX Մոնոմախ կայսրը իր կողմն եր, չկարողացավ գործը շտկել. նրա ուղարկած լիազորները Կ.-Պոլսում իրենց հարաբերություններում խստապահանջ էին, և պատրիարքը հրաժարվեց նրանց հետ բանակցություն վարել. այն ժամանակ լատին Հումբերտ կարդինալը Սոֆիայի տաճարում դրեց գրություն, վորով դատապարտվում էին և նզովվում պատրիարքը և սրա կողմնակիցները։ Կերուլլարը ժողով գումարեց և նույն ձևով պատասխանեց պապին (1054)։

Այդ ժամանակից սկսած դադարեց արևելյան և արևմտյան հոգևորականության մեջ գրագրությունը և դեսպաններ ուղարկելը։ Տիեզերական յեկեղեցին բաժանվեց՝ հռոմեական կաթոլիկի և հույն կաթոլիկի (կամ ուղղափառի)։

III. ԱՐԵՎՄՏՅԱՆ ՅԵՎՐՈՊԱՆ 600—1100 թ.

4. ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԸ ՅԵՎ ՀՌՈՄԵԱԿԱՆ ՅԵԿԵՂԵՑԻՆ

VII-րդ դարում այժմյան յերկրները՝ Սպանիա, Անգլիա, Ֆրանսիա, Իտալիա, Հոլանդիա և Բելգիա, Շվեյցարիա, Դանիա և Սկանդինավիա զբաղված էին գերմանական ցեղերով։ Բայց այդ յերկրներում գերմանացիները տարբեր կերպով էին բաժանված։ Յեթե քարտեզի վրա թեք գիծ անցկացնենք արևմտյան Յեվրոպայի վրայով, այն նեղուցից, վորը բաժանում է Իրլանդիան Անգլիայից, և հասցնենք մինչև Ալպերի արևելյան անկյունը, արևմտյան կողմը կընկնեն այն յերկրները, վորոնցում ամբողջովին բնակված են գերմանացիները (Բրիտանիայում՝ անգլոսաքսերը, Հռենոսի ընթացքով՝ Ֆրանկների մի մասը, Գերմանիայում՝ սաքսերը, շվաբները, բավարացիները և այլն)։ Ձախ կողմում՝ գերմանացիները տեղավորվեցին ցրված, գաղութներով, ավելի բազմաթիվ հին բնակչության մեջ (վեստգոթերը՝ Սպանիայում, Ֆրանկների մի մասը՝ հյուսիսային և հարավային Գալլիայում, բուրգունդները Ռոնա գետի ափին, լանգոբարդները հյուսիսային և միջին Իտալիայում)։ Առաջիններում գերմանացիները իրենց լեզուն և նախկին կազմակերպության գծերը ավելի յերկար պահեցին։ Վերջիններում շուտով կորցրին իրենց առանձնահատկությունները և ընդունեցին տեղական բնակչության լեզուն, բնակչություն, վորը խոսում եր ռոմանական բարբառներով։ Ջուտ գերմանական և խառնուրդ ռոմանական ժողովուրդների տարբերությունը պարզ յերևում եր 700 թվականին մոտ։

Բարբարոսների որենքները։ *Հռոմեական նախկին շրջանների հին ազգաբնակությունը պահպանել եր իր սովորությունները, դատարանի կազմը և որենքները։ Հռոմեացիների նման գերմանացիները սկսեցին գրի առնել իրենց սովորությունները, վորոնք առաջ քրմերն էին պահում և բերանացի էին ավանդում հաջորդներին։ Այդ «որենքներին», ինչպես նրանք էին սում լատիներեն լեզվով, ռուսներն ասում են պրավդա, վորովհետև նման են Ռուսկայա պրավդային։ Դրանցից ամենից հինն և Սալյան պրավդան կամ սալյան ֆրանկների որենքը։*

Գերմանացիների որենքները կազմված են շատ կոպիտ լատիներենով։ Նրանց գլխավոր նպատակն է՝ մարդկանց զանազան ընդհարումների համար կարգ սահմանել։ Մարդասպանության դեպքում ազգականներին թույլ եր տրվում մարդասպանի ազգականներից վրեժ առնել։ Վրեժը կարելի էր փոխարինել փրկանքով (վերգելդ), վորը վճարում էին հոգուտ թագավորի տված առգանքից զատ։ Փրկանքում գնահատվում եր վոչ թե մարդկային կյանքն ընդհանրապես, այլ տուժողի կոչումը և ուժը։ Սպանված ազատ մարդի համար պետք եր վճարել ավելի, քան ստրուկի համար, գերմանացու համար ավելի, քան հռոմեացու, թագավորի զինվորի համար ավելի, քան հասարակ մարդու։ Հաշմանդամության, ձեռքը, մատը, քիթը, ականջը կտրելու, աչքը հանելու և այլ վերքերի համար վորոշված էին փրկանքի ճիշտ հաշված գումարներ։ Մարդասպանը հարկավորը վճարելով

պատժի այլևս չեր ենթարկվում։ Այս բարբարոսական դիծ եւ։ Հռոմեական օրենքն, ընդհակառակը, անհատի համար միատեսակ գին եր վորոշում, անկախ նրա կոչումից, բացի այդ, անպատվողին հալածում եր, իբրև հասարակության համար ջնասակար անձի։

Յեթե անմիջական մեղադրական կետեր չկային, մեղադրվողին առաջարկում եյին մաքրվելու ատտվածային դատաստանով կամ ուղղիայով։ Այդ կինշանակեր կամ յեռացող ջրով լի կաթսան մերկ ձեռքերով տանել կամ շիկացած յերկաթի կտորը ձեռքին պահել, յեթե միաժամանակ հետո այրվածքներ չեյին նկատվում, մեղադրվողը արդար եր համարվում. կամ թե անսխալ պետք եր ասել դժվարին յերդումը։ Ով վորձությանը չեր դիմանում, համարվում եր հենց ատածուց պատ՝ված։ Յեթե յերկուսը վիճում եյին պատվի կամ գույքի մասին, կարող եյին դատավորների ներկայությամբ վեճը վորոշել զենքով կռվելով միմյանց դեմ կամ յերդումով մրցելով իրար դեմ. վճիռը լինում եր հոգուտ հաղթողի կամ նրա, ով իր հետ ավելի շատ յերդմնակիցներ կբերեր, այսինքն այնպիսի մարդկանց, վորոնք յերդումով հաստատում եյին նույնը, ինչ-վոր և նա։

Ֆրանկների, վեստգոթերի, լանգոբարդների, անգլոսաքսերի պետություններում կառավարությունը նման չեր նախկին հռոմեականին։ Հռոմեացիների մեծ շենքերը, քաղաքային թատրոնները, բանտերը, ջրմուղները, ճանապարհները, վորոնք անց եյին կացրել Իտալիայից Ալպերի վրայով դեպի Հռենոս և Դանուբ և Գալլիայի միջով դեպի ովկիանոս, սկսեցին քայքայվել, վաճառականությունը թուլացավ, պահանջները քչացան։ Մարդիկ մեծ մասամբ հաճնում եյին տանը պատրաստած զգեստ և գործ եյին ածում տեղում պատրաստած զենքեր։

Թագավորին վոչ վոք հարկ չեր վճարում. Թագավորը դանձարան չուներ և ռոճիկով զորք չեր պահում։ Վեճերն ու դանգատները վճռվում եյին նրանից անկախ. յուրաքանչյուր շրջանում, վորը հին գերմանական սովորության համաձայն կոչվում եր հարյուրյակ, ժողովուրդը ժողով եր կազմում հարյուրապետի նախագահությամբ, իսկ վճիռները կայացնում հին տանուտերերը։ Թագավորը իր պալատով ապրում եր, ինչպես խոշոր կալվածատեր, խույս տալով մեծ քաղաքներից։ Ալոդվիգի հաջորդները, վորոնք յերկար մազեր ունեցող, յերբեք մազերը չխուզող Մերովինգներից եյին, իրենց բազմաթիվ հետևորդներով գնում եյին մի կալվածքից մյուսը, ամեն մեկում ապրելով յերկու, յերեք ամիս, մինչև վոր տեղում պատրաստած պաշարները վերջանում եյին։

Գերմանացիների հնում գումարվող ընդհանուր ժողովները, ուր վճռվում եյին կարևոր գործերը, կորցրին իրենց նշանակությունը սկսած այն ժամանակից, յերբ զինվորները ամբողջ յերկրում ցրվեցին։ Ֆրանկների մեջ ժողովները գումարվում եյին տարեկան միայն մի անգամ Մարտի դաշտում։ Թագավորի ամբողջ ուժը իր խումբն եր կամ լեյդերը (Leute, люди). սրանք նրա անձնական ծառաներն եյին, վորոնք թագավորի հովանավորության տակ եյին մտել։ Թագավորն աշխատում եր իրեն գրավել վորքան կարելի շատ լեյդերի. սրանց վարձատրում եր բնական տուրքով, այսինքն կամ նրա պալատում կերակրվում եյին կամ նրա կալվածքից հողամասեր եյին ստանում, նրա անտառում՝ վորսալու իրավունք, լճում՝ ձուկ վորսալու իրավունք կամ կամրջի մոտով, նավահանգստով, լեռան անցքով անցկացվող ապրանքի մի մասը։

Հռոմեական յեկեղեցին։ Հռոմեական կործանված կայսրության հիմնարկություններից մեկը պահել եր իր լրիվ իշխանությունը. այդ յեպիսկոպոսների իշխանություն եր, վորոնց ընտրում եյին քաղաքներում առանական հին, հարուստ ընտանիքներից, և վորոնք կառավարում եյին յեկեղեցական մեծ կալվածները։

Հռոմ քաղաքի յեպիսկոպոսները շատ վաղ ժամանակից սկսած սկսեցին մյուսներից բարձր համարվել։ Այդ բացատրվում է նրանով, վոր Հռոմը մյուս բոլոր քաղաքներից առաջնակարգ եր համարվում, վորին մարդիկ սովորել եյին անվանելու «հավիտենական քաղաք», «աշխարհի կենտրոն»։ Հռոմի յեպիսկոպոսին անցավ հին Հռոմի նախկին մեծ քրմապետի անունը (պոնտիֆեքս). նրա մյուս անունն եր պապա. այսինքն հայր։ Այն հավատն եր հաստատվել, վոր Հռոմի առաջին յեպիսկոպոսն յեղել է ավագ առաքյալ Պետրոսը, վորին փրկիչը ասել եր. «Դու վեմ ես (Պետրոս ես), և այդ վեմի վրա կհաստատեմ յեկեղեցի, և դժոխքի դռները նրան չեն հաղթահարի»։ Հռոմում գույց եյին տալիս նաև ս. Պետրոսի գերեզմանը, վորը տարեցտարի ավելի ու ավելի ուխտավորներ եր գրավում։ Հռոմի յեպիսկոպոսների նշանակությունը ավելի բարձրացավ, յերբ արևմուտքում այլևս կայսր չկար, և կայսրության յերկրամասերը բարբարոսների ձեռքն եյին անցնում։ Իտալիան հատկապես ծանր շրջան ապրեց տարատիպ լանգոբարդների գալուց հետո, վորոնք ամայացրին գրեթե ամբողջ թերակղզին և հաճախ հասնում եյին Հռոմի պատերին։ Լանգոբարդները կարևոր Իտալիայի և Հռոմի արևմտյան ափը Հռավեննայում գտնվող բյուզանդական փոխարքայի հետ հարաբերություն ունենալուց։ Այդ դժբախտությունների ժամանակ Հռոմի յեպիսկոպոսը ստիպված յեղավ ինքը միջոցներ ձեռք առնել բնակչության պաշտպանության և պահպանության համար։

590 թվին պապ դարձավ Գրիգոր I, վորին մեծաձայն ընտրել եր ժողովուրդը և հոգևորականությունը։ Նա հարուստ հին ընտանիքից եր և առաջ Հռոմի պրեֆեկտի (քաղաքապետի) պաշտոն ուներ։ Նրան տեսել եյին վաղուցում մետաքսե նուրբ զգեստի մեջ, զարդարված թանգագին քարերով, յերբ հանկարծ տարվելով կրոնավորական հոսանքով՝ նա վանք մտավ և իր մեծ կարողությունը նվիրեց վանքեր կառուցելուն։ Գրիգոր I-ը պապ ընտրվելով, իր կառավարությունը սկսեց մաքրագործման մեծ ծեսով, վոր այդ ժամանակ մեծ գոհեր տանող ժանտախտ առաջն առնի։ Աստվածամոր յեկեղեցին գնացին քաղաքի զանազան կողմերից կրոնավորներ և ամբողջ բռնակչությունը, յերեխաները և հասակավորները, վորոնց առաջնորդում եր հոգևորականությունը, բոլորն էլ սև զգեստով, գլխներին ծածկոցներ։ Ժողովուրդը հավաքվեց յոթ մեծ խմբով, քաղաքի յոթ ծխից. նրանց գլխավորներն եյին Հռոմի յեկեղեցու յոթ սարկավագները (կառավարիչները)։

Պապն աշխատում եր բնակչության կարիքը մեղմացնել, յետ եր գնում լանգոբարդներից գերի հռոմեացիներին, բարբարոսների հետ բանակցում եր և վերկանքով նրանց հարձակումից ազատվում. Հռոմի պատերի մեջ թաքցնում եր վախատականներին և այն մարդկանց, վորոնք լանգոբարդների կողոպուտներից աղքատացել եյին։ Հայտնատիկների մեծ ամբարներից, վո-

ընդք պատկանում էին յեկեղեցուն, բնակչության խեղճ մասին տրվում էր հացահատիկ, ինչպես այդ անում էին իրենց ժամանակ հռոմեական ծերակույտը և կայսրները։ Հռոմեական յեպիսկոպոսական աթոռը մեծ մասով պաշտոն չէր դնում, այլ ստանում էր յեկեղեցական կալվածքներից, որոնք ցրված էին Իտալիայի և Սիցիլիայի ամբողջ ուղղությամբ։ Այդ կալվածքները, որ ստացվել էին բարեպաշտների ընծայաբերություններից, նվերներից և կտակներից, կազմել էին մի առանձին մեծ ս. Պետրոսի ժառանգական կալվածք։ Բյուզանդական կառավարությունը ոչնչացրեց էր հռոմեական յեկեղեցու հարստությունից։ Պապին խնդրում էին յեկեղեցական պահեստներում պահել հացահատիկը, որը հատկացված էր Հռոմ և այլ քաղաքներում գտնվող կայսերական զորքը կերակրելուն։ Վորովհետև պապի գանձարանը միշտ էլ դրամով լիքն էր, ուստի նրա հաշվին էին ուղարկում այն բոլոր գումարները, որ պետք է վճարվեին ղինվորներին. պապը արևելյան կայսրի գանձապահն էր։

Գրիգոր I-ը հմուտ տնտես էր և կառավարիչ, աչքի էր ընկնում նաև իբրև ասպետ, բանաստեղծ, յերաժշտագետ։ Նա ժողովից հրաժարների և սրբերի մասին յեղած ժողովրդական ավանդությունները, կազմեց յեկեղեցական յերգեր և յեկեղեցի մտցրեց այն յերգեցողությունը, որը ավելի մոտ էր ժողովրդականին։ Գրիգոր I-ի գրվածքներում բացատրված է քավարանի մասին ուսմունքը. այդ ուսմունքի համաձայն, որ ընդունել է լատին յեկեղեցին, մեղավոր հոգիները ծնում են ժամանակավոր պժոխքում, որից նրանց կարող են ազատել յեկեղեցու աղոթքները։

Կայսերական հին Հռոմի տեղ բռնեց ս. Պետրոսի Հռոմը։ Գրիգոր I-ի ժամանակ պապական Հռոմի ուժը տարածվեց այն յերկրների վրա, որոնք առաջ կայսերական Հռոմի գավառներն էին։ Այդ ժամանակ Սպանիայի վեստգոթերը, որ արիոսական էին, ուղղափառ դարձան։ Գրիգոր I-ը վորոշեց վերադարձնել Հռոմի վաղուց կորցրած մի շրջան և ուղարկեց քարոզիչներ հեռավոր Բրիտանիա կամ Անգլիա։

Անգլիան VII յեվ VIII դարերում։ *Բրիտանիա կղզին 300 տարվա ընթացքում հռոմեական կայսրության գավառ էր (բացի այժմյան Շոտլանդիայի հյուսիսային մասից)։ Հռոմեացիները կենտրոնից հեռու այդ շրջանում շինեցին բերդեր և քաղաքներ, բայց այդտեղ հարավային յերկրներից քիչ գաղթողներ կային։ Գավառը դեռ այնքան ռոմանական չէր դարձել, որքան Գալլիան և Սպանիան։ Ցերը 400 թվականին մոտ Սոլիլիոնը Բրիտանիայից յետ կանչեց հռոմեական զորքերը (8—9 յերես), Հռոմի կապը այդ շրջանի հետ կտրվեց։*

450 թվականին մոտ սկսեցին արևելքից յերևալ Հյուսիսային ծովը անցնելով, անգլերի յեվ սաքսերի ավազակային խմբերը, որոնք ապրում էին այժմյան հյուսիսային Գերմանիայում և Դանիայում։ Գերմանական ղինվորական զորքերը գրավեցին հարավում և արևելքում առավելյա հողերը, հետո սկսեցին շարժվել առաջ, դեպի խորքերը։ Նրանք անխնա վոչնչացնում էին կամ ստրկացնում տեղական բրիտտերի բնակչությունը, որ կելտական ցեղին էր պատկանում։ Անկախ կելտեր մնացին միայն կղզու արևմտյան ծայրում, բացի այդ նաև հյուսիսում՝ Շոտլանդիայում և հարավան Իրլանդիա կղզում։ Անգլիայում՝ անգլոսաքսոն ցեղի գրաված շրջանում,

անհետացան հռոմեական սովորությունների և տիրապետության գրեթե բոլոր հետքերը։

Անգլիայում սկզբում գործում էին հարևան Կելտական Իրլանդիայից յեկած քրիստոնյա քարոզիչները։ Ծեսերի մեջ նրանք տարբերվում էին մյուս յեկեղեցիներից. հասակավորներին մկրտում էին բաց յերկնքի տակ՝ գետերում. պաշտամունք կատարում էին վոչ լատիներեն, այլ ժողովրդական լեզվով, ազոթում էին փայտե փոքր մատուռներում, վորոնցում վոչ սեղան կար, վոչ պատկեր։ Գրիգոր I-ը ուղարկեց Հռոմում իր հիմնած վանքից 40 վանականի և նշանակեց Ոգոստինոս վանահորը նրանց համար Անգլիայի յեպիսկոպոս։ Պապը քարոզիչներին տվեց մանրամասն հրահանգ, թե ինչպես վարվեն կատպաշտների հետ։ Գլխավորն այն էր, վոր նոր հավատը բռնի և խստությամբ չվերաթաթեն նրանց վրեն։ Ուր նրանք կգտնեն հին աստվածների համար հիմնած լավ տաճարներ, չպետք է քանդեն, այլ միայն այնտեղից հանեն կուռքերը. հետո պատրաստեն որինված ջուր, ներանով շինքը սրսկեն, բեմ շինեն և այնտեղ դնեն մասունքներ։ Թող չվոչնչացնեն նաև հին ծեսերը. որինակ՝ յեզները զոհելը կամ տաճարը ճյուղերից և կանաչից կազմած վրաններով շրջապատելը։ Թող առաջվա նման ժողովուրդը սովորական որերին հավաքի ուրախության և զոհի կենդանիներ, բայց վոչ թե իբր սատանային նվեր, այլ քրիստոնեական խնճույքի համար, աստծու անվան և պատվին։

Հռոմի քարոզիչները անգլոսաքսերի իշխանների պալատներում հին հավատի քրմերի և իրլանդական ուսուցիչների հետ վեճի էին բռնվում։ Ամեն տեղ հռոմեացիները հաղթում էին շնորհիվ իրենց վարժված լինելուն և միանաբար գործելուն։ Մի մեծ վիճաբանության մեջ հյուսիսային Անգլիայի թագավորներից մեկի ներկայության նրանք շատ հին պնդում փըրկչի այն խոսքերի վրա, վոր ասել էր Պետրոս առաքյալին։ Թագավորը նայելով լուռ մնացած իրլանդացիներին, վճռը վորոշեց հռոմեացիների օգտին. «Յեթե Տերը Պետրոսին ավել է յերկնքի թագավորության բանալիները, յերկնքի դռնապանի հետ յես չեմ ցանկանում թշնամանալ։ Ընդհակառակը, յես ցանկանում եմ հպատակվել նրան այն ամենում, ինչ վոր նա հաստատել է, վորովհետև յես վախում եմ, վոր այն ժամին, յերբ կանգնեմ յերկրնքի դռների առաջ, ինձնից յերես դարձնի նա, ում ձեռքին են բանալիները, և այն ժամանակ վոչ-վոք դուռը չի բանա»։

Անգլիայում վոխանակ իրլանդական շրջող քարոզիչների յերևացին մշտական քահանաներ. նրանք չպետք է թողնային իրենց ծուխը և հպատակվում էին յեպիսկոպոսներին, վորոնց հաստատումը Հռոմը։ Նոր հոգևորականությանը աշխատում էր իրլանդացիներից անցնել իր ուսումնականությամբ. դպրոցներ հիմնվեցին, ուր սովորում էին լատիներեն և հունարեն լեզուները. բացի ս. գրքից կարդում էին Վիրգիլիոս, Ովիդիոս և Տիտոս Լիվիոս. արտագրում էին ձեռագրների փառահեղ որինակներ։ Իրլանդական համեստ մատուռների տեղ սկսեցին շինել քարե մեծ յեկեղեցիներ, Գալլիայից բերել տալ վորմնադիրներ և նկարիչներ, որ շինքեր կառուցանեն «Հռոմեացիների նմանությամբ»։

Անգլիական ուսումնականության նշանավոր ներկայացուցիչն էր Բեդան, որը ապրում էր Անգլիայում քարոզելու սկզբնավորությունից 100

տարի հետո (մոտ 700 թ.)։ Իր մեծ հիացմունքը Հռոմի առաջ Բեդան հետևյալ խոսքերով էր արտահայտում. «Բանի կանգուն կմեռ Կոլիզեյումը, կանգուն կլինի նաև Հռոմը. երբ Կոլիզեյումը ընկնի, կընկնի և Հռոմը. երբ ընկնի Հռոմը, կընկնի և աշխարհը»։ Հռոմի յեկեղեցու համար անգլոսաքսերը յեղան հավատարիմ յերկրպագողներ։ Ահագին թվով ուխտավորներ անցնում էին մայր ցամաքը և, չնայելով ամեն տեսակ դժվարություններին, անցնում էին Յեվրոպայի յերկարությամբ Ալպերի լեռնանցքով Հռոմ՝ ս. Պետրոսի գերեզմանը համբուրելու, վոր ավելի ուղիղ և կարճ ճանապարհով հասնեն յերկընքի թագավորության։

Ֆրանկների պետությունը VIII-րդ դարում։ Մերովինգների մեծ պետության մեջ, վոր տարածվել էր Հռենոսի մյուս կողմը, միանում էին ռոմանական և գերմանական հողերը։ Նրանք կազմում էին յերկու իրար վոչ նման կեսեր. առաջինը՝ աբեվմտյան, վոր բաժանվում էր Նեյստրիայի և Բուրգունդիայի. յերկրորդը՝ աբեվելյան, վորը կոչվում էր Ավստրազիա։ Այդ կեսերը յերբեմն ունենում էին տարբեր թագավորներ, յերբեմն էլ մի թագավոր. թագավորության յուրաքանչյուր մասում կար իր մայորդոմը (պալատի գլխավոր կառավարիչ), վոր հողերն և պարգևներն էր բաժանում թագավորական ծառաներին և զինվորներին։ Յերբ սկսեցին մայորդոմները պատերազմի դաշտը առաջնորդել թագավորական լեյդերին, ավելի ուժեղացան, քան Մերովինգյան տան թագավորները։ 700 թվին մոտ Ավստրազիայի մայորդոմ Պիպինը մյուս պալատական գլխավոր ծառայողներին հեռացրեց, գրավեց ամբողջ պետության կառավարությունը և սկսեց թագավորների պաշտոնը ինքը հաստատել։

Նրա վորդին, Կարլ մայորդոմը, վորը կոչվում էր Մարտել, այսինքն մուրճ, ամենևին թագավոր չհաստատեց։ Նա գործ ունեցավ արաբների ուժեղ հարձակման հետ, վորոնք յեկել էին Պիրենյան լեռների մյուս կողմից։ Արաբները արդեն գրավել էին հարավը, Գարոնայի և Ռոնայի հովիտները և մոտեցել Լուարին։ Պուատյեի մոտ նրանց ստիպից կանգ առնել Կարլի ֆրանկներից և իրեն հպատակ գերմանական այլ ցեղերից հավաքած յերկրապահ զորքը։ Ցոթի որ տևող կռվում գերմանական զինվորները դիմացան արաբական ձիավոր զորքի հարձակումներին. սակայն իրենք հաղիվ էին հավատում իրենց հաղթությանը, յերբ յերեաց, վոր արաբները թողել են բանակատեղը և հեռացել դեպի հարավ (732)։

Արաբների դեմ մղած կռիվը ֆրանկների կազմի մեջ խոշոր փոփոխություն առաջ բերեց։ Գերմանացիների նախկին զորքը մեծ մասամբ հետևակ էր։ Արաբների հարձակումները յեթե մղելու համար պետք էր ձիավոր զորք կազմել։ Կարլը սկսեց ուժեղացնել իր վասսեի, այսինքն խոշոր զինվորների թիվը և պահանջեց, վոր նրանք իրրև ձիավոր ծառային կամ միքանի ձիավորներ բերեն։ Ցանկանալով նրանց վարձատրել այդ ծանր և քայքայող ծառայության համար, նա թույլ տվեց իր վասսեին գրավել յեկեղեցիների և վանքերի ընդարձակ հողերը (այնպես, ինչպես նրա ժամանակակից պատկերամարտ կայսրերն էին անում)։ Միքանի կիսավայրենի զինվորական մարդկանց, վորոնք չէին կարողանում նույնիսկ կարդալ, տալիս էր յեպիսկոպոսական տեղերը։

Այդ ժամանակ Հռոմին սկսեցին շատ ճնշել լանգոբարդական թագավորները։ Պապերը հույս ունեին, վոր աջակցություն կգտնեն կայսրության փոխարեն ֆրանկների հզոր առաջնորդներից։ Պապի և ֆրանկների մեջ դաշն կապելուն ոգնեց անգլոսաքսոն Վինֆրիտ-Բոնիֆացիոս վանականի գործունեությունը։

Բոնիֆացիոս։ VIII-րդ դարում անգլիական վանքերից և դպրոցներից յելնում էին քրիստոնեության յեռանդուն քարոզիչներ, վորոնք անցնում էին Յեվրոպայի մայր ցամաքը։ Դրանց թվում ուսումնական Վինֆրիտը գնաց հյուսիսային և միջին Գերմանիայի ցեղերի մեջ, վորոնք հաղիվ ծանոթ էին քրիստոնեությանը։ Նա կամենում էր գործել հռոմեական յեկեղեցու ոգտին. յերկու անգամ գնաց Հռոմ, ստացավ լատինական Բոնիֆացիոս անունը և յեպիսկոպոս ձեռնադրվեց։ Նա Գրիգոր II պապին տվեց իր հավատի համար գրավոր վկայական և հռոմեական յեկեղեցուն հավատարիմ լինելու յերդում, խոստանալով հարաբերության մեջ չմտնել այն յեպիսկոպոսների հետ, վորոնք Հռոմի ուսմունքի համաձայն չեն ուսուցանի։

Ուրիշ ուսումնական վանականների և կույսերի հետ, վորոնց կանչել էր Անգլիայից, Բոնիֆացիոսը հիմնեց մի քանի վանքեր։ Տեղ-տեղ դեռ պատահում էին մարդկային զոհաբերություններ։ Հեսսենում Բոնիֆացիոսը իր ուղեկիցների հետ կտրեց Վոդան աստծու կաղնին, վոր ցույց տա ժողովրդին սատանայի անզորությունը։ Քրիստոնեությունը ընդունողներից շատերը շարունակում էին գաղտնի աղոթել և զոհ բերել հին աստվածներին. միքանի քահանաներ իրենք էին այդ զոհերն անում, կառապաններ հետ զոհի միսն ուտում էին, հետո քրիստոնեական ծեսերն էին կատարում. ուրիշները ս. գրքից կտորներ էին գրում և թելով վզից կապում, իբրև հմայիլ չար աչքի կամ հիվանդությունների դեմ։ Նոր քարոզիչներն աշխատում էին այդ սովորությունները արմատախիլ անել և բարքերը լավացնել։ Նոր հիմնած վանքերի շուրջը հավաքվեցին մարդիկ աշխատելու համար. վանականներն իրենք, արանց ծառայողները և դյուղացիները, վորոնք նրանց հովանավորության տակ էին մտել, վայրենի անտառները մաքրում էին վարելու համար և վորբրում մինչև այդ ձեռք չտված հողը։

Պապը Բոնիֆացիոսին նշանակեց գերմանական հողերի արքեպիսկոպոս, այն հողերի, վորոնք ընկած էին Հռենոսի մյուս կողմը և յենթարկվում էին ֆրանկների կառավարիչներին։ Կարլ Մարտելի վորդիները ոգտվում էին Բոնիֆացիոսի գիտությունից, փորձից և սրբությունից, վոր ֆրանկների ամբողջ պետության մեջ մաքրեն և բարձրացնեն յեկեղեցին, վորը շատ էր կոպտացել պատերազմական խառը ժամանակում, իրենց հոր որով։ Պապի հանձնարարությունները կատարելով՝ Բոնիֆացիոսը յեկեղեցական ժողովներում առաջարկից հոգևորականությանը նկրտնչել ավելի խիստ կենցաղ ունենալ. արգելեց հոգևորականներին զինք կրել, հարբել, վորսի գնալ և կռիվները անել։ Քահանաները և վանքերը պետք է հպատակվեին յեպիսկոպոսի իշխանության. յեպիսկոպոսների վրա դրվեց միտրոպոլիտների կամ արքեպիսկոպոսների իշխանությունը. իրենց հերթին արքեպիսկոպոսները յենթարկվում էին պապին, վորը նրանց ատիճանն էր հաստատում, ուղարկում էր պալլիում, այսինքն սպիտակ ուսնոց սև խաչերով, մի խորհրդանշան աստծու գառի, վորին ուսերին դրած Բարի Հովիվը տանում է, վորոշվել էր յեկեղեցուն վերադարձնել այն կալվածքները, վոր գրա-

վել էին Կարլ Մարտելի ժամանակ, այն պայմանով, սակայն, որ չնվեղեցա-կան հողերի վրա բնակեցրած զինվորները շարունակեն այդ հողերից ըս-տանալ իրենց անունը։

Բոնիֆացիոսը պապի հոգևոր իշխանության հպատակեցրեց նորա-զարձ գերմանական չերկրները և ֆրանկների բոլոր արևմտյան հին տիրա-պետությունները։ Այժմ պապի իշխանությունը տարածվում էր ամբողջ ա-րևմտյան Յեվրոպայի վրա։ Իր չերկար կյանքի վերջում, 75 տ. Յերուսի Բո-նիֆացիոսը գնաց քրիստոնեությունը քարոզելու ֆրանկների (այժմյան Հոլլանդիայի) չերկրներում և այնտեղ անտառում մեռավ, կատաղած հեթա-նոսներից սպանվելով (755)։

Կարոլինգների գաըը պապերի հետ։ Միաժամանակ կատարվում էին այնպիսի դեպքեր, որոնք ավելի սերտ էին կապում պապին ֆրանկների կառավարիչների հետ։ Մարտելի որդի՝ մայորդոմ Պիպին Կարճահասակը որոշեց գահընկեց անել վերջին մերովինգին, որը ոչ մի իշխանություն չուներ, և ինքը ընդունեց թագը. (տոհմը սրա աչքի ընկնող ներկայացուցիչ Կարլ Մեծի անունով կոչվում է Կարոլինգների)։ Ազնվորական ժողովում նը-րան վահանի վրա դրած բարձրացրին, զենքերի աղմուկի տակ և թագա-որը հայտարարեցին, իբր նշան նոր բարձր իշխանության Պիպինը ոծվեց այն չեպիսկոպոսից, որին լիազորել էր պապը։

Շուտով լանգոբարդների թագավորը նվաճեց մինչև Իտալիայի կյու-զանդական գրեթե բոլոր չերկրները և մոտեցավ Հռոմին։ Ստեփանոս II պապը գնաց Ալպերի մյուս կողմը և խնդրեց Պիպինին ազատել Պետրոս առաքյալի չերկրները։ Թագավորը պապից դրա համար ստացավ պատրիկի, այսինքն Հռոմի հովանավորի, տիտղոս։ Պիպինը չերկու անգամ գնաց Ալ-պերի մյուս կողմը և լանգոբարդներին քշեց, նրանցից խլած հողերը, Բյու-զանդիայի նախկին չերկրները, որոնք ընկած էին Հռոմի և Հռավեննայի շուր-ջը, նա ս. Պետրոսին ընծայեց և հանձնեց պապի ինքնիշխան կառավարու-թյան. զրաված քաղաքների բանալիները դրվեցին առաքյալի գերեզմանի վրա։ Այդ ժամանակվանից պապը ճանաչվեց աշխարհական կառավարիչ և առաջ չեկավ առանձին չեկեղեցական պետություն։

5. ԿԱՐԼ ՄԵԾԻ ՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ

Կարլի պատերազմները։ Ֆրանկների պետությունը անսովոր հզորու-թյան և ընդարձակման հասավ Պիպինի որդի Կարլի (768—814) ժամանակ։

Սկզբում Կարլը ֆրանկների չերկրապահ զորքը ուղղեց Ալպերի մյուս կողմը, լանգոբարդների թագավորների դեմ, սաիպեց, որ Պավիա մայրա-քաղաքում անձնատուր լինի և վանք մտնի։ Հյուսիսային և մինչև Իտա-լիան չինթարկվում էին Կարլին։ Սակայն հին կարգերը մնացին. Իտալիան առանձին թագավորություն էր համարվում և Կարլը ընդունեց միայն լանգոբարդական (այսպես կոչված չերկաթե) թագը։ Հյուսիսային Իտալիա-յի անունը այնպես էլ մնաց Լոմբարդիա, այսինքն լանգոբարդների չերկիր։ Թագավորը Հռոմ էլ գնաց, ուր ժողովուրդը նրան դիմավորեց խաչերով և ձիթենիների ոստերով և նրան ճանաչեց իրենց պատրիկը։

Միքիչ հետո Կարլն անցավ Պիրենյան լեռները, որ ոչնչ ապստամբ

արաբ վոխարքային ընդդեմ Կորդովայի խալիֆի։ Անկախ լեռնցի քրիս-տոնյաները՝ բասկերը, որոնց ամրությունները Կարլը արշավանքի ժամա-նակ քանդել էր, նրա վերադարձին ջարդեցին ֆրանկների հետևապահ զորքը, որի առաջնորդն էր Ռոլանդը. (ասպետական չերգերը հետագայում նրան դարձրին հերոս, որն ընկել էր անհավատների դեմ մղած պատերազմում)։ Սակայն ֆրանկները հետո չետ գրավեցին Սպանիայի հյուսիս-արևելյան անկյունը Բարցելոնա քաղաքով։

Ավելի ծանր և չերկարատև եյին պատերազմները արևելքում։ Այստեղ ֆրանկների հարևաններն եյին հեթանոս սաքսերը, որոնք ապրում եյին Հյուսիսային ծովի, մինչև գերմանական լեռների և Ելբայի միջև։ Սաքսերը իրենց արշավանքներով անհանգստացնում եյին ֆրանկներին, և Կարլը վո-րոշեց նվաճել նրանց չերկիրը։ Սկզբում նա հաջողություն ուներ. ֆրան-կները այրեցին սաքսերի սրբազան պաշտոնական և այնտեղ գտնվող նրանց գլ-խավոր սրբությունը՝ ահագին ծառի բունը՝ Իրմինսուլը։ Սաքսերը հավատա-մուրության չերդում տվին։ Կարլը նշանակեց գրաֆներ (վոխարքաներ), հրա-վիրեց քրիստոնյա քարոզիչներ և չեպիսկոպոսություններ կազմակերպեց. քրիստոնեությունը նրա գլխավոր միջոցն էր հաղթած ժողովրդին հպատա-կեցնելու համար։ Բայց սաքսերը ամեն անգամ ապստամբում եյին, չերբ Կարլը, ուշքը դարձնելով հարավի գործերի վրա, չերկրից հեռանում էր. կործա-նում եյին չեկեղեցիները, քշում եյին ֆրանկներին և նոր հոգևորակա-նությունը։ Կարլը վերադառնալով նորից չարդում էր սաքսերին և ապստամբ-ների հետ խստորեն էր վարվում։ Նա մի անգամ պատվիրեց գլխատել $4^1/_2$ հազար մարդկանց, որը իրեն եյին հանձնել իբրև դավաճանության պատ-ճառ չեղողներին։ Մոտ 30 տարի շարունակվեցին խռովությունները։ Կարլը վերջնապես տիրեց չերկիրը միայն այն ժամանակ, չերբ սաքսերի մի մասը չերկրից դուրս արեց և փոխարենը բերին ֆրանկ և սլավոն գաղթականներ։ Կարլը պատվիրեց սաքսերի համար օրենք կազմել Պրավդայի նմանությամբ, որը գերմանական ուրիշ ցեղեր ունեյին։ Յեկեղեցու և քահանաների դեմ յեղած հանցանքների համար շատ խիստ պատիժներ եյին նշանակված, որինակ՝ մեռ պատը չպահողի համար մահվան պատիժ։

Սաքսոնական խռովությունների ժամանակ Կարլը կռվում էր նաև ա-վարների դեմ, որոնք ապրում եյին այժմյան Հունգարիայում և սլավոնների դեմ։ Ավարների դեմ գնաց չերկու չերկրապահ զորք՝ մեկը Գերմանիայից, իսկ մյուսը Իտալիայից։ Նրանք միացան Դանուբի հովտում։

Կարլի զորքը անհավատների դեմ գնում էր խաչվառներով, չեկեղեցա-կան շարականները չերգելով։ Յերբ վերցրին ավարների «ոտակը», ուր կապանը (խանը) կողոպտած մեծաքանակ ավար էր պահում, Կարլը գանձի մի մասը նվիրեց պապին, մնացածը բաժանեց զքավորին, որ «փառաբանեն իր վո-ղորմածությունը և ոգևոն իրեն արշավանքների ժամանակ»։ Սահմանի հոգևո-րից, որ խլեր էր ավարներից, կազմվեց արեվելյան մարկը (այսինքն ռազ-մական սահման)։ Կարլի պետության սահմանակից սլավոնները իալտիկ ծովից մինչև Ադրիատիկը (սրանց խվում և չեխերը) նրա գերիշխանու-թյունը ճանաչեցին և պարտավորվեցին գաշնակից զորամասեր ներկայա-ցնել և հարկ վճարել։

Կայսրություն։ Կառավարության վերջին շրջանում Կարլը իր իշխա-

նուիթյան տակ առավ գերմանական բոլոր յերկրները, վորոնք քրիստոնեությունն էին ընդունել, բացի Անգլիայից. արևելքում սահմանն անցնում եր Ելբայով, հետո հեռանում եր դեպի արևելք, կորում եր Դանուբը վիեննայի մյուս կողմը և արևելյան Ալպերի ծայրերով իջնում եր Ադրիատիկ ծովի մոտ։ Ապենինյան թերակղզին նրան եր պատկանում իր մեծ մասով։ Պիրենյան թերակղզում տիրապետությունը հասնում եր մինչև Երբո գետը։ Բրիտանյա յեկեղեցու ամբողջ արևմտյան մասը այժմ ֆրանկների տիրապետության մեջ եր Հռոմ քաղաքի՝ հին կայսրության մայրաքաղաքի, հետո։ Ժամանակի անցքերը պատմող տարեգրողն ասում է. «Վորովհետև Կարլը տիրել եր Հռոմին, նա յել պիտի կայսր լիներ»։ Պապը կայսրի ցանկության ընդառաջ գնաց։ Նրան պետք եր արևմուտքում հզոր պաշտպան, վորովհետև պապականությունը արևելյան կայսրության մեջ հենարանը կորցրել եր։

Լևոն III պապը կարիք զգաց գնալ Գերմանիա ոգնություն խնդրելու Կարլից Հռոմի եր թշնամիների դեմ, վորոնք նրան անթույլ ցած եյին բերել, բանտ եյին գրել և քիչ եր մնացել սպանեյին։ Կարլը հրամայեց իր մեծամեծներին գործը քննել, իսկ ինքը ուղևորվեց Հռոմ։ Առաջուց արդեն նա Բյուզանդիայի հետ բանակցություն եր վարում, վոր իրեն կայսր հռչակեն և արևելյան թագավորներից եյ ճանաչվի։ Այժմ պապը գործն արագացրեց։ 800 թվի ծննդյան առաջին որը, յերբ թագավորը աղոթում եր ս. Պետրոսի յեկեղեցում, պապը նրա գլխին դրեց թագը և մինչև գետին խոնարհվեց։ Շուրջը կանգնած ֆրանկները և հռոմեացիները հաստատեցին թագադրությունը իրենց աղաղակով. «Հաղթություն և առողջություն Կարլին, ոգոստոսին, աստծուց պահվածին, հռոմեացիների մեծ և խաղաղարար կայսրին»։

Այն ժամանակվա գաղափարներով հռոմեական կայսրությունը պետք է ընդգրկեր ամբողջ աշխարհը. նա զուգադիպում եր քրիստոնեական յեկեղեցուն, յերկրի վրայի աստծու քաղաքի հետ, ուստի կայսրությունը սրբազան է, կայսրի իշխանությունն էլ սրբազան է, կարծես մի տեսակ հոգեվոր իշխանություն եր։

Թագավորական տնտեսությունը։ Կարլի մեծ պետությունը իր կառավարության տեսակետից նման չեր վոչ խալիֆությանը, վոչ էլ Բյուզանդիային։ Ֆրանկների կայսրության մեջ առևտուրը թույլ եր, հազորդակցության ճանապարհները՝ վատ, դրամական շրջանառությունը՝ քիչ, քաղաքները՝ վոչինչ բաներ։ Բնակչության մեծ մասը ապրում եր հողագործական աշխատանքով և իր աշխատանքի արդյունքները չեր վաճառում։ Կարլը չեր կարող ժողովրդից հարկ հավաքել. դանձարանի յեկամուտները հարյուրերորդ մասը չեյին կազմում նրա, ինչ-վոր ստանում եյին Բաղդադում և Բյուզանդիայում։ Նա իր պալատով ևծառաներով մի վիլլայից (կալվածք) անցնում եր մյուսը։

Թագավորական վիլլաներում, վորոնք ցրված եյին գանազան տեղեր, ապրում եյին գինվորական ծառաներ և գյուղացիներ, վորոնք պարտավոր եյին տուրքեր տալ, նաև արհեստավորներ, ծառայողներ, ձիապաններ, անասնապահներ, մառանապահներ և այլն։ Կալվածքի կառավարիչը կոչվում եր դատավոր. սա վոչ միայն տնտեսությանն եր հսկում, այլ և քննում եր այն բազմաթիվ մարդկանց վեճերն ու հանցանքները, վորոնք ապրում և աշխատում եյին թագավորական կալվածներում։ Վիլլայի կառավարիչը ծնունդյան տոներից առաջ թագավորին պիտի ներկայացներ հաշիվ, թե տնտեսությունից ինչքան և ստացել, ինչքան հողային հարկ, տուգանք և մտել, տնտեսության մեջ ինչքան և ծախսվել և ինչքան նյութ և հավաքվել պաշարի համար։ Ծաղկազարդին պետք և մուծվեյին այն դրամները, վորոնք ստացվել եյին ապրանքների վաճառումից և պատիժներից, իսկ նյութերը ուղարկվում եյին դանազան ժամանակներում—մոմերը՝ տարին յերկու անգամ՝ ձմեռվա սկզբին և մեծ պահին. ավելի շուտ-շուտ ուղարկվում եյին՝ միս, ալյուր, թռչուններ, ձու, կանաչեղեն, գինի։ Կառավարիչը գալիս եր ժամանակ առ ժամանակ բերումներով, նրա հետ էլ գարեջուր պատրաստողը, վոր խմիչք պատրաստեր թագավորի բոլոր պզտիկաննների և շքախմբի համար։ Թագավորի գալու դեպքում պահանջվում եր, վոր կալվածքում լինեյին մահճակալներ, վերարկուներ, պատրաստած վերմակներ, վարագույրներ, ամանեղեն և գործիքներ. այն ամենը, ինչ վոր պետք և մի քանի շաբաթ կամ ամիս ապրելու համար։

Կարլը ամենից հաճախ կանգ եր առնում Ախեներում։ Այստեղ գտնվում եր թագավորական, ամրացած պալատ՝ պֆալց (հռոմեական Palatium, պալատ բառից)։ Թագավորի բնակչության շուրջը բարձրացնում եյին մագնատների, այսինքն խոշոր պաշտոնյաների, տները իրենց ծառայություններով։ Յերբ յեկեղեցական ժողով եյին նշանակում կամ թագավորի գինվորական ծառաների աշխարհական համագումարը, կամ հեռու տեղից մեծ դեսպանության եյին սպասում (որինակ՝ Հարուն խալիֆից), Ախեն եր հավաքվում մեծ ժողովուրդ։ Այդ ժամանակ յերևում եյին վաճառականները, հրեաները և ասորիները, հեռու տեղերի ապրանքներով. որանց համար շինված եր առանձին շենք։

Վասալներ յեվ սեյորներ։ Հեռավոր և յերկարատև պատերազմների համար կարլը պետք և միշտ յերկրապահ զորք հավաքեր, բայց թագավորը չեր կարող միշտ գինվորներին կերակրել և գինել։ Գինվորը պարտավոր եր միշտ իր հետ վերցնել հագուստ և գենք, այն չափով, վոր բավականանա վեց ամիս, իսկ ուտելուց՝ յերեք ամիս. յերկուսը կամ յերեքը պետք և մի այլ ունենայինն։ Վորովհետև յերկրապահ զորքը հուսալի չեր, թագավորն աշխատում եր իր վասալների (կամ վասալների) թիվը ավելացնել. այսինքն այն մարդկանց, վորոնք իրենց գրել եյին անձնատուր նրա պաշտպանության և կառավարչական ծառայության տակ։ Թագավորական վասալների մի մասը տեղավորվեց նվաճված շրջանների այն հողերում, վորոնք ծառայության համար տրված եյին նրանց այսպես կոչված բենեֆիցիաներում։ Մյուս մասը՝ պալատինները մնում եյին պալատում թագավորի մոտ կամ կատարում եյին թագավորի հանձնարարությունները, վոր կապված եր շրջանները շրջագայելու հետ։

Այդպիսի վասալներով սկսեցին իրենց շրջապատել և հարուստ մագնատները։ Շատ մանր մարդիկ ոգտակար եյին համարում թողնել իրենց հողը և հանձնվել խոշոր հարևանի պաշտպանության և կարգադրության. շատերը վասալներ եյին դառնում, վորովհետև հնարավորություն եյին ստանում իրը ձիավոր ծառայել, վորը նրանց տալիս եր հովանավորը։ Այսպիսով հարուստ և ուժեղ մարդիկ ունեցան հատուկ անձնական հպատակներ։ Նա, ով հանձնվում եր վասալական կախման, իրեն հովանավորին ճանաչում եր սեյոր (senior, seigneur), այսինքն ավագ, գլխավոր։ Վասալը նրան հավատարմության յերդում եր տալիս, վորի համար ծանուկ եր չոքում և իր ձեռ-

քերը դնում եր սենյորի ձեռքերի մեջ։ Սենյորը պահանջում եր, որ վասսալը միշտ իրեն հետևի. թագավորի նման նա իր վասսալներին հանձնարարում եր կատարելու կալվածները և գյուղացիներին և նույնպես նրանց առնիկ եր վճարում բնեղիցիայի ձևով, այսինքն նրանց հողամասեր եր տալիս, որոնցից վասսալները իրենց ապրուստն եյին հոգում։

Կառավարություն։ Շրջաններըը կառավարելու համար թագավորը նշանակում եր գրաֆներ (լատիներեն comes, ֆրանսերեն comte— կոմս), հավաքում եր մաքսեր հոգուտ թագավորի, հսկում եր յերկրապահ զորքի կանոնավորության վրա։ Նա անցնում եր մի հարյուրյակից (շրջանից) մյուսը և ժողովրդին կանչում եր դատի։ Շրջագայելու ժամանակ գրաֆը բնակիչներից ստանում եր ընծաներ, այս ձևով հավաքում եր՝ հաց, քաթան, բրդի կտորներ, ոտանաման, ամանեղեն և այլն։ Կարլը շրջաններն եր ուղարկում թագավորական դեսպաններ, որոնք պետք և ստուգեյին գրաֆների կառավարությունը, հետևեյին, որ բնակիչներին չնեղեյին տուրքերով և ճնշելով, և բնակիչներից բողոքներ ստանային։


Կարլը տարեկան յերկու անգամ ընդհանուր ժողով եր գումարում։ Գարնան վերջը հավաքվում եր այսպես կոչված մայիսյան դատը, որին ներկա եյին լինում խոշոր պաշտոնյաները, թագավորական վասսալները և յեպիսկոպոսները իրենց վասսալների հետ, այլ և մոտակա յերկրապահ զորքի մանր մարդիկ։ Այդ ժողովը միաժամանակ զորահանդես եր։ Աշնանը հավաքվում եր մյուս փոքր ժողովը, որը կազմվում եր միայն մագնատներից և թագավորական ամենակարևոր վասսալներից, որոնք թագավորի համար բերում եյին սովորական ընծաները։ Այդ ժողովները շատ եյին տարբերվում հին հավաքույթներից, որոնց ներկա եյին լինում բոլոր ազատները։ Կարլի ժամանակի ժողովները ազգակաև բնույթ ունեյին։ Միայն պալատականները, յեպիսկոպոսները և սենյորներն եյին խորհրդակցության հրավիրվում. ճեացածները լսում եյին վճիռները։

Իր կառավարության մեջ Կարլը պետք և միշտ դիմեր հոգևորականության։ Պալատում գլխավոր անձերն եյին յերկու հոգևորական՝ կապելյանը, թագավորի խոստովանահայրը և իր խորհրդականը յեկեղեցական գործերում, Ֆրանկ թագավորների հատուկ արբության՝ ս. Մարտին Տուրացու թիկնոցի (կապայի) պահապանը և կանցլերը՝ հրովարտակներ պատրաստողը։ Այն ժամանակ հոգևորականներն եյին միակ կրթված մարդիկ։ Նրանք պատում եյին իբր «դեսպաններ», պաշտոնավարում եյին պալատում, ժողովներում կենդանի մասնակցություն եյին ցույց տալիս։

Աշխատում եյին շատ գործեր յեպիսկոպոսների ժողովին հանձնել, որովհետև թագավորին և իր փոխարքաներին ամեն տեղ չեյին հպատակվում, իսկ յեկեղեցական հոդվածը կամ պատիժը սարսափելի յեր թվում։ Թեև Եկեղեցին միայն յեկեղեցական պատիժ եր նշանակում, բայց այդ պատժի հետ կապված եյին մարմնական անդուր զրկանքներ։ Յեկեղեցական մի կանոնի համաձայն մարդասպանը պետք և հայրենիքից դուրս ապրեր յերեք տարի, միայն հացով ու ջրով, և շրջեր շղթաներով։ Շատ ծանր եր յեկեղեցական բանադրանքը. բայց այն, որը բանադրյալին արգելում եյին յեկեղեցական խորհուրդներին և արարողության ներկա լինել, նրա հետ վոչ վոք չպետք և խոսեր, վոչ վոք չեր համարձակվի նրա հետ ուտել ու խմել,

բարևել նրան, այլապես նույնպես կենթարկվեր բանադրանքի։ Ով բանադրանքի տակ եր մեռնում, համարվում եր մյուս աշխարհի փրկությունից զրկված։

Լուսավորություն։ Կարլը և նրա պալատականները խորին հարգանքով լցված եյին հռոմեական անցյալի հանդեպ և աշխատում եյին նմանվել նրան շենքերով, բանաստեղծության և հռետորական արվեստի մեջ։ Կարլի ժամանակի բանաստեղծներից մեկն ասում և՝ «Ահա նորվում են ժամանակները, հների կյանքը հարություն և առնում, վերածնվում և այն, ինչով փայլում եր Հռոմը»։ Կարլի պալատում հավաքվում եյին արևմուտքի ամեն ծայրի ուսումնական մարդիկ։ Սրանց մեջ հատկապես աչքի յեր ընկնում անգլոսաքս Ալկվինը, գրող և գրականության ձեռնարկ կազմող լանդոր Պողոս սարկավագը, որը գրել եր իր ժողովրդի բանաստեղծական



Կարլի կայսրության բաժանումը. 1. Ֆրանսիա, 2. Արելատ, 3. Իտալական թագավորությունը, 4. Գերմանիա, 5. Հռոմեական յեկեղեցու տիրապետությունները։

պատմությունը. եյնգարդ Ֆրանկը, Կարլի քարտուղարը, հռետոր, նկարիչ, հարտարապետ և մեքենագործ, Կարլի կենսագրությունը կազմողը, որի մեջ Կարլը ներկայացված և Ոգոստոսի նմանությամբ։ Այդ մարդիկ Կարլի հետ կազմում եյին պալատական ուսումնական հասարակությունը։ Ալկվինը պալատին կից հիմնեց նաև զպրոց անգլոսաքսոնական վանքերի ձևով. այդտեղ Կարլը հավաքեց սենյորների և թագավորական վասսալների որդիներին, որը պաշտոնեության համար պատրաստեե։ Դպրոցում կարդում և արտագրում եյին հռոմացի հեղինակներին և աշխատում եյին հիշողության

մեջ պահել գեղեցիկ վոճները, վոր հետո «խոսքի ծաղիկները» գործածեն խոսակցության կամ գրության մեջ։

Կարլը ուսումնականներին հրավիրում եր սեղանի. քարտուղարը կանգնում եր նրա մոտ, մոմած տախտակը ձեռքին, վոր արագ գրի այն, ինչ-վոր կհրամայե։ Ճաշից հետո սովորաբար կարդում եյին վոտանավորներ. ներկաները ընթերցումը ընդհատում եյին իրենց նկատողություններով, հեղինակը հակաճառում եր, կատակներ և սուր նկատողություններ եյին տեղում։ Այդ հասարակության անդամները անգլոսաքսոնական ուսումնականների սովորության համաձայն իրենց այլ անուններ եյին դնում, վոր փոխ եյին առնում ս. գրքից կամ հունա-հռոմեական անցյալից (Դավիթ, Հորացիոս), իրար դիմումներ եյին անում ճոռոմ գրություններով, ուսումնականն հանելուկներ եյին լուծում

Կարլի կայսրության կազմալուծումը։ Հռոմեական Տրայանոս և Կոստանդին կայսրներից սկսած այդպիսի փառավոր կառավարություն և այդքան մեծ պետության արևմուտքում չեր յեղել։ Բայց Կարլի ստեղծած կայսրությունը հաստատուն չեր։ Ժողովուրդը տառապում եր հարկերից և պարտականություններից։ Մարդիկ փոխանակ պետությանը ծառայելու, ավելի ու ավելի մանավոր ծառայության եյին գնում, իսկ սինյորները հրաժարվում եյին իրենց վասսալներին պատերազմի առաջնորդել։ Կարլը իր կառավարության վերջում ինքը ստիպված եր տեսնելու, վոր ծայրերկրները ճնում են անպաշտպան հարևանների հարձակումների և կողոպուտի հանդեպ. արևելքում խուժում եյին սլավոնները, հյուսիսում՝ դանիացիները, հարավից սարակինոսները, իսկ Հյուսիսային ծովի ափերին շուտով լսեցին մի նոր սարսափելի թշնամու՝ նորմանների մասին։

Կարլի մահից հետո կայսրությունը իր ամբողջությամբ հազիվ մնաց քսան տարի։ Նրա վորդին՝ Լյուդովիկ Բարեպաշտը յերկիրը իր վորդիների հետ բաժանեց, վորոնք թագավորի սիրտը տատացան։ Բայց շուտով նրանց մեջ անհամաձայնություն և պատերազմներ ծագեցին։ Կարլի թոռները սրանց հաջորդները միքանի անգամ բաժանումներ արին։ Ամենակարևոր բաժանումն յեղավ 843 թվին Վերդենում Իտալիայի թագավոր Լոտարի, Լյուդվիկ Գերմանացու՝ արևելյան ֆրանկների թագավորի և Կարլ Ճաղատի՝ արևմտյան ֆրանկների թագավորի միջև։ Առաջինն ստացավ, բացի Իտալիայից, նաև յերկրորդի և յերրորդի սիրապետությունների մեջ ընկած հողաշերտը, Հռենոսի գետաբերանից Հյուսիսային ծովի մոտ մինչև Ռոնայի գետաբերանը Միջերկրականի մոտ։ Այդ շերտի հյուսիսային մասը՝ Մաաս և Հռենոս գետերի շրջանը, Լոտարինգիան (այսինքն Լոտարի յերկրները) հետո անցավ արևելյան գերմանական թագավորին. հարավային մասը, Ռոնա գետի ընթացքով, կազմեց առանձին թագավորություն՝ Արելատ կամ Բուրգունդիա (այստեղ V դարում տեղավորված բուրգունդ ցեղի անունով)։ Յերկրորդ յեղբոր՝ Լյուդովիկի յերկրները՝ նախկին Ավստրազիան, կազմեց ապագա Գերմանիայի հիմքը։ Յերրորդ յեղբոր՝ Կարլի թագավորությունը, վորը հին հռոմեական Գալլիան եր ընդգրկում, կոչվեց Ֆրանսիա (այսինքն ֆրանկների հողեր, վորոնք, սակայն, տասեղ կորցրել եյին գերմանական դիմքը, ձուլվել եյին տեզացիների հետ և ընդունել եյին ռոմանական լեզուն)։


6. ՖԵՈԴԱԼԻԶՄ

IX յեվ X դարերի աոջավաճճեոը։ IX դարի յերկրորդ կեսին արևմտյան Յեվրոպայի յերկրների դրությունը շատ ծանր եր։ Հարավից՝ Միջերկրական ծովից Իտալիայի և հարավային Ֆրանսիայի ափերը խստորեն կողոպտում եյին Աֆրիկայի սարակինոսները, վորոնք հաստատվել եյին Սիցիլիայում։ Նրանք քարուքանդ արին Հռոմի արվարձանները և ս. Պետրոսի և Պողոսի մայր յեկեղեցիները։ IX դարի վերջին արևելքից սկսեցին վենգրերի կամ մաջարների ավերիչ արշավանքները, վորոնք բռնել եյին ավարտների տեղը Դանուբի միջին հոսանքով ընկած տափաստաններում։ Վենգրերի ձիավորները շատ հեռուներն եյին հասնում. ամբողջ Գերմանիան բաց եր նրանց կողոպուտների առաջ. նրանք խուժում եյին նյ ավելի առաջ դեպի արևմուտք՝ Հռենոսի մյուս կողմը, մինչև Պարիզ, մտնում եյին Իտալիա և հասնում եյին Հռոմին և Նեապոլին։ Հյուսիսից յերկու դարի ընթացքում անընդհատ հեղեղում եյին նորմանները («հյուսիսային մարդիկ»)։

Նորմանները տեղավորվել եյին այժմյան Դանիայում և Սկանդինավյան թերակղզու հարավային մասերում՝ Նորվեգիայում և Շվեդիայում։ Նրանք բաժանվում եյին մանր յերկրների. դրեթե յուրաքանչյուր ծոց, գետ, կազմում եր առանձին իշխանություն։ Հողը քիչ արդյունք եր տալիս. հաճախ անբերրիություն եր լինում և սով եր սկսվում։ Ժողովրդի մի մասը միշտ ստիպված եր գաղթել և ծովի մյուս կողմը փնտռել ավար և նոր բնակատեղիներ։ Նորմանները իրենց արշավանքներում ավազակություն և առևտուր միացնում եյին. նրանք վերցրած ապրանքները վաճառում եյին. իրենց յերկրից տանում եյին՝ ձուկ, մորթի և գնում եյին այնպիսի ապրանքներ, վորոնք հյուսիսում քիչ կային՝ հացահատիկ, մետր, գործվածքներ և գինի։ Յերբ Դանիայում, ապա նաև Սկանդինավիայում թագավորական իշխանությունը ուժեղացավ, և թագավորներն սկսեցին անկախ յարլներին (մանր իշխաններին) ենթել, գաղթը ավելի սաստկացավ։ Գաղթողների գլուխ եյին կանգնում վիկինգները (ծովային առաջնորդներ) նշանավոր ընտանիքներից, յերբեմն էլ թագավորների ժորգիները։ Գերմանացիների հին կրոնը նորմանների մեջ դեռ լիակատար ուժի մեջ եր։ Նավերում առաջ գոհում եյին փոթորկի Թոր աստծուն. վիկինգը գուշակություն եր անում նիզակը վեր ձգելով և վորոշում եր այն ուղղությամբ գնալ, վոր ուղղությամբ կընկնի նիզակը։ Գնում եյին մեծ նավերով, վորի մեջ տեղավորվում եր 60 — 70 մարդ։ Նավը չուրը ձգելիս մարդկային զոհ եյին անում. այն գերանների վրա, վորոնց վրայով նավը ջուրն եյին ձգում, կապում եյին մարդկանց, վոր նավի ցածի մասը արյունով շաղախվի։ Շատ նավեր և մարդիկ եյին կորճանվում փոթորիկներից, բայց այդ արդելը չեր լինում ձեռնարկություններին։

Նորմանները յերևում եյին անսպասելիորեն զանազան տեղերում, և յերկրի պաշտպանները գլուխները կորցնում եյին։ Վիկինգները հարձակվում եյին ափերի վրա և գետի ընթացքով յերկրի ներսերը հասնում։ Սենա գետով նրանք չորս անգամ մոտեցան Պարիզին։ Հռենոսով հասան մինչև Բյոլն և Մայնց. Ալեհնում այրեցին կարլ Մեծի պալատը։ Գերմանիայի,

Անգլիայի, Ֆրանսիայի, Սպանիայի և նույնիսկ Իտալիայի ափերը յենթարկվում էին նրանց հարձակումներին։ Հաճախ վիկինգները սպրդում էին իբրև մկրտված վաճառականներ։ Իտալիայի մի ամրացրած նավահանգստի մոտեցան նորմաննները և տեսնելով, որ հարձակումը անհնարին է, ուղարկեցին բնակիչներին ասելու, որ իրենց առաջնորդը մահանալու մոտ է և ցանկանում է մկրտվել։ Դիշերը նրանք սկսեցին վողբալ, ինչպես մի մեռածի համար վողբում են և մյուս առավոտը խնդրեցին թույլ տալ իրենց առաջնորդի մարմինը քրիստոնեական ձևով թաղելու։ Յեպիսկոպոսը, գրաֆը և ժողովուրդը թույլ տվին, որ դագաղի հետ յեկեղեցի մտնեն։ Բայց ճեմ ժամանակ դագաղի կափարիչը բարձրացավ, նորմաննների առաջնորդը



IX յեվ X դարերի արշավանքները։

սուրը ձեռքին դուրս թռավ և սպանեց յեպիսկոպոսին, իսկ իր հետևորդները կոտորեցին ճեացած բնակիչներին։

X դարում նորմաննները սկսեցին ավելի մեծ պատերազմական նավեր շինել, դուրս գալ մեծ բազմությամբ և գրավել ամբողջ շրջաններ։ Այսպես՝ Դանիայից գաղթողները հաստատվեցին Ֆրանսիայի հյուսիսային ափում, այն շրջանում, որըն այդ ժամանակից սկսած կոչվում էր Նորմանդիա և Անգլիայի արևելյան մասում նորվեգական նվաճողները գրավեցին Իռլանդիայի մի մասը, հյուսիսային կղզիները, Իսլանդիան, նրանք հասան Ամերիկա (մոտավորապես այժմյան Նյու-Յորկի մոտ)։ Հյուսիսային Ֆրանսիայից նորմանդացի գաղթողները հետագա XI դարի կեսին Սիցիլիան և հարավային Իտալիան նվաճելու, իսկ միքիչ հետո (1066 թ.) Անգլիան նվաճելու։

Շատ դժվարությամբ էր քրիստոնեությունը մուտք գործում հյուսիսային յերկրները։ Դանիան ընդունեց նոր հավատը X դարում, Նորվեգիան XI-ում։ Դեռ յերկար ժամանակ մնում էին հին կրոնի գաղափարները։ Նորմանների յուրատեսակ խառնուրդ հավատը յերևում է Եդդայի յերգերից, որը կազմվեց սկալդերի (յերգիչների) ստեղծագործություններից։ Եդդայում դեր են կատարում հին աստվածները, բայց նրանց մեջ ազնիվ, քննքուշ և տանջվող Բալդրի պատկերում քրիստոնեության շունչը կա։

Յեվրոպական թագավորությունների մասերի բաժանվելը։ Արևմտյան Յեվրոպայի բոլոր յերկրների չընդհատվող զինվորական գրությունը առաջ բերեց մեծ պետությունների բաժան-բաժան լինելը։ Արդեն առաջուց թագավորը իր իշխանությունը սենյորներին էր զիջել, տալով նրանց իմունիտետներ, այսինքն իրավունք՝ դատելու բնակիչներին և վճարներ ստանալու։ Այժմ զինվորական պաշտպանությունն էլ շրջանների բաժանվեց։ Գրաֆները և յեպիսկոպոսները չէին կարող հույս դնել պետության մյուս մասերի ոգնության վրա կամ սպասել, որ գան ոգնության. նրանք պետք է անկախորեն կարգադրություններ անեին։ Յերբ նորմաննները պաշարեցին Պարիզը, քաղաքն սկսեցին պաշտպանել գրաֆը և յեպիսկոպոսը, մինչդեռ Ֆրանսիայի թագավորը աշխատում էր նվաճողներից հաշտություն գնել։

Դրա հետևանքով զանազան գրաֆներ (comtes), հերցոգներ (ducs) և շատ յեպիսկոպոսներ շրջաններում դարձան անկախ կառավարիչներ։ Նրանք իրենց հպատակներին թագավորական մանր վասալներին և իրենց վասալների հետ մլացնելով՝ կազմեցին մի զինվորական կամ ձիավոր դաս. այսպիսով կարլի կայսրությունից կազմված թագավորությունները իրենց հերթին բաժանվեցին մեծ սենյորությունների։ Գերմանիայում և Ֆրանսիայում կային 10 կամ 12 մեծ սենյորություններ։ Գրաֆները և հերցոգները իրենց իշխանությունը փոխանցում էին ժառանգաբար. Ֆրանսիայում գրանցից մեկը յեկվոր էր՝ նորմանն առաջնորդ, որն ընդունել էր քրիստոնեությունը և թագավորից ստացել հյուսիսային ափը իշխելու։

Թագավորի իշխանությունը թուլացել էր. թագավորին հպատակ էին մնացել միայն մերձակա վասալները։ Մեծ սենյորներին փոխում էին և իրենց միջից նորերին ընտրում։ X դարում կարոլինգներին ամեն տեղ՝ Իտալիայում, Գերմանիայում (911 թ.) և Ֆրանսիայում (987 թ.)՝ փոխեցին նոր մեծ սենյորների միջից յելած թագավորներով, որոնք ընտրվում էին կամ թագը գրավում։ Մեծ սենյորները ըստ արժանավորության իրենց հավասարեցնում էին թագավորներին. նրանք կոչվում էին պերեր (pairs, այսինքն թագավորին հավասար)։

Պատերազմական անընդհատ գրության հետևանքով շատ փոխվեց գաղութների ընությը։ Վիլլաներում խոշոր անտեսությունները քայքայվեցին արշավանքներից, անպաշտպան գյուղերը դատարկվեցին։ Բազմաթիվ բանվորներ և գյուղացիներ կոտորվեցին կամ ցրվեցին։ Հանկարծակի հարձակումներից պաշտպանվելու համար խոշոր հպատակը իր վիլլան բերդ, ամրոց (château, Burg) էր դարձնում. այդպիսի ամրոց էր դառնում նաև վանքը։ Այդ նպատակով մեծ շենքը իր ծառայանոցներով, որոնք անհրաժեշտ էին տիրոջը, նրա ընտանիքին և զինվորական մարզկանց, այլ և ծառաների և սարուկների խրճիթները շրջապատում էին խրամատով և պարսպով։

Ամբացրած այդ բնակութիւնը շինում էին բարձրութեան վրա կամ ընտրում էին գետի մէջ ժայռոտ կղզի կամ փոքր սարավանդի փէշի վրա գտնվող մի տեղ. իսկ յեթե վոչ մի նման տեղ չէր լինում, արհեստական բլուր էին կազմում. Հաճախ շրջապատում էին նաև յարկերդ ավելի ընդարձակ պարսպով, ամրոցից ցած. շրջապատված մասը կոչվում էր ցածի բնակատեղի: Այստեղ էին ապաստանում կռվի ժամանակ հարթավայրի բնակիչները, վորոնք սենյորի հովանավորութիւնն էին վայելում, բերում էին այդտեղ իրենց հոտերը, իրենց շարժական դույքը. դրա դիմաց պետք է նրանք ամրոցը շինէին, նորոգէին և պաշտպանէին:

Ա.ՑԳլխաՑ IX—XI **դարերում:** Այն փոփոխութիւնները, վոր յեղան զինվորական կազմակերպութեան և կառավարութեան մէջ կարելի շրջանից հետո Յեվրոպայի մայր ցամաքում, կրկնվեցին Անգլիայում: VI—VIII դարերում Անգլիան մի քանի թագավորութիւնների յեր բաժանված. հաղիվ կարողացավ Վեսեքս (այսինքն արևմտյան սաքսերի) թագավորը այդ թագավորութիւնները միացնել (IX դարի սկզբում), յերբ կղզու արևելյան մասը սկսեցին ավերել ծովի կողմից յեկած դանիացի նորմաննները:

Ալֆրեդ թագավորը (871—901) ստիպված եր Դանիայի առաջնորդին տալ Անգլիայի հարավ-արևելյան մասը, իրեն թողնելով միայն հարավ-արևմուտքը: Ալֆրեդը իր բնավորութեամբ, իր խորը հարգանքով դեպի լուսավորութիւնը հիշեցնում եր Կարլին: Բայց նա աշխատում եր անհամեմատ ավելի ծանր պայմաններում. լուսավորութիւնը Անգլիայում շատ ընկավ ավելի ծանր պայմաններում. XIII դարում Անգլիան իր շնորհիվ պատերազմական խառը ժամանակին: XIII դարում Անգլիան իր գործիչներին ուղարկում եր մայր ցամաքը, նրա դպրոցները որինակելի եյին: IX դարի վերջին Ալֆրեդը գանգատվում եր. «Առաջ ոտարերկրացիները մեր յերկրում եյին փնտռում իմաստութիւն և խրատներ, իսկ այժմ մենք ենք ստիպված դիմելու ոտարերկրացիներին: Ամեն ինչ այնպիսի անկման

ուղեկցությամբ։ Այդ պինվորները ծառայում էին միշտ իրը ձիավորներ, վորտեղից էլ նրանց ընդհանուր անունն է՝ ասպետներ. (ասպետ գերմաներեն Ritter բառից է, ֆրանսերեն chevalier, անգլիերեն՝ knight, այսինքն ծառա)։ Գլխավորը, վորով աչքի էր ընկնում իսկական ասպետը, այդ նրա լրիվ զինավառությունն եր, այսինքն բացի երկար նիզակից և վահանից, նաև մետաղե սաղավարտ և զրահ (երկաթե լարերից գործած երկար շապիկ, նրանց վրա խիտ ամրացրած մետաղե ողակներով)։ Այդպես ծանր զրահավորված ասպետները զինվորական սարսափելի ուժ էին XI դարում։ Վիլհելմ Նվաճողի արշավանքում նրանք գերակշռությունը տվին նորմաններին և ֆրանսիացիներին անզլոսաքսերի դեմ, վորոնք դեռ չէին կարողացել այդ զինավառությանն անցնել։

Թագավորը համարվում եր գերագույն սենյորը (կամ սյուզերենը) բոլոր զինվորականների, իսկ յենթակա վասսալները մեծ մասամբ ճանաչում էին միայն իրենց մոտ գտնվող սենյորներին, վորոնց և ծառայում էին։ Սենյորը և վասսալը կապված էին փոխադարձ պայմանով. սենյորը վասսալին կալվածները տալիս եր առանձին արարողությամբ (ինվեստիտուրա), հանձնում եր նիզակ դրոշակով, մատանի կամ ձեռնոց։ Կալվածքը, վոր հանձնվում եր վասսալին, սկզբում կոչվում եր բենեֆիցիա, իսկ X դարից սկսած ֆեոդ (լատիներեն feudum. ֆրանսերեն՝ fief, Գերմանիայում գործադրվում եր Lehn, լեն, բառը, վոր կնշանակե պարգև)։ Վասսալը յերդվում եր հավատարիմ լինել (foi) սենյորին, ձեռը դնելով ավետարանի և մասունքներ պարունակող տապանի վրա, և հայտարարում եր իրեն հպատակ կամ սենյորի «մարդ» (hommage)։

Վասսալը յերկու տեսակ ծառայություն եր անում։ Առաջինը ամրոցը պաշտպանելն եր և արշավանքներին մասնակցելը. բայց վասսալը պարտական եր ծառայել միայն fourasun ոr և վորոշ շրջաններից վոչ դուրս. նա կարող եր այդ ժամանակամիջոցից և այդ շրջաններից դուրս յեղած արշավանքից հրաժարվել, այլապես սենյորը առանձին վարձատրություն պիտի տար այդ ծառայության համար։ Յերկրորդն այն եր, վոր վասսալը պիտի պալատում թագավորի դիվանին (կուրիա) ներկայանար յերեք մեծ տոներին՝ ծննդյանը, զատկին և հոգեգալստին և մասնակցեր այն դատին, վոր անում եր սենյորը։ Վասսալը պարտավոր եր սենյորին իր մոտ ընդունել, յերբ վերջինս պատյա եր կատարում կամ վորսի յեր գնում։ Նա պարտավոր եր սենյորին ոգնել զրամական գումարներով, վորը հավաքում եր հպատակ գյուղացիներից այն դեպքերում, յերբ սենյորը դերի յեր ընկնում և պետք եր նրան փրկանքով դնել, նաև յերբ սենյորը իր աղջկանը մարդու յեր տալիս կամ վորդուն զինվոր եր ածում։ Վասսալի մահվան դեպքում սենյորը նրա ժառանգից կամ մի այլ մարդուց, վորին վորոշում եր հանձնել ֆեոդը, առանում եր վճար։ Ֆեոդ բառից նոր ժամանակի դիտնականները կազմեցին Ֆեոդալիզմ անունը. այս բառով սկսեցին անվանել XI—XV դարերի (1000—1500 թ. Ք. հ.) կառավարությունը։

Գյուղացիները Ֆեոդալական կարգերի ժամանակ։ Զինվորականներից վոչ վոք իր հողը չեր մշակում։ Աշխատանքն ընկած եր մի ուրիշ դասակարգի՝ վիլլաններների (գյուղացիների) վրա։ Առևտուրը թույլ եր. կալվածատերը քիչ բան եյին վաճառում և յեկամուտները տեղն ու տեղը գործադրում եյին, ուստի նրանց կալվածները մեծ չեյին։ Հողի մեծ մասը, վոր

գտնվում եր տիրոջ (dominum) իշխանության տակ, բաղկացած եր գյուղացիական հողաբաժիններից։

Վիլլանները բաժանվում եյին յերկու կարգի։ Մի կարգին պատկանողները անձնապես ազատ եյին և տիրոջը վճարում եյին ցենզ (չինշ), իրենց հողից ոգտվելու համար (ցենզական)։ Մյուս կարգինը ներոեr եյին (Ֆրանսիայում կոչվում եյին serfs). հողի հետ կապված լինելով, նրանք իրավունք չունեյին այդտեղից հեռանալու. բայց սովորության հիման վրա նրանց էլ չեր կարելի տալ մի ուրիշին առանց հողի, նրանցից հողը խլել չեր կարելի։ Ճորտ գյուղացիները հողատիրոջ նկատմամբ յերկու տեսակ պարտականություններ ունեյին։ Նախ նրանք պետք և կոռ ու բեզպատը լրացնեյին. այդ նշանակում եր զատկին մոտ տիրոջ հողը վարել ու ցանել, վարդավառին չհասած (հունիսի 24-ին) խոտը հնձել և տանել տիրոջ խոտանոցը, ոգոստոսին հնձել հացահատիկը և տանել տիրոջ շտեմարանը։ Նրանք պարտավոր եյին տիրոջ համար նաև անտառից վայտ կրել, շենքի համար քար, կիրը պատրաստել և վորմփոդրի աշխատանքը կատարել, ուղղել ճանապարհները և կամուրջները. յերկրորդ՝ նրանք պարտավոր եյին հողային հարկ վճարել. այդ նշանակում եր, վոր գյուղացիների հողերի հացահատիկների մի մասը գնում եր հողատեր տիրոջ. այդ մասը գյուղացիները պարտավոր եյին խուրձերով նախ տիրոջ բակը տանել, թեև նրանց հացահատիկն այդ ժամանակ գաշտում արձրևի և քամու տակ եր մնում. հետո գյուղացին տալիս եր իր անասունների ծննդյանը—խոճկորներ, ծննդյան տոներին՝ հավեր, զատկին՝ գառներ։

Բացի դրանից, գյուղացիները զանազան առիթներով նորից վճարումներ եյին անում։ Տերը կարող եր ամեն ընտանիքից վերցնել հատուկ տուրք՝ տալիա (taille), վոր նշանակում և նշան կամ դանակով կտրվածք գյուղապետի գավազանի վրա, վորը հավաքում եր վճարները։ Իրեն շրջակա գյուղերի գերագույն դատավոր՝ տերը ստանում եր վարձ դատ սկսողներից և դատապարտվածներից տուգանքներ, թեև ինքը չեր դատում։ Բոլոր գյուղացիները՝ ազատները և ճորտերը, պարտավոր եյին յեկեղեցուն էլ վճարել տասանորդ, այսինքն հոգևորականներին պարենավորել հացով և անասունների ծնունդներով։

Տերն ապրում եր գյուղացիների ձրի աշխատանքով և նվերներով, բայց պետք և նրանց հետ կիսեր և յենթարկվեր տնտեսական միատեսակ կարգերի։ Յեվ տիրոջ և գյուղացիների հողերը մի համայնքի մեջ եյին հաշվվում։ Այդ նշանակում եր նախ տիրոջ հողի վարելու բաժինները նեղ շերտերով ընկած եյին գյուղացիների հողերին մեջ ընդ մեջ. դրա հետևանքով բոլոր հողատերերը պետք և միաժամանակ ցանեյին աշնանացանը կամ գարնանացանը կամ հողը թողնեյին հանգիստ։ Աշնանը, յերբ հունձը հավաքված եր լինում, դաշտերից վերցնում եյին ցանկապատերը, և ամբողջ դաշտը անխտիր բոլոր հողաբաժիններով դառնում եր ընդհանուր արոտատեղի գյուղացիների և տիրոջ անասունների համար։ Աբածացնելով միաժամանակ դաշտը պարարտացվում եր նոր ցանքսի համար։ Վերջապես բոլոր հողատերերը, վորոնք միևնույն համայնքին եյին պատկանում, կարող եյին միատեսակ ոգտվել վորոշ լավ հողաբաժիններից։ Գերմանիայում այդ տեսակ հողաբաժինները կոչվում եյին ալմենդ, այսինքն ընդհանուրի սեփականու-

թյուն։ Այդպիսի եկեղեցի արոտատեղիներից անտառները և մարգագետինները. անտառում համայնքի ամեն անդամ կարող էր ծառ կարել վառելու կամ շինքի համար։

Յերբ մահնատի, եպիսկոպոսի կամ վանքի կալվածքը մեծ էր լինում, տերը հանձնարարում էր վիլլիկներին (գործակատարներին) գյուղացիներից վճարներ ստանալ, ճորտերից պահանջել աշխատանք և սրանց վրա հսկել։ Վիլլիկը (գերմաներեն Meier) հաճախ ինքը ճորտ էր լինում, գյուղացուց ավելի մեծ հողաբաժին էր ստանում և իրը պարգև պահում էր իր մոտ այն նյութերի մի մասը, որ հավաքում էր տիրոջ համար։ Տիրոջ կառավարության մեջ ծառայող զանազան մարդկանցից կազմվեց միներիալների կարգ։

X—XII դարերի կենցաղի ընդհանուր գծերը: Բարոնները և ասպետները կոպիտ և չզարգացած մարդիկ էին, որոնք իրենց վրա իշխանությունն չէին ճանաչում, խաղաղ ժամանակ անգործությունից ձանձրանում էին, իրար մեջ վեճեր էին առաջ բերում կամ անպատվության համար վրեժ էին առնում և իրար վրա թշնամական շարժումներ էին կատարում։ Այդ համարվում էր հատուկ իրավունք մասնավոր պատերազմի։

Այդ շարժումներից ամենից շատ տուժում էին գյուղացիները. բարոնն աշխատում էր թշնամու ցանքսը փչացնել, հոտերը քշել։ Փոքր ասպետը ծուղակ էր պատրաստում անտառում վտանգավոր գետանցքի մոտ, հարձակվում էր վաճառականների վրա և նրանց ապրանքներից իրեն բաժին էր վերցնում։ Գյուղացիների համար քայքայիչ էր նաև տերերի փոսի իրավունքը։ Սենյորի վորը իր հետևորդներով կարծես հին թափառական կենցաղի հետքերը էր. ձիավորները և զաղանները կոխկռտում էին արտերը և մարգագետինները, այնպես, կարծես յերկրագործության գոյություն չուներ։ Գյուղացիներին արգելվում էր վոչ միայն անտառում վորս անել, այլ նույնիսկ վորսը իրենց դաշտերից դուրս քշել կամ սպանել, թեև վորսի կենդանիները վչացնում էին իրենց ցանքսերը։

Գյուղերը մեծ մասամբ վոլորմելի բաներ էին։ Շատ գյուղացիներ ապրում էին հավարների նման խրճիթներում. պատուհանի տեղ անցքեր կային, որոնք ծածկվում էին խոտով։ Ծանոթ էին շատ քիչ ցանելու բույսերի հետ և հողը պարարտացնել չէին կարողանում։ Այդ պատճառով հաճախ անբերրիություն էր լինում, հաճախ մեծ շրջաններում սարսափելի սով. ժողովուրդը կատրվում էր սննդի պակասությունից կամ կիրակրվում էր խոտով, արմատներով, սառած կենդանիներով, մինչև իսկ մարդակերության էր հասնում. դիակներն էին հանում կամ կենդանի մարդկանց ըսպանում։ Դրա համար էլ սովի տարիներին հաճորդում էին վարակիչ հիվանդություններ, որոնց զոհ էր գնում շատ ժողովուրդ։ Բնակչությունը դժվարությամբ էր աճում, յերբեմն էլ պակասում էր։

Այդ պայմաններում կյանքը ամբողջ դարեր ընթանում էր խեղճ և միապաղաղ։

7. ԳԵՐՄԱՆԻԱՆ ՅԵՎ ԻՏԱԼԻԱՆ X ՅԵՎ XI ԴԱՐԵՐՈՒՄ

Սահմանական թագավորները: Գերմանիայի և Իտալիայի միջև կենդանի հարաբերություն կար. յերկրներ պատվող վաճառականները գյուղա-

դիայից և մուսուլման յերկրներից բերում էին նուրբ գործվածքներ, զենքեր, անուշեղեն և այլ ապրանքներ, անցնելով Ալպերի վրայով Հենոսի ընթացքով դեպի Հյուսիսային ծովը. հյուսիսից դեպի իտալական սրբությունները, մանավանդ դեպի Հռոմ շարժվում էին բազմաթիվ ուխտավորներ, իրենց հերթին Հռոմից Գերմանիա էին գնում պապի դեսպանները կամ լեգատները։ Վերջապես Ալպերի մյուս կողմից, հյուսիսից գնում էին գերմանական թագավորները բազմաթիվ վասսալ հետևորդներով, որ ձեռք բերեն իրենց համար Իտալիայի թագը։

Յերբ Գերմանիայում վերջացավ կարոլինգների տոհմը, խոշոր սենյորները իրենց միջից սկսեցին ընտրել թագավորներ։ Ընտրված թագավորը աշխատում էր իր ընտանիքի հետ կապել իշխանությունը և սովորաբար հաջողեցնում էր, որ իր կենդանության ժամանակ սենյորները ընտրեին և թագադրեին էր մեծ վորդուն։ Հարյուր տարվա ընթացքում (912—1024) թագավորներ էին լինում Սաքսոնիայի հերցոգները, այն յերկրի, վորը ավելի մոտ էր վենգերների և սլավոնների սահմանին։ Հենրիխ I թագավորը, վոր կոչվում է Թռչնորս, իր ամբողջ կառավարությունը անցկացրեց տափաստանցիների դեմ պատերազմելով, աշխատելով արշավանքներից պաշտպանվել սահմանի վրա բուրգեր շինելով։

Մյուս հերցոգները՝ բավարական, շվաբական, Ֆրանկոնիայի և առանարակ խոշոր վասսալները լավ չէին տեսնում թագավորին։ Սրանց դեմ հենարան ունենալու համար Հենրիխի վորդի Ոտտո I-ը դիմեց յեպիսկոպոսների և մեծ վանքերի աբբաների ոգնությանն։ Պրեյատներին, այսինքն բարձր հոգևորականներին նա կառավարելու հանձնեց ընդարձակ հողեր, վորոնք տարածվում, մանում էին հերցոգների կալվածների մեջ։ Այդ հողերը մեծ մասամբ գտնվում էին Գերմանիայի ամենախիտ բնակչություն ունեցող մասում, Հենոսի ուղղությամբ վաճառականական ճանապարհի յերկարությամբ. այստեղ էին գտնվում քաղաքների մեծ մասը, մասամբ հռոմեական ժամանակից մնացած՝ Բյոլն, Մայնց, Սարասբուրգ։ Հոգևորականությունը կառավարելով կալվածները և հսկելով վասսալների ծառայության վրա գործակատարների միջոցով՝ պարտավոր էր թագավորին ներկայացնել զորամասեր, սրանց գլուխ անցած գնալ, պաշար բերել կամ ամրոցներում մեծ պահեստներից կերակրել թագավորի հետևորդներին և ամրոցների կառավարությունը ստանձնելով՝ թագավորին վասսալական յերդում էր տալիս և ստանում էր ինվեստիտուրա մատանիով յեվ վավագանով։ Առանց այդ պայմանի չէր կարելի յեպիսկոպոս դառնալ։ Պաշտոններ տալիս թագավորն աշխատում էր ոգուտն աչքի առաջ ունենալ. հոգևորականներից պահանջում էին վճարը այն յեկամուտների փոխարեն, վորը նրա պետք և ստանար, և յեպիսկոպոսական աթոռը վաճառում էին նրան, ով շատ էր տալիս։

Հռոմեական սրբազան կայսրություն: Հոգևորականության վրա ուժ ունենալու համար գերմանական կայսրն աշխատում էր գրավել յեկեղեցական մայրաքաղաքը՝ Հռոմը։ Ոտտո I-ը խառնվում էր իտալական հերցոգների թագավորական տիրապետի համար յեղած վեճերին, զորքով անցավ Ալպերը, թագադրվեց Իտալիայի յերկաթե թագով լոմբարդական Պավիա մայրաքաղաքում և ուղևորվեց Հռոմ։

Այդ ժամանակ պապական իշխանությունը շատ էր թուլացել։ Պապերը ս. Պետրոսի կալվածները բաժանել էին վասալներին, և Հռոմի շրջակայքի մեծ կալվածատերերը պապի աթոռն էին բարձրացնում իրենց ազգականներին, մանավանդ փոքր վորդիներին։ Սենյորների տոհմերի մեջ խիստ խռովություններ էին լինում. մինչև պապերի հակառակորդները աթոռից զրկում էին, ուրիշները իրենք էին մասնակցում սպանություններին։ X դարի պապերից մեկին մորթեցին, մյուսին բանտում խեղդեցին, յերրորդը սպանեց յերկու պապի, իրեն մրցակիցներին։ Իրեն էլ սպանեցին և ձգեցին Կապիտոլիումի վրա հին կայսերական արձանի պատվանդանի մոտ։ Պապ էին դառնում աշխարհիկ մարդիկ, վորոնք վորս անել և խմել էին սիրում. սենյորներից մեկը պապի աթոռ բարձրացրեց իր 12 տարեկան տղային։

Հռոմ մտնելով՝ Ոտտոն խոստացավ յեկեղեցին վերականգնել և նրան վերադարձնել ս. Պետրոսի հողերը. դրա փոխարեն պապը պետք և նրա գլխին դներ կայսերական թագը (962 թ.)։ Տեղի ունեցավ հռոմեական սըբ. բազան կայսրության վերականգնումը Կարլից 150 տարի հետո։ Կայսրությունը այժմ մի յերրորդով փոքր եր. նրա մեջ չէր մտնում Ֆրանսիան։

Այդ ժամանակից սկսած գերմանական թագավորները չորս դարի ընթացքում կրկնում էին Ոտտոյի ուղին։ Նրանցից գրեթե ամեն մեկը, ընտրվելով Գերմանիայում իշխանների և յեպիսկոպոսների համագումարից, հավաքում եր վասալներին և սկսում ռոմեական աուռավանք։ Հետևորդները և զորքը առաջ էին շարժվում արևելյան Ալպերի Բրենների անցքով։ Գերմանական թագավորը նվաճել եր իր համար իտալական թագավորությունը և շտապում եր Հռոմ կայսր թագադրվելու։ Թագադրության ժամանակ կատարվում էին մի շարք արարողություններ, վորոնց իմաստն այն եր, վոր կայսրի իշխանությունը ամբողջ քրիստոնյա աշխարհի համար սըբ. բազան պահպանություն եւ։ Հռոմում թագավորին դիմավորում եր ժողովուրդը և հոգևորականությունը։ Ս. Պետրոսի մայր տաճարի մոտ նա ձիուց ցած եր իջնում և բարձրանում եր գավիթը, ուր սպասում եր նրան պապը։ Թագավորը յերդվում եր պաշտպանել յեկեղեցին և համբուրում եր պապի վոտքը։ Նրանք յերկուսն էլ ծունկ էին չոքում մուտքի մոտ կլոր ծիրանաքարի վրա, վորը հատակի մեջ եր ամրացրած, և թագավորը աստվ եր դավանանքի բանաձևը։ Հետո պապը թագավորի մատն եր դնում վոսկե մատանին, ձեռքին սուր եր կապում և պահում եր կարլ Մեծի թագով։

Սկզբում կայսրները պարզապես գերակշռություն ունեցին պապերի վրա։ Ոտտոն պահանջից, վոր պապը, Հռոմում ընտրվելով, չհաստատվի, մինչև վոր գերմանական թագավորին յերդում չտա։ Այդպիսի իշխանություն գործադրում էին նաև հետևյալ սալյան կամ Ֆրանկոնյան տոհմի թագավորները (Ֆրանկոնիայի սենյորներից, 1024 — 1125 թ.)։ Նրանք նվաճեցին նաև Արելատը կամ Բուրգունդական թագավորությունը և իրենց ձեռքին էին պահում Ալպերի բոլոր անցքերը և Իտալիա տանող ճանապարհները։ Կայսրի իշխանությունը ամենից ավելի ուժեղացավ XI դարի կեսին, Հենրիխ III Ֆրանկոնացու օրով, սա աթոռից չզրկեց պապին, վորը իր նախորդից գնել եր այդ աստիճանը, աթոռից զրկվածի յերկու մրցակիցներին դատապարտեց. ապա իրար յետևից պապական աթոռ բարձրացրեց

գերմանական յերեք յեպիսկոպոսների։ Հենրիխ III-ի մահից հետո (1056 թ.) նրա վորդի Հենրիխ IV-ի անչափահասության ժամանակ զրությունը փոխվեց։ Պապի պալատում և պապական աթոռի վրա յերևացին յուռանդոտ մարդիկ, վորոնք լի էին յեկեղեցին միացած հասարակությունից ավելի վեր բարձրացնելու ցանկությամբ։ Նրանք պատկանում էին նոր խստապահանջ վանականության։

Կլյունիական շարժում։ X դարի սկզբում Սոնա գետի հովտում հիմնվեց ֆրանսիական կլյունի վանքը։ «Սև վանականների» խիստ կանոնադրությունը տարածվեց բազմաթիվ վանքերում, մասամբ հին վանքերում, մասամբ կլյունիականների նոր հիմնածներում։ Այդ բոլոր վանքերը աբբաները (վանահայրերը) ստանում էին կլյունիի արքաբբայից և յենթարկվում էին միայն պապին, մի կողմ թողնելով յեպիսկոպոսներին և աշխարհիկ իշխանությունը։

Կլյունիականները աշխատում էին ազդել իրենց շրջապատող կոպտացած հասարակության բարքերի վրա։ Ծանր դժբախտությունները, սովը, համաճարակ հիվանդությունները շատերի մեջ այն հավատն էին առաջ բերել, թե աշխարհի վերջը մոտ է։ Այդ հավատն ունենալով նաև վանականները՝ պահանջում էին, վոր մարդիկ արժանավայել պատրաստվեն աշխարհի վախճանի համար և վերջացնեն փոխադարձ չարությունը և անվերջ խռովությունները։ Բայց բոլորովին վերջացնել ֆեոդալական կռիվները այդ ժամանակ անհնարին էին համարում։ Ուստի խաղաղության կոչնակիցները աշխատում էին բարոններին և ասպետներին համոզել, վոր դաշնակցություններ կազմեն, վորոնց անդամները պետք է պատերազմից խուսափեին, առնվազն այն ժամանակամիջոցում, վորոնք հատկապես հարգի էին յեկեղեցու համար, այն է՝ պասին կամ մեծ տոներին կամ շաբաթվա վորոշ օրերին, վոր շաբաթն ու կիրակին առաքինությամբ անցկացնեն։ Այն ժամանակամիջոցները, յերբ զենքերը ցած էին դնում, կոչվում էին «աստվածային դադար»։ Կլյունացիները հոգևորական կենցաղի մեջ լրիվ փոփոխություն էին պահանջում։ Նրանց կարծիքով յեպիսկոպոսները և աբբաները փոխանակ աշխարհիկ շահերի ծառայելու, հաշիվներ տեսնելու, զորքի հրամանատար լինելու և ճոխ ապրելու, պետք է աչքի ընկնեին բարքերի վանական մաքրությունով, յերկրի վայելքներից հրաժարվելով։ Այդ նախանձախնդիրները ամենից շատ դժգոհում էին հոգևոր աստիճանը գնելու սովորությունից, վորին նրանք սիմոնականություն էին անվանում. (Սիմոն մոգի անունից, վոր, «Գործք առաքելոցի» խոսքով, ուզում եր առաքյալներից հրաշքներ կատարելու շնորհքը դրամով գնել)։

Կլյունացիների յեկեղեցու բարեկարգության մասին ունեցած մտքերով վոգևորված եր առաքինի Հենրիխ III կայսրը։ Նրա նշանակած պապերից վերջինը՝ Լևոն IX, իր մտերիմ ազգականը, նույնպես չերմ կողմնակից եր բարեկարգության։ Բայց պապի պալատում շուտով առաջ գնացին անհաշտ կլյունիականները, վորոնք ուզում էին յեկեղեցին ազատել աշխարհիկ իշխանության ամեն տեսակ հպատակություններից։ Դրանց թվում եր Հիլդեբրանդը, վոր իբր պապի լեգատ կ.-Պոլիս տարավ 1054 թվին այն գրությունը, վորով նզովվում եր արևելյան յեկեղեցին։ Նա յեկեղեցու վչնացու գլխավոր պատճառը համարում եր կայսրի իշխանությունը և հավա-

տացած եր, վոր Հենրիխ III-ը մահվանից հետո դատապարտված և դժոխքի տանջանքների։ Սիմոնականության մասին ունեցած հեղինակության մեջ Հռոմբերտ ասում է, վոր կայսրը, թագավորները և իշխանները վաճառում են եկեղեցու ունեցվածքը։

Ցեկեղեցու բարեկարգությունը։ Այդ մարքերը կյանքի մեջ սկսեց իրականացնել Հիլդեբրանդ վանականը, տասնանցի դյուղացու վորդի, վորին Լևոն IX վերցրել եր Հռոմ կլյունիի աբբայի հանձնարարության շնորհիվ։ Հենրիխ III-ի և Լևոն IX-ի մահից հետո պապի մոտ առաջին տեղը գրավեց Հիլդեբրանդը։ 15 տարվա ընթացքում յերկու պապերի ժամանակ նա յեր կառավարում գործերը։

Հիլդեբրանդի հայացքով աշխարհում ճշմարտությունը կարելի յե հաստատել միայն Հռոմի և պապի անսահման իշխանության դեպքում։ Ցեպիսկոպոսները միայն պապի կամքը կատարողներն են. իրենց խոնարհ այցելություններով Հռոմ՝ նրանք պետք է իրենց կատարյալ հավատարմությունը ցույց տան։ Ս. Պետրոսի թիռը կարող է ամեն բան վերացնել և վորոշել. նա կարող է ամեն տեսակ յերդում ջնջել։ Պապը աշխարհում գերագույն կառավարիչն է. թագավորները պարտավոր են անպայման նրան լսել, գերմանական կայսրը պետք է պապի վասսալ դառնա։ Պապից բանադրված թագավորը այլևս թագավոր չե. պապը նրա իշխանությունը կարող է իբր մոխիր և հարդ քամուն տալ։

Պապին կայսրի հպատակությունից ազատելու համար Հիլդեբրանդն առաջարկեց պապի ընտրությունը թողնել միայն կաղինալներին, այսինքն հռոմեական շրջանին մոտիկ եպիսկոպոսներին և Հռոմի գլխավոր եկեղեցիների քահանաներին։ Կայսրի վորևե կերպ մասնակցելու մասին չեր հիշատակվում։ Այդ կարգը պահելու համար պապը պետք է նորից սեր դառնար ս. Պետրոսի կալվածքներին և տեղական սենյորներին ընկճեր։ Պապին ոգնեցին ֆրանսիական նորմաննները, վորոնք սարակինոսներից և հույներից խլել եյին Սիցիլիան և հարավային Իտալիան։ Սկզբում նորմաննները քիչ հարգանքով եյին վերաբերվում ս. աթոռին և գերի վերցրին Լևոն IX պապին։ Բայց սրա հաջորդը Հիլդեբրանդի խորհրդով նրանց հետ հաշտվեց և նրանց վրա հաստատեց իրենց նվաճած հողերը։ Դրա փոխարեն նորմաննները պապին վասսալական յերդում տվին և պարտավորվեցին ոգնելու հռոմեական յեկեղեցուն սրա բոլոր տեսակի թշնամիների դեմ. պապի ընտրության ժամանակ խոստացան պաշտպանել կարդինալների ընտրածին։

Հիլդեբրանդը պատրաստում եր նաև մի ուրիշ կարևոր փոփոխություն հոգևորականության կենցաղում։ Մինչև այդ գրեթե բոլոր քահանաները ամուսնացած եյին։ Ընտանիքները հոգևորականներին կապում եյին իրենց տեղի հետ. նրանք աշխատում եյին իրենց կյանքը մեծացնել, վոր ապահովեն իրենց զավակներին, հաճախ սրանց եյին փոխանցում իրենց աստիճանը. կալվածները կորցնելու յերկյուղից աշխարհիկ իշխանության բարյացակամությունն եյին փնտռում։ Հիլդեբրանդը կարևոր համարեց մացնել քահանաների ամուրիությունը և ազատություն, վոր յեկեղեցին ազատ լինի աշխարհիկ իշխանությանը հպատակվելուց։ Ժողովներում հայտարարեցին քահանաների ամուրիության պարտադիր լինելը, իսկ հետո պապերն սկսեցին պահանջել ամուսնացած հոգևորականներին հեռացնելը։

Ժողովուրդն այդ գործում կենդանի մասնակցություն ցույց տվեց։ Հյուսիսային Իտալիայում մեքանի վաճառաշահ և արդյունաբերական քաղաքներ ըմբոստացան, վորոնք հարստացել եյին բյուզանդական ապրանքներ վաճառելով և մանուկ արտադրելով. բազմամարդ Միլանում սկսվեց ուժեղ ապստամբություն արքեպիսկոպոսի դեմ, վորը հոգևորականության հետ հրաժարվեց պապին հնազանդվելուց։ Մանր ապստները, արհեստավորները, վաճառականները, վորոնք հոգևորականների տուրքերից դժգոհ եյին, միացան այն քարոզիչների հետ, վորոնք հոգևորականներից պահանջում եյին ավետարանական մաքրություն և կրոպատում, ավերում եյին այն հարուստ և ընտանեքավոր քահանաներին, վորոնք իրենց ասպիճանը գնել եյին։ Գրեգորիոսի ամբոխը խուժում եր քահանայի տունը, դուրս քշում նրան, ունեցածը խլում։ Հիլդեբրանդը անցավ ապստամբների կողմը։ Միլան գնաց պապի լեգատը արքեպիսկոպոսին դատելու։ Նա պարտավոր եր հանդիսավորապես հրաժարվել սիմոնականությունից և քահանաների ամուսնությունից և ս. Պետրոսին հավատարմության յերդում տալ։

Պապականության առաջին պայքարը կայսրության մեջ։ Յերբ Հիլդեբրանդն ինքը պապ դարձավ Գրիգոր VII անունով (1073–1085), յեկեղեցու բարեկարգությունը ավելի վճռական դարձավ։ Պապը պահանջ դրեց, վոր հոգևորականներից վոչ վոք չհամարձակվի աշխարհիկ իշխանություններից ինվեստիտուրա ստանալ։

Նախորդ բոլոր փոփոխությունները յեղան Հենրիխ III-ի վորդի Հենրիխ IV-ի անչափահասության ժամանակ. թագավորական իշխանությունը պապին չեր խանգարում, բայց այժմ թագավորը մեծացել եր և ուզում եր ինքը իշխել. նրա աչքում յեպիսկոպոսները աստիճանավորներ եյին, վորոնց նա հաստատում եր վասսալ հաստատված սովորության համաձայն։ Հենրիխ IV-ը ինվեստիտուրայի մասին պապի արած վորոշումը թագավորական իրավունքների մի չլսված խախտում համարեց։ Վորմսում (Հենոսի ափին) ժողով հրավիրեց, վորը աթոռից զրկեց «կեղծ վանական Հիլդեբրանդին»։ Դրան իբր պատասխան Հռոմ հրավիրեց ֆրանսիական և իտալական բարձր հոգևորականներին, Հենրիխին հայտարարեց թագավորի իշխանությունից զրկված և ազատեց նրա բոլոր հպատակներին իրենց ված հպատակության յերդումից։

Հենրիխը շատ թշնամիներ ուներ իշխանների մեջ. հատկապես նրա դեմ գրգռված եյին Սաքսոնիայում, վորը նա քայքայել եր յերկար ժամով այնտեղ իր պալատով և հետևորդներով։ Թագավորից անբավական կերմանական վասսալները համագումար կազմեցին և դահընկեց արին Հենրիխին։ Թագավորին ճնում եր միայն պապի հետ հաշտություն փնտռելը։ Նա ձմեռը, արագ կերպով, գրեթե առանց ուղեկիցների անցավ Ալպերը պապից ներողություն խնդրելու։ Գրիգորը գտնվում եր Կանոսսայի (Տոսկանայում) ապահով ամրոցում. նա սկզբում չուզեցավ թագավորին ընդունել և ստիպեց նրան մեքանի որ փակված դռների առաջ սպասել։ Վերջապես նա մեղմացավ, ղղջացողի հպատակով Հենրիխը նրա առաջ գետին ընկավ, և պապը նրան ներեց։

Բայց Հենրիխը ուշացել եր։ Գերմանիայում արդեն ընտրել եյին ուրիշ թագավոր պապի լեգատների ներկայությամբ։ Վերադառնալով Հենրի-

իսը նորից ժողովում պահանջեց Գրիգորին ազատից զրկել և իր կողմից հայտարարեց նոր պապ. իր հակառակորդներին և սրանց ընտրածին չախչախելով՝ նա զորքով առաջ շարժվեց դեպի Ալպերի մյուս կողմը։ Հյուսիսային Իտալիայի արդյունաբերող քաղաքներին նա կարևոր զիջումներ տվեց, և նրանք իր կողմն անցան։ Վերջապես Հենրիխը իր պապի հետ մտավ Հռոմ և թագադրվեց կայսր։ Քաղաքը բաժանվեց յերկու ամրացված բանակների. ս. հրեշտակի ամրոցում Գրիգոր VII-ն ևր պաշտպանվում, իսկ պապի պալատը (Լատերան) և ս. Պետրոսի տաճարը կայսրի ձեռքին եյին. ժուռումուռ նեղ փողոցներում կատաղի կռիվներ եյին լինում։ Գերմանական զինվորները արդեն վերցրել եյին Կապիտոլիումը. այդ ժամանակ պապին ոգնության յեկան նրա դաշնակիցները՝ հարավային Իտալիայի նորմաններըե Նրանք ազատեցին Գրիգոր VII-ին, բայց վրձկան սարակինոսների հետ ավերեցին Հռոմը. պապը ստիպված ևր փախչել դրանց յերկիրը և շուտով մեռավ այն ծանր միտքը ունենալով, վոր իր գործը քանդվեց։

Հենրիխ IV-ը Գրիգոր VII-ից ավելի ապրեց 20 տարի։ Սակայն հզոր պապի հաջորդները կայսրից բանագրանքը չվերցրին, և գլխավոր հակառակորդների մահով կռիվը չդադարեց։ Հենրիխ IV-ի յերկարատև կառավարության վերջին պապը ձեր Թագավորի դեմ հանեց նրա վորդուն։ Բայց նոր կայսրն էլ՝ Հենրիխ V սկսեց հոր նման գործել, շարունակելով յեպիսկոպոսներ նշանակել։ Վերջապես իշխանները միջնորդ յեղան պապի և կայսրի միջև, հաշտությունը հաջողեցրին։ Յերկար բանակցություններից հետո յերկու կողմերը ընդունեցին Վորմսի համաձայնությունը (1122 թ.)։ Կայսրը հրաժարվեց յեպիսկոպոսներ և աբբաներ նշանակելուց. բարձր հոգևորականների ընտրությունը թողնվեց իրեն հոգևորականության. սիմոնականությունը դատապարտվեց։ Ինվեստիտուրան կարծես յերկուսի բաժանվեց. կայսրը պահպանեց վրեից ժառանգի և զավազան տալը, այսինքն հոգևոր աստիճանում հաստատելը, բայց իրեն վերապահեց գայիսոնի հանձնումը, այսինքն յեպիսկոպոսին կամ աբբային հաստատելը իր աշխարհիկ կալվածների վրա, վորի համար հոգևորականը առաջվա նման վասսալական յերդում եր տալիս։

Այդ համաձայնությամբ հոգևորականությունը աշխարհիկ թագավորի ծառայության մեջ եր մնում։ Բայց դրա հետ միասին պարզ կերպով ընդունվել եր, վոր հոգևորականները պատկանում են նաև մի այլ մեծ համայնքի, վորը պետության սահմաններից վեր ե, ունի իր օրենքները և իր գերագույն իշխանությունը։ Ուստի պապը տոնում եր իր հաղթանակը և հրամայեց Վորմսի դաշինքի ընդունքը գրել Հռոմի Լատերանի իր պալատի պատի վրա։

IV. ՔԱՂԱՔՆԵՐ, ՊԱՊՈՒԹՅՈՒՆ ՅԵՎ ԽԱՉԱԿԻՐ ԱՐՇԱՎԱՆՔՆԵՐ

8. ՔԱՂԱՔՆԵՐԻ ԲԱՐՁՐԱՆԱԼԸ.

Առևտուրը Յեվրոպայում միջեվ 1100 թ.։ Հին հռոմեական կայսրության քայքայումից հետո, V և VI դարերում միջին Յեվրոպայի բնակչության մեծագույն մասը ապրում եր գյուղերում, ագարակներում և կալվածների շինքերում։ Քաղաքներ քիչ եյին մնացել, մեծ մասամբ զրանք ծովմերձ հռոմեական գաղութներ եյին Միջերկրականի ափին (Վենետիկ և Ամալֆի Իտալիայում, Մարսել՝ Ֆրանսիայում) կամ հին հռոմեական բերդեր եյին, վորոնք դարձան յեպիսկոպոսական ամրոցներ (Մայնց, Ֆյոլն)։

Քաղաքներ քիչ կային նրա համար, վոր առևտուրը թույլ եր և արտադրության համար աշխատող արհեստներն էլ աննշան։ Հազվագյուտ և թանգ ապրանքներ գնում եյին միայն հարուստ մարդիկ, իսկ այդ բերում եյին հեռու տեղերից, յերկրից յերկիր պատող վաճառականները, հրեաները և սարբինները։ Այդ վաճառականները փոխադարձ պաշտպանության համար միանում եյին և կազմում մեծ քարավաններ. նրանք հաճախում եյին թագավորի բնակատեղին, յերբ նա հրավիրում եր իր մոտ վասսալներին և յերկրական զորքը, կամ յեկեղեցական մեծ տոներին եյին յերևում կարևոր սրբավայրերում, ուր գնում եյին բազմաթիվ ուխտավորներ և տեղի յեր ուենում խոշոր առևտուր։ Այդ տոնավաճառներին միացած եյին հանդիսավոր ատյանաժողովներ և մեղքերի թողություն տալը, ուստի և կոչվում եյին մեսսաներ, այսինքն պատարագներ։

Վաճառքի համար աշխատող արհեստ յեվ մեսական շուկաներ։ 1100 թվին մոտ արևմտյան Յեվրոպայի յերկրների մեծ մասում նկատվում է փոփոխություն։ Բնակչությունը շատ ավելացավ։ Ավելորդ մարդիկ կամ պետք և նոր տեղեր գնային կամ հին տեղերում ապրուստի նոր միջոցներ վորոնեյին։ Կյանքի այդպիսի միջոցներ եյին յերկու արտադրություն՝ մուտքի յեվ կտուրեղենի։ Յերբ սովորություն դարձավ ասպետների ծանր զրահի յեվ կտուրեղենի։ Յերբ սովորություն դարձավ ասպետների ծանր զրահի նավատորթյունը, Հենոսի ընթացքով ընկած ամբողջ ջրջանները զրաղվեցին զինագործությամբ։ Միաժամանակ բրդե զգեստը սկսեց դուրս մղել հին զինագործությամբ։ Միաժամանակ բրդե զգեստը սկսեց դուրս մղել հին դերմանական զգեստին, վորը կազմված եր կտավի շապիկից և մորթու ծածկոցից կամ բրդից (այդպես եր հագնվում դեռ Կարլ Մեծը)։ «Վոչխարը հաղթեց կամ բրդից (այդպես եր հագնվում դեռ Կարլ Մեծը)։ «Վոչխարը հաղթեց կտավատին»—ասված է մի ուսումնական աբբայի վոտանավորներում։ Մշտական արտադրության գլխավոր տեղը դարձավ Ֆլանդրիան (Ֆլամանդիների ջրջանը Շելդա գետի ընթացքով) և հյուսիսային Իտալիան, մանավանդ Միլանը և Ֆլորենցիան։

Նոր արհեստը ուժեղանալով առևտուրն էլ ընդարձակվեց։ Ֆլամանդացի ջուլհակներն սկսեցին բուրդ գնել Անգլիայում իրենց պատրաստած կտորների փոխանակության համար, վոր Հենոսով և այլ գետերով ուղարկում եյին Գերմանիա և Ֆրանսիա, նրանց համար հարավից բերում եյին գինի և անոդի նյութեր։

Նոր արհեստը հնին նման չեր, յերբ գյուղացիները ձմեռն աշխատում եյին գյուղերում և տերերի տներում։ Այժմ այդ բարդ գրաղմունք եր, ամբողջ տարի տևող. բանվորները այլևս չեյին կարող գաշտ գնալ և ստիպված եյին իրենց համար պաշար գնել։ Նոր գործում յերևան յեկան գանազան կատարելագործություններ՝ ինքն իրենց մանող, հարթող-ուղղող մեքենաներ, և հարկավոր եր աշխատանքի համար հատուկ վարպետություն։ Պետք եր նաև աշխատանքը բաժանել միքանի մարդկանց մեջ. և բրդի արտադրության մեջ կազմվեցին ուղղող-հարթողների, բուրդ զգողների, մանողների, ջուլհակների և ներկողների խմբեր. բուրդը անցնում եր 10 ձեռքից, մինչև վոր զգեստի համար պետքական կտոր եր դառնում։ Դրա հետևանքով բանվորների մեծ քանակություն հավաքվում եր մի տեղ, և կազմվեցին հատուկ արհեստավորական շենքեր։

Հին տոնավաճառները, որոնք կազմվում էին ուշ-ուշ և քիչ տեղերում, այժմ արհեստների արտադրած բազմաթիվ առարկաների վաճառման համար անբավարար էին։ Հարկավոր եր սարքել շուկաներ ավելի շատ և ամեն տեղ։

Մշտական շուկա շինելու համար հարկավոր եր տեղի սենյորին, թագավորին, գրաֆին, եպիսկոպոսին, աբբայի համաձայնությունը։ Հաճախ սենյորն ինքն իր շուկաներ պատրաստում. դրա համար իր պաշտպանված ամրոցի մոտ հատուկ տեղ եր հատկացնում և թույլ եր տալիս առևտրական կրպակներ շինել։ Հատուկ գրով թույլ եր տալիս իր վիլլանների հայտնի մասին «գրաղվել վաճառելու գործով» փոխանակ «ամեն որ ծառայելու» (այսինքն կոռ ու բեդյառը կատարելու)։ Սենյորը շուկայից ոգուտ եր ստանում. նա առևտուր անողներից վճարներ եր ստանում խանութներից օգտվելու համար, նրա շրջանն էին գալիս ավելի չեվրոները, որոնք նրան մաքս էին վճարում։ Այդ պատճառով նա խոստանում եր շուկայում հավաքված մարդկանց պաշտպանել կողոպուտից և բռնությունից. այդ բանի համար հրապարակում տնկվում եր մի ձող, վրան գլխարկ, ձեռնոց կամ գլխին խաչ, կամ ռազմիկի քարե պատկեր, Գերմանիայում այսպես կոչված Ռոլանդի արձանը։

Տիրոջ ամրոցի կամ ամրացած վանքի պահպանության տակ տեղավորվում էին այլ և այլ տեսակ արդյունաբերողներ՝. արհեստավորները, որ ուզղակի իրենց արհեստանոցներից, «պատուհանից» իրենց արտադրությունները վաճառեն, վաճառականները, որ վաճառեն տեղական և դրսից բերած ապրանքները։ Այսպես առաջ եկավ Ֆլանդրիայում Բրյուգգեն. այդ շուկան սկսվեց քաղաքի ամրոցին մոտ կամրջի առևտրից. (Բրյուգգե նշանակում է կամուրջ)։ Առևտրական բնակատեղու բնակիչներից սենյորը կարող եր մի անդամից հավաքել մեծ, վորոշված վճարներ, որն իրեն ավելի ոգուտ եր, քան գյուղացիներից պահանջել բազմաթիվ մանր պարտավորություններ։ Դրամ ունենալով՝ առևտրական բնակիչները կարիքի դեպքում կարող էին իրենց սենյորին նեղ տեղից ազատել, որինակ՝ գերությունից գնել կամ պատերազմի պատրաստվելուն օգնել։ Հենրիխ IV պատրաստվելով հռոմեական արշավանքի Գրիգոր VII պապի դեմ, վորոշեց Գերմանիայի առևտրական բնակավայրերից վերցնել «մեծ գումարներ», որ «հռոմեացիներին գնա», այսինքն ձեռք բերե կայսերական թագը։ Ուստի սենյորը առևտրականներին զանազան արտոնություններ եր տալիս. քչացնում եր տուգանքները, թեթևացնում եր գինվորական ծանր պարտավորությունը, նրանց անձնական ազատություն եր տալիս, այսինքն թույլ եր տալիս ազատ գնալ և ապրել ուր ցանկանում են, թույլ եր տալիս ազատորեն կարգադրություն անելու իրենց ունեցվածքի համար։

Մեծանալով առևտրական խոշոր ավանը կարող եր շրջապատել իրեն պարսպով. արդյունաբերողների հետ տեղավորվում էին ասպետները, որոնք զանազան ոգուտներ ինկատի ունենալով՝ գալիս էին այդտեղ. այդ ժամանակ ամրոցի արվարձան լինելուց ինքն էլ զատնում եր պաշտպանված բադաֆ (բուրգ)։ Քաղաքի բնակչությունը սկսեց հատուկ անուն ունենալ. (Գերմանիայում կոչվում էին բյուրգերներ, Ֆրանսիայում բուրժուա)։ XI դարի վերջից մինչև հարավային Եվրոպայի քաղաքները թվով արագ

դրեն մեծանում են և խոշորանում իրենց տարածությամբ։ Դրանցից վոմանք հռոմեական քաղաքներ էին, որոնք վերակենդանացան և ընդարձակվեցին՝ Լիոն, Բորդո, Պարիզ, Միլան, Բյոլն, Լոնդոն. մյուսները յեպիսկոպոսական ամրոցներից առաջ չեկան՝ Մագդեբուրգ, Բազել, Ժընև, յերբորդները բոլորովին նոր էին հիմված և առևտրի շնորհիվ առաջ գնացին՝ Բրյուգգե, Համբուրգ, Լյուբեկ։

Գիլդիներ յեվ կոմմունաներ։ Քաղաքների ունևոր և ինքնուրույն բնակիչների մեջ ցանկություն առաջ չեկավ բոլորովին անջատվել իրենց սենյորներից, իշխաններից և յեպիսկոպոսներից։ Հատկապես այս նկատելի է հյուսիսային Ֆրանսիայի և Գերմանիայի քաղաքներում, որոնք գտնվում էին նավարկելի գետերի բերանների մոտ և որոնք հարստացել էին մեծ տարի և բրդի գործվածքներ վաճառելով։ Այստեղ վաճառականները փոխադարձ պահպանության համար միություններ էին կազմում, որ նման էին գինվորական խմբերին. այդ միությունները կոչվում էին գիլդիներ, հանզաներ, կոմմունաներ։ Միության մեջ մտնելիս արտասանում էին խորհրդավոր յերդումներ. հին հեթանոսական սովորությամբ միության անդամները հավաքվում էին սեղանի շուրջը կատարվող մեծ, ազմկալի զբոսանքների։ Նրանք պարտավորվում էին միմյանց պաշտպանել գինված ուժով առևտրական միատեղ ճամփորդություններում։ Հանգային հատուկ կապիտանի կամ գրաֆի գլխավորությամբ զրահներով, կանոնավոր խմբերով նրանք գնում էին իրենց ապրանքների հետ. ով հարկավոր գինքը չուներ, տուգանք եր վճարում։

Այն քաղաքներում, ուր վաճառականների միությունը շատ ուժեղ եր լինում, միությունը քաղաքացիների գլուխ եր անցնում։ Ամբողջ քաղաքը ընդհանուր ձայն եր բարձրացնում՝ «կազմել կոմմունա». այդ ժամանակ բոլոր քաղաքացիները մտնում էին միության մեջ և այդ հատատում էին յերդումով։ Այս բանը միշտ էլ սենյորի կողմից խիստ ընդդիմության եր հանդիպում. պատերազմ եր սկսվում։

Հյուսիսային Ֆրանսիայի Լան (Laon) քաղաքում քաղաքացիները խռովություն բարձրացրին իրենց յեպիսկոպոսի դեմ, վորը ագահ և դաժան մարդ եր։ Մեծ գումար տանելով՝ յեպիսկոպոսը թույլ տվեց կազմել կոմմունա. Լյուդովիկ VI թագավորն էլ, նույնպես դրամ տանելով, հատատեց։ Բայց յերբ թագավորն յեկավ քաղաք, յեպիսկոպոսը ծրագրից հատատումը խափանել։ Քաղաքացիները թագավորին առաջարկեցին նորից դրամ և խնդրեցին կոմմունան թողնել, բայց յեպիսկոպոսն ավելին տվեց. թագավորը լուծեց կոմմունան, բայց, խռովությունից յերկյուղ կրելով, քաղաքից փախավ։ Ցավ իսկապես, քաղաքացիները ապստամբեցին. նրանք խանութները փակեցին և աղաղակ բարձրացրին. «Կոմմունա, կոմմունա»։ Յեպիսկոպոսը արհամարհանքով մտածում եր, որ հասարակ ժողովուրդը վոչինչ էլ չի կարող անել. բայց խռովարարները մյուս որը նրա պալատին վոչինչ էլ չի կարող անել. բայց խռովարարները մյուս որը նրա պալատին մոտեցան, յեպիսկոպոսին սպանեցին և գիակը ձգեցին հրապարակ. հետո նրանք հարձակվեցին հոգևորականներին և ասպետներին վոչնչացնելու և նրանց տները այրելու։ Սակայն շուտով հաղթվածները վրեժ առան. ասպետները, յեպիսկոպոսի վասալները քաղաքը վերցրին, խռովություն բարձրացրին, իսկ նրա խուժած գյուղացիները կրծողներին խիստ մահվան յենթարկեցին, իսկ

քաղաքացիների անունը կողոպտեցին։ Միայն միքանի տարի հետո Լանի բնակիչները նոր յեպիսկոպոսից գիջումներ ձեռք բերին։

Բայց շատ տեղերում քաղաքները զոռով կամ մեծ դումար վճարելով սենյորից գրուբյուն էին ստանում, որով քաղաքացիներին ազատություն էր տրվում։ Կոմմունա-քաղաքի գլուխ էր լինում ընտրված ավագը կամ գլուխը (ֆրանսիական քաղաքներում կոչվում էր մեր)։ Նա կառավարում էր յերդվյալների խորհրդի հետ, որոնց թիվը լինում էր 12 կամ ավելի, որոնց ընտրում էին քաղաքացիները։ Կոմմունան փոքրիկ հանրապետություն էր դառնում։ Նրա շուկայի հրապարակում շինում էին խորհրդի շենքը. սրա կողքին բարձրանում էր ավելի վեր զանգակատունը, որը սեփական եր նրանց ամրոցի աշտարակին էր նմանում։ Աշտարակի վրա պահապանները դիտում էին շրջակայքը և զանգահարում էին, յերբ վորևե յերկյուղալի բան էին նկատում։ Մեծ զանգը քաղաքացիներին ղեկի յեր կանչում, իսկ յերդվյալներին՝ խորհրդի։ Խորհրդի վորոշումները, կնքում էին քաղաքի կնիքով, վորի վրա փորագրված էր քաղաքապետը ձիու վրա նստած, ֆեոդալական սենյորի կնիքերով։

Քաղաքների անկախությունը։ Անհրաժեշտ արդյունաբերող մարդկանց բարձրանալը ժամանակակիցներին զարմանք էր պատճառում։ XII-րդ դարու սկզբի յեկեղեցական գրողը, վոր սենյորների կողմն էր պահում, կոմունա անունը համարում էր «նոր, տեղի բառ», վորի տակ ծածկված է նախկին ստրուկների ազատությունը։ Հյուսիսային կոմմունաների հետ միաժամանակ ազատություն ձեռք բերին հարավային Ֆրանսիայի և Իտալիայի շատ քաղաքներ (Արլ, Մարսել, Միլան, Բոլոնիա, Ջենուա, Վենետիկ)։ Այդ յերկրներում քաղաքացիները հարկադրված չեյին ուժեղ սենյորների դեմ պայքարել։ Իտալիայում կայսրներն ոգնում էին մանր վասալներին խոշոր սենյորների դեմ. եպիսկոպոսները հաճախ ապրում էին քաղաքներում, քաղաքի պարիսպների յեռանդ էին վորոնում պաշտպանություն սենյորների դեմ և միանում էին արդյունաբերող մարդկանց հետ։ Այդ քաղաքները հարստացան արտասահմանի ընդարձակ վաճառականությունից. Բյուզանդիայի անկումից հետո արևելյան ապրանքների շուկան սկսեց անցնել հյուսիսային Իտալիա և հարավային Ֆրանսիա, իսկ իտալական առևտրականները սկսեցին իրենց հերթին ոտարերկրյա ապրանքները և իտալական իրենց կտրվածքը տանել հյուսիս, Ալպերի մյուս կողմը։ Իտալական քաղաքներն գլուխ էին անցել ասպետներից և հարուստ արդյունաբերողներից թվով 2 — 12 ընտրված կոնսուլներ։ Վենետիկում և Ջենովայում միքանի փոխվող կոնսուլների տեղ ընտրվում էր ցմահ մի դոժ (dux, այսինքն գլխավոր իշխան)։

Միայն միքանի քաղաքներ լրիվ անկախություն ձեռք բերին։ Քաղաքներից մեծ մասում վոչ ընտրված ավագներ կային, վոչ էլ խորհուրդ. գտնվում էր քաղաքը։ Այդպես էին կազմակերպված Պարիզը և Որլեանը, վորոնք գտնվում էին այն հողի վրա, ուր սենյոր էր ինքը՝ ֆրանսիական թագավորը։ Բայց և այնպես այդ քաղաքներն էլ գյուղերի համեմատությամբ մեծ առավելություններ ունեյին։ Նրանց բնակիչները վորոշ կանոնավոր վճարումներով սենյորին արվելիք ճորտական կոռ ու բեգյարից ազատագրվում

էին. դրա պատճառով էլ նրանք կոչվում էին ազատներ։ Սենյորները բավական հոգ էին տանում, վոր քաղաքացիներին արտոնություններով գրավին, զիջումներով մյուս սենյորներին՝ իրենց հակառակորդներին գերազանցին և նրանց ճորտերին իրենց կողմը բերեն։ Շատ գրություններում, վորոնք արվում էին քաղաքացիներին, հետևյալ պայմանն էր գրվում. «Յեթե ճորտը կապրի (այսինչ քաղաքում) մի տարի և մի որ և այդ ժամանակվա ընթացքում վոչ վոք նրա վրա իրավունք չի հայտնի, նա ընդմիշտ կատարյալ ազատություն և ստանում»։ Գերմանիայում այդ պատճառով առած եր կազմվել. «Քաղաքի ոդը ազատություն է տալիս»։

Քաղաքային կազմը։ Քաղաքի կյանքի ամբողջ կարգ ու կանոնը նման էր գյուղականին։ Ինչպես վաճառականները միանում էին գիլդիներ կազմում, արհեստավորներն էլ ընկերություններ էին կազմում, վորոնք կոչվում էին համքարություններ (ցեխեր)։ Վորովհետև գնողների թիվը սահմանափակված եր, և ավելորդ ապրանքը դժվար եր վաճառել, ուստի ամեն մի արհեստի վարպետների անհրաժեշտ շահն ստիպում եր նրանց միասին պաշպանվել. յեթե նրանք սկսեյին մրցել և գները ձգել այդ նրանց կկործաներ։ Այդ պատճառով յուրաքանչյուր համքարության վարպետները հսկում էին, վոր իրենց մեջ հավասարություն լինի, վոր վոչ վոք ավելի բանվոր չպահեր, քան մյուսները, վոր վոչ վոք ավելի նյութ չունենա և որվա ընթացքում ավելի չաշխատեր։ Ամեն արհեստի մեջ էլ վարպետները դատում էին ընկերներին այն բանի համար, ինչ վոր վերաբերում եր առարկաները պատրաստելուն։ Ով ցանկանար վորոշ արհեստով զբաղվել, պետք է խնդրեր, վոր իրեն ընդունեն համքարության մեջ. վարպետները նոր մատաղներից պահանջում էին ապացույց իր արվեստի համար՝ «փորձնական աշխատանք»։ Յուրաքանչյուր գիլդիի և համքարության անդամները կազմում էին սերտ յեղբայրություն, պաշտում էին վորոշ սրբի, յեկեղեցում ունեյին իրենց վորոշ տեղը. հեթանոսական և քրիստոնեական սովորությունները միացնելով, «յեղբայրները» հանդիսավոր որերին հավաքվում էին ընդհանուր հացկերույթի և խմելու համար և մեռած անդամների համար հոգեհանգիստներ էին կատարել տալիս։

Քաղաքը արհեստավորներին խիստ կարգապահության մեջ եր պահում, ինչպես առաջ սենյորը կամ յեպիսկոպոսը. իր բոլոր բնակիչներից պահանջում եր ծառայություններ և կոռ ու բեգյար ընդհանուրի օգտին. արհեստների վրա յեր բաժանված քաղաքի պարիսպների շինության և նորոգության, բերդի նամատների, զենքերը և պաշարը պատրաստելու աշխատանքները։ Քաղաքի խորհուրդը ամեն մի համքարության վրա նշանակում եր գլխավոր, նրան հպատակվող արհեստավորները քաղաքի յերկրապահ զորքի մեջ առանձին խումբ էին կազմում։ Մեծ նշանակություն ստացավ վորձաքննության համքարությունը, մանավանդ այն ժամանակից սկսած, յերբ յուրաքանչյուր նշանավոր քաղաք աշխատում եր իրենց համար շինել խոշոր տաճար գրական վոճով։ Բոլոր քաղաքացիներն էլ չեմ մասնակցություն էին ունենում այդ աշխատանքում, վորը տևում եր յերկար տարիներ, յերբեմն միքանի սերունդներ. հարուստները և աղքատները իրենց ունեցածից նվիրում էին նյութ ձեռք բերելու, վարձատրելու բազմաթիվ հմուտ բանվորների. տաղին կատուցվածքը վարպետներից պահանջում եր դեղարվես-

տական մեծ հնարագիտություն և դժվար հաշիվներ։ Թոթախան տաճարները հին քաղաքացիների ստեղծագործության և վոգևորության հուշարձաններն են։

9. ԽԱՉԱԿԻՐ ԱՐՇԱՎԱՆՔՆԵՐ ՅԵՎ ՊԱՊԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆ

Խաչակիրների շարժման սկիզբը։ Արևմտյան Յեվրոպայի բնակչության միայն մի մասը գտավ իրեն համար ղբաղմունք և անունդ նոր քաղաքներում։ Մյուս մասը պետք է գաղթեր հին հայրենիքի սահմաններից հեռու։

Սրդեն XI դարում ասպետների յեվ գյուղացիների մեծ խմբեր հեռանում էին նոր բնակատեղիներ և հողաբաժիններ ձեռք բերելու համար։ Այն ժամանակվա բազմանդամ ասպետների ընտանիքներում լինում էին 8, 10, 12 տղաներ. թեև նրանցից մի մասը յերեխա ժամանակից վորոշում էին վանք տալ, բայց և այնպես շատ ժառանգներ էին մնում. վոմանց բոլորովին ժառանգությունից ղրկում էին։ Հողից ղրկվածներից կազմվում էին զինվորական խմբեր, վորոնք նոր շրջաններ նվաճողների մոտ ծառայության էին մտնում։ Այսպես՝ ֆրանսիական ասպետները, վորոնց մի մասը Նորմանդացի յեր, նվաճեցին Անգլիան. նույն Նորմանդիայից շատերը հեռացան դեպի հարավ և բյուզանդացիներից խլեցին հարավային Իտալիան, սարակինոսներից՝ Սիցիլիան։ Շարժուն նորմանները այստեղ էլ հանգիստ չթողին. պապի վասսալ, Գրիգոր VII-ի դաշնակից Ռոբերտ Գյուիսկարը բյուզանդացիների հետ կռիվ սկսեց հենց Բալկանյան թերակղզում։

Այս շարժման մեջ կարևոր մասնակցություն ունեցան **Իտալացիները**, վոր ընկած էին Միջերկրականի ափին, մանավանդ հյուսիսային-իտալականները՝ վենետիկ, Ջենովա, Պիզա։ Այդ քաղաքները արևելյան ապրանքներ բերում էին Բյուզանդիայի միջոցով, մուսուլման յերկրները մուտք չունեին։ Նրանք վորոնում էին արևելքի հետ ուղղակի հարաբերություն, ուզում էին հենակետներ գրավել Լեվանտում (արևի ծագման յերկիր), այսինքն Փոքր Ասիայի և Ասորիքի ափերում։

Այդ ժամանակ մարդիկ հեշտությամբ իրենք իրենց հավատացնում էին, վոր իրենց ձեռնարկությունները աստծու կամքի կատարումն են։ Վիլհելմ Նորմանդացին Անգլիան նվաճելու մեկնելով՝ պապից խնդրեց սրբազան դրոշակ։ Յեթե պատերազմը անհավատների, հեթանոսների, մուսուլմանների դեմ եր մղվում, պատերազմողների աչքում ստանում եր սրբազան բնավորություն. նրանք այդ համարում էին Քրիստոսի հավատի՝ ամբողջ աշխարհի վրա հաղթանակելու կռիվ։ Այդ ժամանակ պատերազմը դառնում եր քրիստոնեության անվան համար, նրա նահատակության խաչ կրել եր նշանակում։ Իրը այդ բանի նշան արշավանքի մասնակցողները դրոշակի, զգեստի վրա կարում էին խաչ, մարմնի վրա դրոշմում էին։ Այդպիսի քաղաքական գործությունների մեջ մեկը համարվում եր հատկապես կարևոր՝ այն յերկիրը ձեռք բերելը, ուր ապրվել եր Քրիստոսը։

Պաղեստինի սրբազան տեղերը, հատկապես Յերուսաղեմը, ուր գտնվում եր Տիրոջ գերեզմանը, արևմուտքից ուղևոր շատ ուխտավորներ էին գրավում։ Ուխտ գնալը ըստ էության համարվում եր մեծ քաղաքական գործություն. դրա համար յերկար ճանապարհորդություն եր պետք ծովով. կապված եր

վտանգների հետ, յերբ Ասորիքում արաբների իշխանության փոխարեն հաստատվեց ավելի խիստ թուրքերի իշխանությունը։ Ուստի բարեպաշտ և չզսպվող նորմանները Տիրոջ գերեզմանը գնալիս փոխադարձ պաշտպանության համար մեքանի հազար մարդիկ միանում էին։ Այդ տեսակ զինված ուխտագնացները հեռու չեր ամբողջ յեվրոպական հավաքրիստոնեական գիտակցության միտքը, վոր մուսուլմաններին չանչալանեն և սրբությունը ընդհանրական դեռ բերեն։ Սրբազան պատերազմը իրանպատակով համապատասխանում եր քաղաքների արդյունաբերական ձգտումներին և ասպետների ու գյուղացիների մեծ ցանկության՝ ձեռք բերել հողային նոր տիրապետություններ և հողաբաժիններ։ Այս ու այն դրդումների միացումից առաջ յեկան խաչակիր արշավանքները, վորոնք յեվրոպացիներին ղրաղեցնում էին մանավանդ XII դարում (ավելի ճիշտը 1095—1204 թ.)։


Խաչակիր առաջին արշավանքը։ XI դարի վերջում Յեվրոպայում առևտրական արտադրությունը շատ բարձրացավ, մանավանդ մուսուլմանների հաջողությունների տպավորությունների տակ, վորոնք քրիստոնյա աշխարհի յերկու ծայրերից շարժվել էին։ Սելջուկ թուրքերը Բյուզանդիայից խլել էին ամբողջ Փոքր Ասիան, այսինքն կայսրության գլխավոր մասը և սպառնում էին Կ.-Պոլսին. մայրաքաղաքից յերեում էին թուրքերի ծածկված սայլերը, վրանները ուղտի մորթիներ քաշած։ Բյուզանդիայի Ալեքս Կոմնենոս կայսրը դիմեց արևմտյան քրիստոնյաներին՝ խնդրելով իրեն ոգնել նոս կայսրը դիմեց արևմտյան քրիստոնյաներին՝ խնդրելով իրեն ոգնել անհավատների դեմ։ Այդ նույն ժամանակում Սպանիայի քրիստոնյաները, վորոնք կարողացել էին յեռ խլել թերակղզու կեսը, մեծ պարտություն էին կրել. Աֆրիկայից յեկել էին ավելի ջերմեռանդ մուսուլմանների նոր խմբեր՝ ալմոռավյանները և քրիստոնյաները նորից յեռ էին մղվել դեպի հյուսիսային լեռները։

Սրբազան պատերազմի ղեկավարությունը վերցրին պապերը, վորոնք իրենց այդ ժամանակ ամբողջ քրիստոնյա աշխարհի գերագույն տերն էին համարում։ Գրիգոր VII-ի հաջորդ Ուրբանոս II, ծագումով ֆրանսիացի, 1095 թ. Կլերմոնում ժողով հրավիրեց, ուր խաչակիր արշավանքի քարոզով հանդես յեկավ հոգևորականության և ժողովրդի անապին բազմության առաջ, վոր հավաքվել եր դաշտում։ Վոգևորված ազազակներով՝ «Այդպես է կամենում աստված», խաչեր ստացան անապին թվով հոգևորականներ և աշխարհականներ, քահանաներ և վանականներ, ասպետներ, քաղաքացիներ և գյուղացիներ։ Պապը սրանց բոլորին էլ խոստացավ յերկնքում որևէ նաեությունը, քավարանի տանջանքներից ազատություն, պարտքերի ներում և նրանց բացակայության ժամանակ գույքի պահպանություն։ Պապի սկսած գործը շարունակեցին քարոզիչները, վորոնք մեկնեցին դեպի Ֆրանսիայի, Իտալիայի և Գերմանիայի տնտեսապես ծայրերը հավաքելու նոր խաչակիրներ։ Նկարագրելով վառ գույներով կրոնական քաջագործության սրբությունը, նրանք չեյին մոռանում նկարագրելու արևելյան յերկրների պաղպաղատությունը, առատ ավարը, կյանքի հարստություններն ու հարմարություններն Արևելքում։

Հավաքվեց յերկու իրարից շատ տարբեր զինված բազմություն։ Մեկը կազմված եր հասարակ ժողովրդից, վատ զինված, պաշար չունեցող, Պետրոս Անապատականի և անուն վալտեր Մերկ ասպետ գլխավորությամբ։

Այդ բազմությունը գնում էր Գերմանիայից և Ֆրանսիայից ցամաքի ճանապարհով դեպի Կ.-Պոլիս։ Խաչակիրները ստիպված էին կողոպուտով ապրել. սրանց մեծ մասին ճանապարհին ջնջեցին վենգրերը և բուլղարները, որոնց երկրներով նրանք անցնում էին և Կ.-Պոլսին չհասան։

Մյուս խումբը կազմված էր ասպետների զորամասերից (ընտանիքներ և ծառաների հետ), խոշոր սենյորների գլխավորությամբ։ Ասպետների մեծ մասը հյուսիսային և հարավային Ֆրանսիայից էր։ Իտալիայում Գյուխարի վորդի Բոհեմոնդի կոչով շատ նորմաններ շարժվեցին։ Խաչակիրների մի մասը շարժվեց դեպի Իտալիա, ծովով անցնելու Կ.-Պոլիս, վոր ընդհանուր հավաքատեղին էր։ Իտալական ծովափնյա քաղաքները հանձն առան զորքերը նավերով տեղափոխել, իսկ հետո հասցնել Ասիա, պատերազմի տեղը, նաև պաշար, զինամթերք և ժանդակություններ։ Զինվածները ընդհանուր առյնորդ չունեին, ամեն մի սենյոր պատրաստ էր իր պատասխանատվությամբ գործել. բարոնները և ասպետները լավ չէին հնազանդվում գլխավոր առաջնորդներին։



Խաչակիրների ուղիները յուր նրանց տիրապետությունները խաչակիր առաջին արշավանքից հետո։

Յերբ զինված խմբերը սկսեցին Պոլսում միանալ, Ալեքս կայսրը տեսավ, վոր այս դաշնակիցներն ավելի սարսափելի չեն, քան Թուրքերը։ Սենյորները հրաժարվում էին նրան հավատարմության յերդում տալ և խոստում, վոր Բյուզանդիայի համար յեթե կնվաճեին նրա կորցրած շրջաններըը։ Ալեքսը սկսեց վարձկան Թուրքեր և սլավոններ հավաքել նրանց դեմ և շտապեց խաչակիրներին փոքր Ասիա ուղարկել։ Խաչակիրները նվաճեցին Նիկիան, սրանից վոչ հեռու մեծ կռվում ջարդեցին Թուրքերին և իրենց համար ճանապարհ բացին Փոքր Ասիայից դեպի Ասորիք։ Նրանց շատ ոգնեց Ասորիքը տիրող մուսուլմանների փոխադարձ թշնամությունը։ Հյուսիսը պատկանում էր սյուննի Թուրքերին, իսկ հարավը Յերուսաղեմի հետ խաչակիրների գալուց առաջ իլել էին յեգիպտական Ֆաթիմյան սուլթանները, վորոնք շիաներ էին։

Յերկու տարվա ծանր կռիվների ընթացքում խաչակիրները նվաճեցին Անտիոքը, ուր մեց Բոհեմոնդը, Յեդեսիան Յեփրատի մյուս կողմը և Լիանաի ափի քաղաքները։ Սակայն իրենց թիվը շատ պակաս էր. միքանի սեզոնյորներ, հոգնելով պատերազմի դժվարություններից, վերադարձան Յեվրոպա, մնացածները գրեթե մոռացան արշավանքի գլխավոր նպատակը։ Միայն հասարակ ասպետների խռովությունը ստիպեց Գոտֆրիդ Բուլոնացուն (հյուսիսային Ֆրանսիայից) գնալ դեպի Յերուսաղեմ։ Վերջին արշավանքին բազմաթիվ քրիստոնյաներ շտապով բարձրացան սարը, վոր սրբազան քաղաքը շուռով տեսանեն։ Յերուսաղեմի տեսքը ջերմ վոգևորություն և բարձրաձայն հեկեկոցներ առաջ բերեց։ Ջլթենյաց սարի վրա ապրող մի ճգնավորի ցուցմունքով հավատալով հրաշքի՝ խաչակիրները հարձակվեցին պարիսպները քարուքանդ անելու, սակայն նրանց յետ մղեցին և պետք յեղավ պաշարումը կանոնավոր կերպով կատարել այն մեքենաների ոգնությամբ, վոր ծովով ջհնովացիները բերել էին։ 1099 թվի ամռան Յերուսաղեմն առան։ Հաղթողները մուսուլմանների ջարդն կատարած արին փողոցներում և Ոմարի մեծ մզկիթում։

Խաչակիրների իշխանությունները արեվելքում։ Ասորիքում կազմվեց խաչակիրների չորս պետություն, վորոնցից գլխավորը Յերուսաղեմի թագավորությունն էր հարավում։ Սրանցում փեոդալական կարգեր հաստատվեցին։

Թագավորությունը բաժանվում էր սենյորությունների, բարոնություններ և ասպետական լենների, վորոնցից պահանջում էին ձիավորի ծառայություն։ Այն հողամասերում, վոր տրվել էին քրիստոնյա գինվորներին, աշխատում էին տեղացիները, մեծ մասամբ հույն—ուղղափառ դավանություն պահպանող կամ քրիստոնյա ազնդավորներ. նրանք վճարում էին հողի հարկ և հողի հետ կապված էին պարտավորաբար։

Նվաճումների արդյունքի մեծ բաժինը ընկավ վենետիկին և Ջինովային։ Այն ոգնության համար, վոր նրանք ծովից հասցնում էին—վենետիկը Յերուսաղեմը վերցնելուց մի տարի հետո ուղարկեց 200 նավ—նրանք առևտրի մաքսերից ազատվեցին, բոլոր քաղաքներում ամրողջ թաղեր ստացան շուկաներով և յեկեղեցիներով, իսկ ծովափնյա մեծ քաղաքներում ամբողջ քաղաքի մի յերրորդը։ Իտալական հանրապետությունների այդ կալվածները միանգամայն անկախ էին խաչակիրների պետություններից։ Իտալական վաճառականները նպատակին հասան։ Արևելյան կտորների, հատկապես աղուշեղենների, թանգագին փայտի, ներկի նյութերի, շքեղության առարկաների ներմուծումը Յեվրոպա նրանց ձեռքում կենտրոնացավ։ Նրանք այդ ապրանքները գնում էին ուղղակի արևելյան՝ հնդկական, արաբական նավարտների վերջին կայարաններից և իրենց նավերով փոխադրում Յեվրոպա։ Սրա հետևանքով ամբողջ միջին Յեվրոպայի առևտուրը ուժեղացավ։ Վենետիկում կազմվեց ընդարձակ պահեստ և առևտրական տուն (Ֆոնդակո)

գերմանական այն վաճառականները, որոնք գալիս էին արևելյան ապրանքներ գնելու և տանելու հյուսիս՝ Ալպերի մյուս կողմը:

Խաչակիրների արշավանքները շատ անոգուտ էին Եվրոպայի նախկին վաճառականների՝ հրեաների համար: Խաչակիրների խմբերի հավաքները ամեն տեղ կատարվում էր հրեաների դաժան կոտորածներով: Այժմ սկսեցին նրանց ամեն տեղ քրիստոնյա վաճառականները դուրս հանել: Սենյորները զրկեցին այն պահպանությունից, որ առաջ նրանց տալիս էին: Քաղաքներում դադարեցին հրեաներին թույլ տալ որոշ զբաղմունքներով պարապելու. նրանց բնակատեղիները սահմանափակում էին առանձին խիտ բնակված թաղերով (գետտո):

Խաչակիրների ասորական տերապետությունների զրույցը շատ անհատատ էր: Տեղացիները՝ մուսուլմանները, հրեաները և քրիստոնյաները այլ տեսակի էին, քան արևմտյանները և վատահությամբ չէին վերաբերվում խաչակիրներին, հեղաբերությամբ բաժանվում էին կամ թշնամիների կողմն էին անցնում: Բայց և յեկվորների մեջ, որոնց Արևելքում անվանում էին Ֆրանկներ (կամ իրենց դավանության պատճառով լատիններ) միություն չկար: Եվրոպայից նոր յեկած կալվորները անհաշտ էին տարամաղված. նրանք հին գաղթողների կամ սրանց հաջորդների (պուլլաններ) հետ թշնամարար էին վերաբերվում, որոնց համարում էին փչացած ժողովուրդ, որն ընդունել է արևելյան բարքեր: Մինչ այդ, մուսուլմանները յեվրոպացիներից հանկարծակիի գալով, սկսեցին ուշքի գալ և իրենց հերթին սրբազան պատերազմ սկսեցին յեկվորների դեմ: Շիանների մեջ առաջ յեկավ հավատի նախանձախնդիրների միություն, որոնք իսլամի թշնամիների անխնա վոչնչացման յերդում էին տվել: Նրանք կոչվում էին հաշիշյաններ (ասասյաններ) այն հարբեցնող խմիչքի անունով, որով զբաղվում էին կատաղի ձեռնարկներ անելու համար. նրանց անմերձենալի ամրոցները շինված էին Լիբանանի լեռներում, քրիստոնյա իշխանությունների հենց սահմանին մոտ:

Խաչակիրների արշավանքները XII յեվ XIII դարերում: Առաջին արշավանքից հետո տարի հետո, յերբ Միջագետքի թուրքերը վերցրին Յեդեսիան, քրիստոնյաների արևելքի առաջին կայանը, զեղի ծովը շարժվեցին և քրիստոնյա իշխանությունները մեջտեղից իրարից անջատեցին, պապը և քրիստոնյա իշխանությունները մեջտեղից իրարից անջատեցին, պապը Եդեսիայի և Գերմանիայի թագավորները. յերկուսն էլ վերադարձան վճռական հաջողությունների չհասնելով: 40 տարի յել հետո Ասորիքի սուլթան Սալահեդդինը մյացրեց Յեգիպտոսը և յերկու կողմից իր զորքերը շարժեց Յերուսաղեմի դեմ: Սուլթանը Յերուսաղեմի թագավորին գերի վերցրեց և Յերուսաղեմը կրկին անցավ մուսուլմանների ձեռքը (1187 թ.) Դրանից սրբազան քաղաքը կրկին անցավ մուսուլմանների ձեռքը (1187 թ.) Դրանից հետո հավաքվեցին յերրորդ հեռավոր արշավանքի՝ նորից ազատելու Յերուսաղեմը. մասնակցում էին գերմանական Ֆրիդրիխ Բարբարոսա (Շիկամորուս) կայսրը, որը նվաճել էր նորմանների Սիցիլիայի թագավորությունը, նաև Ֆրանսիայի և Անգլիայի թագավորները: Սրանցից առաջինը մեռավ Փոքր Ասիայում, մյուսը՝ Ֆիլիպպ II Ոգոստոս Ասորիքի ափից վերադարձավ, յերրորդը՝ Ռիչարդ Առյուծասիրտը առանց հաջողություն ունենալու Սալահեդդինի դեմ կռիվ էր մղում:

Պապերը խաչակիրների արշավանքների համար մեծաքանակ հարկեր հավաքելու հայտարարություններ էին անում և աշխատում էին Յեվրոպայի խաղաղ թագավորներին գրավել: Գահ բարձրանալիս յերբեմն վորևե թագավոր պատրաստվոր էր հանդիսավորապես խոստանալ խաչակիր արշավանք կազմակերպել, սառնալով պապից սպառնալիք, վոր յեթե խոստումը չկատարե, կբանադրվի: Գերմանական թագավորները յերեք անգամ գնացին Արևելք, Ֆրանսիականները՝ չորս անգամ, անգլիականը՝ մեկ, Հունգարիայի թագավորը՝ մեկ: Սակայն մեծ արշավանքները անհաջող էին անցնում:

Յեվրոպայում տերամաղրությունը ասիճանաբար փոխվում էր: Պապության անհաջողությունները յեւս էին կանդնեցնում գաղութաբնակներին և ռազմասեր ուխտավորներին, իսկ արևելյան հարուստ պետությունների օգուտները խաչակիրներին թեքում էին այլ կողմ: Չորրորդ արշավանքին 1204 թ. խալական և Ֆրանսիական ասպետները վենետիկցիների հետ գրավեցին Կ.-Պոլիսը, կղզպատեցին նրա հարստությունը և տեղական իշխող տոհմին եվ գահընկեց արին: Բյուզանդիայի փոխարեն հիմնվեց Լատինական կայսրություն. Ֆլանդրիայի գրաֆ Բալդուինը ընտրվեց հռոմեական կայսր. նրա հետ մեծաթիվ Սալոնիկում թագավոր յեղավ խալական սենյորը. կղզիները և Եգեյան ծովի ամենալավ ափերը տրվեցին վենետիկցիներին, վորոնք Արևելքում առևտրական կատարյալ գերակշռություն ստացան: Կ.-Պոլսում, վորը յենթարկվում էր պապի հոգևոր իշխանությանը, ընտրվեց լատինական պատրիարք, ծագումով վենետիկցի: Քսանհինգ տարի հետո Պաղեստին ուղևորվեց պապին տված խոստման համաձայն Բարբարոսայի թոռը՝ Ֆրիդրիխ II Գերմանիայի կայսրը և Սիցիլիայի թագավորը: Նրան հաջողվեց առանց արյունհեղության Յերուսաղեմը յեւս գնել Յեգիպտոսի սուլթան Ալքամիլից. բայց թուրքերը շուտով նորից և վերջնապես քրիստոնյաներից խլեցին սուրբ քաղաքը (1244 թ.): Վերջին փորձը, Յերուսաղեմը նվաճելու, արավ Ֆրանսիայի թագավոր Լյուդովիկ IX, վոր կչվում է Սուրբ. 1248 թվին Ֆրանսիական վենված խմբերը շարժվեցին դեպի Յեգիպտոս, բայց մուսուլմանները խաչակիրներին շրջապատեցին Նեղոսի հյուղերի մեջ, Լյուդովիկ թագավորին գերի վերցրին և արշավանքը վերջացավ:

Յերուսաղեմը նորից կորցնելուց հետո քրիստոնյաներին մնաց միայն Ասորիքում ծովափնյա նեղ շերտ Ակկոն մեծ նավահանգստով: XIII դարի վերջին (1291 թ.) այդ յերկրներն էլ կորցրին: Դեռ շատ յերկար, յերկու դարի ընթացքում, շարունակվում էր խաչակիրների արշավանք կազմելու կոչը: Սակայն ռազմական շարժումը դեպի Արևելք վերջացավ: Յեվրոպան անպիտան ուղղություն ուղղվեց, վորը կամ պատերազմներում վոչնչացավ կամ նորից յետ մղվեց: Ոգուտ քաղեցին միայն հարավային Յեվրոպայի քաղաքները, մանավանդ Վենետիկը և Ջենովան: Նրանք մեծ նավատորմիղներ կազմեցին և Միջերկրականում գերիշխանություն ձեռք բերին:

Ասպետական օրդեններ (կարգեր): Խաչակիրների արշավանքներում կազմվեց ասպետների դասակարգ: Առաջ նրանք ցրված էին առանձին սենյորների ծառայություններում. այժմ հեռավոր արշավանքներում և դաժանություններում նրանք սկսեցին ընկերություններ կազմել: Խաչակիր ասպետները մտնում էին վանական միության մեջ, կազմում էին համայնք (or-

ղեկ), հրամայեց իր ետևից գնալ և սկսեց ելևէջներ, կռվելով ժայռերի հետ։ Ոչ ոք չէր կարող նրան հասնել։ Ամենից առաջ նա հասավ ծովի ափին։ Ալիքները ծածկեցին նրան, բայց նա ոչ մի վայրկյան չկորցրեց իր ներկայությունը։ Նա ուղղեց իր ուղևորությունը դեպի Ռոդոս կղզին։ Ռոդոսի կղզին (Ռոդոս) ունի հարուստ պատմություն։ Նրա մասին հին ժամանակներում ասում էին, թե նա ծովի հատակից է դուրս եկել։ Ռոդոսի կղզին հայտնի է իր գեղեցիկ նավահանգստով։ Ռոդոսի նավահանգստի մուտքի մոտ կանգնած էր հսկայական պղնձե արձան, որը ներկայացնում էր արևի աստված Հելիոսին։ Արձանի բարձրությունը հասնում էր 32 մետրի։ Ռոդոսի կղզին հարուստ էր նաև գեղեցիկ կանանցով։ Ռոդոսի կանայք հայտնի էին իրենց գեղեցկությամբ։ Ռոդոսի կանանց մասին հին ժամանակներում ասում էին, թե նրանք ծնվում են ոչ թե ծնողներից, այլ ծովի փրփուրից։ Ռոդոսի կանայք ունեին ոսկե մազեր, որոնք նրանք հարդարում էին ոսկե ժապավեններով։ Ռոդոսի կանայք սիրում էին զարդարվել ոսկով։ Նրանք ոսկե զարդեր էին կրում ոչ միայն ականջներին, ձեռքերին և վզին, այլև ամբողջ մարմնի վրա։ Ռոդոսի կանայք սիրում էին նաև զվարճանալ։ Նրանք սիրում էին պարել, երգել և խաղալ։ Ռոդոսի կանայք սիրում էին նաև ուրախ խնջույքներ կազմակերպել։ Ռոդոսի կանայք սիրում էին նաև ուրախ խնջույքներ կազմակերպել։ Ռոդոսի կանայք սիրում էին նաև ուրախ խնջույքներ կազմակերպել։

Ռոդոսի կանայք սիրում էին նաև ուրախ խնջույքներ կազմակերպել։

մինչև սերբերի (ծառանները)։ Ասպետական պատմվածքների և պոեմաների հիմքը հին հերթանոսական ավանդություններն ու քրիստոնեական առասպելներն են։ Նրանք փոխ են առնում Կարլ Մեծի անձնավորությունը, բայց նկարագրում նրան խաչակիր արշավանքի գլուխ անցած, որը գնում էր Երուսաղեմ։ Ամեն ազգ ուներ իր սիրած պատմություններ շարքը. Գերմանիայում պատմություն էր Նիբելունգների մասին (բուրգունդ ցեղի բանաստեղծական անունն է), որի մեջ հյուսված է Զիգֆրիդ հերոսի վոլբերգական վիճակը. Ֆրանսիայում — յերգ Ռոլանդի և Կարլ Մեծի պատերազմների մասին, նաև Անգլիայից փոխադրված կելտական ավանդություն Արթուր թագավորի և նրա կախարդական կլոր սեղանի ասպետների մասին։

Ամեն տեղ տարածվեց խաչակիր արշավանքների գովաբանած պատմությունը ս. Գրաալի, ճաճանչափայլ թանգագին սկիհի մասին, որի մեջ կար Քրիստոսի արյունը, որին կարող էր տեսնել միայն բարձր առաքինություն ունեցող ասպետը։

Ասպետությունը ամենից առաջ զարգացավ Ֆրանսիայում, որը ամենից շատ խաչակիրներ ուղեց. ասպետական կենցաղը և բանաստեղծությունը հատուկ վայրի հասնում է գերմանական Շտաուֆենների (կամ Հոհենշտաուֆենների) տոհմի կայսրների պալատում։

Շտաուֆենների կայսրությունը։ Շտաուֆենները ունեին շատ բուրգեր. Ֆրանկ թագավորների ազգակից լինելով՝ նրանք հողեր ստացան հարավ-արևմտյան Գերմանիայում և միջին Հռենոսի հոսանքի յերկարությամբ առևտրական կարևոր ճանապարհի վրա։ Այդ սենյորներից մի քանի (1139 — 1254) ընտրվում էին թագավորներ մի ընդհատումով։

Ֆրիդրիխ I Շտաուֆեն թագավորը (1152 — 1190), որին Իտալիայում անվանել էին Բարբարոսա (Երկմորուս), իր իշխանության մասին շատ բարձր գաղափար ուներ. նրա հայացքով կայսրությունը ե ամբողջ աշխարհի վրա իշխանություն. Ենացած բոլոր թագավորները կայսրի վասալներն են, բոլոր հողերը և թագավորություններ նրա լինեն։ Ֆրիդրիխը գտավ որ նշանակեց ուսումնական իրավաբաններ, որոնք Բոլոնիայում ուսումնասիրել էին հռոմեական իրավունքը և նրանք հրովարտակներում և վճիռներում թագավորի մեծության վերաբերող պանազան արտահայտություններ էին մտցնում, որ գտնում էին հռոմեական անտանման միապետների՝ Կոստանդինի, Թեոդոսի և Հուստինիանոսի օրենքներում։ Սովորության համաձայն Ֆրիդրիխը նախ իր կառավարության սկզբին զորքով Իտալիա ուղևորվեց, որ Հռոմում թագադրվի։ Բայց Հռոմը այդ ժամանակ պապի իշխանության տակ չէր։ Հասարակ ժողովուրդը, վաճառականները և արհեստավորները միանալով մանր ասպետների հետ, հարձակումով գրավել էին Կապիտոլիումը և տապալել կոնսուլների կառավարությունը, որոնք հավաքվում էին նշանավոր ընտանիքներից. միաժամանակ պապն էլ արտաքսվեց, և Հռոմը հանրապետություն հռչակվեց։ Ընդհանուր վրդովմունքի ժամանակ մեծ հեղինակություն ձեռք բերեց Արնոլդ Բրեշցի քահանան, որը կրթություն էր ստացել Պարիզում։ Արնոլդը իր կյանքի մեջ խստապահանջ էր և ջերմ համոզված ուսուցանում էր, որ հոգևորականությունը պետք է ապրի միայն տասանորդով և ոչ թե հողեր տիրելով, որովհետև այդ

քրիստոնեության հակառակ էր. պապերը և եպիսկոպոսները աշխարհիկ իշխանություն չպետք է ունենան, որը պատկանում է բացառապես թագավորներին և հանրապետություններին։

Յերբ Բարբարոսան Հռոմին մոտեցավ, նրան թագն առաջարկեցին միաժամանակ և ժողովուրդը և պապը. վերջինս հենց նոր Հռոմին անձնատուր էր կարդացել։ Թագավորը ժողովրդի իրավունքը չճանաչեց և թագն ընդունեց պապից, պայմանով որ Արնոլդին պապին հանձնեն։ Թագադրության արարողության ժամանակ հռոմեացիները վնաս վերցրին և վողոցներում կատաղի կռիվ յեղավ։ Արնոլդին բռնեցին, և կայսրը քարոզչին մահվան դատապարտեց։ Բայց Ֆրիդրիխը չկարողացավ պապի հետ էլ հաշվվել։ Բեղանսոնում (Արևլատում) գումարված ռայխստագին, այսինքն թագավորական վասալների ժողովին, գնաց պապի լեգատը, Ռոլանդ կարդինալը. նա համարձակվեց Ֆրիդրիխին հիշեցնել, որ «կայսրը իշխանություն ստացել է վոչ այլ վոքից, բայց յեթե պապից»։ Այս խոսքերին գերմանական սենյորներից մեկը մերկացրած սրով հարձակվեց պրելատի վրա, և կայսրը ինքը հաղիվ դադարեցրեց արյունհեղությունը։

Լանգոբարդական բաղաքները կռվում են Բարբարոսայի դեմ։ Ֆրիդրիխը վորոշեց Իտալիա կատարած նոր արշավանքով իր իրավունքները հաստատել կատարյալ լրությամբ. նա հատկապես ցանկանում էր ստորացնել Լոմբարդիայի հարուստ արդյունաբերական քաղաքները։ Յերբ Միլանը հրաժարվեց ընդունել ուղարկված ատիճանավորներին, Ֆրիդրիխը շրջապատեց քաղաքը։ Յերկու տարուց ավելի Միլանը պաշտպանվում էր կայսրի դրքի դեմ։ Վերջապես սովից հյուծված ընակիչները անձնատուր յեղան և արքեպիսկոպոսի գլխավորությամբ գնացին բանակը բակոտն, գլխներին փոշի ցանելով, վզներին պարան ձգած։ Կայսրը հրամայից բոլորին էլ քաղաքից գաղթել. քաղաքն այրեցին չորս ծայրից, բոլոր պարիսպները, աշտարակները և նույնիսկ յեկեղեցին մինչև հիմքը քանդեցին։ Միլանի տերը ուղում էին հավիտյանս ատյի դարձնել և իրը նշան այդ բանի խոփով ակոս քաշեցին։ Միլանի նախկին քաղաքացիներին դյուղացիներ դարձրին, չորս դյուղերի վրա բաժանեցին և յենթարկեցին դյուղական ծանր կոռ ու բեռդյառի։

Կայսրի հաղթանակը սպառնում էր նաև պապին, որովհետև Ֆրիդրիխը ցանկանում էր իշխել իտալական եպիսկոպոսների և հռոմեական նահանգի վրա։ Այդ ժամանակ պապ էր ընտրվել Ալեքսանդր III անունով Ռոլանդ կարդինալը, նա, որը Բեղանսոնում իր պատասխանով կայսրի առաջ փոթորիկ էր բարձրացրել։ Նոր պապը հրապարակ յեկավ իրը Իտալիայի անկախության պաշտպան. նա բանադրեց կայսրին, նրա դեմ հանեց Նորմանների Սիցիլիական թագավորությունը և Վենետիկը և ոտնեց կազմելու 15 քաղաքների լոմբարդական միությունը, որոնց մեջ յերևացին միլանցիները։ Այս անգամ Ֆրիդրիխը չկարողացավ մեծ ղրք բերել Գերմանիայից. նրա ամենատաժեղ վասալը, բավարական հերցոգը Վելֆների տոհմից, Հենրիխ Առյուծը, նրան ոգնել մերժից և Ալպերի լեռնանցքում նրան լքեց։ Լոմբարդիայի քաղաքային յերկրապահ զորքը կայսրի վրա հարձակվեց Լենյանոյի մոտ, Միլանից վոչ հեռու. կայսրը ձիուց վայր գլորվեց և հաղիվ ազատվեց, պնվորներն էլ ցրվեցին։ Բարբարոսան պետք է գիջեր պապին և քաղաքնե-

ըին։ Վենետիկում համագումար հրավիրվեց, ուր քաղաքները պահանջեցին ապահովություն՝ «իրենց ազատության և Իտալիայի պատվի»։ Հպարտ կայսրը Վենետիկում ս. Մարկոսի տաճարում ընկավ պապի ոտքերը. յեկեղեցուց հեռանալու ժամանակ նա պապի ձիու սանձդակը բռնեց, ինքն էլ գնում էր վոտքով։ Խորհրդակցության ժամանակ պապը նստած էր գահի վրա, մի կողմն ունենալով կայսրին, մյուս կողմը՝ Սիցիլիայի թագավորին։ Լոմբարդական քաղաքները նորից անկախություն ստացան, նաև ընտրովի կոնսուլներ, իրենց դատարանը, իրավունք միություններ կազմելու։

Հյուսիսային Իտալիան գրեթե բոլորովին դուրս յեկավ Բարբարոսսայի իշխանությունից։ Սակայն կայսրը, անխոնջ մի քաղաքագետ, ուրիշ տեղ իրեն վարձատրեց։ Նա վորդուն ամուսնացրեց Սիցիլիայի թագավորության ժառանգուհու հետ, վորը մինչև այդ պապի գլխավոր հենարանն էր։ Այսպիսով նա ձեռք բերեց իր տոհմի համար կարևոր և հարուստ յերկիր հարավային ծայրերկրում՝ ծովի մոտ, վորն այդ ժամանակ արևելքի հետ կենդանի հարաբերություն ուներ։ Այս բանը նրան մասնակից դարձրեց խաչակրյալների յերրորդ արշավանքին, ուր և նա մեռավ (76 յեր.)։

Պապության հզորության բարձրության վրա։ *Սիցիլիական թագավորությունը ձեռք բերելուց հետո Շտաուֆենների ուժը ավելի մեծացավ. հռոմեական յեկեղեցու հողերը կարծես թագավորական հողերի ճնշման տակ լինեին։ Այդ պատճառով Ինոկենտիոս III պապը (1198—1216) սկսեց Գերմանիայում պաշտպանել Շտաուֆենների թշնամի Վելֆերին։ Բարբարոսսայի ժամանակ Վելֆերի գլխավորն էր Հենրիխ Առյուծը։ Դավաճանության համար Ֆրիդրիխը նրան զրկեց Բավարիայից. բայց նա պահեց մյուս հերցոգությունը՝ Սաքսոնիան։ Հենրիխ Առյուծի վորդի Ոտտո IV պապի վրճռով ստացավ կայսերական թագը ընդդեմ Բարբարոսսայի փոքր վորդու. Շտաուֆեններին մնացին Գերմանիայում յեղած իշխանական կալվածները և Սիցիլիական թագավորությունը։*

Սենյորները, հոգևորականությունը և քաղաքները Գերմանիայում և Իտալիայում բաժանվեցին յերկու կուսակցության։ Պապի կողմնակիցները կոչվում եյին գվելֆեր (իտալական արտասանությամբ, փոխանակ վելֆերի). հակառակորդները՝ գիբելլիններ։ Իտալիայում քաղաքների մեծ մասն անցավ գվելֆերի կողմը։ Քաղաքների բնակիչներն էլ բաժանված եյին. քաղաքի ասպետները և վաճառականական հին ընտանիքները պատկանում եյին դիբելլիններին. նոր վաճառականությունը և արհեստավորները կազմում եյին գվելֆերի կուսակցությունը։

Ինոկենտիոս III պապի ժամանակ պապական իշխանությունը հասավ իր ամենամեծ հզորության։ Գրիգոր VII-ից սկսած բոլոր յերկրների հոգևորականությունն էլ կախված էր պապի վճիռներից և Հռոմ էր ուղարկում իր բոլոր վեճերն ու գանգատները։ Այդ բազմաթիվ դիմումները պապի գերագույն դատին (ապելյացիաները) հասցրին այն տեղը, վոր պապի պալատին կից (կուրիա) կազմվեց դատաստանական մեծ պալատ ահագին թվով ծառայողներով։ Դիմումները, գանգատները, ազատ տեղերում նշանակվելու համար աված խնդիրների համար Հռոմում վճարում եյին մեծ գումարներ, այդ ամենը ծառայում էր պապի գանձարանը և պապական ասպիճանավորներին հարստացնելուն։ Ինոկենտիոս III-ի ժամանակ պապի պալատը սկսեց ստանալ նոր յերևույթ խաչակիրների տուրմ անվան տակ։

Պապերը կոչերում, համարելով իրենց արշավանքների դեկավարներ, ասում եյին, վոր մուսուլմանների դեմ գնացող զորքի պահպանությունը պետք է հոգան մնացած բոլոր քրիստոնյաները։ Նախ Ինոկենտիոս III-ն սկսեց խաչակրության հարկ հավաքել սրբազան պատերազմի համար, վորը ծագել եր արդեն Յեվրոպայի իր մեջ. այդպիսին եր հարավային Ֆրանսիայի ալբիգոյան աղանդավորների դեմ յեղած արեավանքը։ Իր պահանջները արդարացնելու համար պապը հայտարարեց, վոր բոլոր յեկեղեցիները և բարեպատակ հաստատությունները հպատակվում են իրեն, իրըև թագավորի, և ինքը կարող է կարգադրություններ անել նրանց յեկամուտների և հարկատուությունների վրա։ Ժողովներում այլևս չկար յեպիսկոպոսների նախկին հավասարությունը։ Պապը նրանց հրավիրում եր Հռոմի պապական պալատը՝ Լատերան։ Լատերանի 1215 թվի ժողովին կային 453 յեպիսկոպոսներ, քայց սրանք միայն լսեցին և խոնարհարար հաստատեցին պապի վճիռները, կարծես պալատականները լինեյին, վորոնց հավաքել եյին միայն նրա համար, վոր անսահման իշխանության տեր թագավորի շրջապատին շուք տային։ Պապը իր սիրողոն եյ բարձրացրեց։ Մինչև այդ Հռոմի յեպիսկոպոսները համարվում եյին ս. Պետրոսի հաջորդներ և փոխանորդներ։ Ինոկենտիոս III հայտարարեց, վոր պապը փոխանորդ է «վոչ թե վորևե առաքյալի կամ մարդու, այլ ինքն Քրիստոսի»։ Միքանի յերկրներ անմիջապես պապից կախումն ունեցան։ Այդպիսին եր խաչակիրների Բյուզանդիայի տեղ հիմնած Լատինական կայսրությունը։ Անգլիայի Հովհան Անհող թագավորը թույլ տալով Ինոկենտիոս III-ին խառնվել իր պետության գործերում, իրեն պապի վասսալ ճանաչեց։

Վելֆերի Ոտտո IV կայսրը պապի աջակցությունն ստանում եր, սակայն այնպես վարվեց, ինչպես և Շտաուֆենները, այն է՝ ցանկացավ իշխող լինել Հռոմում և իտալական քաղաքներում։ Այն ժամանակ Ինոկենտիոս III իր սեփական խոսքի համաձայն «զղջաց, վոր մարդ դարձրեց»։ Պապի խնամակալության տակ եր գտնվում Բարբարոսսայի թոռը, Սիցիլիայի թագավոր Ֆրիդրիխ Շտաուֆենը։ Ինոկենտիոսը Ոտտո IV-ին յեկեղեցուց հեռացրեց և որոշեց իր սանիկի արշավանքը դեպի Գերմանիա. մեծ պապի մահվանից առաջ յերիտասարդ Շտաուֆենը յետ գրավեց իր համար գերմանական թագը։

Պապության յեվ կայսրության վերջին կռիվը։ *Ֆրիդրիխ II կայսրի (1216 — 1250) յերկրները կազմված եյին յերկու, իրար բոլորովին վոչ նման մասերից՝ խստորեն կառավարվող Սիցիլիական թագավորությունից, ուր նորմաններից բյուզանդական կարգեր եյին հաստատել, և ֆեոդալական, իշխանների մեջ բաժան-բաժան յեղած Գերմանիայից։ Առաջինում Ֆրիդրիխը ամբողջ պետության ժառանգական լիակատար իշխողն եր, յերկրորդում — ընտրովի թագավոր, վոր լիակատար տեր եր Շվաբիայի մի փոքր ժառանգական հողի։*

Սիցիլիական թագավորության մեջ հայտարարված եր թագավորի անսահման իշխանություն. ով թագավորի դեմ խոսվություն կբարձրացնեյ, նա միևնույն է թե ապստամբում է յերկինքի թագավորության դեմ։ Արգելված եր քննել թագավորի վորոշումները. սրբապղծություն եր այդ մասին խոսելը, թե թագավորն իր ծառաներին արժանապես և նշանակում այս ու

տերերի և գյուղական բանվորների միջև խիստ ընդհարում տեղի ունեցավ։ Ամբողջ Յեվրոպայում սարսափելի ժանտախտ տարածվեց, որին ժամանակակիցներն անվանում էին Սև մահ։ Մոտ մի տարի այդ ժանտախտը սուր ձևով մնաց Անգլիայում և մարդկանց ահագին բազմություն գոհ տարավ։ Ընդարձակ հողեր ամայացան, բանվորների թիվը շատ պակասեց։ Այժմ բանվորները համաձայնում էին կալվածատերերի մոտ գնալ բարձր գնով, առաջվանից առնվազն յերկու անգամ թանգ։ Շատ կալվածատերեր մնացին բոլորովին առանց բանվորների։

Պարլամենտ էին տեղում կալվածատերերի բողոքները բանվորների համայականությունների դեմ։ Յերկու պալատներում էլ գյուղացիներից ամենևին ներկայացուցիչներ չկային։ Ընդհակառակը, սենյորները և ասպետները պարլամենտում հավաքվելով, կարող էին համաձայնության գալ, վորոնք պարլամենտում հավաքվելով, կարող էին համաձայնության գալ, վորոնք ընդհանուր միջոցներ ձեռք առնեն բանվորների դեմ։ Սրա հետևանքով Եդվարդ III թագավորը պարլամենտի ցանկության համաձայն հրատարակեց խիստ կանոնադրություն բանվորների մասին (1349)։ Կանոնադրությունը խստորեն արգելում էր բանվորներին հրաժարվել առաջարկած աշխատանքներից և վորոշում էր մի վարձատին, վորը հավասար էր մինչև ժանտախտը վճարվող վարձատրին։ Կալվածատերերը իրավունք ստացան վոստիկանության ոգնությամբ աշխատանքի տանել բռնությամբ այն բոլոր մարդկանց, վորոնք աշխատանք չունեյին արհեստների կամ վաճառականության մեջ և չունեյին հող կամ սեփական գործ։ Հետո կանոնադրության մեջ ավելացրին նոր պատիժներ, անվույթ աշխատավորներին և վախտականներին վերաբերող։ Փախտականին պարտքի բանտն էին նստեցնում և, բացի դրանից, նրա ճակատին շիկացած յերկաթով նշան էին դնում։

Գյուղացիական ապստամբությունը։ Թվում էր, թե կալվածատերերը ուզում են կրկին ճորտացնել բանվորներին։ Գյուղացիների մեջ մեծ դժգոհություն էր առաջ գալիս։ Ով քիչ հող ուներ կամ ամենևին չուներ, նա ագահությամբ լսում էր այն խոսքերը, թե հողը պետք է բոլոր մարդկանց պատկանի, վորովհետև բոլոր մարդիկ իրենց ծննդյով հավասար են։

Սև մահից 40 տարի հետո, Եդվարդ III-ի թոռ Ռիչարդ II-ի ժամանակ, տեղի ունեցավ ժողովրդական մեծ ապստամբություն։ Սա բռնկեց այն ժամանակ, յերբ վիլլանների ունեցած բեռների վրա ավելացավ նրանց ուժից վեր մի հարկ—գլխահարկը, վորը նշանակվեց Ֆրանսիայի դեմ ունեցած կռվի ծախքերը ծածկելու համար։ 1381 թվի ամառը հարավ-արևելյան Անգլիայում սկսեցին հավաքվել ժողովրդի ահագին թվով զինված խմբեր. հարձակման էին գնում հավաքներին կոտորեցին և սրանց գլուխները ցցերի վրա դրին. թագավորի ուղարկած դատավորները՝ գործը քննելու համար, սոխվում էին փախչել։ Ապստամբները գրություններ էին ուղարկում ուրիշ շրջանների բնակիչներին, առաջարկելով միասին «ձեռք բերել ազատություն և թագավորության վատ սովորությունները փոխել»։

Ուստ Տայլերի առաջնորդությամբ խռովարարները մոտեցան Լոնդոնին։ Մայրաքաղաքից վոչ հեռու, մի բարձր տեղից նրանց սկսեց քարոզ խոսել Ջոն Բոլլ քահանան, վորին ժողովուրդը նոր էր ազատել բանտից։ Բոլլն ասում էր, վոր բոլոր մարդիկ հավասար էին, բայց անորեն մարդիկ սկսեցին ճնշել իրենց մտերիմներին, և այսպես առաջ յեկավ ճորտությունը, վորը

ատածու կամքին հակառակ է։ Հասել է ժամը բազմադարյան լուծը թոթափելու։ Պետք է յերկրի յերեսից ջնջել նշանավոր տերերին, դատավորներին և բոլոր նրանց, ով հատարակ մարդուն կարող է ճնշատակար լինել։ Ապստամբ գյուղացիները ղրուշակներով մտան Լոնդոն, և մայրաքաղաքի շատ բնակիչներ միացան նրանց։ Տուներ ամրոցում բռնեցին թագավորի խորհրդականներին և կոտորեցին, սրանց մեջ նաև Անգլիայի առաջին արքեպիսկոպոսին։ Թագավորը յերկյուղի տակ խոստացավ ապստամբների բոլոր պահանջները կատարել, վոչնչացնել կախումն ունենալու և ճորտության բոլոր տեսակները, իր վատ խորհրդականներին հեռացնել։ Սրանից հետո գյուղացիների մեծ մասը ցրվեց տները։ Մինչ այդ թագավորը սկսեց ամեն կողմից հավաքել ասպետներին, վոր խռովությունը ճնշե. Ռիչարդ II ջաղաքի դարպասների մոտ տեսակցություն նշանակեց ապստամբների առաջնորդներին, բայց այստեղ Ուստ Տայլերը դավաճանությամբ սպանվեց թագավորի ներկայությամբ Լոնդոնի քաղաքագլխի ձեռքով։ Ասպետները ոգնեցին թագավորին ցրելու և կոտորելու զինված խռովարարներին։ Թագավորը իր բոլոր խոստումները զրժեց. զրաֆությունները ուղարկվեցին դատավորներ ձիավորների խմբերի ուղեկցությամբ, հրաման ունենալով ամեն տեղ պատռել ժողովրդին տված հրովարտակները։

Ապստամբությունը նպատակին չհասավ. սակայն կալվածատերերին էլ չհաջողվեց, չնայելով իրենց վճռականության, գյուղացիներին նախկին ըրությանը վերադարձնել։ XV դարում գյուղացիների հին պարտավորությունները գրեթե ամեն տեղ էլ սովորությունից յելան։ Վարձու բանվորներին և կապալառուներին կալվածատերերը չէին կարող իրենց ճորտերը դարձնել։

Վարդերի կռիվը։ Վորքան Անգլիան ավելի մեծ ոգուտ էր ստանում արտասահմանում բուրդ վաճառելուց, այնքան ավելի կալվածատերերը ըստ կըսեցին վոչխարաբուծությամբ պարապել։ Հարուստ կալվածատերերը չորս կողմում հողաբաժիններ էին վերցնում և իրենց կալվածը շրջափակում։ Զգալոր ասպետները անտեսության այդ փոփոխությանը չէին կարողանում հետևել, ուստի իրենց հողերը լքում էին, կողմնակի զբաղմունքներ էին փնտռում՝ վարձու ծառայություն պատերազմական ձեռնարկություններում, թագավորի կամ խոշոր սենյորների կալվածների կառավարության մեջ։ Լորդերն ունեցան զբաղ ասպետներից կազմված մեծ հետևորդներ «նամազգեստով մարդկանց», վորոնց նրանք կերակրում էին իրենց ամրոցներում և հագցնում իրենց գինանշի գույնի զգեստներ։ XV դարի առաջին կեսին այդ զբաղմունք չունեցող բազմաթիվ մարդկանց զբաղցրին անգլիական թագավորների Ֆրանսիայի դեմ սկսած նոր արշավանքներով։

Այս արշավանքները (1415 թ.) վերսկսեց Հենրիխ V թագավորը։ Սրա հայրը՝ Լանկաստերի հերցոգը Պլանտագենետներից էր, կողմնակի գծով հաշված, գահազուրկ արավ Ռիչարդ II-ին և պարլամենտի համաձայնությամբ թագն ստացավ (Հենրիխ IV անունով)։ Հենրիխ V կարճ ժամանակում վանձեց Ֆրանսիայի կեսը Պարիզով միասին։ Լանկաստերյան տոհմի յերրորդ անընդունակ Հենրիխ VI թագավորի ժամանակ այդ բոլոր յերկրները կորան, անգլիացիներին մայր ցամաքից դուրս հանեցին։ Այժմ գինվորական մարդկանց խմբերը ազգամիջյան կռիվ սկսեցին։

Թագի պահանջով դուրս յեկան Յորկի հերցոգները (գինանշանում սպի-

տակ վարդ), վորոնք Լանկաստերների նման (կարմիր վարդ) Եդվարդ III-ի սերնդից էին։ Աղնվականությունը բաժանվեց Յորկերի և Լանկաստերների մեջ։ Մեծ սենյորները, շրջապատված հետևորդներով, ամրացրած բերդեր ունենալով, կարդապրություններ էին անում յերկրում. դատարաններում նրանք յերդվյալներ նշանակեցին, պարլամենտ ուղարկում էին իրենց մարդկանց, շրջաններում ատիճանավորները նրանցից կախումն ունեին։ Կարծես վերսկսվել էին ֆեոդալական հին ժամանակները։ Սենյորներից մեկը՝ Ուորվիկը, ուներ 63 ամրոց և նրանցում միքանի հազար մարդ եր կերակրում. Ուորվիկը կարգապրություններ եր անում թագի վերաբերմամբ և հերկրում. Ուորվիկը «թագավորներ եր դարձնում» այս և այն ոտմից։ 30 տարվա ընթացքում կռիվը փոփոխական վիճակ եր ապրում։ Սկզբում հաղթեցին Յորկերը, հետո նրանք էլ կորցրին թագը։ Պատերազմում և գլխատման տեղերում կոծանվեցին յերկու ոտմի բոլոր թագավորները և դահաժառանգները, ազնվական ոտմների ներկայացուցիչները փոխադարձաբար վոչնչացրին իրար։ 1485 թ. թագը անցավ Լանկաստերների հետևոր ազգական Հենրիխ VII Թյուդորին։

12. ՖՐԱՆՍԻԱ ՅԵՎ ՍՊԱՆԻԱ

Ֆրանսիան XI դարում մի յերրորդով փոքր եր ժամանակակից Ֆրանսիայից։ Արևելքում նրա սահմանը հասնում եր միայն մինչև Մաաս և մինչև Ռոնա, իսկ նրա ցամաքային սահմանները կազմում էին գրեթե ուղիղ գիծ Շելդայի գետաբերանից մինչև Ռոնայի գետաբերանը. նրա այժմյան արևելյան հանդանները, լեզվով ռոմանական, գերմանական կայսրության կազմի մեջ էին մտնում (Հյուսիսում) և բուրգունդական թագավորության մեջ (հարավում)։ Բայց այդ չափով էլ Ֆրանսիան մի ամբողջություն չեր կազմում։ Թագավորական իշխանությունը թույլ և աննշան, միայն անուն եր յերկիրը միացնում։ Իրապես Ֆրանսիական թագավորը Ֆրանսիայի խոշոր սենյորներից միայն մեկն եր։ Մյուս սենյորները, վոր նրա վասալներն էին համարվում, նրանից անկախ էին. Տուլուզի գրաֆը հարավում և Նորմանդիայի հերցոգը (մանավանդ յերբ 1066 թվին անգլիական թագավոր դարձավ) Ֆրանսիական թագավորից՝ իրենց սենյորից, ավելի ուժեղ էին։ Հարավը բոլորովին կտրվել եր. այստեղ խոսում էին առանձին ռոմանական լեզվով (պրովանսի կամ լանգ-դ-ոկե). XII դարում այդ յերկիրն ընդունեց ալբիգոյությունը և բաժանվեց կաթոլիկ յեկեղեցուց։

Կապետինգների ուժեղացումը։ X դարի վերջին Ֆրանսիայում վերջին Կարոլինգին փոխարինեց մի թագավոր, վորին ընտրել էին սենյորները՝ գրաֆ Հյուգ Կապետը։ Սրա հաջորդների՝ Կապետինգյան թագավորների (987—1328) սեփական կալվածները գտնվում էին Սենայի (Պարիզի հետ) և Լուարի միջին հոսանքներում. (Որլեան քաղաքի հետ). այդ հողերը կտրտված էին ուրիշների կալվածներով, իսկ ներսում բացի այդ ճանապարհը փակում էին թագավորին անհնազանդ վասալների ամրոցները։ Թագավորները XI դարում մանր նվաճումներ և գնումներ էին անում իրենց ժառանգական հողի համար, իրենց ժառանգական հողերի վասալների հետ թշնամանում էին և նրանցից ամրոցները խլում։

XII դարում ֆրանսիական ժողովուրդը կենդանի գործունեություն ցույց տվեց։ Բազմաթիվ ասպետներ գնում էին խաչակիր արշավանքների հետ. հետո՝ դեպի արևելք տարածվեցին ֆրանսիական գաղութները և քրանսերենը։ Խաչակիր արշավանքները ուժեղացրին հարավային քաղաքների առևտուրը, վորոնք գտնվում էին Միջերկրականի ափին։ Միաժամանակ Ֆրանսիայի հյուսիսում սկսեցին բարձրանալ կոմմունանները հարուստ վաճառականությամբ և անկախ արհեստով։ Պարիզի համալսարանում առաջ գնացին Յեվրոպայի ամենանշանավոր գիտնականները։ Հյուսիսային Ֆրանսիայի քաղաքներում ծագեց նոր բարդ և բարձր արվեստ՝ գոթականը։

Այդ շրջանի թագավորները ժողովրդի մտավոր բարձրացմանը ոտար էին. դրանք պատերազմասերներ էին և գանձ հավաքողներ։ Սակայն նրանք Ֆրանսիայի բոլոր շահավետ դրություններից հմտորեն օգտվում էին։ Նրանք պաշտպանում էին կոմմունանների ազատամբությունը սենյորների և յեպիսկոպոսների դեմ։ Յերբ խաչակիր կռվողների շարժումը դեպի արևելյան կանդ առավ, ֆրանսիական թագավորը զրազմունք չունեցող զինվորականն ուժերին իր տրամադրության տակ առավ. նա այժմ նրանց կարող եր շարժել Նորմանդիան զրավելու, վոր իր համար ճանապարհ բանա դեպի ծովը և դեպի հարավ ձեռք բերելու. Միջերկրականի հարուստ յերկիրը իր կենդանի առևտրով։

Ֆիլիպպ II Ավգուստոս թագավորը (1180—1223) հարձակվեց Պլանտագենետների մայր ցամաքում ունեցած կալվածների վրա, օգտվելով Հենրիխ II-ի վորդիների թուլությունից։ Նա Հովհան Անհողից խլեց Նորմանդիան և իր նվաճումը պաշտպանեց Բուվինայի մոտ յեղած մեծ կռվում անգլիացիների և սրանց դաշնակիցների դեմ՝ գերմանական Ոտտո IV կայսրի և Ֆլանդրիայի գրաֆի, վորը Ֆլամանդական հարուստ քաղաքների յերկրամասն (Փիլիցիա) եր բերել։ Ֆիլիպպ II-ը իր հերթին Ֆրանսիական կոմպոզիցիան եր բերել։ Ֆիլիպպ II-ը իր հերթին Ֆրանսիական կոմմունանների յերկրապահներին հավաքեց և պատերազմի տարավ բազմաթիվ վարձկան զինվորներով։ Նա այժմ յեկք ուներ՝ Սենա գետով, դեպի ծովը։ Միքիչ ուշ հյուսիսային Ֆրանսիային միացվեցին հարավի հարուստ և բնակված շրջանները՝ Լանգդոկը, վոր հյուսիսային Ֆրանսիական ասպետները հերետիկոսների դեմ կազմակերպած արշավանքին զրավել էին։ Խաչակիրների առաջնորդները յերկիրը ավերել էին, շատ ժողովուրդ կոտորել, զինվորներին գրաված հողերից լեներ ավել, բայց չկարողացան իշխանությունը պահել և նվաճման իրենց բոլոր իրավունքները հանձնեցին Ֆրանսիական թագավորին։

Թագավորի ժառանգական հողն այժմ 4—5 անգամ մեծ եր, քան Ֆրանսիայի վորևե ուրիշ խոշոր սենյորինը, և սենյորների վերաբերմունքը դեպի թագավորը փոխվեց։ Կապետինգները իրենց ժառանգական հողերի կառավարությունը այլ կերպ կազմեցին, քան ֆեոդալական ժամանակներում կային։ Նրանք բարոններին բենեֆիցիաներ չեին բաժանում և պաշտոնները չեին թողնում նրանց համար իբր ժառանգական իշխանություն, այլ նշանակում էին բայիներ (փոխարքաներ) և պրեվո (ավագ) շրջաններում և գավառակներում. թագավորը սրանց հաճախ եր փոխում, վոր իրենից կախման վիճակի մեջ պահի։

Թագավորական դատարանը Լյուդովիկ IX-ի ժամանակ։ Ֆիլիպպ II-ի

Թոո. Լյուդովիկ IX Սուրբը (1226—1270) իր ժամանակակիցների մեջ աչքի էր ընկնում իր ջերմեռանդությամբ դեպի հավատը։ Դեպի խաչակիրների արշավանքներն ունեցած ընդհանուր անտարբերության ժամանակ նա պատերի կոչերին ականջ արձագանգ ավեց և ջերմորդ արշավանքին գլուխը ցած դրեց։ Նա ամեն որ ջերմու պատարագ էր լսում սկիզբ թագավորներին ինքն էր տանում, խեղճերի վոտքերն էր լվանում և հեզությամբ լսում էր իր մեղքերի համար արած խրատները։ Լյուդովիկն իր հատուկ հովանավորության տակ առավ դոմինիկյաններին—ինկվիզիտորներին և ընդհանրապես մուրացիկ վանականներին. դրանք նրա խոստովանահայրերն էին և վերաբննիչները, վորոնց նա ուղարկում էր վարչությունները վերստուգելու։

Թագավորը մի կարգ մարդկանց էլ իրեն մոտեցրեց, այն է լեգիստ ներից, այսինքն իրավունքն իմացողների, վորոնք համալսարանում սովորել էին. դրանք մասամբ հոգևորականներ էին, մասամբ մանր ասպետներ, ամեն բանով թագավորին պատական և նրա շահերը ուժեղ պաշտպանողներ։ Լյուդովիկ IX նրանցով լցնում էր պատրամենտը. Ֆրանսիայում այդպես էին անվանում թագավորական տան դատաստանական պատրամենտը. (մինչդեռ Անգլիայում այդ անունը գործ էին ածում վասալների պալատում կազմած ընդհանուր համագումարի համար)։

Լյուդովիկ IX սենյորների դատարանին խառնվում էր այն նպատակով, վոր վերջ դնի նրա ձևին, այն է՝ վեճերը և գանգատները մենամարտությամբ վճռելուն (40 յերես)։ Միանգամ թագավորը իր դատին յենթարկից մի սենյորի, վորը ժամվան պատիժ էր տվել յերկար ուսանողի նրա համար, վոր սրանք իր անտառում վորս էին արել։ Մյուս սենյորները, վորոնք թագավորական դատարանում ներկա էին, պահանջեցին, վոր սովորության համաձայն մեղադրվողին թույլ տրվեր պաշտպանվել մենամարտությամբ։ Թագավորը մերժեց այն հիմքով, վոր «աղքատ մարդկանց կամ յեկեղեցիների գործերում կամ նրանց, վորոնք լուճահարության են առաջ բերում, մենամարտություն չպետք է լինի»։ Ջայրացած սենյորները հեռացան, և թագավորը առանց նրանց վճիռ դրեց։ Լյուդովիկ IX իր ժառանգական հողերի սահմաններում արգելեց դանգատավորների մեջ դատաստանական կռիվները, ասպետների միջև յեղող մանավոր կռիվներն արգելեց։ Մյուս սենյորների յերկրներում վիճողները պետք է պահեին ղինադադարի 40 որվա ժամկետը, վորի ընթացքում հաշտություն հայտնելուց մինչև կռիվը սկսելը, վոր հնարավորություն տրվի դատարանին խառնվել այդ գործին։ Սենյորի վճռից դժգոհը կարող էր բողոքել՝ ապելյացիա տալ գերագույն սենյորին՝ թագավորին։ Լյուդովիկը ինքն էր ընդունում գանգատներ ամեն կոչումի մարդկանցից և շատ գործեր քննում էր Պարիզի իր պալատի դարպասի մոտ կամ Վենսենյան պուրակի կաղնու տակ։

Ֆիլիպ IV-ի քաղաքականությունը պապի հետ։ Ֆրանսիական թագավորությունը նոր ուժի հասավ Ֆիլիպ IV Գեղեցիկի ժամանակ (1285—1314)։ Այս թագավորը նվաճեց յերկու կարևոր շրջան արևելքում և հյուսիսում՝ Շամպայնը, ուր խաչակրաց արշավանքներից սկսած տեղի էին ունենում համաշխարհային մեծ տոնավաճառներ, և հարուստ բնակչություն ունեցող Ֆլանդրիան՝ Եվրոպայի բոլոր գործվածքների արտադրության կենտրոնը (տեսնել 93 յերեսի քարտեզը)։ Ասում են, Ֆրանսիական թագուհին Բրյուգեին այցելած ժամանակ զարմացել եր քաղաքացու հինների ճոխ հագուստների վրա և նկատել. «Այստեղ 600 թագուհի կա»։ Գենտ, Բրյուգե և այլ քաղաքներում կառավարում էին խոշոր մահուդ արտադրողները, այսինքն վաճառականները, վորոնք մանր վարպետներին բամժանում էին նյութ և ներանցից վերցնում էին պատրաստի ապրանք մեծաքանակ վաճառքի համար։ Սկզբում Ֆլամանդական ջուլհակների հետևվակ մելիցիան ջարդեց Ֆիլիպ IV-ի ձիավոր ասպետներին։ Դրա փոխարեն թագավորի վարձած ջենովական նավատորմը Շելդայի գետաբերանի մոտ փշուր-փշուր արեց Ֆլամանդական նավերը։

Ֆլանդրիայի կռվի համար թագավորին պետք էին դրամական խոշոր միջոցներ։ Բայց գանձարանը կանոնավոր մեծ յեկամուտներ չուներ։ Ֆիլիպ IV վերջից յեկեղեցական կալվածներից հարկ հավաքել, վորոնք մինչև այդ վճարում էին միայն Հռոմին։ Բոնիֆացիոս VIII պապը հատուկ բուլլայով (գրություն) հայտարարեց, վոր առանց իր համաձայնության չի կարելի հոգևորականությանը ստիպել վճարներ մտցնելու. պատրության ոգին։ Պապը նոր ելվերջացրել Հռոմում իր սահմանած հոբելյանը, այսինքն դարի տոնը (1300), վորը, վորոշվել եր, ամեն 100 տարի հետո կատարել։ Տոնին ուխտավորների ամբոխի մեջ, վոր հավաքվել եր ամեն յերկրից, պապը յերևաց մեծ շքով, հագած կայսերական իշխանության նշանները. նրա առջից մեծ սուր, և նա իրեն կայսր եր հայտարարում։ Ֆրանսիական թագավորին նա հայտնեց. «Աստված մեզ վրա գնելով առաքելական ծառայության բեռը, մեզ բարձրացրեց թագավորներից վեր, վոր ավերենք, վոչնչացնենք, ցրվենք, շինենք և տնկենք հանուն նրա»։

Այս գրությանը իրը պատասխան թագավորը հանգես բերեց իր իշխանության պաշտպանողներին։ Նա դրդեց իր լեգիստներին գրելու մի քանի հնդինակություններ և դրանցով խիստ հարձակվել պապի վոտնձգությունների դեմ. սրանց հնդինակները հատատում էին, վոր յերկրի վրա թագավորից վեր վոչինչ չկա, և վոր թագավորի կամքը հավասար է ոբենի։ Յերկրում հնազան գտնելու համար Ֆիլիպ IV Պարիզում 1302թ. հրավիրեց մեծ ժողով, բարձր հոգևորականներից, սենյորներից, բարոններից և հյուսիսի ու հարավի մի քանի համայնքների քաղաքային ավագներից։ Բարոնները և քաղաքացիները բարձրաձայն հայտնեցին, վոր լիովին միանում են թագավորին. հոգևորականությունը մնաց շվարած, տատանվելով թագավորի և պապի կամքի միջև։

Թագավորական լեգիստները պապի բացակայությամբ նրան դատեցին, նրանցից մեկը՝ Նոգարե ասպետը ուղևորվեց Իտալիա, վոր վճիռը իրականացնի։ Ֆրանսիական լեգիստներին միացան իտալական բարոնները՝ պապի թշնամիները. Ապենենյան լեռներում գտնվող Անանյի փոքր քաղաքում նրանք հարձակվեցին Բոնիֆացիոսի պալատի վրա և պապի գլխին թափեցին ծաղրանք և վիրավորանքներ. իտալես վիրավորվելով այս բանից՝ Բոնիֆացիոսը շուտով մեռավ։ Պապական աթոռի համար ընտրվեց ֆրանսիական բարձրը հոգևորականը, կղեմես V անունով։ Սա հրաժարվեց Հռոմ գնալ և բոլոր հոգևորականը, կղեմես V անունով։ Սա հրաժարվեց Հռոմ գնալ և բոլոր նակվեց հարավային Ֆրանսիայում՝ Ավինյոնում։ Ֆիլիպ IV պապի հետ

ունեցած ընդհարումից դուրս չեկավ կատարյալ հաղթանակով, և այս ժամանակից ընդհանրապես սկսվում է պատերազմի թուլացումը։

Գեներալ շտաբներ։ Թագավորին հաջողվեց ոգտվել նաև տաճարականների անագին հարստությունից, որոնք Յերուսաղեմի թագավորության անկումից հետո տեղափոխվել էին իրենց յեվրոպական կալվածները։ Ֆիլիպպ IV նրանց մեղադրեց հերետիկոսության և կախարդության մեջ. նոր պատը, իբր հնազանդ գործիք թագավորի ձեռքում, անեծք կարդաց որդիների վրա և վակեց այն։ Որդիների մագիստրոսին և 150 ասպետի այրեցին, իբր հերետիկոսների, թագավորական պալատի պարտեզում, իսկ որդիների դույքը զրավեցին (գանձարանի համար վերցրին)։

Տաճարական ասպետների գործի համար, ինչպես և պապի հետ ունեցած գործի, Ֆիլիպպ IV դատարկ սենյորների, բարձր հոգևորականների և քաղաքների ներկայացուցիչների ժողով։ Այդ ժողովները, ինչպես և Անգլիայում, շարունակություն էին այն ազգերների պատասխանների վասսալների հեն համագումարների։ Բայց Ֆիլիպպից սկսած ստվորություն դարձավ զինվորականների և հոգևորականների հետ կանչել նաև քաղաքացիներին։ Այս նույն փոփոխությունն եր, ինչ որ Անգլիայում առաջ բերեց Սիմոն դե-Մոնֆորը, մաձ պարլամենտ գումարելով։ Անգլիականից տարբերվող Ֆրանսիական ժողովը բաժանվում է յերեք պալատի՝ համաձայն դասերվող Ֆրանսիական ժողովը բաժանվում է յերեք պալատի՝ համաձայն դասերի (états, շտատները)։ Ֆրանսիայում բոլոր զինվորականները՝ խոշորները և մանրները, սենյորները և ասպետները կազմում էին «տոմիկների» կամ ազնվականների դաս և խորհրդակցում էին առանձին. նույնպես առանձին եր խորհրդակցում հոգևորական դասը և առանձին՝ քաղաքացիները, որոնք համարվում էին յեռորդ, այսինքն ցած դաս։ Միայն թագավորին ընդհանուր պատասխան տալու համար յերեք շտատները հավաքվում էին միասին. սրանց ժողովները կոչվում էին գեներալ շտատներ։

Ֆիլիպպ IV-ի կառավարությունը, մանավանդ նրա դրամ կորզելը, յերկրում խիստ դժգոհություն եր առաջ բերել։ Սենյորները անբավական էին, որ նրանք իրենցից խլել եր դրամ կորզելը։ Շատ կոմմունաների Ֆիլիպպ թագավորը իրենցից խլել եր դրամ կորզելը։ Շատ կոմմունաների Ֆիլիպպ IV իր պահանջներով անվճարելի պարտքերի տակ եր ձգել, հետո յել վոչնչացրեց նրանց անկախությունը։ Նրա մահից հետո սկսվեց ապստամբություններ։ Բայց Ֆիլիպպի վորդիները հեշտությամբ առաջն առան, սենյորներին և մեծ քաղաքների արտոնությունների քարտեներ տալով։ Անգլիայում արդեն 1215 թ. դասերը խորհրդակցում էին և գործում միասին։ Ֆրանսիայում դեռ 100 տարի յել հետո դասերը չոկ-չոկ էին գործում, ամեն մեկը միայն իր օգուտն աչքի առաջ ունենալով։ Դրա պատճառով Անգլիայի հետ ունեցած մեծ ընդհարումին XIV դարում Ֆրանսիական թագավորությունը մեծ անհաջողություններ եր ունենում։

Պարիզի շտաբներ յեվ ժակերիա։ Անգլիայի և Ֆրանսիայի վեճի գլխավոր առարկան Ֆլանդրիան եր։ Ֆլամանդական քաղաքները, որոնք անգլիական բուրդ էին գնում, Անգլիա ուղարկեցին Գենտից Հակոբ Արտեվելդեին և Եդվարդ III-ին առաջարկեցին Ֆրանսիայի թագը։ Այդ ժամանակ Ֆրանսիայում թագավորում եր Վալուա տոհմը, կապետինգների կրտսեր շառավիղը (1328 — 1589)։ Սկսվեց յերկարատև հարյուրամյա պատերազմը (ընդհարումներով 1339 — 1459)։

Անգլիական զորքերը, չնայելով թվով քիչ, ֆրանսիական զորքերի վրա գերակշռություն ունեին։ Ասպետական ծանրաշարժ հեծելազորը, վոր մի ժամանակ անհաղթելի յեր, տեղի յեր տալիս կռվի նոր յեղանակին՝ նետաձիգներին և հետևակ նիզակավորներին, վորոնք վարժեցրած եին ընդհանուր, արագ շարժումների։ 1356 թ. Պուատյեի կռվում գերի վերցվեց Ֆրանսիական Հովհան Բարի թագավորը, նրա հետ ել շատ ասպետներ։ Անգլիացիները գերիների համար պահանջում եին անագին փրկանք։ Յերիտասարդ դոֆինը (այդ եր գահաժառանգի տիտղոսը միքիչ առաջ հարավարևելյան Ֆրանսիայում ձեռք բերած Դոֆինեյի անունով) ստիպված եր շատներ հրավիրել Պարիզում։ Ժողովում քիչ սենյորներ և ասպետներ կային, և գլխավոր գերակշռությունը պատկանում եր յերրորդ դասի լիազորներին։ Սրանց մեջ աչքի ընկավ Պարիզի վաճառականների ավագ Ետյեն Մարսելը։ Նա խիստ կերպով հարձակվում եր թագավորական խորհրդականների վրա, վորպեսզի դոֆինին ստիպե նրանց արձակելու։ Նա համոզեցրեց դաշտավորներին պատվիրեց դադարեցնել աշխատանքը և գնալ վերցնել։

Կարլ դոֆինը ստիպված եր ստորագրել Մարսելի կազմած մեծ որդեգանագը (հրամանը). սրա հիման վրա շատները պետք է գումարվեյին կանոնավոր կերպով տարեկան յերկու անգամ, թագավորի հրավերից անկախ. միայն շատները կարող են հարկեր սահմանել։ Դոֆինին ստիպեցին թագավորական խորհրդի մեջ ընդունել նոր մարդկանց, վորոնց ընտրել եին շատները։ Սակայն Կարլը արձակեց իր վին փաթթած խորհուրդը. այն ժամանակ վաճառականների ավագը պարիզեցիներին գինեց և բերեց պալատ։ Այստեղ Կարլի աչքի առաջ Մարսելը հրամայեց նրա մոտիկ մարդկանց կոտորել։ Ինքը՝ դահաժառանգն ազատվեց միայն նրա համար, վոր Մարսելը նրա գլխին գրեց իր գլխարկը Պարիզ քաղաքի կարմիր և կապույտ գույներով։ Նույն յերեկոյան դոֆինը փախավ քաղաքից, և նրա շուրջը հավաքվեցին Պարիզի վաճառականների կառավարությունից բոլոր դժգոհները, մանավանդ ազնվականները և հոգևորականությունը։

Մարսելն սկսեց աշխատել միություն հաստատել հյուսիսային Ֆրանսիայում ապստամբած գյուղացիների հետ։ Գյուղացիների խռովությունը կամ ժակերիան, ժակ Բոնոմի ապստամբությունը (շուշ, ինչպես արհամարհանքով գյուղացու մասին արտահայտվում էին կալվածատերերը) ծագել եր պատերազմի դժբախտությունների հետևանքով։ Գյուղերը մնացել էին առանց պաշտպանության, նրանց թալանել էին ինչպես թշնամիները, այնպես էլ իրենց ասպետները, հավաքելով պաշարը և ամրացնելով բերդերը։ Դաշտերը յերեսի վրա էին թողնվել, և սկսվել եր քաղց։ Դժբախտություններին ավելացավ գերիների մեծ փրկանքը, վորոնց Պուատյեի մոտ վերցրել էին անգլիացիները, և ամբողջ ծանրությունն ընկել եր գյուղացիների վրա։ Ամբողջ զայրույթը, վոր կուտակվել եր առաջ սենյորների, ավերիչ վորսերի, ասպետների վիճակի ու հարձակումների, թագավորի իր հետևորդներով պարտադիր հյուրընկալության դեմ, այժմ հրապարակ յեկավ։ Ամբոխով հավաքվում էին ժակերը, ավերում էին կալվածատերերի ամրոցները և խստորեն չարդում էին տերերին և նրանց ընտանիքներին։

Բայց գյուղացիական խմբերին արագությամբ ցրեցին յերկրապահ ասպետները և նույնպիսի դաժանությամբ կոտորեցին. անգլիական ասպետները

գործում էին ֆրանսիական ազնվականների հետ։ Մինչ այդ կարլը Պարիզից դուրս շատոների հատուկ ժողով գումարեց և մայրաքաղաքին մոտեցավ զորքով. Մարսելը ապստամբեց վողոջի ընդհարման մեջ, իսկ դոֆինը փոխեց թագավորական իշխանության բոլոր սահմանափակումները, որ նրանից սաիլմամբ ստացել էին դժվարին տարիներում։

Անգլիայի դեմ մղած պատերազմի աջողությունը աստիճանաբար անցավ ֆրանսիացիների կողմը։ Դանդաղ կերպով նրանք յետ էին խլում մեկը մյուսի յետևից բերդերը, որ անգլիացիները գրավել էին Ֆրանսիայի հյուսիսում և արևմուտքում. պաշարումներին առաջին անգամ սկսեցին դործածել կրակի թնդանոթներ, որ փոքր սանդերի ձև ունեյին, մեջը վառոդ գրված և մեր էին շպրտում քարեր ու ռումբեր։

Հարյուրամյա պատերազմի վերջը յեվ հետևեների գադարելը։ Կապտինդները հավաքում էին թագավորական ժառանգական հողերը մաս-մաս մեծ դժվարություններով։ Բայց նրանք այդ համարում էին միայն իրենց առմի սեփականություն, ուստի շատ զավակներ ունեցող թագավորները, սկսած Լյուդովիկ Սրբից, ժառանգական հողերի մասերը բաժանում էին իրենց փոքր որդիներին։ Այսպես Ֆրանսիայի զանազան մասերում կազմվեցին ոողոպին ուդելների իշխանություններ։ Սրանց տերերը թեև թագավորի ազգականներ էին, բայց իրենց պահում էին ինչպես անկախ թագավորներ, ոտար պետությունների հետ պայմաններ էին կապում, թշնամանում էին թագավորի և միմյանց դեմ։ Հողային իշխաններից ամենից ուժեղն եր Բուրգունդիայի հերցոգը։ Նրա յերկրների միայն մի մասը (իսկապես Բուրգունդիան) մանում եր Ֆրանսիայի կազմի մեջ։ Նա ձեռք բերեց կայսրության պատկանող հարուստ արդյունաբերող Նիդերլանդիան, այսինքն Ֆլանդրիան և Հոլլանդիան, Շելդայի, Մաասի և Հենոսի՝ որոնք թափվում են Հյուսիսային ծովը, ստորին հոսանքների մոտ շրջանները (այժմյան Բելգիան և Հոլլանդիան)։ Առևտրական շահերի տեսակետից բուրգունդական հերցոգները պետք և պաշտպանեյին միությունը Անգլիայի հետ։

Հենվելով բուրգունդացիների աջակցության վրա, Անգլիայի Հենրիխ V թագավորը վերսկսեց Եդվարդ III-ի արշավանքները (109 յեր.)։ Նույնպիսի հաջողությամբ ջարդեց նա ֆրանսիական բանակը, մտավ Պարիզ և ստիպեց իրեն ճանաչել ֆրանսիական թագի ժառանգ. խելագարված կարլ IV թագավորը իր վորդուն գահից հեռացրեց։ Ֆրանսիան միացավ Անգլիային (1421 թ.)։ Բայց Հենրիխ V շուտով մեռավ։ Մինչ Ֆրանսիայի հյուսիսը ճանաչեց սրա վորդուն, Կարլ դոֆինը, խելոտը թագավորի վորդին, հաղիվ եր կարողանում ձեռքում պահել արևելյան և հարավային շրջանները։ Անգլիացիները պաշարեցին Որլիանը, Ֆրանսիայի ամենամեծ քաղաքը, Պարիզից հետո։

Պաշարված քաղաքի պարիսպների տակ յղացած կատաղի կռիվներում հաջողվեց յետ շպրտել անգլիացիներին. այդ ժամանակ առանձին նշանակություն եյին տալիս այն հանդամանքին, որ ֆրանսիական զորքերի շարքերում, դոֆինի համաձայնությամբ, կռվում եր, թագավորական սպիտակ դրոշակը բարձրացրած, գյուղական մի աղջիկ՝ Ժաննա դ-Արկը։ Որլիանի տակ ունեցած հաջողությունից հետո նրան հաջողվեց, անգլիական զորքերից խույս տալով, դոֆինին Ռեյմս տանել թագադրության համար. (նա գրաձավ կարլ VI թագավոր)։ Բայց հետո Ժաննան բուրգունդացիների ձեռքը

գերի ընկավ, վորոնք նրան մատնեցին անգլիացոց. Ժաննային այրեցին Ռուանում խարույկի վրա, իբր կախարդուհու։

Ֆրանսիական միապետության գործերն սկսեցին կանոնավորվել։ Անգլիացիները չեյին կարողանում շատ ղինվոր պահել ոտար յերկրում։ Նրանց դաշնակից Բուրգունդիայի հերցոգը հաշտվեց Կարլ VII-ի հետ։ Տարեցտարի թագավորը հավաքում եր զինվորը և խորհրդակցում եր նրանց հետ հարկերի և զինվորական կազմակերպության մասին։ Շտատների ժողովում՝ Որլիանում 1439 թ. վորոշվեց թագավորին թողնել ուղղակի հարկի՝ տալլիի (taille) հավաքումը, վորը հասնում եր 1,200,000 լիվր գումարի։ Թագավորն այնուհետև շարունակեց այդ տուրքը ամեն տարի հավաքել, այլևս չդիմելով շտատներին։ Այսպիսով յերբեմն-յերբեմն վերականգնվող ֆեոդալական ոգնությունն յեղող այդ հարկը դարձավ մշտական։ Դասերի ներկայացուցիչները պայման չդրին, վոր թագավորը իրենց դիմե ամեն անգամ դրամի կարիք ունենալու դեպքում, ինչպես Անգլիայում եր. նրանք իրենց չվերապահեցին իրավունք թագավորի ծախքերը և նրա քաղաքականությունը ըստ տուգելու։ Այդ ժամանակից սկսած թագավորները քիչ անգամ եյին դիմում շտատներին, միայն շատ ծանր պայմաններից հարկադրված դիմում եյին։

Դեռ 20 տարի յել տևեց պատերազմը. վերջը անգլիացիները Ֆրանսիայում ունեցած բոլոր յերկրներն ել կորցրին, պահելով միայն Կալեն։

Ֆրանսիայի միությունը։ Ֆրանսիայի իսկական միացնողը յղավ կարլ VII-ի վորդի Լյուդովիկ XI *(1461—1483)*, վորը վոչնչացրեց հողային մեծ իշխանությունները։ Նրա կառավարության սկզբում թագավորի ժառանգական հողերը հողային իշխանություններին բաժանելու հետևանքով, այնպես քչացել եյին, վոր թագավորության կեսից պակաս եր։ Իշխանները թագավորի դեմ կազմեցին «ընդհանուր բարիքի միություն» և շատ նեղը գցեցին նրան։ Նրանցից ամենից ուժեղը՝ Բուրգունդիայի հերցոգ կարլը (Անմիտ) մի ժամանակ թագավորին իր մոտ գերի յեր պահում։ Բայց Լյուդովիկը ամեն տեղ կարլի դեմ թշնամիներ հանեց։ Հյուսիսում նա պաշտպանեց Ֆլամանդական քաղաքների խռովությունը, հարավում դրամ եր տալիս կարլի հակառակորդներին, շվեյցարական միության քաղաքացիներին և գյուղացիներին։ Շվեյցարական հետևակ զորքը յերեք անգամ ջարդեց բուրգունդական ասպետներին։ Շվեյցարացիների դեմ մղած վերջին կռվում կարլը ընկավ։ Լյուդովիկ XI իսկույն գրավեց Բուրգունդիան։ Նիդերլանդիան կարլի աղջկա հետ բաժին ընկավ Մաքսիմիլյան Հաբսբուրգին, գերմանական ազգակա կայսրին։ Այս հաջողությունից հետո հեշտ եր մյուս սենյորների հետ հաշիվ տեսնել։ Վոմանք ուժով ընկնեցին և կործանվեցին, աչառու դատավորներից դատապարտվելով, վորոնց վրա կախված եր թագավորի սպառնալիքը, կամ վորոնց առաջուց տրվել եր դատ տակ յեղողների գույքի մի մասը. մյուսները հոժար կամքով հնազանդվեցին։

Լյուդովիկ XI ձեռք բերեց նաև Պրովանսը՝ մի շրջան, վորը գտնվում և ներքին Ռոնայի և Ալպերի մեջև՝ Միջերկրականի վրայի կարևոր նավահանգստով՝ Մարսելով։ Թագավորը պատրաստվում եր շինել տալ առևտրական մեծ նավատորմ Լևանտի հետ հարաբերություն հաստատելու համար։ Լիոնում նա մտցրեց մետաքսի կտորեղեն պատրաստելու գործը և պահանջեց, վոր Լիոնի քաղաքացիները իրենց հաշվին հրավիրեն մետաքսի գործի ոտարերկրացի հմուտ վարպետների և բանվորների։

Ֆրանսիան միացնողը, որ մի հիվանդ, վատուժ և կասկածամիտ մարդ էր, յերկար ժամանակ ժողովրդի հիշողության մեջ մնում էր այնպես, ինչպիսին էր իր կառավարության վերջին տարիներում, յերբ ապրում էր առանձնացած ճահիճների մեջ շինված, փոքր ամրոցում, շրջապատված ոտարազգի շոտլանդական պահապաններով, բազմաթիվ ծուղակների պաշտպանությամբ, սարսափ տարածելով իր գաժանտանով դատապարտված գոհերի ծառերից կախված դիակներով, փոքրաթիվ մոտիկ մարդկանց շրջանում, որոնց նա ցնծից էր հանել, բարձրացրել։

Պիրենյան թերակղզու պետությունները։ Մուսուլմանները 3½ դարի ընթացքում տիրում էին Պիրենյան թերակղզու մեծ մասին։ Յերբ Կորդովայի խալիֆությունը բաժանվեց փոքր իշխանությունների, քրիստոնյաները սկսեցին հյուսիսային լեռներից առաջ շարժվել. իրենց արշավանքների ժամանակ նրանք մշակված հողերի մեջ նույն ավերածությունները էին կատարում, որոնցով թափառական թուրքերը Յեվրոպայի և Ասիայի արևելքում այնքան սարսափելի էին։ Սակայն XI դարում Աֆրիկայից յեկան կրոնական որոմագրությունն ունեցող մուսուլմանների նոր խմբեր (ալմորավյաններ, 73 յեր.), և քրիստոնյաները յեթ շպրտվեցին։ Այդ դարձավ նրանց քրիստոնյաների խաչակիրների կատաղի կռվի մուսուլմանների դեմ, միաժամանակ նաև յեվրոպացիների խաչակիրների արշավանքների դեպի Արևելք։ Դեպի Պիրենյան թերակղզին շարժվեցին նաև այլ ազգություններ և ասպետներ, մանավանդ ֆրանսիացիներ. բայց հաջողությունն այստեղ այլ էր, քան արևելյան խաչակիրներինն էր։ XIII դարի կեսին գրեթե ամբողջ թերակղզին քրիստոնյաների ձեռքին էր։ Մուսուլմանների ձեռքին մնաց միայն հեռու հարավում՝ նեղուցի մոտ մի շրջան՝ Գրենադա։

Քրիստոնյաները իրենց դեպի հարավ շարժվելում կազմեցին միքանի պետություններ։ Սրանցից Պորտուգալիան յեվ Արագոնը արևմտյան և արևելյան ծովային ծայրագավառներում առևտրական և ծովագնացությամբ պարապող պետություններ էին։ Թերակղզու միջին մասի պետությունը, ամենից մեծը՝ Կաստիլիան («ամրոցների յերկիր») մուսուլմանների դեմ մղված կռիվների գաշտն էր, և ամենից շատ նրա մեջ անդրադարձան նվաճումների գծերը։ Կռվի ընթացքում պատերազմողների մեջ մնում էր բոլորովին ամայացած և անմարդաբնակ դարձած հողի ընդարձակ մի շերտ, որը կարծես վիճակարձ արշավանքների դեմ մի պատվար էր։ Ցերկարատև և հաջորդական քայքայման հետևանքով անտեսությունը շատ ընկավ։ յերբ մավրերին դուրս վռնդին, յերկրի վրա ձգեցին նաև նրանց վատնման սիստեմը։ Գլխավոր զբաղմունք դարձավ վոչ թե հողագործությունը, այլ անասնապահությունը։ Վոչխարներ պահելու համար շատ հողեր էին հատկացնում։ Մեստայի սովորության հիման վրա յերկրի տերերը իրենց հողերով պարտավոր էին թույլ տալ անցնելու տարեկան յերկու անգամ անպին հոտեր, որոնք հյուսիսային նահանգներից անցնում էին հարավ և կրկին դեպի յետ։

Մավրերի դեմ ունեցած կռիվներում կազմվեց մեծ թվով ազնվականություն, գիդալգներ։ Սրանք հեռու էին մնում ամեն տեսակ արհեստից և աշխատանքից. պատերազմը նրանցում մշակեց կրոնական և ցեղական հպարտություն. հատուկ պատիվ էր համարվում հին քրիստոնեական տոհմից

լինելը և իր նախնիների մեջ վոչ հրեա և վոչ մուսուլման ունենալը։ Բերդերից առաջ յեկած քաղաքները կառավարության տեսակետից անկախ էին և պատերազմասեր. սենյորների հետ ունեցած ընդհարումների ժամանակ նրանք երբ մեջ կազմեցին վերմանդադներ, այսինքն զինվորական յեղբայրական միություններ։ Գլխավոր հարստությունները հոգևորականության ձեռքին էին։ Արքեպիսկոպոսները իշխանական պալատներ էին պահում։ Վանքերի և վանականների թիվը անսովոր մեծ էր, որոնք ժողովրդի մեջ վառ էին պահում կույր սեփականության դեպի մուսուլմանները և հրեաները։ Թագավորը սահմանափակված էր իր վասալների համագումարով (կորտես)։ Առանց կորտեսների համաձայնության թագավորը չէր կարող հարկ դնել. կորտեսը հաստատում էր գահաժառանգին, և սրան յերբեմն էին տալիս այն ժամանակ, յերբ նա պարտավորվում էր թագավորության ազատությունները պահպանել։

Սպանիայի միությունը։ *XV դարի վերջին Պիրենյան թերակղզու մեծագույն մասը մի իշխող տոհմի իշխանության տակ միացավ. Արագոնիայի Ֆերդինանդ թագավորը (1479—1516) ամուսնացավ Կաստիլիայի թագավորության ժառանգուհի Իզաբելլայի հետ։ Կաստիլիայի ուժերով շուտ գրավեցին մավրիտանական Գրենադան (1492)։ Կազմվեց այժմյան Սպանիան. իր կազմությամբ յերկար դեռ բաժանվում էր յերկու տարբեր պետությունների՝ միջին և արևելյան. սրանցից յուրաքանչյուրն ուներ իր կորտեսն ժողովը և իր հատուկ մինիստրները։*

Մինչև Ֆերդինանդի և Իզաբելլայի կառավարությունը յերկար տևեցին խռովությունները, որ նման էին Անգլիայի յերկու վարդերի կռվին։ Խոշոր սենյորները (գրանդներ) հենվում էին մանր գիդալգոներից կազմված իրենց մեծ հետևորդների վրա. նրանց ընկճելու համար թագավորը միացավ քաղաքացիների հետ։ Բաղաքային գերմանդադները մի զենավարության և հրամանատարության տակ էին դրված։ Նրանք պետք և յերևային այնտեղ, ուր ասում էր ավազակության, բռնությունների և խռովությունների մասին. նրանց հրամանատարները տեղում բռնված անհանգիստ մարդկանց վրա արագ դատաստան էին կատարում և պատիժ տալիս։ Բայց յերբ մեծ գերմանդադը իր գործը կատարեց՝ յերկիրը խռովությունների ճնշողներից մաքրեց, թագավորը արձակեց նրան, յերկյուղ կրելով, որ նա ուժը իր ձեռքը չառներ հենց թագավորի դեմ։

Իրենց իշխանության համար վտանգավոր ամեն տեսակ մարդկանց հալածելու համար Ֆերդինանդը և Իզաբելլան հենվում էին յեկեղեցու վրա։ Նրանք ամենից առաջին տեղը գնում էին իրենց ջերմեռանդությունը հավատի խնդրում, վորտեղից և ծագում է պապի նրանց տված «կաթոլիկ թագավորներ» անունը։ Սպանիայում կազմակերպվել եր սրբազան ինկվիզիցիան, իբր թե նրա համար, վոր վոչնչացնեն հերետիկոսական կարծիքները և մանավանդ հակումը դեպի հրեական հավատը, վորովհետև մավրերի Սպանիայի գերիշխանությունից հետո շատ հրեաներ էին մնացել։ Սակայն ինկվիզիցիան դատի յեր կանչում և մահվան յենթարկում բազմաթիվ մարդկանց, վորոնք վորևե գործ չէին ունենում հավատի խնդիրների հետ, բայց այնպիսիներին, վորոնք կառավարությանը վորևե պատճառով կասկածելի էին յերևում։

Դասային սիապետություն։ XV դարում Ցեվրոպայի հեռավոր արևմուտքում կազմակերպվեցին յերեք մեծ պետություններ՝ Անգլիա, Ֆրանսիա և Սպանիա, վորոնց մեջ կարելի յեր նման գծեր նկատել։ Ներանցից ամեն մեկը միացնում եր մեծ ազգություն, վոր կազմվել եր զանազան ժողովուրդներից, բայց վորոնք միևնույն լեզուն ունեյին։ Յուրաքանչյուր պետության սահմաններում հաստատվել եյին ընդհանուր հարկեր և հպատակություն ընդհանուր գերագույն դատարանին. սենյորները և բարոնները կորցրին իրենց անկախությունը։ Կառավարությունը գտնվում եր թագավորի և սրա մոտիկ խորհրդականների ձեռքին, բայց թագավորական կառավարությունը ստիպված եր դիմել ամբողջ յերկրի ժողովին (պարլամենտին, շտատներին, կորտեսին)։ Ժողովներում դասերը խիստ տարբերվում եյին իրարից, խոշոր և մանր աշնվականություն, հոգևորականություն, և քաղաքցիներ։ Այսպիսի կազմակերպությունը անվանում ենք դասային միապետություն։

Այլ կերպ եր արևմտյան Ցեվրոպայի յերկու յերկրներին՝ Իտալիայի և Գերմանիայի բախտը։ Իտալական և գերմանական ազգերը չմիացան մի պետության մեջ։ Իտալիայում կազմեցին միքանի մանր պետություններ, իսկ Գերմանիան, թեև առաջվա նման կոչվում եր կայսրություն, ուներ կայսր և ռայստագ (80 յեր.), բայց իրոք բաժանվել եր բազմաթիվ անկախ շրջանների և համայնքների։

13. ԳԵՐՄԱՆԻԱ. ՅԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄ XIV ՅԵՎ XV ԴԱՐԵՐՈՒՄ

Գերմանական գաղթականներ Ասեվելբում։ XIII և XIV դարերում գերմանական ժողովուրդը շատ տարածվեց և յերկու անգամ ավելի տարածություն գրավեց, քան մինչ այդ կար։ Գերմանիայի հյուսիսային ծայրում նվաճողները և առևտրականները առաջ եյին շարժվում բալթիկ ծովի ափի յերկարությամբ։ Տևտոնյան ասպետական որդենը գրավեց պրուսների լիտվական ցեղի յերկիրը Նեմանի և Վիսլայի մեջ, իսկ Լիվոնյանը (կամ սրա կիրների որդենը)՝ լատիշների յերկիրը՝ Արևմտյան Դվինայի ներքին հոսանքի մոտ։ Նվաճվեցին նաև սլավոնական ցեղերով բնակված Ելբայի և Ոդերի հարթությունները։ Ամենախոշոր իշխանությունը դարձավ Բրանդենբուրգը։ Այս բոլոր շրջաններում գերմանական գաղթականները տեղավորվեցին իրը տերեր և տեղացիներին իրենց հպատակեցրին։

Այլ կերպ եր ընթանում դեպի հարավ կատարվող գաղթականությունը, մինչև Ցեվրոպայի բարձրությունների շերտում (Բոհեմական սարահարթ, Սուդետ և Կարպատները). գերմանական գաղթականներն այստեղ խաղաղ կերպով մտնում եյին սլավոնական Չեխիայի և Լեհաստանի պետությունները և կիսասլավոնական Վենգրիան։

Այս յերեք պետությունները կազմվեցին մոտ 900 թվին։ X դարի ընթացքում նրանք ընդունեցին քրիստոնեությունը Հռոմի յեկեղեցու քարոզիչներից։ Նրանց իշխաններն աշխատում եյին Արևմուտքի գերագույն ուժերից՝ կայսրից և պապից ստանալ թագավորի տիտղոս։ Չեխական թագավորը նույնիսկ կայսրի խոշոր վասսալների շարքը մտավ և սկսեց Գերմանիայի իշխաններից մեկը համարվել։ Չեխական, լեհական և վենգերական թագավորները ցանկանալով իրենց յեկամուտներն ավելացնել՝ հոգ եյին տանում առևտուրը, արհեստը ընդարձակելու վրա և հրավիրում եյին գերմանացի արդյունաբերողներ և բանվորներ։ Լեհաստանում այն քաղաքները, վոր գերմանացի գաղթականները հիմնեցին, փոխ առան Մագդեբուրգի կազմակերպության ձևը. լեհական քաղաքների բնակիչները վեճերը և դանգատները վորոշելու համար դիմում եյին Մագդեբուրգին, այդ պատճառով Լեհաստանում քաղաքային կարգն սկսեց մագդեբուրգյան իրավունք կոչվել։

Մինչդեռ գերմանական լեզուն և ժողովուրդը դեպի հեռու արևելք եյին մուտք գործում, մինչև Զուդ լիճը, Դվինա, Նեման, Վիսլա և Կարպատներ, ինքը Գերմանիան համարյա դադարեց պետություն լինելուց։

Գերմանիայի կազմակերպությունը XIII դարի վերջից։ Շտաուֆենների տոհմի դադարումից հետո, 18 տարվա ընթացքում թագավոր չեյին ընտրում (1254—1272)։ Իշխանները և քաղաքները վարժվել եյին անկախ գործելու։ Յերբ վերջապես ամենակարևոր իշխանները հավաքվեցին Ռուդոլֆ Հաբսբուրգի՝ հարավային գերմանական տերերից մեկի ընտրությանը, թագավորի առաջ դրին այնպիսի պայմաններ, վորոնք նրան բոլորովին անզոր եյին դարձնում։ Նա պետք և հրաժարվեր Իտալիայի վերաբերմամբ վորևե պահանջ դնելուց և Հռոմ արշավանք կատարելուց։ Թագավորական հին ժառանգական հողերից, իրենց հարուստ կալվածքներով, ամրոցներով և պահեստներով, վոչինչ չմնաց. ամեն ինչ կամ պարգև եր տրված կամ կողոպտվել եր անիշխանության ժամանակ։ Այլևս թագավորական յեկամուտներ գոյություն չունեյին։ Թագավորը չեր կարող ժողովել վոչ ընդհանուր կայսերական զինված ուժ, վոչ տուրքեր պահանջել, վոչ էլ ընդհանուր վորոշումներ հրատարակել, առանց իրեն ընտրող իշխանների համաձայնության։

Իշխանները (ֆյուրստեր) իրենց շրջանների յեկամուտների մասին կարգադրություններ եյին անում, տիրում եյին հանքերը և դրամ եյին կտրում, մաքս եյին հավաքում շուկաներից, գետանցքներից և մեծ ճանապարհներով անցկացողներից. նրանք կարող եյին բերդեր հիմնել և իրենց յերկրներում ունեյին գերագույն դատարան։ Նրանց մեջ առանձնապես առաջ գնացին յոթ իշխան, վորոնք XIII դարի վերջին սկսեցին թագավորի ընտրությունը վորոշել (կուրֆյուրստներ, այսինքն ընտրող իշխաններ)։ Դրանք յերեք խոշոր իշխաններ եյին արևելքում՝ Բրանդենբուրգի, Սաքսոնիայի և Չեխիայի և չորսն էլ արևմուտքում՝ Ռյոնի, Մայնցի և Տրիերի արքեպիսկոպոսները և Հեննոսի պֆալցգրաֆը։

Կուրֆյուրստներն ընտրության ժամանակ այն հասկացողությամբ եյին դեկավարվում, վոր թագավորին հնարավորություն չտան ուժեղանալու և իշխանությունն իրենց ընտանիքների վրա հաստատելու։ Այդ պատճառով նրանք միքանի անգամ թագավորական տոհմերը փոխեցին։ XIII դարի վերջում ընտրեցին Հաբսբուրգներին (1272—1308). XIV դարի սկզբում նրանց փոխարինեցին Լյուքսեմբուրգներով, վորոնց սկզբում պատկանում եր այդ կալվածքի մի շրջանը արևմտյան Գերմանիայում, հետո Չեխիան և Բրանդենբուրգը։ Լյուքսեմբուրգներին ընդհատումներով ընտրում եյին 120 տարվա ընթացքում (1308—1437). իսկ հետո նորից փոխարինեցին Հաբսբուրգներով։ Թագավորները պետության մեջ կորցնելով ընդհանուր նշա-

նակութիւնը, հոգ էին տանում միայն իրանց իշխանական յարկընները մեծացնելու վրա, որը ժառանգաբար էր անցնում։ Ռուդոլֆ Հաբսբուրգը Զեխիայի Ոտոկար թագավորից (Պեռմիսլի տոհմից) խլեց մինչեւ Դանուբի և արեւելյան Ալպերի ուղղությամբ ընկած հողերը, կարլ Մեծի նախկին արեւելյան մարկը—սահմանապահ իշխանությունը. այսպիսով նա Ավստրիայի հիմքը դրեց։ Լյուկսեմբուրգները Զեխիան տիրեցին այն ժամանակ, երբ այնտեղ Պշեմիսլի տոհմը վերջացավ։

Յերբ Գերմանիան բաժան-բաժան լեզավ, նրա միքանի մասերը սկսեցին կայսրությունից բոլորովին անկախ կառավարվել։

Շվեյցարական միությունը։ Ալպերի մինչեւ մասում կազմվեց լեռնային փոքր համայնքներից և առևտրական քաղաքներից անկախ միություն։ Ալպերով անցնելը շատ դժվար էր։ Ճանապարհորդները և առևտրական բեռնակիր կառքերն անցնում էին կարճ ուղղ կայաններ կազմելով, գետերի նեղ հովիտներով և բարձր լեռնանցքներով, մի վանքից, ամրոցից կամ հիվանդանոցից մյուսը։ Լեռնականները մարդկանց և դանձերը փոխադրելու մանակցում էին, բայց և անցկացնելու համար իրը մաքս և վճար հավաքելով մեծ ոգուտ էին ստանում։ Հատկապես շահավետ էր չորս անտառային կանտոնների (համայնքների) բնակիչների դրությունը, այն կանտոնների, որոնք լճի շուրջն էին ընկած, որի միջով հոսում է ս. Գոթարդի լեռնանցքից վազող Ռեյսը։ Հաբսբուրգներն սկսեցին լեռնցիների այդ ճանապարհի տիրապետությունը վեճի առարկա դարձնել. նրանք աշխատում էին ազատ իշխանություն ստանալ դեպի ս. Գոթարդ տանող ալպիական ճանապարհների բնակիչների վրա։

Այդ պատճառով անտառային չորեք կանտոնների բնակիչները 1291 թվին իրար մեջ մշտական պաշտպանողական միություն կազմեցին. գլխավոր նպատակն այն էր, որ իրենց մեջ չթողնեն ոտար դատավորների և պահպանեն իրենց դատական սովորությունները։ Այս առթիվ առաջացը պատմում է, որ Վիլհելմ Տելլը հրաժարվեց գլուխ խոնարհել հաբսբուրգյան փոխարքայի ձողի վրա կախված գլխարկին. այստեղից էլ սկսվից լեռնցիների կռիվը ազատության համար։ Յերբ 1308 թվից գադարեցին Հաբսբուրգներին թագավոր ընտրել, լեռնցիներն իրենց նպատակին հասան. Լյուկսեմբուրգները նրանց ճանաչեցին անկախ սենյորներից և հպատակ միայն կայսրությանն։ Վորովհետև կայսրությունը չուներ ոչ ամրհաստատ վորներ, ոչ զորք, ուստի, ուրիշ խոսքով ասած, նրանք կատարյալ ազատություն ստացան։ Շուտով լեռնային կանտոններին միացան հարևան յերկու մեծ քաղաքները՝ Յուրիխ և Բեռն, որոնք դեպի Հռենոսի հովիտը տանող ճանապարհի վրա էին գտնվում։ Գյուղացիական լեռնային համայնքների և արդյունաբերական քաղաքների այդ միացումը յեղավ հիմքը Շվեյցարական միության. *(Շվեյցարիա անունը ամբողջ միությանն և անցել անտառային կանտոններից մեկի՝ Շվիցի անունից)։*

Հաբսբուրգները յերկու անգամ ասպետներին հանեցին միության դեմ, բայց ամեն անգամ էլ հնձելազորը տեղի յեր տալիս հետևակ նետաձիգներին, և միությունը անկախ դարձավ։ Մի ուրիշ, ավելի խոշոր, բայց քիչ կայուն միություն կազմեցին հյուսիսային Գերմանիայի քաղաքները։

Գերմանական մեծ հանգած։ *1000 թվին մոտ Հյուսիսային և Բալտիկ*

ծովերով անցնում էին միայն Սկանդինավիայի և Դանիայի նորմաննները։ Յերկու հարյուր տարի հետո նրանց, հանդիպ շարժվեցին առևտրական նավագնացներ նույն ծովերի հարավային ծայր-յերկրներից, մինչեւ Յեվրոպայի ափերից։ Այդ առաջ յեկավ նրանից, որ Ֆրանսիայի և Գերմանիայի քաղաքներում արդյունաբերությունը զարգացավ։ Մինչեւ Յեվրոպայի վաճառականները տանում էին հյուսիս և արեւելք, Լեհաստան և ռուսական հողը՝ աղ, արհեստավորների գործվածքներ, բրդի կտորներ, կտավ, խմիչքներ, գինի և գարեջուր, այլ և Ալպերով յեկող հարավային ապրանքներ։ Փոխանակը բերում էին հյուսիսից մորթիներ և կաշիներ, նավաշինության համար անհրաժեշտ փայտ, պղինձ և յերկաթ, ձուկ, ճարպ, մոմ և մեղր, կտավատ և կանեփ։

Գերմանական վաճառականները, որոնք իրենց ձեռքին էին պահում հյուսիսի հետ վաճառականությունը, ոտարության մեջ միացան և կազմեցին հանգա (69 յերես)։ Արեւմուտքում՝ Լոնդոնում և Բրյուգեյում հանգան կազմում էին Ռյոլնի վաճառականները. արեւելքում առևտրի կենտրոնն էր Գոտլանդ կղզու Վիսբի քաղաքը, որը բաժանմունքներ ուներ ռուսական Նովգորոդ և Սմոլենսկ քաղաքներում։ Ամենից շատ հոգ էր տանում գերմանական վաճառականության միացման վրա Լյուբեկը, վենդական քաղաքներից գլխավորը (այսինքն, որը շինված էր հին սլավոնական կամ վենդական հողի վրա)։ Լյուբեկը միջնորդ էր Հյուսիսային ծովի և Բալտիկի վաճառականության. փոխանակ Յուտլանդիայի շուրջը յերկար պտույտ անելու, ապրանքները մի ծովից մյուսն անց էին կացնում այն պարանոցով, որ տանում էր Լյուբեկից Համբուրգ, որը գտնվում էր Ելբայի գուրս գալու տեղը։ XIV գարու կեսին Լյուբեկը հյուսիսի հետ վաճառականության անող բոլոր քաղաքների միությունը գլուխ բերից՝ կազմվեց գերմանական մեծ հանգա։

Միության գլխավոր նպատակն այն էր, որ յերկու կից գտնվող ծովերի բոլոր ոտար վաճառականներին գուրս հանեն. վոչ մի վաճառական, որը հանգային չէր պատկանում, չէր կարող ծովի կողմից Նովգորոդ գնալ. միությանը ուժեղ արգելք հանդիպացավ սկանդինավյան պետություններից մեկը՝ Դանիան, որը յերկու ծովերի մեջ էր գտնվում։ Վալդեմար IV թագավորը գրավեց Շվեցիայի հարավային մասը, վերցրեց Գոտլանդ կղզին, ավերեց Վիսբին։ Այն ժամանակ Ռյոլն հավաքվեցին 77 քաղաքների պատգամավորները փոխադարձ պաշտպանության համար։ Ռազմական նավատորմը, որի հրամանատարն էր Լյուբեկի քաղաքագլուխը, վերցրեց Դանիայի Կոպենհագեն մայրաքաղաքը, դանիական կղզիները, Շվեցիայի հարավային մասը և զրկեց Նորվեգիայի թագավորին, որն ուներ Դանիային (1370)։ Հանգան հասավ իր ամենամեծ հաջողությանը։ Նրա վաճառականները սկանդինավյան պետություններում ձեռք բերին բոլոր առավելությունները. միությունը այստեղ վորոշում էր նույնիսկ գահը ուրիշին հանձնելը իր շահի տեսակետից։ Հանգան մի շարք առևտրական շահավետ պայմաններ կապեց բոլոր յերկրների հետ, Ֆինլանդիայից մինչև Պիրենյան թերակղզին։ Հանգացիները մի առած ունեին. «Մենք անգլիացիներից աղվեսն առնում ենք մի գրոշի և պոչը վաճառում մի գուլդենի» *(վոսկի)*։

Հանգայի կազմի մեջ մտան հյուսիսի բոլոր առափնյա գերմանա-

կան քաղաքները. արևելքում միության ծայրամասի անդամներն էին Ռեվելը և Նարվան Ֆիննական ծոցի մոտ, արևմուտքում՝ Ամստերդամը։ Նրա մեջ մտնում էին նաև դեպի հյուսիս հոսող մեծ գետերի մոտ գտնվող ցամաքային քաղաքները՝ Բյորն, Մագդեբուրգ, Բրեսլավ։ Հանզան արտասահմանի գերմանական վաճառականների բնակությունները գարձրեց իր գաղութները, այսինքն բաժանմունքները, և նոր գրասենյակներ բացեց։ Համակարս կարևոր էին Լոնդոնի պողպատե պալատը, Նովգորոդի ս. Պետրոսի պալատը և Բեργենի՝ Նորվեգիայի արևմտյան ափում, գաղութը։

Բաժան-բաժան լեզած Գերմանիան XIV և XV դարերում Եվրոպայի այն գլխավոր տեղն էր, ուր արտահայտվում էր գժգոհությունը հռոմեական յեկեղեցու դեմ։

Կառավարությունը յեվ գիտնականները Հռոմի յեկեղեցու դեմ. XIII դարում յեկեղեցին գարձավ տնագին պետություն պետությունների վրա, ամենահարուստ յեկամուտներով և բազմաթիվ ատիճանավորներով։ Սկզբում պապը հայտարարում էր, թե այդ ամենը հարկավոր և հոգևոր բարձր նպատակների, խաչակիր արշավանքի և ս. Պետրոսի ժառանգական կալվածքները պաշտպանելու համար։ XIV դարում բոլորն էլ տեսնում էին, որ հռոմեական յեկեղեցու իշխանությունն ու հարստությունը գոյություն ունեն միայնակ պապի և նրա պալատի, կարդինալների և դիվանատների բարեկեցության համար, որ հետ միասին պապերը նույնիսկ սրբազան մայրաքաղաք Հռոմը թողել հեռացել էին։ Հռոմեական յեկեղեցու շահամոլ բնույթը պարզ յերևում էր ինդուլգենցիաներ, այսինքն մեղքեր քավելու թղթեր տարածելու մեջ, որ մացրել էր Բոնիֆացիոս VIII պապը։ Հատուկ ուսմունք կար, որ արդարացնում էր ինդուլգենցիան. ասում էին, որ յեկեղեցին ունի բարի գործերի անսպառ գանձ, այն գործերի, որ կատարել էին Քրիստոս և սրբերը. պապն իրավունք ունի սրանց այդ ծառայությունները փոխանցելու մեղավորներին և սրանց գործերը ծածկելու այդ շնորհների առատ աղբյուրից։

Այնտեղ, ուր թագավորն ուժեղ էր, աշխատում էր խոշոր մուտքերը արտասահման փոխադրելն արգելել. XIV դարի սկզբում Փիլիպպ Գեղեցիկը մտածեց յեկեղեցական մուտքերի մի մասն իր օգտին գրավել (106 յեր.). իր պետուն լեգիստներին հանձնարարեց ապացուցանել, որ պապն ապօրինաբար յուրացրել է իրեն վոչ վայել իշխանություն։ Շուտով նոր առիթ յերևաց պապի պահանջների վրա հարձակվելու։ Հովհաննես XXII պապը, որ ապրում էր Ավինիոնում, հրաժարվեց հաստատելու կուրֆյուրստների ընտրած գերմանական թագավոր Լյուդովիկ Բավարացուն և ամբողջ Գերմանիայի վրա բանադրանք գրեց (1324 թ.). Լյուդովիկը տեղի չէր տալիս և աշխատում էր ժողով հրավիրել պապին դատապարտելու. այդ նպատակով նրա պալատն էլին ձգտում պապի ամենատաղանդավոր և վրձռական հակառակորդները։

Սրանց մեջ կային ֆրանցիսկյաններ, մուրացիկ յեկեղեցու կողմնակիցներ, վորոնք կուրիայի իր շռայլության և բարքերի համար ամբաստանում էին. նույն Հովհաննես XXII պապը հերետիկոսության հայտարարեց այն ուսմունքը, թե Քրիստոս և առաքյալները գույք չունեին, և վոր իբր քրիստոնեական քարոզը յերկրավոր բարիքներից հրաժարվելու մեջն է։ Հատկապես խիստ քննադատում էր իտալացի գիտնական իրավաբան Մարսիլիոս Պադուացին, վորը գրում էր «Գիտնականները և թագավորները պետք է միասին գուրս գան պապի ուսմունքի ջնջասակարության դեմ»։ Մարսիլիոսի կարծիքով հավատի խնդրում ստիպում չպետք է լինի. մեղավորին առաձու թագավորության մեջ չի կարելի մտցնել ստիպմամբ։ Պապի իշխանությունն ամեն սահման անցել է, մինչդեռ պապը ամենևին Պետրոս առաքյալի հաջորդը չէ. այդ մտացածին բան է, ս. գրքից չի յերևում, վոր Պետրոս առաքյալը յերբևե Հռոմում յեղել է։ Հոգևորականությունը պետք է ժողովուրդն ընտրե, և ժողովրդին է պատկանում յեկեղեցական հարցերի գիրգագույն վճռանասություն։

Պապի պահանջների դեմ Գերմանիայում կուրֆյուրստները հայտարարեցին, վոր մենակ իրենք են վճռում կայսրի ընտրությունը, և վոր պապի հաստատության կարիք չկա։ Լյուդովիկ Բավարացուն հաջորդող Կարլ Լյուքսեմբուրգցի կայսրը ընտրող իշխաններից այդ վորոշումը հաստատեց հատուկ հրովարտակով՝ Վոսկե բուլլայով (1356 թ.)։

Մոտավորապես այդ նույն ժամանակներում Անգլիայում Եդվարդ III թագավորը և պարլամենտն արգելեցին ծանր պատիժների յերկյուղի տակ պապին բողոքելը (82 յեր.) և գադարեցին Հռոմ ուղարկել տարեկան այն տուրքը, վոր Հովհան Անհողը խոստացել էր։ Պարլամենտի վորոշումներին պաշտպան հանդիսացավ քահանա և Ոկսֆորդի համալսարանի պրոֆեսսոր Ուիկլիֆը. Ուիկլիֆի կարծիքով հռոմեական յեկեղեցին բոլորովին հեռացել էր Քրիստոսի պատգամներից, հոգևորականությունից պետք է խլել նրա ընդարձակ հողերը և հարստությունները, պապն իրավունք ունի հավատացյալներից միայն վողորմություն ստանալու։ Նա նույնպես հատուկ ուժ չունի մարդկանց կամքը կապելու և վճռելու։ Այն հանգամանքը, վոր նա իրեն և հոգևորականությանը մեղքից վեր էր դասում, ինքն այդպիսով ամենամեծ մեղքի մեջ է ընկնում։

Պապը պահանջեց Ուիկլիֆին դատապարտել։ Բայց կառավարությունը չէր ուզում նրան պապի ձեռքը հանձնել. յերբ Լոնդոնում յեպիսկոպոսները գումարվեցին Ուիկլիֆին դատելու նիստին՝ ներկաներից ամբոխը և ազատեց նրան։ Ուիկլիֆն այժմ սկսեց վերլուծել այն հավատի բուն հիմքերը, վոր ուներ կաթոլիկ յեկեղեցին։ Նրա խոսքերով, քահանաները և պուր իրենց համարում են միջնորդ աստծու և մարդկանց մեջ. նրանք վոչ մի գերբնական ուժ չեն ստացել. նրանք միայն ուսուցիչներ են։ Մարդն ինքը կարող է փրկության ճանապարհները իմանալ և գտնել. հարկավոր չեն ինդուլգենցիաները, սրբերի պաշտամունքը, Հավատի միակ հիմքը պիտի լինի ս. գիրքը։ Ս. գիրքը հանրամատչելի դարձնելու համար Ուիկլիֆը թարգմանեց լատիներենից ժողովրդականի՝ անգլիերեն լեզվի։ Նա սկսեց իր աշակերտներին՝ «աղքատ քահանաներին» ուղարկել այս ու այն կողմերը, վոր տարածեն ս. գրքի ուղիղ ուսմունքը և իրենց կյանքով օրինակ տան քրիստոնեական անշահասիրության։

«Աղքատ քահանաները» մոտ լինելով հասարակ ժողովրդին՝ կարևոր մասնակցություն ունեցան Ուոտ Տայլերի ապստամբության մեջ (102 յեր.). բարձր հոգևորականությունը դատապարտեց Ուիկլիֆի ուսմունքը, իբր հերետիկոսություն, բայց իրեն ձեռք չտվեց, և նա մեռավ խորին ծերության մեջ, չդադարելով աշխատելուց և գրելուց։

Մեծ հերձվածը յեվ բարեճոռոգումների պահանջը: *Յեվրոպայում ընդհանուրի ձայնն ասում ևր, վոր յեկեղեցու մեծ ուժությունքի մեջ ապակառնություն և մահ, և վոր անհրաժեշտ և «մաքրել» նրան կամ ուղղել (reformation—բարեճոռոգում). բայց այն հարցում, թե ինչը պետք և փոխել, շատ եյին իրարից տարբերվում: Ֆրանսիայի, Անգլիայի և Գերմանիայի բարձր հոգևորականները նեղվում եյին պապից կախում ունենալով, պարտավորապես Հռոմ գնալով, կուրիայի համար մեծ ժողովարարություններ անելով: Մեծամասնությունն այն կարծիքին ևր, վոր բոլոր յեպիսկոպոսները իրար հավասար են, հետևապես ընդհանուր Յեկեղեցական վորոշումները կարելի յե ընդունել միայն համաքրիստոնեական ժողովներով: Ժողովը պապից բարձր ե. պապը կարող և միայն ժողովի կամքը կատարող լինել: Հատկապես սկսեցին ավելի համառորեն խոսել այս մասին, յերբ տեղի ունեցավ պապության Մեծ հերձվածը: Պապերի Ավինիոնում 70 տարի մնալուց հետո (Բաբելական գերություն) կարգինալների ժողովը բաժանվեց: Նրանց մի մասն անցավ Հռոմ, մի մասը Ավինիոն, և ամեն մեկն ընտրեց իր պապը (1378 թ.): Պապերն սկսեցին վեճ. դիմում եյին ամբողջ կաթոլիկ աշխարհին իրենց կոչերով և իրար հալածում եյին յեկեղեցուց իրար բանադրելով, նզովելով: Յերկար տևեց հերձվածը: 1393 թվին Սորբոննան ամբողջ Յեվրոպային հարցում ուղղեց, թե ինչ միջոցներով կարելի կլինի հերձվածը դադարեցնել: Սաացվեց մոտ 10,000 պատասխան, և սրանց հիման վրա Սորբոննան պահանջեց յերկու հակառակորդ պապերի հրաժարականը և գործի վճիռը տիեզերական ժողովին հանձնելը:*

Հասարակության մեջ կային ավելի վճռական ձայներ, վորոնք փչացումը տեսնում եյին ոչ միայն պապականության, այլ և ամբողջ հոգևորականության մեջ: Բարձր հոգևորականների մեծ մասն ապրում ևր առանց ծանրաբեռնելու իրենց աշխատանքով, ծառայությամբ և քարոզչությամբ, այս ամենը թողնված ևր վոզորմելի վարձկան փոխանորդներին: Արդյունաբերող քաղաքացիները, մանր առևտրականը և տակավոող գյուղացիները նախանձում եյին հոգևորականների խոշոր կալվածքներին. նրանց մեջ միտք ևր հղանում գրավել և բաժանել յեկեղեցական հողերը: Քաղաքում և գյուղում ժողովրդի մեջ մի հիմնական դժգոհություն ևս կար, շատերը փնտռում եյին կրթություն և տգետ քահանաներից ու վանականներից պատասխան չեյին սաանում: Յեկեղեցին ս. գիրքը միայն լատիներեն լսվով ևր թույլ տալիս և աշխարհականներին արգելում եյին միանգամայն ս. գիրքը կարդալ: Շատերը չեյին ցանկանում գնալ խոստովանվել հոգևորականների մոտ, վորոնք իրենց կյանքով միայն վատ որինակ եյին տալիս, ծանր պատահարների տարիներում, որինակ՝ ժանտախտի ժամանակ, հավաքվում եյին ինքնախառազանոզների ընկերություններ: Ջախջախնց զրգռվելով, նրանք խմբերով պտտում եյին քաղաքները, հայտնում եյին, թե աշխարհի վերջն և և իրենց յենթարկում եյին տանջանքների, վոր ստեղծու բարկությունը մեղմացնեն: Իրենց խարազանելուց առաջ ամբողջ ժողովրդի առջև նրանք մեկը մյուսի մոտ խոստովանվում ևր: Շատերը հավատի խնդիրներում ինքնուրույն ուսմունք եյին փնտռում: Այդ պատճառով ժողովրդի մեջ տարածված եյին ս. գրքի ռոմանական, գերմաներեն, անգլիերեն, չեխերեն թարգմանությունները: Աստվածաշունչը կարդացողների մեջ հեշտությամբ այն

միտքը մուտք ունեցավ, թե աշխարհականները կարող են հոգևորականներին հավասար լինել. ով գործով Քրիստոսին հետևում և, նա յե իսկական քահանան: Այդ պատճառով աշխարհականները կարող են հաղորդվել յերկու տեսակով եյ (հացով և գինով, մինչդեռ լատին յեկեղեցում աշխարհականներին գինին չեյին տալիս): Մեծ հերձվածի ժամանակ Չեխիայում ժողովրդական ուժեղ շարժում առաջ յեկավ:

Հուսյան շարժումը: *XIV դարում այնտեղ կառավարում եյին Լյուքսեմբուրգները: Կարլ IV «Չեխիայի հայրը և կայսրության խորթ հայրը» Պրագայում 1349 թ. հիմնեց համալսարան, վոր Գերմանիայում առաջինն ևր: Այդ պատճառ յեղավ, վոր շատ գերմանացիներ Չեխիա գնացին: Սրանք գերակշռություն ստացան և համալսարանում և Պրագայի քաղաքային խորհրդում: Միաժամանակ յերկրում բազմաթիվ հարուստ հոգևորականության իշխանությունը հաստատվեց. Պրագայի արքեպիսկոպոսն ուներ 10 քաղաք և 400 գյուղ:*

Նոր լուսավորությունը չեխերի մեջ ուժեղ շարժում առաջ բերեց: Տաղանդավոր քարոզիչները և գյուղերը ժողովվեցին Պրագայում: Շտիանի ասպետը առաջինը յեղավ, վոր չեխերեն փիլիսոփայական գրվածքներ գրեց: «Աստված,—ասում ևր նա,—չեխերենը լատիներենից պակաս չի սիրում»: XV դարի սկզբում քարոզիչների մեջ աչքի յեր ընկնում Յան (Հովհաննես) Հուսը, համալսարանի պրոֆեսորը և բակալորը: Նրա կողմնակիցներն եյին չեխ արհեստավորները, վորոնք դուրս եյին գալիս հարուստ գերմանական ծագում ունեցող քաղաքացիների դեմ, և գյուղացիները, վորոնք թշնամի եյին իրավունք բանեցնող փարթամ յեկեղեցուն: Կարլ IV-ի վորդի Վենցեսլավ թագավորը, վոր ժողովրդի աջակցությունն ևր փնտռում, համալսարանում չեխերի կողմն անցավ և թույլ տվեց փոխել կանոնադրությունը, վորի համաձայն գերմանացիները համալսարանում ստացան $^1/_4$ ձայն, փոխանակ նախկին $^3/_4$-ի: Գերմանացի պրոֆեսորները և ուսանողները շատ դժգոհելով՝ հեռացան Պրագայից և Լայպցիգում իրենց համալսարանը հիմնեցին:

Այդ ժամանակ Ոկսֆորդի համալսարանում սովորող չեխ ուսանողները բերին իրենց հետ Ուիկլիֆի գրվածքները: Հուսն անգլիացի վերանորոգչի գլխավոր հիմքերից մեկն ընդունեց. այն է՝ քահանաները պետք և ժողովրդին քարոզեն Քրիստոսի խոսքերը և վոչ թե սուտ հրաշքների մասին. ամեն մի քրիստոնյա պիտի խորասուզվի ս. գրքի մեջ, վորովհետև այնտեղ և ուսմունքի ամբողջ հիմքը: Յերբ Պրագա հասավ պապի այն բուլլան, վորով պահանջվում ևր հավաքել և այրել Ուիկլիֆի գրվածքները, համալսարանի մեծամասնությունը այդ բանին դեմ կանգնեց: Պապը բանադրեց Հուսին, Պրիղի արքեպիսկոպոսը նրան նզովեց, բայց թագավորը նրան չհանձնեց: Մինչ այդ Հուսը իր քարոզներում ինդուլգենցիաների դեմ դուրս յեկավ և հայտարարեց, վոր պապի անսխալականության վարդապետությունն ստոծուն հայհոյել կնշանակե. պապը վոչ այլ վոք ե, բայց յեթե նեռը: Պապը և բարձր հոգևորականությունն անտոր եյին վորևե բան անել, մանավանդ վոր յեկեղեցու հերձվածը ծայրահեղ չափերի հասավ, և սպասում եյին այդ վորշել ժողովով:

XV դարի մեծ ժողովները: *XV դարի առաջին 40 տարվա ընթացքում յերեք ժողով կազմվեց յեկեղեցու վերակազմության համար: Նրանցից առա-*

Ջինը (Պիզայում) հաշտութեան չբերեց. նա միայն հեռացրեց յերկու հակառակորդներին, և նոր պապ ընտրեց. հեռացված յերկու պապն էլ չհրաժարվեցին, և արևմուտքում յերեք պապ յեղավ։ Ցերկրորդ ժողովը հրավիրեց Սիգիզմունդ կայսրը, Կարլ Լյուքսեմբուրգի վորդին և Չեխիայի Վենցեսլավի յեղբայրը Կոնստանցայում, Բոդենի լճի մոտ։ Ժողովի յեկան Ցեվրոպայի հինգ գլխավոր յերկրների՝ Գերմանիայի, Անգլիայի, Ֆրանսիայի, Իտալիայի և Սպանիայի բարձր հոգևորականները, և ձայնավորությունը լինում էր ըստ ազգությունների։ Ժողովականներն այն ուսմունքը հայտարարեցին, վոր ժողովը պապից բարձր է. պապական աթոռի համար կռվող յերեք հոգուն դատապարտի արին, և բարձր հոգևորականներից նոր ընտրված պապը համաձայնեց այն պայմանին, վոր կանոնավոր կերպով ամեն 5 տարին մի անգամ ժողովներ հրավիրե։

Ժողովի անդամները աշխատում էին նույնպես լուծել ուսմունքի բոլոր վեճերը. պապի իշխանությունը սահմանափակելու խնդրում շատ հարձակ լինելով բարձր հոգևորականները և Սորբոննայի գիտնականները՝ հավատի խնդրում նույնպիսի բռնակալություն ցույց տվին, ինչ վոր պապերը։ Նրանք նզովեցին Ուիկլիֆի հիշատակը և սկսեցին յեռանդով դատել Հուսին, վորին կանչել էին Չեխիայից Կոնստանցա՝ կայսրի հսկողության տակ։ Ժողովը նրա կարծիքների քննության մեջ չմտավ և միայն պահանջեց հրաժարվել իր կարծիքներից։ Հուսը պնդում էր, վոր վկայություններ բերեն իր դեմ ս. գրքից։ Նրան պատասխանեցին. «Յեթե ժողովը քեզ կասե, վոր դու մի աչք ունես, դու պետք է համաձայնեսս։ Իրեն չզղջացող հերետիկոս Հուսը հանձնվեց աշխարհիկ իշխանության, այսինքն մահվան պատժի յենթարկվեց։ Նույն որը Հուսին խարույկի վրա այրեցին (1415)։

Հուսի մահը խթան յեղավ Չեխիայի ազատամբության։ Վորովհետև յեկեղեցիներում թույլ չէին տալիս հաղորդվել նաև գինով, ժողովուրդը մեծ խմբերով սկսեց հավաքվել դաշտերում՝ կատարելու ասամբլեայություն։ Հուսյաններն առաջադրեցին Պրագայի չորս հոդվածները, վորոնցով պահանջում էին ասածու խոսքի ազատ քարոզություն, հաղորդություն յերկու տեսակից էլ, յեկեղեցին վերադարձնել նախնական պարզության, յեկեղեցու կալվածները գրավել և հոգևորականներին հանցանքների համար պատժել։ Հուսյանները հրաժարվեցին Սիգիզմունդին իրենց թագավոր ճանաչել, և նա Գերմանիայից նրանց դեմ շարժեց խաչակիրների զինված խմբերին։

Այն ժամանակ Չեխիայում արագությամբ կազմվեցին զինվորական խմբեր, վոր միացան սկիզի նկար ունեցող զրոշակի շուրջը։ Հուսյանների առաջնորդ Ժիշկա ասպետն ամեն տեղ էլ ջարդեց գերմանացի խաչակիրներին։ Հուսյանների մեջ հենց սկզբից նկատելի յեր խիստ տարբերություն։ Համալսարանը, սենյորները, Պրագայի հարուստ քաղաքացիները պատրաստ էին յեկեղեցու հետ հաշտվելու, յեթե իրավունք տային աշխարհականներին ևս հաղորդվել նաև գինով։ Այս չափավորներից կամ սկիհականներից ավելի հեռու էին գնում մանր ասպետները, դյուղացիները, արհեստավորները, սրանք պահանջում էին հոգևորականներին հեռացնել և քարոզիչներ ընտրելը թողնել ժողովրդին կամ տարորին (այսուհետև էլ նրանց անունն և տաբորականներ)։ Սրանց մեջ հանդես էին գալիս ներշնչված քա-

րոզիչներ, վորոնք հայտարարում էին, թե շուտով աշխարհի վերջը կհասնի, պահանջում էին հողերի բաժանում և համայնական սեփականություն։

Կոնստանցայի ժողովը չբավարարեց նույնիսկ չափավորներին։ Ժողովից ընտրված պապը չեր հրավիրում ընդհանուր յեկեղեցական ժողովներ և չեր սկսում ժողովի հայտարարած յեկեղեցու բարենորոգությունը վերից մինչև վերը։ Այդ պատճառով վերակազմության կողմնակիցները պահանջում էին գումարել յերրորդ մեծ ժողովը Բազելում (1431 թ.)։ Սիգիզմունդ թագավորը և Բազելի ժողովը սկիհականների հետ համաձայնության յեկան և Չեխիայի համար թույլ տվին հաղորդություն գինով ևս և քարոզ ժողովրդի լեզվով։ Այն ժամանակ հարուստ և չափավոր հուսյանները իրենց հերթին, յերկյուղ կրելով տաբորականների քարոզից, ապստամբությունից յեկան կանգնեցին և ոչնչեցին ճնշելու այն. տաբորական զորքը և առաջնորդներն սպանվեցին։

Բազելի ժողովը պապի հետ ընդհարվեց և հաջողություն չունեցավ։ Յերբ ժողովն սկսեց կրճատել հռոմեական յեկեղեցու յեկամուտի աղբյուրները, պապը հայտարարեց լուծված և աշխատում եր բարձր հոգևորականներին գրավել դեպի իր ժողովը, վորը հրավիրել եր Ֆլորենցիայում՝ հույներին արևմտյան յեկեղեցու հետ միացնելու համար։

Պապական իշխանությանը սպառնացող վտանգն անցավ։ Պիոս II պապը հերետիկոսություն հայտարարեց ժողովների՝ պապերի իշխանության նկատմամբ գերիշխող լինելու ուսմունքը և փոխեց այն համաձայնությունը, վոր Բազելի ժողովը կապել եր սկիհականների հետ։ Մեծ ընդհանուր բարեռոգությունը, վոր սպասում էին XV դարի սկզբում, չհաջողվեց։

Տպագրության սկիզբը։ Վորովհետև առաջվա նման հոգևորականները քիչ էին բավարարում ժողովրդի լուսավորության պահանջներին, շատ մարդիկ իրենց ընտրած ճանապարհով առաջ գնացին։ Նիդերլանդիայում սկիզբ առավ ընդհանուր կյանքի յեղբայրների ընկերությունը, վորոնք մեծ գրքեր էին արտագրում և տարածում։ Մեծ քանակությամբ վաճառում էին աղետանների ս. գիրքը։ Դա ավելի շատ նկարների մի ալբոմ եր, քան գիրք։ Հին և նոր կտակարանների կարևորագույն տեղերն իրար մոտ էին դրված նկարներով, իսկ սրանց տակ կային միայն համառոտ բացատրություններ։ Ս. գրքից նկարներ, սրբերի պատկերներ, համառոտ բնագրերով պատրաստվում էին նաև առանձին թերթիկների վրա։ Վորովհետև սրանց մեծ պահանջ կար, մտածեցին պատրաստել մեքենայական միջոցով. նկարը մի թերթի վրա, իսկ բնագիրը մի ուրիշի, փորագրում էին յերկու փայտե տախտակների վրա, ուշուցիկներ թողնելով այն տեղերում, վորոնք պետք է թղթի վրա տպվեյին։ Տախտակներին քսում էին թանաք կամ ներկ և վրան դնում թուղթը։ Այս տպագրության սկիզբն եր։

XV դարի 30-ական թվերին վոսկերիչ և փորագրող Գուտտենբերգը, Մայնց քաղաքից, այն մտքին հասավ, վոր մի ամբողջ փորած յերես առանձին շարժական տառերի բաժանի և ամեն յերեսի համար տառեր շարի։ Գուտտենբերգը հարմարեցրեց տպագրության համար նաև մի դաղձյան մատիտ։ Առաջին գիրքը, վոր լույս տեսավ 1456 թ. տպարան-արհեստանոցից, լատիներեն ս. գիրքն եր։ Հետո տպագրվեց Հուստինիանոսի օրենքների ժողովածուն։

Տպագրությունը շատ մեծապրեց պատրաստվող գրքերի օրինակների թիվը, և այս ձևով շատ եժանացավ գիրքը· գրքի գնի իջնելուն նպաստեց նաև փայտի կտորներից պատրաստվող թղթի գյուտը։ Յերևան յեկավ մի ուժեղ միջոց միտքը արագությամբ հաղորդելու, գիտությունը տարածելու լայն շրջաններում։

14. ԻՏԱԼԻԱ· ՆՈՐ ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ

XIII դարի վերջին Շտաուֆենների անկումից հետո գերմանական կայսրների արշավանքները Իտալիա դադարեցին, և կայսրության հետ կապը կտրվեց։ Այդ ժամանակ հյուսիսը բաժանվում էր միքանի մեծ քաղաքների մեջ. սրանցից գլխավորները յերեք վաճառականական և ծովափնյա հանրապետություններն՝ հին Պիզա, Ջենովա, Վենետիկ և յերկու ցամաքայիններ՝ Միլան և Ֆլորենցիա։


Վենետիկ յեվ Ջենովա։ Բազաքների մեջ համաձայնություն չկար։ Ջենովան Պիզայից խլել էր Կորսիկան և Սարդինիան, վոչնչացրել էր նրա նավատորմը, քանդել նավահանգիստը և խլել նրա գնորդներին։ Վենետիկն ու Ջենովան գրեթե անընդհատ թշնամանում էին միմյանց հետ։ Վենետիկը խաչակիրների՝ կ. Պոլիսը 1204 թ. նվաճելուց առաջին ոգուտներ ստացավ, Ջենովան, ընդհակառակը, Փոքր Ասիայի կայսրներին՝ Պալեոլոգներին, ոգնում էր 1261 թվին խաչակիրներին դուրս քշելու Բյուզանդիայից. Ջենովացիները դրա փոխարեն ստացան Խիոսը և Լեսբոսը։ Այն ժամանակ վենետիկցիները սկսեցին տաճիկներին ոգնել Բյուզանդիայի դեմ։ XIII դարի վերջին Ջենովացիների նավատորմը խիստ պարտության մատնեց վենետիկցիների նավատորմին։ XIV դարի վերջին գերակշռությունը նորից Վենետիկն ստացավ։ Աղբիական ծովը նրան անցավ։ Վենետիկը նվաճեց Հունիական կղզիները, Կրետեն, ավելի ուշ՝ Կիպրոսը. ծովային առևտրում Վենետիկը վճռականապես առաջին տեղը բռնեց։

Յերկու հանրապետություններում էլ ազնվատիրական կառավարություն հաստատվեց։ Դժվարին և խիզախություն պահանջող հեռու ձեռնարկություններում, ծովային կռիվներում և առևտրական նավաուղիներում առաջ գնացին միքանի յեռանդուռ տոհմեր, վորոնք շատ հարստացան և ճնացած բնակչության իրենց հպատակներին։ Վենետիկում մեծ խորհուրդը կազմվում էր ճոբիլեներից (ազնվականներ), վորոնք իրենց կոչումը թողնում էին ժառանգներին։ XIV դարի սկզբին այնտեղ հիմնվեց Տասի խորհուրդը, վոր նման էր ինկվիզիցիային, վորը գաղտնի մատնություններ էր ընդունում և հետևում էր դաժին, բոլոր նորիլներին և ճնացած քաղաքացիներին. այն մարդկանց, վորոնց նկատում էին կամ միայն կասկածում կառավարության դեմ խորհուրդներ ունենալու մեջ, սպասում էր գաղտնի դահճի ձեռքից արագ պատիժ։

Ֆլորենցիա։ Ֆլորենցիայի վարպետները արտադրում էին մետաքսի գործվածքներ և Շամպանիայի տոնավաճառներում գնած բրդի կոպիտ կտորները վերամշակում էին նուրբ տեսակի (106 յեր.)։ Այդ արտադրությունները տարածելով՝ ֆլորենցիացիները հարաբերություններ հաստատեցին Յեվրոպայի բոլոր յերկրների հետ և զարձան դրամական միջնորդներ Իտա-

լիայի և անդրալպյան յերկրների միջև։ Յեվրոպայում դրամական ամենամեծ շրջանառությունն անում էր հռոմեական կուրիան. Ֆլորենցիայի վաճառականները պապի մոտ գործնական ծառայության մեջ յեղող բոլոր հակառակորդներին հետզհետե դուրս քշեցին և զարձան կուրիայի գլխավոր բանկիրները։ Ֆլորենցիացիներն առաջինը յեղան Յեվրոպայում, վոր վոսկի դրամ կարեցին (Ֆլորիններ)։

XIII դարում Ֆլորենցիայում կառավարում էին նորիլները, այսինքն Տոսկանայի ամրոցների սեպհականները. նրանք զիբելլինյաններ էին, պաշտպանում էին Շտաուֆենների իշխանությունը, վորովհետև կայսրը նրանց



Իտալիան XIV յեվ XV դարերում։ 1. Նեապոլի թագավորությունը. 2. Պապական կալվածները 3. Ֆլորենցիայի հանրապետության կալվածները. 4. Վենետիկի կալվածները. 5. Միլան. 6. Ջենովա։

պաշտպանն էր առաջ գնացող վաճառականության և պապական բանկիրների դեմ. վերջիններն իրենց հերթին գվելֆներ էին, պապի և ժողովրդի դեմ. վերջինների մարդիկ, վորովհետև սրանց էին միանում արհեստական կուսակցության մարդիկ, վորովհետև սրանց էին միանում արհեստավորները, վորոնք կախում ունեին իրենց ապրանքները գնողներից։ XIII դարի վերջին պապերի վերջնական հաղթանակի հետ՝ կայսրների վրա, ժողովրդական կուսակցությունը հաղթանակը տարավ նորիլների վրա և հին կառավարությունը տապալեց (1292 թ.)։ Քաղաքային գերագույն խորհուրդը կամ սինիորիան կազմվեց պրիորներից, այսինքն համքարների հուրդը կամ սինիորիան կազմվեց պրիորներից, այսինքն համքարների ավագներից, վորոնց ընտրում էին գրասենյակներ, խանութներ և արհեստանոցներ ունեցողները, և տարեկան 6 անգամ փոխվում էին։ Նորիլների վրա յերեքտակ հարկ դրին, գյուղերում հողատական իրավունքը վերացրին, և հողատերերը զրկվեցին ձրի բանվորներից, հողերը, վոր պատկանում էին նորիլներին, մեծ մասով անցան արդյունաբերող քաղաքացիների ձեռքը։ Շատ հին ընտանիքներ քաղաքից աքսորվեցին։

Հին Ֆլորենցիան վորպես աքսորի յենթարկված գիբելլիններից մեկը՝

Դանտե Ալիգյերին. Աստվածային կատակերգություն պոեմում Դանտեն իր ժամանակակիցների վրա դատ է անում։ Դա տեսիլքների մի պատմություն է, որի մեջ նա այցելում է դժոխքը, քավարանը և դրախտը։ Դժոխքում նա տեսնում է պապերին, որանցից մեկը մինչև վիզը դրամի մուշկի մեջ թաղված, տեսնում է Ֆլորենցիայի բանկիրներին վաշխառության համար պատժված։ Մեղավորներից ամենավատերը գտնվում են սատանայի ծնոտներում. դրանք են՝ Հուդա Իսկարիովացին և Բրուտոսը Կասսիոսի հետ՝ կեսարին սպանողները, որին Քրիստոսին հավասարեցրել է։ Բացատրությունն այն է, որ կեսարը — կայսրների նախորդն է, իսկ կայսերական իշխանությունը Դանտեյի համար այն բարի հնի խորհրդանշանն է, որ տապալեցին պապը և գվելֆները։

Ֆլորենցիայում աստիճանաբար առաջ անցան միքանի ամենահարուստ բանկային տներ։ Վորքան ավելի խոշոր եր այդպիսի տունը, այնքան ավելի փոխառուներ եր ունենում նա վաճառականների և արհեստավորների մեջ, այնքան ավելի մարդ կարող եր տանել սինիորիա, այնքան ավելի կաճեր նրա ուժը հանրապետության մեջ։ Մոտ 1400 թվին ամենահարուստ տունը դառնում են Մեդիչի բանկիրները։

XV դարի 30-ական թվերին սրանց հակառակորդներ հարուստ Ալբիցցիներին հաջողվում է տան գլխավոր Կոզիմո Մեդիչիին աքսորել տալ։ Աքսորը Կոզիմոյի համար հաղթանակի փոխվեց. նրան ընդունում են իբրև թագավորի վենետիկում և այլ տեղերում, ուր Մեդիչիների դրամագլխի մեծ մասը ձեռնարկություններում եր դրված։ Սակայն Ֆլորենցիան էլ չկարողացավ առանց դատապարտված բանկիրի կառավարվել։ Շուտով նրան պարտական շատ մարդիկ մտան սինիորիայի մեջ։ Ալբիցցիները և իրենց կողմնակիցներն իրենց հերթին դատապարտվեցին, իսկ Կոզիմո Մեդիչին հաղթանակով յետ դարձավ իր տեղը. այդ ժամանակից մինչև իր կյանքի վերջը նա Ֆլորենցիայի անվիճելի տերն եր (1434—1464)։

Կոզիմոն ապրում եր իբրև մասնավոր մարդ և արտաքինով համեստ եր պահում իրեն։ Բոլոր պաշտոնները և ժողովները մնացին հնի նման։ Բայց վոչ մի տեղ չեր կարող մեկը ստանալ, յեթե նա Մեդիչիին հաճելի չեր։ Կոզիմոյի մահից հետո իշխանությունն առանց վեճի անցավ նրա վորդու ձեռքը։ Կոզիմոյի թոռ՝ Լորենցո Մեծին սկսեց իրը թագավոր «մեծությունն» (մեծափառություն) տիտղոսը կրել։ Մեդիչիները գեղարվեստական և գրական ճաշակ ունեյին։ Նրանք Ֆլորենցիան հարստացրին նոր վոճով շինած յեկեղեցիներով ու շենքերով, վորոնք ընդարձակ եյին և առատ լույս ունեյին։ Կոզիմոն հազվադյուտ ձեռագրներին անդին դրամ եր տալիս և իր պալատում գրադարան կազմեց։

Ռևնապետություն։ Մեդիչիների իշխանությունը հանրապետությունը թագավորությամբ փոխարինելու մի օրինակ է։ XV դարում իտալական գրեթե բոլոր քաղաքներում, բացի Վենետիկից, յերևացին բռնապետներ։ Հաճախ հարուստների դեմ մղած կռիվներում կռվողներն ընտրում եյին մի պաշտոնի անատման իշխանությամբ, վոր կարգը վերահաստատեր (capitano del popolo), իսկ այդ մեկնորդն իրեն շրջապատում եր պահակներով և իր ձեռքին եր պահում իշխանությունը։ Կամ քաղաքում իշխանությունը գրավում եր կոնդոտյերը, վարձկան զորքի գլխավորը, վորպեսի զորքը վո-

խարինում եր հին քաղաքային յերկրապահներին։ Կոնդոտյեր Սֆորցան Միլանում իշխող տոհմի հիմքը դրեց։

Բռնապետի կառավարությունը պահվում եր շնորհիվ կաշկածամիտ հրոսկողության քաղաքացիների վրա և հակառակորդներին խիստ հալածելով։ Բռնապետն աշխատում եր միության կազմել հարևան իշխողների հետ, աշխատում եր պալատ ունենալ, այդտեղ գրավել աչքի ընկնող նկարիչների և գրողների, ժողովրդին դեպի լինքը լավ տրամադրել շքեղ տոնակատարություններով և խոշոր շինքեր շինելով։

Իտալական բռնապետների թվի մեջ պիտի հաշվել XV դարի յերկրորդ կեսին նաև պապերին։ Կոնստանցայի և Բազելի ժողովների անհաջողություններից հետո պապերը նորից իրենց իշխանությունն Հռոմում վերականգնեցին։ Նրանք հետաքրքրվում եյին միայն աշխարհիկ գործերով և աշխատում եյին մեծացնել իրենց նեպոտների (ազգականների) կալվածները։ XV դարի վերջի պապերը՝ Սիքստոս IV և Ալեքսանդր Բորջիա շատ փչացած մարդիկ եյին. նրանք չեյին քաշվում բանագրանք դնելու շրջանների վրա, վոր բնակչությանը սարսափեցնեն և իրենց վորդիների իշխանությունը կարգավորեն։ Աբևմտյան յեկեղեցու գլուխները առաջ քրիստոնյաներին կոչ եյին անում խաչակիրների արշավանքներ կազմելու թյուրքերի դեմ, այժմ պապը համաձայնության եր գալիս սուլթանի հետ, նրա սիրտը շահում եր, վոր թյուրքերին զրդեն Վենետիկի դեմ։ Ալեքսանդր VI պապը յերևում եր շրջապատված պահակներով և վարձկան մարդասպաններով. նրա ճաշի սեղանի ժամանակ թունավորելով հեռացնում եյին այն կարդինալներին, վորոնք պապի քաղաքականության համար վտանգավոր եյին յերևում։

Նոր լուսավորություն։ Իտալական բոլոր կառավարությունները՝ և բռնապետները, և պապերը, և հանրապետական սինիորիները կարիք ունեյին կրթված աստիճանավորների, վորոնք լավ գրել կարող եյին և ճարտար խոսք։ Քաղաքները և իշխանները միշտ իրար դեսպաններ եյին ուղարկում. ընդունելության ժամանակ դեսպանները յերկար ճառեր եյին ասում, վորից մանրամասն պատասխանում եյին տեղական հռետորները։ Հարևանին կամ դաշնակցին ուղարկում եյին մանրամասն գրություն հրաշալի վոճով գրված. այս տեսակետից մեծ վարվեց եր համարվում Ֆլորենցիայի հանրապետության կանցլեր Սալյուտատին։ Բռնապետները վորոնում եյին այնպիսի գրողների, վորոնք կարող կլինեյին իրենց արած ծառայությունները հրապարակ հանել և հակառակորդներին սևացնել։ Սուր խոսքի այդ

սին, վորը նրան հասցնում է մինչև գրախոսի շեմքը։ Դանտեյից հետո յեկող սերնդի մարդիկ գոան Կիկերոնի նամակները և ճառերը։ Պետրարքան՝ Ֆլորենցիացի բանաստեղծ XIV դարի առաջին կեսի, Կիկերոնին համարում եր բոլոր ժամանակների և ժողովուրդների ամենամեծ գրողը։

Հետզհետե ավելի մեծանում եր լատիներենը բուն աղբյուրներից իմանալու ցանկությունը, ուսոի և սկսեցին յեռանդով փնտռել հռոմեական հեղինակների անվնաս մնացած գրություններ։ Հաճախ այդ գրությունները կամ մոռացության եյին մատնված լինում կամ բոլորովին տգետ մարդկանց եյին պատկանում։ Ֆլորենցիացի յերրորդ բանաստեղծ Բոկկաչիոն, Պետրարքայի կրտսեր ժամանակակիցը, հնությունների անխոնջ վորոնող, պատմում է այն մասին, թե ինչպես գնացել է Մոնտեկասինո հին վանքը, վորը հայտնի յեր իր ձեռագրերի հարստությունով. իր խնդրին, վոր բանան գրադարանը, նրան ցույց տվին մի սանդուղք, վոր տանում եր դեպի փակ հին աշտարակը, ուր նա տեսավ գրքերը բոլորովին անկարգ վիճակում, ծածկված փոշու շերտերով. շատ թանգարժեք որինակներից կտրված եյին յերեսներ, և վանականները բացատրեցին, վոր յերբեմն յեկամուտ ունենալու համար նրանք գրքից կտրված մասերի հին թանաքները լվանալով հանում են և գրում են սաղմոսներ, հետո յերեխաներին վաճառում։

Իտալիայում մեծ հետաքրքրությամբ սկսեցին նայել նաև հնությունից մնացած հուշարձանների վրա՝ հռոմեական շինքերի և քանդակագործության մնացորդների։ Պապերի Ավինիոնում մնալու ժամանակ XIV դարի կեսին յերիտասարդ փոետարան Կոլա Ռիենցին աշխատում եր Հռոմի բնակչության գրգռել հին հանրապետությունը վերականգնելու։ Նրա գլխավոր միջոցներն եյին ճառը և գրությունները հին Հռոմի քարերի և մնացորդների մասին։ Մերթ ընդ մերթ ավելի ուշ սկսեցին փնտռել և ուսումնասիրել հին հունական գրողներին։ Իտալացիներին սրանց հետ ծանոթացրին հույները, վորոնք թյուրքական ջարդերի պատճառով Բյուզանդիայից գաղթել եյին։ Մանավանդ շատ հույն գիտնականներ յեկան Ֆլորենցիայի ժողովի ժամանակ, վորը հրավիրված եր հույն յեկեղեցին լատինականին միացնելու նպատակով (1439 թ.)։

Նոր հասարակություն։ Հին հռոմեական և հունական անցյալի վոգով ճարտարախոսություն մշակելն սկսեցին անվանել մի բառով, վորը դեռ հռոմեացիների մեջ գործածական եր — հումանիզմ (humanitas), այսինքն մարդու կատարելություն. (հետագայում XVI դարում Գերմանիայում այդ բառից կազմեցին գիտնականների համար անուն—հումանիստներ)։ Հումանիզմի նկատմամբ հետաքրքրությունը Իտալիայի յերեք պլխավոր քաղաքներում եր պահպանվում՝ Վենետիկում նորիլների մեջ, Հռոմում պապական կուրիայում, մանավանդ Նիկոլայ V պապի ժամանակ (XV դարի կեսին), վորն ինքն էլ գրող եր, պապի պալատում՝ Վատիկանում, գրադարան հիմնեց և մեծ գրամ եր տալիս հունարենից յեղած թարգմանությունների համար։ Ֆլորենցիական համբակներից մեկը հավաքվում եր երհարուստ Ալբերտիի՝ քաղաքից դուրս գտնվող «գրախտի» ամառանոցում, մյուսը ս. հոգու վանքի խաղաղության մեջ. հին գրականության բարեկամները հավաքվում եյին անխոնջ ձեռագրներ փնտռող Նիկկոլի վաճառականի մոտ։ Նիկկոլիի մոտ պահվող ձեռագրներից շատերը արտագրվել են իր իսկ ձեռքով. նա սիրով

հրավիրում եր իր գրադարանը, տալիս եր ամեն տեսակ բացատրություններ և շատ բախտավոր եր համարում իրեն, յերբ կարողանում եր անտիկ գրականության նոր յերկրպագու գրավել։ Թանգարժեք գրքերի ամբողջ ժողովածու կազմելու համար, վորն այն ժամանակվա հաշվով շատ մեծ եր համարվում—մոտ 800 ձեռագիր—Նիկկոլին բոլորովին անանկացավ, այն ժամանակ Կոզիմո Մեդիչին իր բանկում նրան անսահման վարկ բաց արավ։ Կոզիմոն նույնպես միջոցներ ավեց Պլատոնը ուսումնասիրելու համար գրքերը բանալու, նրա լծակի վորդի Ֆիչինոն հատուկ գիտական պատրաստություն ձեռք բերեց, վոր Կոզիմոյի համար թարգմանե և բացատրե Պլատոնի գրվածքները։

Նոր լուսավորության տարածման մեջ կար մի նշանակալի կետ՝ այդ լուսավորությունը շատ դրաղեցնում եր կանանց։ Ասպետների հասարակության մեջ կանայք աչքի ընկնող դերը ունեյին. ավելի ևս այդ նկատելի յեր Իտալիայի քաղաքային և պալատական կյանքում։ Շարժուն կյանքը նրանց դուրս հանեց ընտանեկան փակվածությունից. շատերը շատ աշխուժ մասնակցություն եյին ունենում արդյունաբերական գործում, մեծ ընդունելություններին և հանդեսներին, գիտական զրույցներում և դրամունքներում։ Ինքն իրեն միանգ ծագեց այն մասին, վոր կնոջ բնությունը հավասար և տղամարդու բնության, և վոր նրանք տղամարդկանց հետ հավասար իրավունքներ ունեն կրթության վերաբերմամբ։

Այս միտքը արտահայտել է Բոկկաչիոն իր «Դեկամերոն»-ում, վորը պատմվածքների ժողովածու յե։ Գիրքն սկսվում է տասը յերիտասարդ կանանց և տղամարդկանց ժողովի նկարագրությունով, վորոնք հեռացել եյին Ֆլորենցիայից ժանտախտի համաճարակի պատճառով։ Հավաքվելով քաղաքից դուրս գտնվող մի տան մեջ, նրանք իրենց միջից ընտրում են «թագուհի»։ Փոխանակ անմիտ խաղեր անելու՝ թագուհին առաջարկում է ավելի խելացի զրաղմունք—այն է՝ բոլորն էլ հերթով պատմություն անեին։ Ալբերտիի մոտ յեղած գիտական զրույցներում կանայք ամենակրթված և նրբամիտ տղամարդկանցից յետ չեյին մնում։ Փիլիսոփայի մոտ յեղած մի վեճի ժամանակ մի կնոջ սրամտությամբ հիացած հետևյալ բացականչությունն է լսում. «Իսկապես յես չգիտեյի, վոր Ֆլորենցիացի կինը այդքան ուժեղ և փիլիսոփայության մեջ, այդպես լավ գիտե և ճարտասանություն և սրամտանություն»։

Նոր արվեստը։ Իտալական հասարակության կենցաղն ու հասկացողությունը XIV և XV դարերում ստեղծեց արվեստի նոր բնույթ։ Նորիլները, հարուստ վաճառականները, բանկիրները և գործարանատերերը, բռնապետները և աշխարհիկ կյանք վարող բարձր հոգևորականները, իրենց մոտ մեծ հասարակություն հավաքելով չեյին կարող բավականանալ հին նեղ տներով, նեղ սենյակներով, ցած կամարների տակ. նրանք սկսեցին շինել տալ ընդարձակ պալատներ լայն մուտքերով և վերանդաներով (որյակ), շրջապատված պարտեզներով. կիսաշրջան պատուհաններով, մեծ դահլիճների մեջ շատ լույս եր մտնում. գորգերը, գեղեցիկ կարասիները ընդունարանների ներքին կահավորությունն եյին կազմում։

Հռոմում Նիկոլայոս V պապը մտածեց ճարտարապետ Ալբերտիի ծրագրով նորից վերաշինել պապի Վատիկանի հին ամրոցը. յենթադրվում եր

լայն փողոցների մեջ, խուսափելով նախկին ժամանակի վոչ-առողջարար նեղվածք գրությունից, պալատական պալատ և ս. Պետրոսի նոր մեծ տաճար կանգնեցնել։ Ֆլորենցիայում XV դարի սկզբին վորոշեցին տաճարի մի մասը ծածկել խոշոր գմբեթով։ Բազաքը վարպետների հատուկ խորհրդակցություն կազմեց. գժվարության հանդիպելով՝ վոմանք առաջարկում էին նեղսից ամբողջապես իսկապես կապել, վոր նրանց վրա կամարը կանգնեցնեն. մյուսները առաջարկում էին տաճարը հողի բլուրներով շրջապատել։ Ծարտարապետ Վրունելլեսկին այդ անդոր խորհուրդները մերժեց. իր հանդուգն հաշիվներով առաջնորդվելով՝ նա հանձն առավ այդ մեծ գործը և վերակենդանացրեց հռոմեացիների ժամանակից մոռացված կամարները կառուցանելու արվեստը։

Շատ փոխվեց նաև նկարչության և քանդակագործության բնույթը։ Նախկին վարպետները, վորոնք շինում էին և զարդարում եկեղեցիները, արհեստավորներ էին. նրանք աշխատանքը կատարում էին սովորական ձևերով. միաժամանակ և վորմնադիր էին և հյուսն, և քարտաշ և նկարիչ։ Այժմ կենդանի և գեղեցիկ պատկերացումների այնպիսի պահանջ առաջ եկավ, վոր պետք և հատուկ մասնագետներ հանվեն զային դույներով աշխատելու, բրոնզից ձուլելու և մարմարիոնից քանդակելու համար։ Քանդակագործ Դոնատելլոն XV դարի սկզբին իրեն արձանների համար ուսումնասիրում և մարդու մարմնի կազմությունը, նրա շարժումները և թեքումները, ջղերի լարումները, դեմքի խաղերը։ Նրա ժամանակակից, ավելի վաղ մեռած Մազաչչոն առաջինն եր, վոր նկարի մեջ գործադրեց պերսպեկտիվան (հեռանկարը)։ Նրա նկարի մեջ գլխավոր անձերը առաջի մասում ուռուցիկ կերպով աչքի չեն զարնվում և հետու խորքն և անցնում հետին կողմը։

Արվեստն այդ շրջանում ապշեցուցիչ հաջողություններ ունեցավ. կարծես նա յերկարատև քնից և անշարժությունից հետո նորից կենդանացավ։ Այդ ապավորության տակ մենք Իտալիայի XIV և XV դարերի շրջանը անվանում ենք Վերածնություն (Ֆրանսերեն renaissance)։

15. ՄԵԾ ՀԱՑՏՆԱԳՈՐԾՈՒՄՆԵՐ

Յեվրոպացիների շարժումը դեպի Արեվելք։ Խաչակիրների արշավանքներից սկսած՝ XII դարում յեվրոպացիները ձգտում էին ընդարձակել իրենց հարաբերությունները և գաղութներն իրենց նեղ ժայր ցամաքի սահմաններից դուրս։ Թեև խաչակիրների տիրապետությունները կարճ, բայց իտալական և ֆրանսիական քաղաքների մի անդամ սկսած առևտրական հարաբերությունները մնացին։ Յենովացիները գրավեցին Ղրիմում Կաֆան և հետո Կասպից ծովի Թափառական Թաթարների մոտ։ Վենետիկցիները իրենց ձեռքին էին պահում Յեգիպտոսի և Ասորիքի հետ առևտուրը և աշխատում էին առևտրական ճանապարհ բանալ դեպի Միջին Ասիայի խորքը, դեպի Հնդկաստան և Չինաստան։

XIII դարի վենետիկցի վաճառական Մարկո Պոլոն Սև ծովով անցավ մինչև Անդրկովկաս, այնտեղից ցամաքով մինչև Պարսից ծոցը և սրա ծայրից նորից ցամաքով Միջին Ասիայի լեռնային յերկրները և անապատները՝ Չինաստան, ուր այդ ժամանակ իշխում էին մոնղոլները։ Մոնղոլների մեծ

խանը լավ ընդունեց վենետիկցիներին։ Պոլոն յերեք տարի չինական մի նահանգի փոխարքա յեր և ընդամենը 20 տարի անցկացրեց Սրեվելքում։ Պոլոյի գրած նկարագրության մեջ պատմվում և Չինաստանի հրաշքների մասին՝ փոստի, թղթադրամի, այրվող գազի։ Պոլոյի գրվածքը թարգմանվեց յեվրոպական զանազան լեզուներով և մեծ ետաքրքրություն հետագա հետազոտությունների համար։

XIV դարում յեվրոպացիների դեպի Արևելք շարժումը դժվարության հանդիպեց։ Միջին Ասիայից դուրս յեկան թափառականների նոր խմբեր, վորոնք հարաբերությունը խզեցին։ XV դարում նրանք կործանեցին Սրևելքի առաջատար քրիստոնյա պետությունը՝ Բյուզանդիան։

Բյուզանդիայի անկումը յեվ տաճկական պետությունը։ Յերբ Միքայել Պալեոլոգը՝ Նիկիայի և Փոքր Ասիայի տերը, դուրս քշեց Կ.-Պոլսից լատին կայսրին (1261 թ.), Բալկանյան Թերակղզու հարավային մասը և կղզիները ենթակա Ֆրանսիացի խաչակիրների և իտալական առևտրական հանրապետությունների ձեռքում։ Փոքր Ասիայի մեծ մասը նվաճեցին տաճիկները, վորոնք այժմ ավելի սերտ միացան ոսմանցիների ցեղի ղեկավարության։ Բալկանյան Թերակղզում գրեթե Եգեյան ծովի ափին եր հաստում սերբերի մեծ պետությունը, գրավելով Բուլգարիայի և Մակեդոնիայի մասերը։ Սերբերի թագավոր Ստեփան Դուշանը իրեն բյուզանդական կայսրից բարձր եր համարում և կոչվում եր ռոմանական (հռոմեական) կեսար։ Սրա դեմ պաշտպանություն ունենալու համար բյուզանդական կայսրը XIV դարի կեսին մոտ տաճիկներին հրավիրեց Ասիայից. նրանք գրավեցին Դարդանելի նեղուցին մոտ Գալիպոլին և առաջին անգամ հաստատվեցին Յեվրոպայում։

Տաճիկների սուլթանն ուներ այն, ինչ վոր այն ժամանակվա Յեվրոպայում վոչ մի տեղ չկար՝ մշտական զորք. սրա մեջ գլխավոր ուժն եր յենիչերիների հետևակ զորքը, կազմված քրիստոնյա վորբերից, վորոնք ընդունել էին իսլամը, և վորոնց սուլթանը առատ վարձատրում եր։ Տաճիկները սերբերին հաղթեցին Կոսովայի դաշտում (1389 թ.) և վոչնչացրին սերբերի և բոլգարների պետությունները։ XIV դարի վերջերին նրանք գրավեցին գրեթե ամբողջ Բալկանյան Թերակղզին. բյուզանդական կայսրը իր ձեռքի տակ ուներ միայն Կ.-Պոլսի մոտ ծովերի միջի անկյունը և գրավոր տաճիկներին հարկատու։ Տաճիկները, սակայն, կանգ առան Արևելքից մոնղոլների սկսած շարժումով, «կաղ» Թեմուրի (Լենկ Թեմուր) առաջնորդությամբ, վորը կարճ ժամանակվա ընթացքում միացրեց Միջերկրականից մինչև Զինաստան և Վոլգայի գետաբերանից մինչև Դանգես գտնված յերկրները։ Անգորայի մոտ՝ Փոքր Ասիայում Թեմուրը ջարդեց և գերի վերցրեց տաճիկների սուլթան Բայազետին (1402 թ.), վորն արդեն պատրաստվում եր պաշարել Կ.-Պոլիսը։ Թեմուրի մահից հետո տաճիկները շուտով կորցրած յերկրները վերադարձրին իրենց։

Բյուզանդիայի պաշտպանությունը իր դոյության վերջին դարում շատ թույլ եր։ Կայսրը և հույն յեկեղեցու մի մասը համաձայնեցին Ֆլորենցիայի ժողովում ընդունել ունիան, այսինքն ճանաչել պապի գերիշխանությունն արևելյան յեկեղեցու վրա (1439 թ.), բայց հույն ազգաբնակության մեծ մասը թշնամաբար վերաբերվեց ունիային։ Վանականները հա-

մաճայն էին տաճիկներին հպատակվելուն. Աֆռնի վանքը մտավ սուլթանի հովանավորության տակ։

XV դարի կեսին սուլթան Մուհամմեդ II սկսեց Կ.-Պոլսի պաշարումը։ Վերջին Կոստանդին XI կայսրի մոտ միայն չնչավոր կամավորներ. նրա սեփական ուժերն աննշան էին։ Հարուստները զրամական ոգնություն չէին ուզում տալ և վոսկին հողի մեջ թաղում էին։ Ծովից, այնինքն իրենք կողմից քաղաքն անմատչելի էր։ Տաճիկները յերկաթակ ամուր պարիսպները ճեղքեցին և ներս խուժեցին։ Քաղաքի պաշտպանները կայսրի հետ բոլորն էլ ընկան. սուլթանը գնաց ս. Սոֆիայի տաճարը և հրամայեց կանչել բոլոր մուսուլմաններին այդտեղ. այդ ժամանակից Հուստինիանոսի կառուցած յեկեղեցին վերածվեց մզկիթի (1453 թ.)։

Տաճիկները դուրս քշեցին վենետիկցիներին կղզիներից և Փոքր Ասիայի ու Սաոբիքի ափերից և իրենք գերիշխանություն ձեռք բերին Միջերկրականի արևելյան մասում։ Յեվրոպացիների առաջ ցամաքային ճանապարհը Հնդկաստան և Չինաստան փակվեց։ Վաճառականները պետք է նոր ճանապարհ փնտռեյին դեպի Հեռավոր Արևելք, կողմնակի և ծովային, որ ապրանքներ գնեն բուն տեղից։

Ովկիանոսյան ճանապարհորդություններ։ XIII դարում յեվրոպացիները արաբների միջոցով ծանոթացան Արիստոտելի և Պտղոմեոսի գրվածքներին և նրանցում գտան յերկրի գնդաձև լինելու մասին ուսմունք։ Յերբ XV դարում Արևելքը փակվեց յեվրոպացիների համար, և նրանք սոխված էին մայր ցամաքի արևմտյան ծայրից դուրս գալ և ովկիանոսի վրայով ճանապարհ փնտռել, յերկրի գնդաձևության գաղափարն առանձին նշանակություն ստացավ։ Այդ բանը այն միտքն էր ծնեցնում, թե արևելյան յերկրներին կարելի յե հասնել նաև արևմուտքից, յեթե բավն էնին հակառակ ուղղությունն ընտրել։ Պորտուգալացի Տոսկանելլին քարտեզ կազմեց, որի մեջ Ասիայի արևելյան ծայրը ցույց էր տրված Յեվրոպայի արևմտյան ծայրի դիմաց, Ատլանտյան ովկիանոսի մյուս կողմը։ Մեծ մայր ցամաքն (Ամերիկայի) մասին չէին էլ կասկածում, թե գոյություն ունի։

Այդ ժամանակ պորտուգալացիները արդեն փորձել էին ովկիանոսով հանապարհորդել։ Պորտուգալացիների ձեռնարկություններն առաջ յեկան մուսուլմանների դեմ կռիվ մղելուց, որոնք դուրս էին քշվել Պիրենյան թերակղզուց, բայց դեռ զինվորական և առևտրական ուժ էին կազմում Աֆրիկայի հակառակ ափին։ Պորտուգալացիները փորձում էին Աֆրիկայի մոտ ընկած մասը ծովով պատել (համարելով այդ մայր ցամաքը հարավում շատ ավելի կարճ)։ Յերբ պորտուգալացի ծովագնացներն անցան Կանաչ հրվանդանը և հայտնագործեցին Գվինեան, նրանց մեջ ավելի մեծ նպատակ առաջ յեկավ՝ խլել մուսուլմաններից առևտուրը Արևելքում և ինքնուրույն մտնել Հնդկաստան։ XV դարի 80-ական թվականներին պորտուգալացի վոսկոդա-Գաման հրվանդանը) և Աֆրիկայի հարավային վերջավորությունները (Բարեհուսո

Կոլումբոսի ձեռնարկությունը։ Այդ ժամանակ Պորտուգալիայի թագավորին դիմեց Ջենովացի Քրիստոֆոր Կոլումբոսը (Կոլոմբո), առաջարկելով Տոսկանելլիի ծրագրով մի եքսպեդիցիա (արշավախումբ) կազմել։ Կոլումբոսը վստահում էր առևտրական ճանապարհներ, բայց և յերապում էր դանել

յերկրային դրախտը և մուսուլմաններից խլել ս. գերեզմանը։ Նրա գլխավոր համոզմունքն էր և ասաց մինչև իր կյանքի վերջին որերը այն, թե արևմտյան ճանապարհը դեպի վոսկու և անուշեղենի յերկիրն անհամեմատ կարճ է և վոր այդ ճանապարհն անցնում է բաց ծովով։ Միայն այս համառոտ գիտելիքներով նա սկսեց այն ձեռնարկությունը, վոր ժամանակակիցներին թվում էր անհնարին։

Պորտուգալիայի թագավորը մերժեց Կոլումբոսի ծրագիրը, և նա դիմեց Սպանիայի Ֆերդինանդին և Իզաբելլային։ Յերիք վոչ այնքան էլ մեծ նավերով, 120 մարդով, մասամբ բանտից արձակված մարդկանցով, Կոլումբոսը ճանապարհ ընկավ 1492 թվի ոգոստոսի սկզբին և յերիք ամիս նավելուց հետո հասավ ափին։ Սպանացիները հասան Բահամյան կղզիներից մեկին և տպա հայտնագործեցին Կուբան և Հաիտին։ Կոլումբոսը հավատացած էր, թե այդ Ասիայի արևելյան ծայրն է կամ Հնդկաստանը (այդ անվան տակ հասկանում էին Չինաստանը, Հնդկաստանը և Հնդկաչինը)։ Նրան չէր շփոթում տեղացի կարմրամորթների տեսքը. նա նրանց ճնդիկներ էր անվանում։

Յեվրոպա վերադառնալուց հետո Ֆերդինանդը և Իզաբելլան Կոլումբոսին ընդունեցին մեծ պատվով։ Նրան այժմ մի ամբողջ նավատորմ տվին. նրա հետ մեկնեցին կաստիլիայի շատ ասպետներ՝ բախտ վորոնելու նոր հայտնագործված Հնդկաստանի սպասվելիք Ելդորադոյում (վոսկի դաշտեր)։ Կոլումբոսի ձեռնարկությունը պորտուգալացիներին անհանգստացրեց, վոր սպանացիները իրենց ճանապարհը Հնդկաստան կկտրեն։ Յերկու կողմերը գիմեցին ժողովուրդների վեճերի դերագույն դատարանին՝ պապին, և Ալեքսանդր VI վճռողների համար սահմաններ բաժանեց, քարտեզի վրայով անցկացնելով դիծ Ատլանտյան ովկիանոսի յերկարությամբ. այն, ինչ վոր գտնվում էր արևմուտք եր՝ տրվեց սպանացիներին, ինչ վոր արևելք եր ընկնում՝ պորտուգալացիներին։

Դեպի Հնդկաստան ճանող ճանապարհի հայտնագործումը։ Թեև Կոլումբոսը շարունակում եր նոր հայտնագործություններ մինչև Ամերիկայի ափերին, բայց նա չնորհից զրկվեց. սպանացիների մեջ ավելի ու ավելի յեր հիասթափություն տարածվում. նրանց առաջ չէին ոժանդին այն հարուստ յերկիրը, վոր հույս ունեին հայտնագործելու։ Մինչդեռ պորտուգալացի Վասկո դա Գաման Աֆրիկայի հարավային ծայրամասը պատեց, արաբ լոցմաններին (հմուտ, ուսյալ նավավար) ոգնությամբ անցավ նրա արևելյան ափի յերկարությամբ և մոտեցավ Հնդկաստանի Մալաբարյան ափին։ Պորտուգալացիները վերադարձին բերին անուշեղենի և գանազան թանգարժեք իրերի մեծ բեռներ (1498)։ Շուտով նրանք հայտնագործեցին ավելի հեռու արևելքում՝ Ցեյլոնը, Մալակկան և ծովով անցան Չինաստան ու Ջոնդյան կղզիները։

Այդ իսկապես այն հարուստ յերկրներն էին, վոր յեվրոպացիները ձգտում էին ձեռք բերել։ Լիսաբոնը դարձավ արևելյան ապրանքների առևտրի կենտրոն։ Պորտուգալացիների ճանապարհորդությունները Կոլումբոսի հայտնագործությունը բոլորովին տարբեր մեջ թողին։ Կոլումբոսին գրկին ցնորամիտ յերազող էին համարում. իր համառ յերևակայությամբ,

վոր հայանագործել և Հնդկաստանը, նա ինքը թուլացրից իր մեծ գործի նշանակությունը։

Ամերիկայի հայտնագործումը։ Շուտով Կոլումբոսի սխալն ուղղվեց մի շարք հայտնագործություններով, վորոնք հաստատեցին, վոր արևմուտքում գոյություն ունի առանձին մայր ցամաք։ Պանամայի պարանոցի բարձրությունից սպանացիները տեսան ահագին ովկիանոս, վորը նրանց իսկական Հնդկաստանից բաժանում էր։ Այդ ովկիանոսով նավել վորոշեց Մագելլանը, սպանական ծառայության մեջ յեղող մի պորտուգալացի։ Մագելլանը մի տեսակ լրացրեց Կոլումբոսի ծրագիրը և միաժամանակ պորտուգալացիների և սպանացիների հայտնագործությունները միացրեց։ 1519 թվին հինգ նավով նա ուղևորվեց դեպի հարավ-արևմուտք, նպատակ ունենալով մեծ մայր ցամաքի հարավային մասը պտտել, վորը ճանապարհի լայնությամբ էր ընկած. հարավ անցավ նեղուցով, վորի վրա ինաց նրա անունը, և մտավ ովկիանոսը, վորին Խաղաղ անունը տվեց։ Նավելով այդ ովկիանոսը նրա ամբողջ յերկարությամբ մինչև Զոնդյան ծովի կղզիները, սպանացիները նրանցից մեկի վրա հանդիպեցին պորտուգալացիներին, վորոնք հակառակ կողմից եկին յեկել։ Մագելլանը այստեղ տեղացիների հետ ունեցած կռվում սպանվեց, և նրա նավերից միայն մեկը վերադարձավ Յեվրոպա, անցնելով Հընդկական ովկիանոսով Աֆրիկայի շուրջը։ Նավը տեղ հասավ իր դուրս գալուց 3 տարի հետո, կատարելով այսպիսով առաջին շուրջերկրյա նավարկությունը։

XV դարի վերջին և XVI-ի սկզբի հայտնագործություններն ամբողջ Արևմտյան Յեվրոպայում մեծ հետաքրքրություն առաջ բերին։ Ֆլորինցիա Ամերիգո Վեսպուչչին XVI դարի սկզբին սպանական արշավախմբերին մասնակցեց և Մեդիչիներից մեկին գրած նամակներում նոր հայտնագործած մայր ցամաքի մասնավոր նկարագրությունը արավ։ Այդ նկարագրությունը ուրիշ լեզուներով թարգմանվելով արագ կերպով տարածվեց և այն կարծիքն առաջ բերեց, վոր հենց այդ նկարագրությունն անողն էլ հայտնագործել և նոր աշխարհը, վորի հետ անքով և նոր հայտնագործած մայր ցամաքն անունը ստացավ Ամերիկա։

ՊԵՏ. ԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ГСС Библиотека
ՀՍՍՌ-Արա ՍՍՀ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

	էջ
I. ՄԻՋԻՆ ԴԱՐԵՐԻ ՍԿԻԶԲԸ.	
1. Գերմանացիք և Հռոմեական կայսրությունը 100—600 թ. ք. հ.	3
II. ԱՐԱԲՆԵՐԸ ՅԵՎ ԲՅՈՒԶԱՆԴԻԱ. 600—1100 թ.	
2. Արաբները	15
3. Բյուզանդիա	27
III. ԱՐԵՎՄՏՅԱՆ ՅԵՎՐՈՊԱՆ 600—1100 թ.	
4. Գերմանական ժողովուրդները և Հռոմեական յեկեղեցին	39
5. Կարլ Մեծի պետությունը	46
6. Ֆեոդալիզմ	53
7. Գերմանիան և Իտալիան X և XI դարերում	60
IV. ՔԱՂԱՔՆԵՐ, ՊԱՊՈՒԹՅՈՒՆ ՅԵՎ ԽԱՉԱԿԻՐ ԱՐՇԱՎԱՆՔՆԵՐ	
8. Քաղաքների բարձրանալը	66
9. Խաչակիր արշավանքներ և պապական իշխանություն	72
10. Հոգևոր կյանք	85
V. ՆՈՐ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՅԵՎ ՆՈՐ ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ	
11. Անգլիա	93
12. Ֆրանսիա և Սպանիա	104
13. Գերմանիա. XIV և XV դ. դ. յեկեղեցական շարժումը	114
14. Իտալիա. Նոր լուսավորություն	124
15. Մեծ հայտնագործությունները	130

NL04029I7
ցուցանուն ցմոթեղղ >>

Հ. Ս. Խ. Հ.

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

Գեղագրության սերիա

1. Սոբոլեվսկայա — Գրական գոհարներ — քրեստոմատիա (728 կջ), 1922 թ. Թիֆլիս (սպառված) Գինը 3 ր. — կ.
2. Լ. Նիկոնով — Հուշերի կյանքը — (պարզ վարձերով և 12 նկարով), թարգմ. Ա. Տ.-Գ. (56 կջ), 1922, Ցերևան, (սպառված) . . » — ր. 40 կ.
3. Եղիշեյան յեվ ուրիշներ — Աշխատանքի դպրոց, Բ. տարի — մայրենի լեզվի դասագիրք (72 կջ), 1922 թ. Ցերևան (սպառված) . . » — ր. 60 կ.
4. Ա. Մուշեղյան — Ինչպես կազմել հերքաբեռում » — ր. 10 կ.
5. Տ. Հարմանյան յեվ ուրիշներ — Դասարնկեր, Ի. տարի — II-րդ տիպ (152 կջ), 1921 թ., Ցերևան (սպառվ.) » — ր. 60 կ.
6. Նուշերի — Դասարնկեր, Ի. տարի — 8-րդ տիպ. (184 կջ), 1921 թ., Ցերևան (սպառվ.) . » — ր. 70 կ.
7. Ս. Վարդիկյան — Հնագիտական քարտեզներ, Բ. մաս, բացատր. տեկստով. — Անկենդան բնություն » — ր. 40 կ.
8. Ս. Վարդիկյան — Հնագիտական քարտեզներ, Ա. մաս, բացատր. տեկստով — Հուշերի կյանքը » — ր. 40 կ.
9. Գ. Եղիշյան — Աշխատանքի դպրոց (ձեռնարկ) » — ր. 50 կ.
10. Վ. Կեմպել — Ընտանեկան վերկրաչափություն, թարգմ. Հ. Դավակատիկյանի (216 կջ), 1923 թ., Ցերևան . . . . . 2 ր. —
11. Սեմ. Մելիքյան — Դպրոցական վերջեր, Ա. տարի (48 կջ), 1 ր. —
12. Դրամատիզացիան I° դպրոցում . . » — ր. 10 կ.
13. Խաղեր Ա. տարի (Այբբենարան). Ցերրորդ տպ. (64 կջ) 1923 թ., Ցերևան . . . . 50 կ.
14. Կարմիր Արեվ — Բ. տարի, կազմեցին և խմբագրեցին Հ. Կարախանյան և Ա.թ. Խնկոյան, (112 կջ), 1923 թ., Ցերևան . . . » — ր. 60 կ.
15. Կարմիր Արեվ — Գ. տարի, կազմեցին և խմբագրեցին Հ. Կարախանյան և Ա.թ. Խնկոյան (152 կջ), 1923 թ., Ցերևան . . . . » — ր. 80 կ.
16. Կարմիր Արեվ — Դ. տարի, պատկերազարդ, կազմեց և խմբագրեց Մուրխաթյան (192 կջ), 1923 թ., Ցերևան 1 ր.
17. Կարմիր Արեվ — Ե. տարի, պատկերազարդ, կազմեց և խմբագրեց Մուրխաթյան (206 կջ), 1923 թ., Ցերևան 1 ր. 20 կ.
18. Կարմիր Արեվ — Զ. տարի (պատկերազարդ), կազմեց և խմբագրեց Մուրխաթյան (234 կջ), 1923 թ., Ցերևան . . . . . 1 ր. 80 կ.
19. Կարմիր Արեվ — Է. տարի կազմեց և խմբագրեց Մուրխաթյան (488 կջ), 1924 թ. Ցերևան . 2 ր. 80 կ.
20. Աշխատանք — Ընթերցարան բանվորների և գյուղացիների համար . . . . . — 60 կ.
21. Բեռ, Սարուպի, Վոլկով — Հանրահաշիվ, Ա. և Բ. մաս. Թարգմ. Արշակ Տոնյանի 1 ր. 75 կ.
22. Ա. Պոեյով — Տարրական վերկրաչափություն, թարգմ. Արշակ Տոնյանի 2 ր. 80 կ.

ԳԻՆԸ 80 Կ.

Լույս տեսած գրքերը ծախվում են Պետհրատի գրախանութում

Տիրաժ 3000

Պետհրատի առաջին տպարան Վաղարշապատում